

ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Հ Ի Ն Ա Ր Ե Ի Ե Լ Ք

(Բազմաթիւ պատկերներով)

Կազմեց Գ. ԽՆԺԱԿ

1. ՆԱԽՊԱՏՄԱՆ ԵՐՁԱՆ
2. ԵԳԻՊՏՈՍ
3. ՔԱՂԴԷԱ
4. ԲԱԲԵԼՈՆ
5. ԱՍՈՐԵՍԱՆ
6. ՓԻՆԻԿԷ
7. ՇՐԷԱՍՏԱՆ
8. ՀՆԴԿԱՍՏԱՆ
9. ՄԱՐԱՍՏԱՆ
10. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
11. ՈՒՐԱՐՏՈՒ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հրատարակւոյրիւն

ԿԻՎԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

1917

Կ. Պոլիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՍԱՆ

9(3)

Խ-16

Handwritten scribbles and a wavy line.

Handwritten scribbles.



Vertical column of dense handwritten scribbles.

9(3)

12-16

19 III 2005 30 MAY 2011

ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

հոկտեմբեր

9(3)

12-16

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Հ Ի Ն Ա Ր Ե Ի Ե Լ Ք

(Բազմաթիւ պատկերներով)

Կազմեց Գ. ԽԱԺԱԿ

1. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ
2. ԵԳԻՊՏՈՍ
3. ՔԱՂԴԷԱ
4. ԲԱԲԵԼՈՆ
5. ԱՍՈՐԵՍԱՆ
6. ՓԻՆՆԻԿԷ
7. ՀՆԴԿԱՍՏԱՆ
8. ՄԱՐԱՍՏԱՆ
9. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
10. ՈՒՐԱՐՏՈՒ
11. ՇՐՔԱՍՏԱՆ

20171

Հրատարակութիւն
ԱՐՄԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

1913
Կ. Պոլիս

0 6 MAY 2013

1116

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Երկար ասեմի դպրոցներու մեջ կարեւորութիւն չէին տար Հիւսիսային պատերազմէն յետոյ իրենց անհատական կրթական կարգը եւ անհատական «խմբակներ» պատերազմէն, — Յունական եւ Հոնոնական շրջաններուն, Միջին Իսրայէլ եւայլն:

Սակայն 19րդ դարու ընթացքին կատարուած հետազոտական, լեզուաբանական, մարտաբանական ու պատմական հետազոտութիւններու հարստացումը արդիւնները եղան համոզուող որ Հիւսիսային պատերազմէն յետոյ հրահանգիչ թանկարժէք եւ չի մնար Հիւսիսային ու Հոնոնական պատերազմէն:

Եւ փոխառեցաւ պատմաբաններու, դասագիրք կազմողներու եւ դասաւանդողներու վերաբերումը՝ Հիւսիսային պատերազմէն: Առաջ անոր կը նուիրէին ընդամենը հազիւ 20-30 երես, իսկ այժմ ան կը բռնէ իր պատմագիրքի տողը Պատմական դասագիրքէն մեջ:

Մասնաւորապէս մեզ Հայերու համար շատ անգամ մեծ նշանակութիւն ունի Հիւսիսային պատերազմէն, քան իսրայէլական պատերազմէն: Բացի անհատական շատ քիչ զարգացողական ձգտումէն, Հայերու ստանձնապէս պատմաբան եւ մշակութային Բարեկարգի, Բարեկարգի, Աստիճանի, Մարտական ու Պարսկականի, մասամբ նաեւ Եգիպտոսի պատմական վրայ: Մեր տնտեսական պատմագիրքը դեռ եւս խոչընդոտ վիճակ մը ունի. յիշուած երկիրներու պատմական, անհատական ու մասնաւորապէս միջոցով է որ մենք պիտի անբողոքեմք մեր ազգային կեանքի նախապատմական շրջանին եւ պատմական առաջին քայլերու առջ կեցնենք:

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

№ 170

68540-1



1324-91

370-99

441-74.1

րը, պիտի յուսաբանենք մեր պատմութեան մեջ մուր մնացած շատ մը խնդիրներ:

Այդ նկատողութեամբ է որ մենք առանձին կը հրատարակենք մեր Արեւելի Հին Պատմութիւնը: Նոյն այդ մտածումներն որդուած, մենք քիչ մը աւելի ընդարձակ տեղ տուինք Պարսկաստանին եւ Ասորո-Բաբելոնիին, քան կը պահանջէր դասագրքի մը սահմանը:

Կ. Պոլիս 1913, Մայիս

Գ. ԽԱՃԱԿ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն



Երկրագունտի մեծագոյն մասը ծածկուած է ջուրով եւ միայն $\frac{1}{3}$ մասն է ցամաք, որու վրայ այսօր կը բնակի շուրջ 1,600 միլիոն կամ մէկ միլիոն վեց հարիւրմիլիոն մարդ:

Ի՞նչ է պատմութիւնը

Այսօր գոյութիւն ունեցող բոլոր մարդերը հաւասարապէս զարգացած չեն. անոնց մէկ մասը յիպոնէսներ են որ կը թափառին անտառներու մէջ, բոլորովին մերկ կամ կիսամերկ կը պատին. մէկ մասն ալ վայրենութենէ ելած է—հիմնած է փոքրիկ գիւղեր, ունի առատուներու հօտեր, կը մշակէ հողը՝ միայն շատ պարզ ձեւով մը. ասոնք ալ կը կոչուին բարբարոսներ: Իսկ բաւական խոշոր մէկ մասն ալ զարգացեր, առաջ է գացեր, հիմներ է մեծամեծ գիւղեր ու քաղաքներ, հնարեր է գիր ու գրականութիւն, մեքենաներ եւ այլն: Այս մասը կը կազմեն քաղաքակիրթ ժողովուրդները:

Այս վերջինները ի ծնե քաղաքակիրթ չէին: Շատ հին ժամանակներ, օրինակ մեզմէ 3000-4000 տարի առաջ—ամէնքն ալ եղած են վայրենիներ, որոնք մերկ կը թափառէին անտառներու մէջ, իրենց մասներով գետինը կը փորէին, որդեր կը գտնէին եւ կ'ուտէին, կամ թռչուններու բուններէն անոնց ձագուկներն ու հաւկիթները գողնալով կը սնանէին:

Պատմութիւնը մեզ կը սորվեցնէ թէ ինչպէս մարդիկ ստիճանաբար զարգացան, յիպոնէս վիճակէն ելան, անցան բարբարոսական վիճակը, հիմնեցին գիւղեր, քաղաքներ ու պետութիւններ, գտան մետաղներ, սորվե-

ցան արճեսաներ, հնարեցին գիտութիւն, գիր ու գրականութիւն, մեքենաներ ու գործիքներ—մէկ խօսքով՝ փառաբանութեանը :

Ուրեմն՝ Պատմութիւնը կը կոչուի այն գիտութիւնը որ կը պատկերացնէ մարդկային ցեղի սկզբնայ կեանքը եւ այդ կեանքին աւսիճակական զարգացումը :

Մարդկային ցեղի անցեալ սերունդներու կեանքի մասին պատմութիւնը տեղեկութիւններ կ'առնէ պատմական յիշատակարաններէն :

Պատմական յիշատակարաններ

Պատմական յիշատակարան կը կոչուին այն բոլոր մնացորդները որոնք սեւէ ձեւով կրնան լուսաբանել անցեալ սերունդներու կեանքը : Այդ յիշատակարանները կարելի է բաժնել երեք տեսակներու . ա) գրաւոր, բ) բանաւոր եւ գ) ձեռակիր :

Առաջին եւ էն կարեւոր տեղը կը բռնեն գրաւոր յիշատակարանները : Հին սերունդներէն մեղի հասած են բազմաթիւ գրուածքներ, ժայտերու, տուներու եւ այլ շէնքերու, գերեզմաններու, ամաններու, զէնքերու եւ ուրիշ զանազան իրերու վրայ փորագրուած արձանագրութիւններ, թուղթի կամ աղիւսի վրայ գրի առնուած աստիճան ժամանակագրութիւններ, զանազան անձերութեամբ յիշատակարաններ կամ անոնց գրաւոր յիշողութիւնները : Այս գրաւոր յիշատակարանները ամէնէն աւելի մանրամասն եւ ճշգրիտ տեղեկութիւններ կուտան պատմական անցեալի մասին :

Սակայն գիրն ու գրականութիւնը համեմատաբար ուշ են ծագած եւ ասիկէ զատ, գրաւոր յիշատակարաններու մեծ մասը կորած կամ փճացած է, մէկ մասն ալ մինչեւ հիմա գեղ կը մնայ անընթեռնելի, թէև գիտնականները մեծ ջանք կը թափեն զանոնք կարգալու եւ

համկնալու : Իսկ մինչև գրականութեան ստեղծումը, եւ նոյն իսկ անոր գոյութեան սկզբնական շրջաններուն մէջ անգամ, ժողովուրդները բերնէ բերան կը հաղորդէին իրենց նախահայրերուն, անցեալ սերունդներուն գործերը : Սակայն այդ բերանացի աւանդութիւնները շատ ալ վստահելի աղբիւր չեն պատմութեան համար, որովհետեւ բերնէ բերան հաղորդուելով՝ կը փոփոխուին, իրարու կը խառնուին . ամէն մէկ պատմող իր երեւակայութիւններն ալ կ'աւելցնէ : Ամէն պարագայի մէջ, այդ բերանացի աւանդութիւնները կրնան բաւական լոյս տեսնել պատմական անցեալի քանի մը կէտերու վրայ :

Պատմութեան յիշատակարաններու մէջ խոշոր տեղ մը կը գրաւեն ձեռակիրները—ամէն տեսակի շէնքեր՝ աստճարներ, գերեզմաններ, պալատներ, տուներ, բերդեր, բուրգեր, եւ այլն, եւ մարդկային գործածութեան համար շինուած իրեր—ամաններ, զրամներ, զարդեր, զգեստներ, զէնքեր եւ այլն : Ասոնք այնչափ մեծ կարեւորութիւն են ստացած որ, յատուկ գիտութիւն մըն է ստեղծուել այդ ճիւղն ուսումնասիրելու համար : Այդ գիտութիւնը կը կոչուի Հնագիտութիւն (Archéologie) :

Հնագիտութիւնը կուսումնասիրէ ոչ միայն երկրի վրայ մնացած պատմական շէնքերն ու զանուած իրերը, այլ եւ կը փորէ հողի տակ թաղուած գիւղերու եւ քաղաքներու աւերակները, կը քանդէ մարդկային հին գերեզմանները (սօրվեկները, բուրգերը, փորկանները), կը գտնէ անոնց մէջ թաղուած արձանագրութիւնները, անսկիտն եւ այլն իրերը, կը դասուորէ զանոնք եւ ասով ծանօթութիւն մը կուտայ հնութեան այս կամ այն շրջանի մասին :

Վերջապէս՝ պատմութեան ուսումնասիրութեան կը նպաստեն նաև յեղուաբանական, մարդաբանական եւ ընկերաբանական գիտութիւնները :

Մարդկային լեզուներու ուսումնասիրութիւնը կը
ցուցնէ թէ ո՛ր ազգերը առաջ միասին են ապրած, ե՛րբ
են իրարմէ բաժնուած, ի՛նչ ճամբայով ցրուած են երկ-
րի վրայ, առաջ ի՛նչ կենդանիներ են ընտանեցուցած
և այլն: Այս գործին մէջ իրեն օգնութեան կը հասնի և՛
մարդաբանութիւնը:

Ընկերաբանութիւնը ուսումնասիրելով ներկայ վայ-
րենի, բարբարոս և քիչ քաղաքակրթուած ցեղերու
կեանքը—անոնց կրօնը, ընտանեկան կազմը, սովորու-
թիւնները, երգերը և այլն, մեր առջև կը դնէ մեր սե-
փական անցեալին նմանող պատկեր մը: Ներկայ վայ-
րենիներու կեանքը լաւ մը սերակելով, մենք կրնանք
մտաւոր դադափար մը կազմել վայրի վիճակի մէջ ապ-
րող մեր նախապատմական նախնիներու մասին: Ասոր
համար ալ ընկերաբանութեան մէջ ներկայ վայրենիներու
կենցաղը յաճախ կը կոչեն կենդանի նախապատմութիւն
(Préhistoire Vivante):

Մարդկային ցեղի կեանքը կը բաժնուի երկու շատ
խոշոր շրջաններու, — նախապատ-
մութիւն և Պատմութիւն: Նախա-
պատմութիւնը իր մէջ կ'ամփոփէ
բոլոր փաղափակիչ ազգերու անցեալը:

Պատմութեան
բաժանումը

Նախապատմական շրջանը կը բաժնուի երեք դա-
րերու. ա) Բարե դար, բ) Անագապոլիսնէ կամ Պրոկոֆե
դար և գ) Երկարե դար:

Իսկ պատմական շրջանը կը բաժնուի հետեւեալ ե-
րեք մասերու. ա) Հին պատմութիւն, որ կը սկսի հնա-
գոյն ժամանակներէն և կը աւել մինչև Քրիստոնէու-
թեան յաղթանակը, մինչև Հռոմի կայսրութեան ան-
կումը. բ) Միջին դար, որ կը աւել Հռոմի անկումէն մին-
չև 16րդ դար և գ) Նոր կամ արդի պատմութիւն՝ որ կը

աւել 16րդ դարէն մինչև մեր օրերը: Յաճախ Նոր Պատ-
մութիւնն ալ կը բաժնեն երկու մասի — Նոր և Նորա-
գոյն կամ Ժամանակակից շրջաններու:

Պատմութեան ներածութեան նիւթը կը կազմէ նա-
խապատմական մարդուն կենցաղը:

1. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴՈՒՆ ԿԵՆՑԱԸ

Նախնական մարդը շատ մեծ տարբերութիւններ
չունէր մարդակերպ կապիկնե-
րէն, ինչպէս շիմիանդէ, կորիլ-
լա և այլն: Տաք երկիրներու մէջ
ան կ'ապրէր անտառներու ծա-
ռերուն տակ, իսկ ցուրտ երկիրներու մէջ կը գտնէր
քարանձաւներ, բնական խոռոչներ՝ ժայտերու մէջ
և հոն կը մանէր ասրատան փնտուելու: Երբ շրջապա-
տող անթիւ դաղանները յարձակում կը գործէին այդ
կապիկանման մարդուն վրայ, ան կա՛մ կը փախչէր կը
բարձրանար ծառերու վրայ, և կա՛մ կը մանէր իր քա-
րանձաւին մէջ և խոշոր քարերով կը գոցէր մուտքը:


Անտառական
վիճակ

Սակայն մարդը, երկա՛ր դարեր ապրելով այս ա-
նտանական վիճակին մէջ, աստիճանաբար դարձացեր,
առաջ գոցեր և քիչ մը բարեբաւեր է իր վիճակը:

Գաղաններու դէմ ինքզինքը պաշտպանելու և որ-
սով իր ապրուստը ձարելու հա-
մար, մարդն ստիպուել է նախ
գործածել ծառերու հաստ ճիւ-
ղեր, քարի խոշոր կտորներ. իսկ
ետքէն այդ քարերէն, փայտերէն, կենդանիներու ոսկոր-
ներէն ու խեցիներէն շիներ է գործիքներ: Այդ գործիք-

Դործիքներ

ները կազմեր են անոր ձեռքերու, մասներու և ոտքերու տեսակ մը շարունակութիւնը, աւելցնելով անոնց ուժը :




Քարէ գործիքներ

Սկիզբները, քանի զեռ մնասպներու գործածութիւնն անձամբ էր վայրենի մարդուն, ան իր գործիքները կը շինէր պարզ քարերէ : Կը գտնէր սրածայր կամ տափակ, սուր բերանով քարեր, կը բռնէր զանոնք իր ձեռքին մէջ և անոնցմով կը կռուէր կա՛մ իրեն նման մարդուն, կամ գաղաններու դէմ :

Այն շրջանը ուր մարդը կը գործածէր անասն քարերէ գործիքներ, գիտութեան մէջ կը կոչուի Հին Քարէ Դար կամ Փաղօթիքի դար :

Այդ տեսակ քարէ գործիքներ գտնուած են նախ-

նական քարանձաւներու մէջ, հոն ապրող սկզբնական մարդու ոսկորներու և անոր սպաննած բրդոտ փիղի (նաւոնկ), եղջերուի և քարայրային արջի ոսկորներու հետ : Գտնուած գործիքներու մէջ պարզ կը տեսնուին որձաքարէ զանակներ, նեախ ծայրեր, կացիներ և այլն :




Պարձեալ քարէ գործիքներ

Կեսնքի փորձառութիւնը աստիճանաբար կը սորվե-

ցնէր մարդուն այդ սուր քարերու կտորները բոյսի թելերով կամ կենդանիներու ջիղերով կապել երկայն փայտերու ծայրը և կազմել կացին, բռնելու յարմար կոթաւոր դանակ և այլն :

Կեսնքի փորձը կը սորվեցնէր մարդուն մէկ քարը միւսին քսելով՝ յղկել ու տաշել սուր քարի կտորները, աւելի սրել իր գործիքները, աւելի պիտանի ձև տալ անոնց : Այս փորձառութիւնը 5-10 տարուան մէջ կատարուած չէ, այլ պահանջներ է շահ երկար դարեր ու հազարամեակներ :

Քիչ մը աւելի կատարելագործուած, յղուած քարէ գործիքներու շրջանն ալ կը կոչուի Նոր Քարէ Դար կամ Նեոլիթի շրջան : Կարգ մը գիտնականներ Հին և Նոր Քարէ Դարերու միջև կ'ընդունին նաև միջին շրջան մը զոր իրենք կը գոչեն Մեսոլիթիք : («Նէօ», «Մէսո» և «Պալէօլիթիք» բաւերը յունարէն են և կը նշանակեն Հին, Միջին և Նոր քարէ դարեր) :




Տառուած Կարէ գործիքներ

Քարանձառներու, ժայռերու կամ թուփերու ներս
 ինկած մասերուն մէջ ապրող **Քարանձառի մարդը**
 նախնական մարդը ոչ ընտանի
 կենդանիներ ունէր, ոչ ալ երկրադործութիւն գիտէր։
 Անոր միակ զբաղումը կամ ապրուստ ճարելու միջոցը
 որսն էր և ձկնորսութիւնը։ Իր քարէ գործիքները և՛
 զենիք էին, և՛ գործիք։ Անոնցմով մարդը որս կ'ընէր,
 որսին մորթը կը քերթէր, միսը կտոր-կտոր կ'ընէր,
 կաշին կը ծակէր կամ բարակ կը կտրէր և այլն։

Քարանձառի մէջ ան ունէր իր անշէջ կրակը։ Թէ՛
 պատմական յիշատակարաններու և թէ՛ ներկայ վայրե-
 նիներու մէջ գիտնականները երբեք չեն յաջողած գրա-
 նել մարդ էակ մը որուն անձանօթ ըլլար կրակը։ Երեւի
 առաջին անգամ մարդը կրակ վառելը սորվեր է կա՛մ
 հոտող լաւայէն և կամ կայծակահար այրած ծառէ մը։

Սակայն այնուհետև մարդը աստիճանաբար սորվեր է
 կրակ շինել, իրարու քսելով երկու չոր փայտեր և մէջն
 ալ դիւրավատ խտտեր զետեղելով։ Այդ փայտերն ու-
 ժով և արագ իրարու քսելով, վայրենին կը վազէր,
 որպէս զի հով ըլլայ։ չփուփէն առաջ կուզար տաքու-
 թիւն, տաքութենէն՝ խտտը կը սկսէր մխալ ու բռնկիլ,
 իսկ հովը կը բորբոքէր, կ'արծարծէր զայն։


Յետոյ արդէն մարդը զտեր է կրակ ստանալու
 աւելի դիւրին միջոցներ, որոնց մէկ երկուքը պատ-
 կերներու մէջ նկարուած են։



Խնչպէս կրակ կը շինէին

Կրակը կը ծառայէր քարանձառի մարդուն և՛ իբր
 տաքնալու, որսի միսը կամ բուսական կերակուրը ե-
 փելու միջոց, և՛ իբր զէնք՝ զազաններու զէմ։ Քա-
 րանձառի բացուածքին առջև կրակ կը վառէին և ի-
 րենք հանգիստ քուն կը մտնէին, վստահ որ զազան-
 ները չեն համարձակիր մօտենալ կրակին։ Մինչև ար-
 այ Սէյլան կղզիի անասուններուն մէջ թափառող վեղ-

գահ խիստ վայրենի ցեղը իրիկուան կը կծկուի մեծ պատպապ ծառի մը տակ, օրօրան կը շինէ բոյսերէ և կը կախէ ձիւղերէն, մանուկները անոր մէջ կը դնէ քնանալու, իսկ իրենց պառկած ծառին շուրջը գիշերանց կրակ կը վառէ, որպէս զի գազանները չմօտենան:



Կրակ շինելու ուրիշ ձև մը

րուն անյարմարութիւնը, փայտին վրան. կամ հիւսեր է բարակ ձիւղերէ աման մը, ձեփեր է զայն թանձր կաւով: Երբ այդ ամանը կրակին է դրեր, փայտէ մասերը այրեր են, և մնացեր է միայն կաւէ մասը:

Այսպէս սկիզբ է առած բրուտաթեան արհեստը՝ յղիւած քարէ գործիքներու հետ միաժամանակ:



Կաւէ աման, որու փայկի՛նեւան փայտէ հիւսուածքներուն հետքեր

Նախնական մարդը զգեստ չունէր. տաք շրջաններու մէջ ան կը պտտէր մերկ, ծառերու ստուերներուն տակ, ինչպէս այսօրուան Ափրիկեցի վայրենիները, կամ Պրատրիիոյ անտառներու շատ մը ցեղերը: Իսկ քիչ մը ցուրտ վայրերու մէջ, կը ծածկէր իր մարմինը գազաններու մորթերով: Բոյսերէն կը պատրաստէր զանազան ներկեր և կը ներկէր իր մարմինը թէ գեղեցկութեան համար և թէ իրրեարեւէ պաշտպանելու միջոց:



Կաւէ աման

Այդ նախնական մարդը միայն ուճեղ-խակեղ մտածող էակ մը չէր: Ան ունէր նաև իր գեղարուեստը: Մեր ձևերը հասած են շատ մը քարէ դարի գործիքներ, որոնց վրայ քանդակուած են զանազան կենդանիներու նկարներ, — ինչպէս մնւածքներ, եղջերու, վայրի ձի, վարազ ևն: Եղջիւրի կամ ոսկրի վրայ փորուած այդ նկարները բաւական յաջողակ են. անոնք կը ցուցնեն որ քան



Կաւէ ամաններ


րանձաւի վայրենի մարդկան արհեստական բարձր ձիրք ունէր:

1304-91
370-90



2
441-24

Գծելով ու փորագրելով այդ պատկերները, սկզբնական մարդը չէր մտածեր օգուտի կամ շահի մասին.



Փանելու, կաշեղու և ուրիշ գործիքներ

ասով ան կը դուարձանար, աւելի հաճելի կը դարձնէր իր միօրինակ ու փութը կեանքը: Այդ նկարներէն ծագում առաւ գեղարուեստը:

Նախնական մարդը որսորդ էր: Կ'ապրէր անասուի որսը մէկ մասին մէջ, և իրեն ծանօթ վայրերէն շատ հեռու չէր երթար: Հո՞ն որս կ'ընէր: Այդ որսասեղը վայրենիին հայրենիքն էր: Անկէ կը ստիպուէր հեռանալ, երբ ա) կերակուրը պակսէր, բ) թշնամին յարձակէր ու ստիպէր փախչիլ և գ) երբ շատ աճէր ընտկիչներու թիւը և սնունդը չբաւէր:

Զբաղումը

Իր քարէ գործիքներով սկզբնական մարդը որս կ'ընէր, ձուկ կ'որսար, թռչուններու բուներէն ձագեր ու հաւկիթներ կը գողնար, բոյսերու արմատներ և որսը տեսակի որդեր կը հանէր գետնէն, կ'ուտէր, կը կշտանար:

Երբեմն որսը սուստ կ'ըլլար և մարդը վայրի ագահութիւնով կը լսփէր: Երբեմն այ խիտա նուազ կ'ըլլար և մարդը յաճախ օրերով անօթի կամ կիսակուշտ վիճակի մէջ կը մնար:

Որքան մարդը գարգացաւ, փորձառութիւնը աւելցաւ, ա՛յնքան աւելի սկսաւ մտածել իր ապրուստի ապահովութեան, վաղուան ուտելիքի մասին: Հասկցաւ որ տաք և սուստ օդերուն կը յաճորդեն ցուրտ օրեր և անօթութիւն: Ուստի աշխատեցաւ ձար գտնել:



Առաջին աղօրիքը

Կամոց-կամոց սկսաւ խորհիլ պաշար հաւաքելու և պահելու մասին: Ինչ բոյս որ շատ կը սիրէր, կը փողվէր և ձմրան կամ նեղ օրերու համար կը պահէր: Ինչ թռչուններ ու կենդանիներ որ կրնար գիւրաւ ձեռք բերել ու պահել, կը պահէր նախ փակուած տեղերու մէջ, որպէս զի չփախչին, ապա տատիճանաբար ազատ կը ձգէր, երբ կը տեսնէր թէ կենդանին վարժուեր, ընտելացեր է:

Այսպիսով մարդը ընտանեցուց շատ մը կենդանիներ ու թռչուններ: Հաւանորէն շունը եղեր է իր առաջին ընտանեցուցած կենդանին: Խեղքի շատ մօտ է որ շունը ինք է դացեր մարդուն քով, եղեր անոր ընկերը որսի ստան, կտոր մը ոսկոր կամ քիչ մը միս ճանկելու նպատակով: Յետոյ ընտանեցուցեր են սլիաքը, կովը, այծը և այլն և շատ ուշ, գրեթէ ամէնէն ուշ՝ ձին:

Կենդանիները ընտանեցնելով՝ մարդը ստիպուած պիտի ըլլար մտածելու նաև զանոնք կերակրելու մասին: Ան նախ և առաջ պիտի ժողվէր ձմրան կամ ցուրտ օրերու համար բուսական պաշար իր կենդանիներուն և իրեն համար: Յետոյ պիտի ընտրէր այնպիսի բոյսեր որոնք արագ կ'աճէին և շատ բերք կուտային. զանոնք պիտի ցանէր իր բնակավայրին կամ իր որսատեղիին մօտերը, պիտի հնձէր ու պահէր: Ատոր հետ միաժամանակ, ան պիտի մտածէր աճեցնել նաև իր սիրած բոյսերն ու պտուղները: Ու ասով պիտի սկիզբը դնէր բանջարանոցներու, մանր արտերու և պարտէզներու:

Երբ մարդը կ'ապրէր որսով, երբ ունէր հօտեր և և զանոնք կ'արածէր, կրնար և ստիպուած էր բաւական ընդարձակ սրտասեղ ունենալ և


Բնակարան

թափառելի անոր սահմաններուն մէջ: Բայց երբ սորվեցաւ քիչ մը երկրագործութիւն, ստիպուեցաւ շատ չհեռանալ իր մշակած հողերէն:

Սկիզբները հողը կը մշակէին միայն կիները, առանց կենդանիներու օգնութեան, իսկ այրերը կ'երթային որսի: Մշակումը կ'ըլլար կա՛մ մասնակցով, կամ փայտի, քարի, կենդանիներու խոշոր ու սրածայր ոսկորներու միջոցով:

Մշակուած հողը կը ստիպէր մարդ էակը՝ մշակակալ բնակարան ունենալ, չթափառել շատ հեռուները, մնալ իր մշակած հողերուն քով, հսկել անոնց վրայ:


Նախապէս մարդը կը բնակէր պատահած քարանձաւներու, պաշտպանուած փոսերու և ծառերու խոռոչներուն մէջ: Իսկ յետոյ սկսաւ ինքը շինել ստանց նման բնակարաններ. կա՛մ գետինը կը փորէր՝ մէջը կը մանկը, կամ խոշոր քարեր կը տանէր, քարանձաւ կը



Հոյ Երկրի խրհիք

շինէր, մէջը կը բնակէր, և կամ քանի մը հասա ծիւղեր կը ցցէր գետինն մէջ, գլուխներն իրարու հետ կը կապէր, վրան խոռով կը ծածկէր ու մէջը կ'ապրէր: Մինչև այսօր ալ Հոյ Երկրի բնակիչներու և շատ մը ստորին վայրենիներու խրճիթներն այդ ձևով կը շինուին:

Բնակարանն շինելու ատեն մարդը պիտի մտածէր ապահով սեղ ընտրել: Ան նախ կը շինէր իր բնակարանը բարձր տեղեր, նեղ ու դժուարանցանելի մուտքերով: Բայց յետոյ մտածեց շինել գետերու և լիճերու վրայ, ծանծաղ տեղերը: Կը զարնէր գետնին մէջ շատ մը հաստ փայտեր՝ այնպէս որ դուրսները ջուրի երեսէն բաւական բարձր մնային, և այդ ցիցերուն վրայ կը գամէր փայտեր, անոնց վրան ալ կը ծածկէր կաւով, քարով և այլն, կը շինէր սուներ: Տուներն իրարու հետ կը միանային ասխտակէ կամուրջներով և ամէնքն ալ իրա-



Լճային բնակարաններ

րու հետ կապուած կ'ըլլային: Իսկ ամէնքը միասին մէկ կամ մէկ քանի կամուրջներով կը միանային ցամաքին հետ: Այսպէսով՝ ջուրին վրայ կը կազմուէր փոքրիկ գիւղ մը: Այդ տեսակի շէնքերը կը կոչուին ցիցաւոր կամ լճային շէնքեր (constructions lacustres): Անոնք ունէին խիստ մեծ յարմարութիւններ վայրենի

մարդուն համար: Ջուրին վրայ ըլլալով, նախ աղատ էին գազաններու և մարդերու յաճախակի յարձակումներէն. կրնային կտրել ցամաքին հետ կապող կամուրջը, կամ վերցնել զայն և ապահով ըլլալ յարձակումներէն: Երկրորդ, տեղն ու տեղը կրնային ձկնորսութիւն ընել. երրորդ՝ ջուրի համար նեղութիւն չէին կրեր, չորրորդ՝ իրենց ազատութիւնները կը նեղէին ջուրին մէջ, կը մտքուէին:



Եղիգէ բնակարան

Այնուհետև խիստ դիւրին էր ծառի հաստ բուն մը փորել, դարձնել զայն տեսակ մը մտկոյկ, դնել ջուրին վրայ և լողալ կամ նաւարկել: Այդ սկզբնական նաւակով մարդը կրնար ափի հետ հազորդակցութիւն ունենալ, եթէ կամուրջը վերցնէր, կամ եթէ թշնամին զայն ոչնչացնէր:

Նոյն ձևի ցիցաւոր բնակարաններ սկսան շինել և՛ ճահիճներու վրայ, և՛ նոր կարուած անասաներու կոճղերուն վրայ, և այլն: Այս պարագային — որովհետեւ ջուր չկար, մարդիկ իրենց իրարու քով շինած քանի մը խրճիթներուն չորս կողմը կը փորէին փոսեր, կը բարձրացնէին հողէ թւամբեր և կը ստեղծէին պաշտպանութեան յարմարութիւններ:


Առաջին անգամ ցցաւոր շէնքերու հետքեր գտան Զուիցերիոյ մէջ, 1854-ին: Յիւրիխի լճին ծանծաղ մասերէն քիչ մը տեղ պիտի չորցնէին և մշակելու հող դարձնէին: Երբ ջուրը աղէկ մը չորցուցին և սկսան փորել յատակին հողը, հոն գտան շատ մը ցիցեր, մարդկային բնակարաններու և անային իրերու բազմաթիւ մնացորդներ: Գիտնականներու ուշադրութիւնը գրաւեց այդ պարագան: Կարճ ժամանակի մէջ գիտնական խազարկուները գտան միայն Զուիցերիոյ մէջ 200-ի չափ ցցաւոր բնակավայրերու հետքեր: Յետոյ գտան նաև Ֆրանսայի, Իտալիոյ, Ֆերմանիոյ և Աւստրիոյ մէջ: Դեռ այսօր ալ Հարաւային Ամերիկայի և Ովկէանիայի կղզիներուն մէջ շատ մը տեղեր այդ տեսակ բնակավայրեր կը շինեն: Ամէնէն աւելի նշանաւոր են Նոր Կուինիոյ ցցաւոր շէնքերը:

Այս տեսակ բնակարաններ չէին կրնար շինել անտաշ քարէ գործիքներ ունեցող մարդիկ. որովհետեւ այդ շինութիւնները կը պահանջեն տաշուած քարէ բուռական կանոնաւոր գործիքներ: Ատկէ գտա, բնակարան շինելը այլ ևս ամէն մարդու գործ չէր. ան կը պահանջէր արհեստ. պէտք էր գիտնող կամ սորվիլ այդ արհեստը:

Բնակարան կը շինէին, որս կ'ընէին ու հօտերու վրայ կը հսկէին այրերը, իսկ կիները կը զբաղէին երկբազործութեամբ և բոյսերէ թելեր կը մանէին, նոյնպէ՛ս և կենդանիներուն մորթերէն, կտորներ գործելով՝ զգեստներ կը պատրաստէին:

Բացի բնակարաններէն, քարէ դարէն մեղի հասած են նաև գերեզմաններ: Քարէ դարի մարդը իր մեռելները կը դնէր բնական քարանձաւներու մէջ և անոնց հետ ալ՝ կարգ մը իրեր որոնք անհրաժեշտ էին մարդուն: Անոր կարծիքով, մահը կեանքի շարունակութիւնն էր, միայն ուրիշ աշխարհի մը մէջ. հանգուցեալը հոն ալ նոյն պէտքերը պիտի ունենար, ինչ որ այս աշխարհին մէջ:

Ն.Ե.Ե.Գ.Ա.Ն.Ն.Ե.Ր



Քարէ դարի գերեզման

Եթէ շրջականները չգտնուէին բնական քարանձաւներ, հանգուցեալին համար կը շինէին խոշոր քարերէ արհեստական քարանձաւներ. կը դնէին քանի մը քարեր մէկ կողմը, նոյնքան ալ միւս կողմերը և վրան ալ տափակ ու շատ մեծ քարերով կը ծածկէին. ննջեցեալը

կը դնէին անոր մէջ ահասարակ նստած վիճակի մը մէջ: Այդ տեսակի գերեզմաները զիտութեան մէջ յայտնի են Երևան անուամբ (Ննազամբան):



Տօլմէն

Յաճախ Երևանները կը ծածկէին հողով և կը ձեւանար տեսակ մը բլրածեւ գերեզման, որ կը կոչուի Բուրխան:

Տօլմէններ շատ են գտնուած Ֆրանսացի և այլ եւրոպական երկիրներու մէջ: Այս ձեւի գերեզմաններուն հետ միաժամանակ, սովորութիւն էր նաև փորել գետինը և ննջեցեալը պառկած կամ նստած թաղել հոն ու վրան հողով ծածկել:

Որքան ժամանակ է տեսած Քարէ Դարը Եւրոպայի մէջ՝ անհար է իմանալ: Կենթադրեն որ Քարէ Դարը շատ աւելի երկար է տեսեր քան Երկաթէ Դարը: Հնագիտական պեղումներու ատեն, մեծազէ գործիքները կը գտնուին

Պրոնգի և Երկաթէ Դար

հողի աւելի մասերու ոչ թին մօտ շերտերու մէջ, իսկ քարէ գործիքներն անոնցմէ վար, աւելի խորունկ խաւերու մէջ: Պատահած է որ քարէ գործիքներ գտած են 6—7 մետր խորութեան մէջ, մարդկային կմախքներու հետ միասին: Արդ՝ եթէ այդ շերտերն ալ կազմուած են մօտաւորապէս այն ձեւով և այն դանդաղութեամբ որով այսօր կը կազմուին երկրի խաւերը, ու այն ատեն պէտք է ենթադրել որ այդ գործիքները, այդ զէնքերն ու կմախքները թողած մարդիկը կ'ապրին եղեր մեզմէ մօտաւորապէս 200,000 տարի առաջ:


Երկար դարեր ապրելով վայրի վիճակի մէջ, Քարէ Դարի մարդը աստիճանաբար կատարելագործած է իր կենցաղը, սակզած է աւելի յարմար գործիքներ, և անոնց շնորհիւ շինած է աւելի լաւ բնակարաններ: աւելի յաշոյղ ու նպաստակայարմար ձեւով է մշակած իր հողը, աւելի շատ կենդանիներ է ընտանեցուցեր, վերջապէս՝ աւելի մեծ յաջողութիւնով կուտեր է իր թըշնամի գազաններու և մարդերու զէմ:

Քարէ Դարին կը յաջորդեն Անագապրիմեճ կամ Պրոնգի և Երկաթէ դարերը:

Քանի մը երկիրներու մէջ, մարդիկ Քարէ Դարէն ուղղակի անցած են երկաթէ Դարը, իսկ ընդհանրապէս Քարէ Դարին յաջորդեր է Պրոնգէ կամ անագապրիմեճէ դարը: Հնագիտական բրածոներու մէջ, շատ յաճախ պրոնգէ գործիքները կը տեսնենք տաշուած քարէ գործիքներու հետ մէկտեղ: Ինչ որ կը նշանակէ թէ սկիզբները թէև պրոնգը գտնուած և գործածութեան մասած էր, բայց անբաւական էր. այդ պատճառով ալ քարը դեռ երկար ատեն մնաց գործածութեան մէջ, իբր գործիքի նիւթ:

Մեծազներուն մէջ ամէնէն աւելի զիտութեամբ

ձեռք կը բերուէր պլինձը, այդ պտտճառով ալ ամէնէն առաջ ան է գտնուած: Սակայն լաքուր պլինձէ շին-



Պատկեր Գարի գործիքներ և զարդեր

ուած դանակը կամ սուրը կակուզ կ'ըլլայ և դիւրաւ կը ծռի, ուստի մարդը մտածեր է զայն խտանել անագի

հետ և կարծրացնել, աւելի դիմացիւն դարձնել: Այսպէս ստացեր է պրոնզը կամ անագապլինձը:

Հնագիտութիւնը մեզի կը մատակարարէ Պրոնզէ Գարէն մեծաքանակ գործիքներ, — կացիներ, դանակներ, մանգաղներ և այլն. դէնքեր, — սուրեր, դաշոյններ, նետեր և այլն. սան անօթեղէններ, զարդարանքներ և այլն:


Նախապէս պրոնզէ գործիքները կը շինէին բոլորովին նման քարէ գործիքներուն, անոնց պէս կոպիտ, անոնց պէս հասա: Բայց յետոյ սկսան կաթարեղազործել և աւելի յարմար, աւելի ճաշակաւոր ձեւեր տալ:

Գարէ Գարի մարդը կը կրէր իր վրայ փայլուն և գունաւոր քսկէ, խեցիներէ և խղունջներէ զարդարանքներ, իսկ Պրոնզէ Գարի մարդը շատ աւելի ճաշակով և նուրբ զարդեր է թողեր մեզի—մասանիներ, մանեակներ, սպ սրանջաններ, գլխու զարդեր, սանրեր, դնդաւներ, գինեղեր և այլն:

Հաւանօրէն պլինձ փնտռած տաւն մարդը գտեր է նաև ուրիշ մետաղներ—արծաթ, երկաթ, ոսկի և այլն: Աւելի առաջ գտեր է արծաթն ու ոսկին, որովհետև անոնք դիւրաւ կը հալին: Ամէնէն ուշ գտած է երկաթը, որովհետև խիստ դժուար է զայն հալեցնելը, զակը և անկէ գործիքներ շինելը:

Հին տաւններէն մնացած են սկզբնական դարերնոցներու հետքեր, որոնք կը ցուցնեն թէ մարդը սրքան դժուարութիւնով ձեռք բերած է երկաթը: Հիներ մեզի թողած են շարք մը աւանդութիւններ, որոնց մէջ դարբինները կը համարուին խնաստու, կախարհ և այլն, որովհետև անոնց գործը խիստ դժուարին և խորհրդաւոր կ'երևէր: Կարգ մը ժողովուրդներ շատ կը սիրէին դարբինները, իսկ ուրիշներն ալ կ'ատէին զանոնք:

Դարբինը և դարբնոցը պիտի ըլլային հանքերու քովերը: Երբ բարբարոս ցեղ մը գաղթէր, անոր անդամներէն այն որ դարբին էր, կը մնար կ'զգած իր դարբնոցին, կ'անջատուէր իր ցեղակիցներէն և կը ծա-



Մ. Առաջին դարբինները

ուայէր օտարներուն, նորեկներուն. այդ էր պատճառը որ անոնք կամ խիստ արհամարհուած էին և կամ շատ ցեղերէ ալ խիստ յարգուած:

Դարբինը առաջին արհեստաւորն է:

Երկաթի գիւտը շատ մեծ բարիք էր մարդկութեան համար. անով գործիքներն ու զէնքերը ամրացան, անով թշնամիները, գազանները վերջնականապէս ստիպուեցան նահանջել և տեղի տալ մարդուն: Մարդը սկսաւ աւելի մեծ յաջողութեամբ իրեն հարստակեցնել բնութիւնը:

Քարէ գործիքներով հազիւ կարելի էր քիչ մը փոքրել հողը: Պրոնդէ գործիքները քիչ մը աւելի դիւրացուցին այդ գործը, բայց միայն երկաթով կարելի եղաւ շինել գութան և արօր, հողը հերկել խորէն և առատ հունձք ստանալ: Քարէ գործիքով մարդը կրնար մշակել շատ փափուկ հողը — գետափներու սղմուտ դաշտերը միայն: Պրոնդէ գործիքը հնարաւոր դարձուց քիչ մը աւելի կարծր հողը մշակել, կտրտել ծառերը, և մարդուն համար աւելի ընդարձակ գաշտեր ստեղծել, մարդուն ապրելու և անունդի վայրերը շտտցնել: Իսկ երբ հնարուեցաւ երկաթէ գործիքը, այն ատեն այլևս մարդը կրնար մշակել շատ մը այնպիսի հողեր, որոնք բոլորովին անմշակելի էին քարէ և կամ պրոնդէ գործիք ունեցող մարդերու համար:

Երկաթին շնորհիւ, մարդը կրցաւ ապրիլ ամէն տեղ, մշակել ամէն տեսակ հող:

Մետաղներու գիւտը մեծ զարկ տուաւ առևտուրին ալ: Առաջ առևտուր կ'ընէին միայն բերքերն իրարու հետ փոխանակելով, իսկ մետաղները գտնելէն յետոյ սկսաւ աստիճանաբար առաջանալ զբամի գազափարը և վաճառականութիւնն արագ ծաղկեցաւ:

Մետաղները զարգացուցին և մարդուն ճաշակը: Մետաղէ զարդերը անհամար են և բազմապիսի:

Քարէ գործիքները կը համապատասխանեն մարդու վայրենի վիճակին, պրոնդէ գործիքները՝ բարբարոսական շրջանին, իսկ երկաթի և գրի գործածութիւնով մարդը կը մանէ փաղափակրորքեան մէջ:

Երկաթի գիւտը, միաժամանակ և գրի գիւտը կը կարծուի թէ եղած են մեղմէ երեք — չորս հազար տարի առաջ: Նոյնքան ալ կեանք ունի մարդկային քաղաքակրթութիւնը երկրի վրայ:

2. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Քարանձառի մարդիկ կ'ապրէին փոքրիկ խմբակներով, որովհետեւ չէին կրնար մինակ պաշտպանուիլ շրջապատող զազաններու և թշնամի մարդերու դէմ. նոյնիակ անկարող էին մինակ որս ընել, ապրուստ ձարել:

Մարդկային միութիւններ

Անտաջ Քարէ Դարի ընթացքին, մարդիկ զարգացան, ապրուստի աւելի լաւ միջոցներ հայթայթեցին: Այնուհետեւ հնարաւոր եղաւ աւելի մեծ խումբերով մէկտեղ ապրիլ: Խաչնարած ու որսորդ խմբակները չաա աւելի կառուակէր էին, քան երկրագործութեան վարժուածները, որովհետեւ վերջինները գիտէին որ կռիւներու ատեն իրենց ցանքերը սոռքի տակ պիտի երթան՝ պիտի փձանան:

Իրարու դէմ և զազաններու դէմ մղուած անվերջ կռիւները ստիպեցին մարդը՝ աւելի մեծ խումբերով ապրիլ և այդ խումբին մէջ ունենալ՝ դոնէ կռուի ատեն՝ մեծ մը, հրամասար մը կամ սուսջնորդ մը, և հպատակիլ անոր: Ասուջնորդ կ'ընտրուէր ճանչցուած ու փորձուած կարիճ կառուց մը: Պատերազմէն յետոյ ան ալ կը դառնար հասարակութեան սովորական մէկ անդամը:

Խաղաղութեան ատեն խմբակցութեան ներսը դեռ իշխանութիւն մը ծնած չէր. ամէն մէկ խումբի մէջ ծերերը, փորձուածները յարգելի անձեր էին, որոնց մտիկ կ'ընէին և կը հպատակէին երիտասարդները: Եթէ իրարու մէջ կռիւ մը կամ վէճ մը ծագէր, ամէն խմբակցութեան մէջ վիճողներն իրենց արհեստակիցներու օժանդակով

դակութեամբ կը պաշտպանէին իրենց իրաւունքները: Երբեմն ալ երկու կողմերը կը դիմէին ձերուհի մը՝ որ կը համարուէր այդ խմբակցութեան մէջ խելացի, իմաստուն և զուշակելու ընդունակ մարդ:

Որսով անանող հասարակութիւններու մէջ այրերը միշտ կը թափառէին անտառներն ու սարերը, կամ կ'երթային պատերազմի. յաճախ օրերով ու շաբաթներով կը բացակայէին: Իսկ անոնց կիները կը զբաղէին բուսական կերակուրներ գտնելով և զաւակները պահելով: Երեխաները կը ճանչցուէին մօր անունով. անոնք կը պատկանէին մօրը և հայրը ոչ մէկ իրաւունք ունէր զաւակներու վրայ: Հայրը կ'ապրէր տարբեր տոհմի մը մէջ, մայրը՝ տարբեր տոհմի մը: Հայրը ազգական չէր համարուեր այդ տեսակ տոհմի մէջ. ան արեւնակից չէր. ազգակցութիւնը կամ արեւնակցութիւնը կը հաշուէին մօր կողմէն. մօրեղբայրը սրբութիւն էր, իսկ հայրը՝ ոչինչ, յաճախ նոյն իսկ չգիտէին թէ ո՞վ է հայրը: Տոհմի ներսը ամուսնութիւնն արգիլուած էր: Տղաները տոհմի բոլոր կիները մայր կ'անուանէին, բոլոր այրերը՝ մօրեղբայր, իսկ իրար՝ քոյր և եղբայր կը կոչէին:

Ընտանիք

Ամբողջ տոհմը մէկ անուն կը կրէր: Անունն ալ կ'առնէին կամ թռչուններէն—օրինակ՝ Բագիւկերու տոհմ, կամ կենդանիներէն, օրինակ՝ Գայլերու տոհմ, Շաւ կող տոհմ, Եղջերուներու տոհմ և այլն: Յաճախ տոհմին անունը ներկերով կը նկարէին տոհմի անդամներու մարմնի վրայ: Այսպէս, օրինակ, Բագիւկերու տոհմի ամէն մէկ անդամը կ'ուսննար իր մէջքին կամ կուրծքին վրայ բազէի մը նկարը, որով կ'իմացուէր անոր ո՞ր տոհմի

անդամ ըլլալը: Եթէ Գայրերու տոհմէն այր մը կին առնէր Բագիներէն, զաւակները Բագի կ'ըլլային: Իսկ Բագի այր մը չէր կրնար ամուսնանալ Բագի կնոջ մը հետ:

Երբ մէկ տոհմը շատ կ'աճէր ու կը բազմանար, անդամներու մէկ մասը կը գաղթէր ուրիշ, մօտաւոր տեղ մը. այսպէս կը հիմնուէր նոր տոհմ մը, քոյր նախորդ տոհմին: Այդ երկուքը միշտ իրար կը պաշտպանէին կռիւներու ստեղծ, և կը պահէին իրենց մէկ արմատէ սերած ըլլալու գիտակցութիւնը:

Երբ քանի մը տոհմեր այդպէս իրարմէ կը սերէին, բոլորը միասին կը կոչուէին ցեղ:

Տոհմի ձեւ անդամը կ'ըլլար տոհմին ղեկավարը, անոր դատաւորը, տեսակ մը կառավարիչը: Օրէնք չկար. կը վառավարէին սովորութիւններով: Ամէնէն մեծ սովորութիւնն էր արեան վրիժը. բոլորը պարտական էին լուծել իրենց տոհմէն ու և է մէկուն արեան վրէժը:

Տոհմը ունէր իր սեփական հողերը, որոնք կը պատկանէին տոհմի բոլոր անդամներուն. ամէնքը կը մշակէին և ամէնքը կ'ապրէին:

Երբ մարդը բաւական զարգացաւ, ընտանեցուց շատ մը կենդանիներ, ստեղծեց հօտեր: Երբ աւելի առաջ գնաց ու ստեղծեց երկրազօրծութիւն, այն ստեղծ այր մարդն սկսաւ աւելի երկար առեւն տունը մնալ, իր կնոջ կամ կիներու և զաւակներու հետ ըլլալ, և իր ձեռքն առաւ ընտանիքի սանձը: Որդիներն սկսան կոչուիլ հօր անունով: Կիներ սկսաւ դառնալ այր մարդու աղախներ, անոր ստրուկը, անոր համար բանող ձեռք մը:

Նախորդ մայրական ընտանիքը կամ մեծ-մայրական խմբակցութիւնն ինկաւ և սկսաւ առաջ դալ հայրական ընտանիքը. մօր իրաւունքին տեղը բանեց հօր բռնակալ

իրաւունքը. երեւան եկաւ իսկական ընտանիքը — այժմեան մտքով՝ միակին կամ բազմակին:

Այրը յաճախ կը փախցնէր կամ կ'առեւանգէր իր հաւնած աղջիկը և իրեն կին կը դարձնէր զայն: Բայց այն ատեն աղջկան արեւակիցները կը սկսէին թշնամանալ աղուն, կռիւ ընել. անոր ու անոր արեւակիցներուն հետ, որովհետեւ ան իրենցմէ խլած էր բանող ձեռք մը: Այդ կռիւներէն խուսափելու համար՝ սկսան բանակցիլ աղջկան արեւակիցներուն հետ և սակարկելով զնել աղջիկը: Անոր փոխարէն կուտային, օրինակ՝ մէկ կամ երկու կով կամ քանի մը ոչխար. իսկ երբ դրամն ստեղծուեցաւ, ուղղակի դրամով կին կ'առնէին:

Հարուստ հովիւ մը, երբ պէտք ունենար աւելի բանող ձեռքերու, կ'առնէր երկու-երեք և աւելի կիներ: Եթէ այլևս պէտք չունենար, կ'արձակէր անոնք:

Ամէն մէկ խմբակցութեան մէջ արեւակիցներու մէկ կամ միւս ընտանիքը երբեմն շատ կը հարստանար, շատ կիներ ու զաւակներ կ'ունենար. ան կրնար բազմաթիւ կուտողներ հանել իր մէջէն և իրեն հնազանդեցնել շրջապատ ընտանիքներն ու խմբակցութիւնները: Օտար դրացիներն ալ վախնալով այդ հզօր տոհմէն, կը խնդրէին ընդունիլ զիրենք անոր հովանաւորութեան ու պաշտպանութեան տակ:

Այսպիսով մանր տոհմերը կը բազմանային, անոնց մէջ կը մտնէին օտար տարրեր, հպատակներ, յաճախ պատերազմի մէջ բռնուած գերիներ և աստիճանաբար ծնունդ կ'առնէր բարդ հասարակութիւն մը—տիրողներ ու տիրուածներ, տէրեր և ստրուկներ, հարուստներ և աղքատներ: Տիրող հարուստ ու հզօր տոհմը կը դառնար իշխող, հրամայող, ազնուական, թագաւոր. յօժար կամքով անոր հովանաւորութեան գիմողները և տոհմի

աղքատ բնասանիքները կը դառնային հասարակ ռամիկներ (զէմոս կամ փլէպ), իսկ բռնի տիրուածները՝ սարուկներ: Այս տեսակ կազմն ալ կոչուեցաւ Պեսուքիւն: Իսկ մինչև այդ եղած պարզ խմբակցութիւնները արևնակիցներու տոնակեր ու յեղիւր էին:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐԸ

Երկրագունդի վրայ ապրած և այժմ ալ ապրող բոլոր ժողովուրդները չեն կրցած անցնիլ մարդու Բարէ և Պրոնդէ Դարի կեանքէն. չեն կրցած քաղաքակրթուիլ, զիր ու զպրութիւն ստեղծել և դառնալ պատմական ժողովուրդ: Ժողովուրդներէն շատերը հազիւ Բարէ Դարն ապրած, կորեր ոչնչացեր են կեանքի կռուին մէջ. կամ կոտորուեր, անհետացեր են. կամ ձուլուեր են ուրիշ ժողովուրդներու մէջ, առանց հետք մը, անուն մը անգամ թողելու պատմութեան մէջ:

Պատմական և ոչ պատմական ժողովուրդներ

Այսօր ալ գեռ ևս կան քաղմաթիւ վայրենի ու բարբարոս ժողովուրդներ, որոնք երբեք պատմութիւն չունին: Այդպէս են Ամերիկայի բոլոր Պրիմաժորթները, բոլոր էսիլիմոները, Ասիոյ քանի մը կղզիներու և Սիպերիոյ քաղմաթիւ ցեղերը, ամբողջ արիփիէի սեւամորթները, Ովկիանիոյ բնիկները և այլն: Անոնք ամէնն ալ մնացեր են Նախապատմական վիճակի մէջ, պատմութիւն չեն ստեղծեր և չեն կրնար ունենալ իրենց տեղը՝ ընդհանուր ազգերու պատմութեան մէջ:

Պատմութեան մէջ մտած ժողովուրդներն ալ ամէնքը միեւնոյն ժամանակ չեն քաղաքակրթուած և միեւնոյն կարևորութիւնը չունին: Կան ժողովուրդներ որ շատ կանուխ են քաղաքակրթուած—երկաթէ գոր-

ծիքներ ստեղծած են, զիր ու զպրութիւն հնարած, իրենց համար պետութիւն կազմած են: Կան և ուրիշ ազգեր, որոնք թէև շատ ուշ են ասպարէզ եկած, բայց մեծ գործ կատարած են, արագօրէն զարգանալով ու զօրանալով:

Կան այնպիսի ժողովուրդներ ալ, որոնք թողեր են քաղմաթիւ պատմական յիշատակարաններ իրենց լեզուով, մինչ ուրիշ շատերու միայն անունն է մնացեր, այն ալ դրացի ազգերու պատմական յիշատակարաններուն մէջ:

Պատմական ազգերէն մէկ քանին եղած են ինքնուրոյն, ստեղծագործող ազգեր. ուրիշներ եղեր են նախնիթացներու քաղաքակրթութիւնը իւրացնողներ. իսկ ոմանք ալ ծառայեր են իբրև միջնորդ երկու զարգացած ժողովուրդներու միջև, իբրև յարաբերութեան կապ:

Այս բոլոր փոփոխութիւնները, այս առաջըլիմութիւնը և յետամնացութիւնը կախուած է ժողովուրդներու բնական յատկութիւններէն. իսկ այդ բնական յատկութիւններէն—օդէն, ջուրէն, գետերէն, ծովերէն, լեռներէն, դաշտերէն, հովերէն և այլն: Ատէէ զատ, ժողովուրդի մը զարգացման վրայ մեծապէս կ'ազդեն նաև զինքը շրջապատող ժողովուրդները, իր անցուցած պատմական կեանքը և նախնիքներէ ստացած ժառանգութիւնը:

Ուրեմն՝ ժողովուրդի մը պատմութիւնը արդիւնք է այդ ժողովուրդին բնական յատկութիւններուն, անոր բնական երկրի յատկութիւններուն և զայն շրջապատող ժողովուրդներու ազդեցութեան:

Սակայն պատմական ազգերը միշտ չեն բնակած հոն, ուր մենք կը գտնենք զիրենք. շատերը զաղթա-

կաններ են ուրիշ երկիրներէ, ոմանք ալ բնիկներ: Այս տեղափոխութիւնները տեղի ունեցած են շատ հին, նախապատմական ժամանակներու մէջ: Սակայն տեղափոխութիւնները կատարուած են նաև գրաւոր պատմութեան ընթացքին, ու դեռ այսօր ալ կը կատարուին՝ մեր աչքին առջև:

Հատկապէս Լեզուագիտութիւնը և Մարդաբանութիւնը (anthropologie) կը ցուցնեն թէ՛ ո՛ր ժողովուրդները միեւնոյն արմատէն են բխած և առաջ իրարու հետ են ապրած, բայց այժմ իրարմէ շատ հեռու կ'ապրին: Իսկ մարդաբանութիւնը մօրթի գոյնէն, գանկի ոսկորներու կազմութենէն և ուրիշ կարգ մը յատկութիւններէն զատելով, մարդկութիւնը կը բաժնէ քանի մը ցեղերու:

Մարդկութիւնը բազկացած է չորս գլխաւոր ճեւակներէ կամ ցեղերէ. ձերմակ ցեղ, Սև ցեղ, Դեղին ցեղ և Կարմրամորթ կամ Պղնձամորթ ցեղ:

Մարդկային ցեղերը

Այս ցեղերէն Կարմրամորթները պատմութիւն չունին: Անոնք այսօր ալ կ'ապրին վայրենի վիճակի մէջ. անոնցմէ շատ քիչերը անցեր են բարբարոսական շրջանի, դէթ պրնդի գործածութեան ծանօթացեր իրենք իրենց: Եթէ ոչ, Եւրոպացիները այսօր Ափրիկէի խորերու մարդակեր վայրենիներուն մէջ անգամ ստրած են հրացան. սակայն այդ իրենց դիւար չէ:

Դեղին ցեղը պատմութիւն ունի: Զինացիները ստեղծեր են շատ հին քաղաքակրթութիւն մը: Սակայն սկիզբները բաւական մեծ դեր կատարելէ վերջ, Դեղին կամ Մոնկոլեան ցեղը կարծես ուժասպառ եղաւ, կանգ

առաւ, շատ քիչ նիւթ մատակարարելով ընդհանուր ազգերու պատմութեան:

Պատմութեան մէջ գրեթէ միակ խոշոր դեր կատարող պատմական ազգեր տուած է ձերմակ կամ Սպիտակ ցեղը: Այս ցեղը տիրապետած է Ասիոյ արեւմտահարաւային մասերուն և ամբողջ Եւրոպայի մէջ, իսկ անոր մէկ ճիւղին և սեւամորթներու խառնուրդը տիրեր է Ափրիկէի հիւսիս-արեւելեան անկիւնին: Ան ունի երեք գլխաւոր ճիւղեր—սեւակաւ ցեղ՝ որուն բնակավայրն է եղեր Միջագետքը, Արաբիան, Ասորիքը (Սիրիա), Փիւնիկէն և Պաղեստինը: Այս սեմականները Ափրիկէի մէջ խառնուեցան սեւամորթներու հետ և կազմեցին Քալեան ճիւղը, որու ներկայացուցիչն են Եգիպտացիները:

Աւելի մեծ տեղ բռնած է ձերմակ ցեղի Արիական ճիւղը: Անոր բնակավայրն էր Հնդկաստանը, Իրանի կամ Երանեան լեռնաշղթան, Միջին Ասիոյ տափարակները, Փամիրի լեռներէն մինչև Կասպից ծով, Փոքր Ասիան և ամբողջ Եւրոպան:

Պատմութեան մէջ սեմականները և անոնց խառնուրդները կը գրաւեն առաջին էջերը, որովհետև անոնք աւելի կանուխ քաղաքակրթուած, մեծ պետութիւններ հիմնած են:

Որքան ալ մարդկային այս կամ այն ցեղի ժողովուրդները ունենային լաւ և ուժեղ յատկութիւններ, այնուամենայնիւ անոնք չէին կրնար քաղաքակրթութիւն ստեղծել, եթէ երկրի բնական պայմանները չօգնէին իրենց: Այսպէս՝ հիւսիսի ցուրտ ու վայրի, ժլատ բնու-

Քաղաքակրթութեան որսահետքերը

թեան մէջ անկարելի էր քաղաքակրթութիւն ստեղծել . մարդը հոն—ինչ ցեղէ ալ ըլլայ,—մինչև այսօր կ'ապրի վայրենի կեանքով, խեղճ, թշուառ : Այրեցեալ գօտիի սաստիկ տաք կլիման կը թմբեցնէ մարդը, ինչպէս և սաստիկ ցուրար : Ասկէ զատ, այրեցեալ գօտիի ձօխ ու հարուստ բնութիւնը առատօրէն ամէն բան կուտար սկզբնական մարդուն . այլ ևս չէր մղեր սեփական յամառ աշխատանքով իր հօցը ձարելու, զարգանալու, կազմակերպուելու :

Այսպէս, թէ ծայրայեղ ցուրտն իր անողորմ ժրատութիւնով և թէ ծայրայեղ տաքը իր սաստիկ առատութիւնով չեն դիւրացներ քաղաքակրթութեան ծրուանդը իրենց մէջ :

Քաղաքակրթութեան սկզբնաւորութեան համար ամէնէն աւելի նպաստաւոր է տաք-բարեխառն կլիման : Այս աեսակ երկիրները—ինչպէս Չինաստան, Հնդկաստան, Բարեխառն, Եգիպտոս—ոչ այնքան առատարեր են, ինչպէս այրեցեալ գօտիի երկիրները, որ սպաննեն նախնական մարդուն մէջ աշխատելու ամէն եռանդ, ոչ ալ այնքան ժրատ են, որ մարդը ինչքան ալ աշխատի, ո և է զգալի արդիւնք չստանայ : Այս երկիրները քիչ մը կանոնաւոր աշխատանքով կուտային և այսօր ալ կուտան աճապին հարստութիւն . այնքան՝ որ ոչ միայն աշխատողը կուշտ կ'ապրի, այլև կ'աւելնայ հարստութիւնը, կը դիզուի և մարդը կրնայ ապրելէն վերջն ալ մտածել աղիկ ապրելու, յարմարութիւններ ստեղծելու մասին : Ան ազատ մանուակ կ'ունենայ մեծածոր, նոր բաներ ստեղծագործելու :

Եւ յետոյ, երկիր մը յարմարութիւններ պիտի վայելէ հարտրոպիցոսքեան համար, որպէս զի քաղաքակրթութիւն ունենայ, պետութիւն կազմէ, զարգանայ :

Յամաքային ճամբաները յարմար չէին սկզբնական հազորակցութեան համար : Ծովն ալ սկիզբները գեռ ևս յարմար չէր, որովհետև մարդը սակաւին մակոյկ կամ նաւակ չիներ ու թիավարել չգիտէր . իսկ ծովը ալիքներ ունի, շուտ կը կլանէ անվարժ մարդերը : Ատոր համար ամէնէն յարմարը դանդաղ հոսող գետն է, որուն վրայ տախտակ մը կամ ուռած աիկ մը կը նետէին, վրան կը նստէին ու կը ճամբորդէին . ուրիշ մարդեր կը տեսնէին, անոնցմէ բան կը սորվէին, անոնց ալ իրենց գիտցածը կը սորվեցնէին :

Այդ մեծ գետերը—ինչպէս Եփրատ ու Տիգրիս, Նեղոս, Ինդոս ու Գանգէս, Գիզին գետ—կը յորդէին և իրենց ափերը կը ծածկէին սիլմով : Ունէին ընդարձակ տափարակ հովիտներ, որ սիլմի շնորհիւ խիստ արգաւանդ կը դառնային : Բաւական էր նոյն իսկ նախնական քարէ գործիքը, այդ հողը մշակելու և ապրելու համար :

Այդ ապրելու յարմարութիւնը շատ կանուխէն գետերու հովիտները հաւաքեց բազմաթիւ մարդիկ, որոնք իրարու հետ միացան, միահամուռ աշխատանքներ կատարեցին, պետութիւններ կազմեցին ու զարգացան :

Հնագոյն քաղաքակրթութիւնները միաժամանակ ծաղկեցան նոյն խոշոր գետերու հովիտներուն մէջ . այդ պատճառով ալ հնագոյն քաղաքակրթութիւնները կը կոչուին Գիւսային քաղաքակրթութիւններ կամ զարգացման գիւսային շրջան :

Գետերու հովիտներու մէջ մարդը զարգայնելով ու քիչ մը կատարելագործելով իր գործիքները, աւելի ուժ առաւ և ընդունակ դարձաւ ապրուստ ձարելու և բնակալ թիւն հաստատելու աւելի դժուարին վայրերու մէջ : Օրինակ՝ գետերու վրայ կատարելագործելով իր

մակոյիլը, սկսաւ կամաց-կամաց վարժուիլ ծովի վրայ
ալ ճամբորդելու: Այսպիսով սկսաւ ապրիլ ծովափերը,
ձաղկեցնել հոն ալ Ծովափնեայ խոշոր քաղաքակրթու-
թիւն մը:

Ընդհանուր Աղգերու պատմութիւնը կը սկսի այն
ատեն, երբ զեաներու հովիտներուն մէջ ինքնուրոյն կեր-
պով զարգացող ժողովուրդները աստիճանաբար կը
սկսին իրարու հետ յարաբերութեան մէջ մտնել:

ՀԻՆ ԱՐԵՒԵԼՔԸ

Ա. — Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ի Բ Ա Կ Ն Ա Ր Կ

Եգիպտոսը կը դանուի Ափրիկէի հիւսիս-արեւելեան
ծայրը: Հին ժամանակ Եգիպտոս
կը կոչուէր այն երկիրը, որ այժմ
ալ նոյն անունը կը կրէ: Եգիպ-
տոս անունը առեր են Յոյները,
բայց մինչև հիմա այդ անունի ծագումը անբացատ-
րելի է գիտութեան մէջ: Իրենք Եգիպտացիներն իրենց
երկիրը կը կոչէին Քէմի կամ Քէմ (Սևահող): Այդ բա-
ռէն է ծագած «քիմիա» (ասորագիտութիւն) անունը:

Երկիրը կլիման և բնակիչները

Ամբողջ երկիրը ընդարձակ անապատ մըն է. որու
մէջէն կ'անցնի Նեղոս գետը, հոսելով հարաւէն դէպի
հիւսիս և կեանք տալով իր հովտին: Իսկապէս Եգիպ-
տոս ըսելով, պէտք է հասկնալ Նեղոսի հովիտը միայն,
որու երկայնութիւնը մօտ 700 քիլոմէր է, իսկ լայ-
նութիւնը սովորաբար 15-25 քիլոմէրը: Այդ տարա-
ձութեան վրայ է որ կ'ապրի երկրի ազգաբնակի-
ւթիւնը: Անկէ դուրս, դէպի աջ՝ կը տարածուի գորշ
դեղնագոյն անապատը մինչև Կարմիր Ծովը, իսկ դէպի
ձախ՝ աւազները կ'երթան կը խառնուին նախ Լիբիա-
կան, յետոյ Սահարական անապատներուն:

Երկրաբանները կ'ըսեն որ մեզմէ տասնեակ հազար
տարիներ առաջ, Նեղոսը կը թափէր բաւական խոր ծո-
վածոցի մը մէջ, որ մտած էր մայր երկրի ներքը: Բայց

հակայ գեան անդադար իր հետը բերեր է քարեր, աւաղ, աիզմ և աստիճանաբար լեցուցեր է այդ ծոցը, ցամաքի վերածելով: Կուտակուած հողն արգելք է հանդիսացեր գետի հոսանքին առջև և ստիպեր է զայն բաժնուելու բազմաթիւ ձիւղերու, («Իելա») (Δ սառը) կազմելու և թափելու Միջերկրական ծովը: Այդ ծովէն խլուած և մշակութեան յարմար տարածութեան լայնութիւնը կը հասնի 200-250 քիլոմէրի: Երկրի մըշակման յարմար մասը հաղիւ Պելժիոյ մեծութիւնն ունի, այն ինչ ամբողջ Եգիպտոսը՝ քանի մը անգամ մեծ է նոյնիսկ Յրոմնայէն:

Նեղոսի հովիտին և դելտային աղբաբնակութիւնն այնքան խիա է, որքան Եւրոպայի ամենահոծ տեղերուն մէջ:

Նթէ Նեղոսը դազրի հոսելէ, ամբողջ Եգիպտոսը շուտով կը ծածկուի աւազով. միայն Նեղոսն է որ ջուր, խոնաւութիւն կուտայ բոյսերուն, և կենդանիներուն ու մարդուն ապրելու հնարաւորութիւն կը պարգևէ: Այդ պատճառով է որ Քրիստոսէ 400-450 տարի առաջ ապրող յոյն պատմաբան Հերոդոտոս Եգիպտոսը կ'անուանէր «Պարգեւ Նեղոսի»:

Ամէն տարի յունիսին Նեղոսի ջուրը կը սկսի բարձրանալ, և յորգելով, ծածկել հովտի տափաստանները: Ջուրն աստիճանաբար կ'աճի և սեպտեմբերի սկիզբները սովորական մակերեւոյթէն 24—25 ոտք կը բարձրանայ, ստանալով նեղ ու երկար լճի մը ձևը: Գիւղերն ու քաղաքները, որ ընդհանրապէս շինուած են աւելի բարձր դիրքերու վրայ, կ'ղղիներու նման կը մնան ջուրերուն մէջ և հազորդակցութիւնը կը կատարուի մակոյկներով ու նաւերով: Սեպտեմբերէն կը սկսի ջուրը նուազիլ և նոյեմբերին կը մանէ իր սովորական հունին

մէջ: Յորդած ժամանակ գետին ջուրը նախ սաստիկ կը պղտորի և յետոյ արիւնի գոյն կը ստանայ, որովհետեւ Հապէշիստանի լեռներուն մէջ հայած ձիւներու և արևադարձային առատ անձրեւներու ջուրերը իրենց հետ կը բերեն սև ու կարմիր տիղմ: Հեղեղէն յետոյ այդ տիղմը կը նստի շրջապատ դաշտերուն մէջ և կը պարարտացնէ հողը: Փողովուրդը հացահատիկները կը ցանէ փխրուն հողի վրայ, առանց վարելու: Յանքը տեղի կ'ունենայ նոյեմբերին, երբ օդին բարեխառնութիւնը կը հաւասարի մեր երկրի մարտ-ապրիլ ամիսներու ջերմութեան: Իսկ հունձքը կ'ըլլայ մարտի սկիզբները և կուտայ անհաւատալի առատ բերք — մէկին 200—300: Այդ իսկ պատճառով այս փոքրիկ տարածութիւնը հին ժամանակ կը հանդիսանար տեսակ մը հացի շտեմարան շրջակայ երկիրներուն համար:

Շնորհիւ սաք-բարեխառն կլիմային, Եգիպտոսի բուսականութիւնը շատ ճոխ է. արմաւ, ագամաթուզ, պանան, նարինջ, կիտրոն կ'աճին բաց օդին մէջ: Հին ժամանակ ամէնէն աւելի ուշազրաւ էին երկու տեսակ բոյսեր — պապիրոսը և վարդագոյն լուտաս ծաղիկը, երկուքն ալ ջրային բոյսեր:

Պապիրոսի թարմ ու բարակ ոստերը կ'ուտէին, քիչ մը աւելի մեծ ձկուն ձիւղերէն զամբիւղներ կը հիւսէին, իսկ աւելի հաստերը իրարու կապկպելով՝ թեթեւաշարժ մակոյկներ կը շինէին:

Սակայն այդ բոյսը ամէնէն աւելի նշանաւոր է անով, որ կը ծառայէր իբր քուրդ գրելու համար: Անոր բունին կեղեւը բարակ բարակ կը կճպէին և իրարու քով կը դնէին, այնպէս որ բոյսին հիւսուածքը մէկ շարունակու-



Պապիրոս

Թիւն կը կազմէր: Այսպէսով կը ձեւանար մեծ թերթ մը, բայց շատ բարակ: Այնուհետեւ անոր վրայ կը փակցնէին երկրորդ շերտը, խաչածեւ դընկով. և այդպէս կը շարունակէին այնքան, որ կը ստանային իրենց ցանկացած թանձրութեամբ թուղթ, որուն վրայ կը գրէին, սե ներկով՝ մանր սաւերը, կարմիրով՝ գլխատաւերը:



Լուսա

Այժմ պայիրոսը հափազանց հազուադէպ է Եգիպտոսի մէջ. կ'աճի դէպի հարաւ, Մեծ լիճերու շրջանին մէջ:

Իսկ վարդագոյն լուսասը բոլորովին անհետացած է Եգիպտոսէն, ուր առաջ կ'աճէր թէ վերին, և թէ ստորին երկրամասի յամրահոս և կայուն ջուրերուն մէջ, իր դմայլելի բուրմունքով լեցնելով շրջապատի մթնոլորտը: Հին Եգիպտացիներու հանրային, կրօնային, ընտանեկան ու մտանաւոր կեանքին մէջ այդ ծաղիկը կը կազմէր տեսակ մը անհրաժեշտութիւն, իսկ այսօր կը գտնուի միայն Հնդկաստանի մէջ:

Եգիպտոսի կլիման, ինչպէս ըսինք, բարեխառն է, — ոչ այնքան ցուրտ, որ սկզբնական մարդը ստի ուժած ըլլար իր ամբողջ ոյժը լարել միայն ցուրտին դէմ կուելու և խեղճուկ կեանք մը վարելու համար, ոչ ալ այնպէս տաք, ինչպէս այրեցեալ գօտիի մէջ, ուր մարդ կը թու՛նայ, աշխատանքի անընդունակ կը դառնայ: Այնտեղ մարդ թեթեւ աշխատանքով կրնար դիւրաւ ապրուստ ձարել, լաւ սպրիլ, հարստանալ և ժամանակ ալ ունենալ մտածելու, նոր ու նոր գործիքներ հնարելու, սորվելու և գուարճանալու:

Երկրի սկզբնական սեւամորթ ազգաբնակչութիւնը եղած է վայրենի և վարած՝ թափառական կեանք:

Գրաւոր պատմութեան շրջանէն առաջ, Ասիայէն եկած է սեմական քիչ շատ զարդացած ցեղ մը, որ խառ-



Սեմական գաղթականութիւն մը դէպի Եգիպտոս, աւելի նոր օրջանի մէջ:

նուելով տեղացիներուն հետ, կազմած է լուսն Եգիպտական ժողովուրդը: Այդ ցեղը կարողացեր է շինել ջրանցքներ, աւազաններ, նեղոսի յորդած ջուրերը լեցնել այդ ջրանցքները, ուղղութիւն տալ անոնց, ամբարել ու պահել՝ իր ցանքերը ոռոգելու համար: Ան կրցեր է տեղ-տեղ թու՛մբեր կապել և նեղեղէն փրկել

այս ուսանողին վայրերը: Մէկ խօսքով այդ ցեղը ստեղծած է երկրի սկզբնական քաղաքակրթութիւնը, երկրագործութիւնը և բնակավայրերը:

Անոր աշխատանքով են ծակուած այն ժայռերը, որոնք Փայուսի նահանգը կը բաժնեն Նեղոսի ջուրերէն: Մարդիկ հսկայական աշխատանք թափելով ջուրը տարած են Փայուս, և այդ անապատը դարձուցած են նոյն իսկ Եգիպտոսի ամենահացաւատ նահանգը: Այնտեղ հիմնած են մեծ ջրամբար, երաշտութեան դէմ կուսկու համար: Այդ ջրամբարը կը կոչուէր Մէսրիս լիճ, որուն մակերևոյթն էր 80 քառ. մղոն:

Սպիտակ ցեղի այդ սեմական ճիւղը Եգիպտոսի մէջ հաստատուելով, հիմնեց բաղմաթիւ ինքնուրոյն, իրարմէ անկախ կուսակցութիւն, որոնց Յոյները սուին Նոս նունը, իսկ անոնց պետերը կոչեցին Նոսարփուներ: Սակայն տեղացիներն այդ համայնքներուն կուսային Հիսպ սնունը:

1. ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Նեւոր սեմացիներէն և բնիկ սեւամորթներէն կազմուած եգիպտական ժողովուրդն սկզբները դեռ շատ վայրենի և աղքատ վիճակի մէջ էր: Իր գործիքները շինուած էին հասարակ քարերէ, ոսկորներէ ու փայտերէ: Բոլորն ալ կը դբաղէին ձկնորսութեամբ, խաշնարածութեամբ, որով ու շատ քիչ չափերով՝ երկրագործութեամբ: Բայց երկար դարերու ընթացքին, մէկ կողմէ կը բաղմանար ժողովուրդը, միւս կողմէ աւելի փորձառու


Ա. Շ. խասանի
և Կարսուրեան
բաժանումը

կը դառնար, նոր գործիքներ կը հնարէր, մշակութեան աւելի լաւ ձեւեր կը ստեղծէր. մէկ խօսքով՝ հեաղհեաէ, աճող ժողովուրդը կերակրելու և աւելի լաւ ապրելու պահանջը կը ստիպէր դանոնք ֆալաֆալրուիլ:

Գրիստոսէ մօտ 4000 տարի առաջ, Եգիպտոսի ժողովուրդն այնքան զարգացած էր ու հնարամիտ, որ արդէն ստեղծած էր իր հաշակաւոր ջրանցքներն ու լիճերը, որոնցմով կը սանձէր Նեղոսի կործանիչ հեղեղները և իր օգտին կը գործածէր այդ ամենի ջուրերը: Այդ շրջանին արդէն անոնք ծանօթ էին մետաղներու քանի մը տեսակներուն. բայց դեռ գործիքներն ընդհանրապէս կը շինէին նուրբ, տաշուած քարերէ: Անոնք արդէն կրցեր էին հաշուել արեւին տարեկան տեսանելի շրջանը, որ տեղի կ'ունենար $365\frac{1}{4}$ օրուան մէջ: 3000 թուականներուն (Գրիստոսէ առաջ) անոնք արդէն սորված էին աղիւսներ պատրաստել և աղիւսէն ու քարերէն խոշոր բնակարաններ շինել իրենց պետերուն ու աստուածներուն համար: Այդ բնակարաններուն պատերն ալ կը զարդարէին վառվռուն գունաւոր նկարներով, որոնք կը ներկայացնէին այն ժամանակի կեանքն ու սովորութիւնները: Գարերէն կը քանդակէին իշխաններու և աստուածներու արձաններ: Անոնք արդէն տաւեր էին ստեղծած, և անոնցմով կը դրէին պատերու նկարներուն տակը կամ եզերքները: Գիտէին վերջապէս կանեփէ ու վուչէ բաւական նուրբ կտորներ գործել ու ճաշակաւոր նկարներ գծել անոնց վրայ:

Փանի դեռ ժողովուրդն սկզբնական բարբարոս վիճակի էր, հասարակութեան բոլոր անդամները իրարու հաւասար էին: Դեռ հարուստներ ու աղքատներ չկային, որովհետեւ բոլոր մարդիկ ալ կրնային եղած պարզ ու դիւրին արհեստներով զբաղիլ և իրենց գլուխը

պահել: Բայց երբ կեանքն այնքան առաջ դնաց որ ստեղծուեցան վերը յիշուած բարդ զբաղումները, — այլևս կարելի չէր հասարակութեան անդամներուն մէջ պահել վիճակներու և հարստութեան հաւասարութիւն:



Որմնադիրներ

Ամէնէն առաջ, հասարակութեան մէջ երեւան եկաւ աշխատանքի բաժանումը: Շատեր սկսան կամաց-կամաց թողուլ բոլոր նախկին արհեստները և զբաղիլ միայն երկրագործութեամբ մէկ քանին դարձան քարտաշ, ուրիշներ՝ որմնադիր, ջուլհակ, ոմանք՝ դպիր, նկարիչ և այլն: Այս բազմաստեասկ արհեստաւորները կամաց-կամաց կը հեռանային պղտիկ գիւղերէն, կը համալսւթուէին մեծ գիւղի մը մէջ, որ աստիճանաբար մեծնալով կը դառնար քաղաք: Թէ գիւղերուն և թէ նոր կազմուած քաղաքներուն մէջ արհեստներն ու զբաղումները կ'անցնէին հօրմէն զաւկին, թոռանը ժառանգաբար և ասով մարդոց միջեւ տարբերութիւնն աւելի կը շեշտուէր:

Ասիկէ զատ, առաջ կուգար և ուրիշ տարբերութիւն մը, — հարստութեան տարբերութիւնը: Այն տոհմերն ու ընտանիքները, որոնց մէջ շատ էին ուժեղ, խելացի,

աշխատելու ընդունակ անձեր, կը սկսէին աւելի յաւապրիլ, աւելի հարստանալ: Ոմանք ձեռք կը բերէին աւելի շատ անասուններ, հողեր, պարտէզներ կամ կը բանային աւելի մեծ արհեստանոցներ, իսկ այդ գործերուն մէջ վարձատրութեամբ բանեցնելով աւելի շունեւոր մարդիկը, անոնց կը վճարէին շատ աւելի քիչ, քան բուն աշխատանքի արդիւնքները: Եւ ուրիշի քրտինքներուն արդիւնքով աւելի կը հարստանային:

Այդպիսով երեւան եկան հարուստներ ու աղքատներ, տերեր և ծառաներ: Երբ քանի մը սերունդ իրարու ետեւէ մէկ տոհմ կամ մէկ մեծ ընտանիք կը հարստանար, իսկ ուրիշները կ'աղքատանային, մարդոց մէջ յառաջ կուգար այն համոզումը, թէ հարուստը միշտ հարուստ է եղեր, իսկ աղքատը ծնած է յաւիտեան աղքատ: Թէ հարստութիւնն ու աղքատութիւնն ասուածներու անօրինութիւնն է, անոնց պարզեւն է:

Ահա այդպէս ծնունդ առին հարուստ և աղքատ դասերը:

Ներոսի հովիտին եկուոր սպիտակներէն և տեղացի սեւամորթներէն կազմուած էին քաղմաթիւ մանր համայնքներ, կամ փոքրիկ իրարմէ անկախ, իրենք իրենց համար ապրող հասարակութիւններ: Շատ հին ժամանակներէ սկսած, այդ համայնքներուն մէջ տեղ-տեղ առաջ էին եկած հարուստ, հզօր ու ճարպիկ տոհմեր, որոնք իրենց ազդեցութեան տակ էին առած համայնքի անդամները, դառնալով անոնց առաջնորդը, ղեկավարն ու պետը: Այդպիսի տոհմերը սերունդէ սերունդ վայելելով որոշ իրաւունքներ, կը դառնային ժառանգակալ անդամակալներ:

Համայնք-ընկերային կազմը


ներ. քաղաքներու կամ խոշոր գիւղերու մէջ կ'ունենային մեծ տուններ, տէր կը դառնային հողերու և անոնց վրայ բնակող գիւղացիներուն. հրամաններ կու տային անոնց, կը ստանային անոնցմէ որոշ տուրքեր և փարթամ կ'ապրէին: Երկար դարեր այդ վիճակին մէջ ապրելով, մարդիկ կրկին կը սկսէին հաւատալ, թէ աստուածներն են որ այդպէս կարգադրած են ամէն բան: Այդ կերպով յառաջ եկան ազնուական և ճորտ դասակարգերը:

Բայց հարստացան ու մեծ իրաւունքներու տէր դարձան նաև այն մարդիկ, որոնք կը ծառայէին աստուածներուն, կը բացատրէին անոնց կամքը, հասարակ մահկանացուներուն կը յայտնէին անոնց գուժը, սէրը կամ բարկութիւնը: Առաջ ասոնք եղած են հասարակ կախարդներ, գուշակողներ, ճարպիկ անհատներ, որ կը բացատրէին ջուրերու գլգլումը, տերեւներու սօսափիւնը կամ հովին վայիւնը, ամպերու կուտակումը, աստղերու շարժումը, և այլն: Իսկ յետոյ կամաց-կամաց անոնք դարձան հոգեւորականներ: Սկիզբները, երբ գեւաշխատանքի բաժանում չկար և հասարակութեան մէջ բոլորը հաւասար էին ու բոլորն ալ չունեւոր, այդ կախարդներն ու գուշակողները նոյնպէս ազքատ էին: Բայց երբ յառաջ եկան հարուստներ ու աղքատներ, ազնուականներ ու մշակներ կամ ճորտեր, հասարակութիւնը կրցաւ շինել իր աստուածներուն համար մեհեաններ, անոնց տալ առատ նուէրներ, յատկացնել հողեր, պարտէզներ ու այգիներ, մշակներ ու ճորտեր: Այն ատեն աստուածներուն ծառայող, անոնց կամքը

Փաւրմե

Անջեւն կը տանին ստրուկները, քուրմ մը բռնել կը ծնէ, իսկ ուրիշները կրնան օւսերուն վրայ կը կրնան աստուածաբաժանը

Հորու ստնու յարկաւոր բարիքը



բացատրող, անոնց յեզրակ հասկցող այդ առաջին հոգե-
ւորականները կամ ֆուրմերն ալ սկսան հարստանալ •
աստուածներուն համար եղած բոլոր նուէրներն ու հա-
րըստութիւնները անոնց կը պատկանէին :

Քուրմերն իրենց ամբողջ կեանքը կը նուիրէին
աստուածներու ծառայութեան և ուրիշ գործ չէին կա-
տարեր : Մեհեանի ծառայութիւնը, գուշակութիւնները,
աստուածներու կամքը մեկնարանելը և աղօթքներով
անոնց սիրար շահիլը կամ թշնամիներու վրայ բարկու-
թիւն հրաւիրելը դարձաւ շատ լուրջ և բարդ զբա-
ղում մը . կազմուցեալ ֆուրմերու դասի գիտութիւնը,
որ երկար վարժութիւն և ուսում կը պահանջէր : Բայց
քուրմերն իրենց գիտութիւնը չէին սորվեցնէր ուրիշ
մարդերու , այլ միայն իրենց սոսնակիցներուն կամ
մօտիկ ազգականներուն : Առաջ անոնք հասարակ վճուկ-
ներ, կախարչներ էին . յետոյ դարձան գիտնականներ,
մեկնարաններ, ծոմապահներ, բարձր պաշտօնեաներ :
Անոնց արգիլուած էր ուտել «անսուրբ» կենդանիներու
միսը, որոնք հաճելի չէին աստուածներուն :

Քուրմերը շատ հարուստ և զօրեղ դասակարգ մը
կը կազմէին : Ունէին շատ մեծ հողեր ու կալուածներ,
բայց հարկ չէին վճարեր : Կը վարէին պետական բազ-
մաթիւ ու բազմատեսակ պաշտօններ և փարաւոններու
արքունիքին ամենամօտ մարդիկն էին : Հարկ չվճարե-
լով, իրենց կալուածներէն ու մեհեաններէն մեծ ար-
դիւնքներ ստանալով և սնանկելով ժողովուրդին ընծա-
յաբերութիւններով, քուրմերը մեծապէս կը հարստա-
նային : Անոնց զբաղումն էր աղօթել աստուածներուն,
խնկարկել անոնց, հազցնել զանոնք, զոհի միս հրամցնել,
տօն օրերուն կազմել կրօնական թափորներ, աստուած-
ներու արձանները տապաններու մէջ ուսերու, գլուխ-

ներու վրայ կրելով կամ զարդարուն նաւակներով նե-
ղոսի վրայ պատցնելով : Անոնք խիստ մաքուր կը պա-
հէին իրենց անձը, օրական չորս անգամ կը լուաց-
ուէին, երեք օրը անգամ մը կ'ածիրուէին, կը հազ-
նէին սպիտակ քթանէ վերնազգեստ և պապիրոսի փայ-
տէ քոշեր : Շատ մտերիմ էին փարաւոնի հետ, եթէ այդ
թագաւորը չէր դպչեր իրենց շահերուն, բայց երբ կը
վեասէր քուրմերուն, անոնք կը դառնային խիստ
վտանգաւոր թշնամի : Այսպէս Ամէնօֆիս Գ. փարաւոնը
երբ ուղեց ջնջել եգիպտական հին կռապաշտութիւնը և
հիմնել մէկ աստուածութիւն և երկրպագել արևի ճա-
ռագայթներուն կամ Աթէնասին, քուրմերը զգացին որ
իրենց շահերը պիտի վեասուին և իսկոյն մեծ կռիւ
մղեցին ու փախցուցին փարաւոնը : Իսկ երբ ան մեռաւ,
կործանեցին թէ անոր պալատը, մեհեանները և թէ
նոյն իսկ գերեզմանը :

Քուրմերէն յետոյ ամէնէն ազդեցիկ դասը կը կազ-
մէին զինուորականները :

Անոնք փարաւոնէն կը ստա-
նային մարդ-գլուխ մօտ 3 օրա-
վար հող, որ սղատ էր ամէն


Զինուորական դաս

տեսակ հարկէ և տուրքէ : Թէ քուրմերու և թէ գին-
ուորներու ծառայութիւնը ժառանգական էր, հօր-
մէն կ'անցնէր զաւկին ու բոլոր ազգականներուն, կալ-
ուածներու հետ միասին : Խաղաղութեան ժամանակ ա-
մէն տարի 2000 հոգի կը մանէին փարաւոնի, մէկ մասն
ալ իշխաններու անձնական ծառայութեան մէջ, իսկ
պատերազմի ժամանակ չըջանի հրամանատարը զէնքի
տակ կը կանչէր բոլորը : Զինուորական դասի բոլոր ան-
դամները կ'արձանագրէին յատուկ տետրակներու մէջ,



Փարաոնի գլխով փրճուղիների ցուցանիս

որոնք կը պահուէին զինուորական հրամատարներուն քով: Ամէն այր մարդ պարտաւոր էր պատերազմի երթալ: Ազատ էին ծերերը և տկարները: Ո՛վ որ հրամատարի առաջին կոչին իսկ չէր շտապեր դէպի զօրա-



Ռեզիդենտի մահուանը հետոստեղծուած զինուորական խմբի նկարը: Տեղագրութիւնը — Մեմփիսի Մեթրոպոլիտենական թանգարանը: —

բանակ, կը զրկուէր պետութենէն ստացած հողէն: Փարաւոնին ծառայող զինուորները բացի իրենց սովորական եկամուտներէն, պալատէն կը ստանային նաև միտ, հաց ու գինի:

Զօրքը կը բաղկանար երեք տեսակէ . ծակնազիւ հետեւակ, քերեւազիւ հետեւակ եւ հեծեղագորֆ: Առաջին տեսակը լաւ սպառազինուած էր . ունէր սաղաւարա, մեծ վահան մը, կաշիէ հասա գոգնոց, սուր ու նիզակ, կամ սապար ու դաշոյն: Թեթեւազէններն ունէին նեա ու աղեղ և աէգ: Զօրավարներն ու հարուստ զինուորականները սրատերազմի կ'երթային երկանիւ թեթեւաշարժ կառքերով: Կառապանները կը նստէին անոնց կողքին և կը քշէին ձիերը, իսկ իրենք կը հարուածէին թշնամին իրենց զէնքերով:

Երբեմն զօրք կ'առնէին նաև երկրագործ, արհեստաւոր ու հովիւ գասերէն, որոնք, — մանաւանդ երկրագործ դիւղացիները, — սաստիկ կը վախնային զինուորութենէ, կ'ատէին դայն, և փախուսա կուտային: Հարկը պահանջած ատեն փարաւոնները իրենց բանակները կը զօրացնէին նաև վարձկան օտար զինուորներով:

Ստորին դասերն էին առեւտրականները, արհեստաւորները, երկրագործները, հովիւները եւ սրուհիները:

Ստորին դասերը

Հինգ դասերէն միայն վաճառականները ազատ մարդիկ էին: Միւսները բոլորն ալ ճորտեր կամ սարուկներ էին: Վաճառականները խումբերով կը ճամբորդէին, որովհետև ճամբաները վտանգաւոր էին: Անոնք կենդանի յարաբերութեան մէջ էին եթովպիոյ, Նուբիայի, Արաբիոյ, Ասորիքի հետ: Արասածելով իրենց հարուստ երկրի բերքերը, անոնք զբացի երկիրներէն կը բերէին զանազան ապրանքներ և ատով մեծ հարստութիւն կը դիզէին: Անոնք կը ճամբորդէին կամ նեղոսով կամ ցամաքի վրայ դանդաղաշարժ կարաւաններով և զինուած խումբերով:

Արհեստաւորները Եգիպտոսի մէջ ազատ մարդիկ չէին, այլ ճորտեր ու սարուկներ: Անոնք կ'աշխատէին առաւօտէն մինչեւ իրիկուն ուշ առեւ, բայց իրենց աշխատանքին պտուղը իրենք չէին վայելեր, այլ տէրերն ու իշխանները, իրենց տալով միայն այնքան, որ անօթի չմնանէին. իրենց վարձքն էր օրական քիչ մը հաց, քիչ մը իւղ կամ ազած միս (սպուլսա), իսկ օտն օրերուն՝ մէկ-երկու չափ գինի: Արհեստաւորներու վերակացուները յաճախ անխղճօրէն կը ծեծէին զանոնք:

Արհեստները շատ զարգացած էին Եգիպտոսի մէջ: Բուրդէ և լուռէ գործուածքները և զանոնք ներկելու արհեստը շատ զարգացած էր: Կը շինէին գեղեցիկ առարկաներ՝ սակիէ, արծաթէ ու սրոնոգէ: Հռչակաւոր էին նաև եգիպտական փայտէ կարասիները:

Եգիպտոսի մէջ ամէնէն աւելի տարածուած դասակարգը երկրագործներն էին:

Երկրագործներ

Ամբողջ երկրի հողին մէկ մասը կը պատկանէր զինուորականներուն, միւս մասը՝ քուրմերուն, իսկ մնացած բոլորը Փարաւոնին: Երկրագործը սեփական հող չունէր . ան ճորտ էր . կ'ապրէր ուրիշներու հողերուն վրայ և կը մշակէր զանոնք, ստանալով շատ սղորմելի վարձատրութիւն: Ան կպոծ էր հողին, իրաւունք չունէր իր կամքով թողելու մշակած հողը և երթալու ուրիշ կալուածատիրոջ հողին վրայ ապրելու: Հողագործի կեանքին թշուառութիւնը ճշատօրէն նկարագրուած է հին պապիրոսի մը մէջ .


«Սէն երկրագործ իր կեանքը կ'անցընէ իր անասուններուն հետ . . . Եթէ առողջ է, ուրեմն առողջ է իր անասուններուն մէջ. Եթէ հիւանդ է, իր անկողինը գետինն է՝ կրկին իր անասուններուն միջև: Հազիւ իրիկուն կը դառնայ աշխատանքէն իր»

տունը, իր քանջարանոցը և արդէն կրկին ստիպուած է աշխատելու վերադառնալ :

Ուրիշ պայլիրոս մը կը նկարագրէ թէ ինչպէս դաշտամուկերը մէկ կողմէն, գողերը միւս կողմէն, կառավարական հարկահանները երրորդ կողմէն կը



Հողը մշակել



Յանել



Հնձել



Խուրձ կապել



Հարկ վճարել

Մրկիագործ աշխատանքներ

հարստահարեն երկրագործը, կը ծծեն անոր բոլոր աշխատանքին պտուղները, կը չղթայեն զայն և ջրանցքներու վրայ մշակութեան կ'ուղարկեն, յաճախ կինն ու երախաններն ալ կը խլեն :

Հովիւները կը կազմէին առանձին դաս մը, շատ մօտ երկրագործներուն : Կ'ապրէին առանձնապատուկ կեանքով, քաշուած մարդկային բնակավայրերէն : Հօտերը կ'արածէին դալուրիներու մէջ, մինչև որ խոտը կը սպառէր . յետոյ այդ տեղէն կը շուէին նորանոր դաշտեր ու արօտներ : Այդ թափառական կեանքը աւելի կը վայրենացնէր, կը կոպտացնէր զիրենք . մաղն ու մօրուքը երկարած, գգգզգուած, արեւահար դէմքով : Միւս բնակիչները միշտ կը խուսափէին և նոյն իսկ կը վախնային ասոնցմէ : Հօտերը պաշտպանելու համար մշտապէս կռիւ մղելով զազաններու և աւազակներու դէմ, հովիւները ստացած էին ոչ միայն լաւ կուտելու ընդունակութիւն, այլ ևս մեծ ուժ և յանդգնութիւն :

Հովիւներ

Շատ հին ժամանակներէ ի վեր Եգիպտոսի մէջ կային բազմաթիւ ստրուկներ : Առ հասարակ ստրկութիւնը ծընունդ է արտաքին պատերազմներու : Գերի բռնուած թշնամին կը դարձնէին ստրուկ և կը ստիպէին զայն աշխատիլ տէրերու համար : Յետոյ, երբ առեւտուրը զարգացաւ, Եգիպտացիներն սկսան ներսերէ և ուրիշ երկիրներէ բերել բազմաթիւ ստրուկներ և վաճառել շուկաներու մէջ, իրրեւ անասուններ :

Ստրուկներ

Եգիպտոսի մէջ ստրուկ ունեցողները փարաւտներն էին, խոշոր կալուածատէրերը, իշխանները և հարուստ վաճառականները : Զանոնք կը բանեցնէին դաշտերու մէջ, հանրային շէնքերու վրայ կամ արհեստանոցներու մէջ,

վերակացուներու հսկողութեան տակ, որոնք ամենա-
 չնչին բանի համար սաստիկ կը դանակոծէն, նոյն իսկ
 կը սպաննէին ստրուկները: Այդ մարդկային հօտե-
 րու աշխատանքովն են ստեղծուած եղիպտական հսկայ
 ջրանցքները, լիճերը, բուրգերը, սաճարները, պա-
 լատները:

Եւ յետոյ, ստրուկներու վարձատրութիւնն այն-
 քան քիչ էր, որ անոնք միշտ անօթի, միշտ կիսաքաղց
 վիճակ ունէին: Անոնք յաճախ կ'ապստամբէին, աշխա-
 տանքէ կը հրաժարէին անօթութեան պատճառով: Այդ-
 պիսի դէպքերու ատեն տէրերը անոնց հետ կը վար-
 ուէին սոսկալի դազանութեամբ:

Եղիպտական այս բոլոր դասերն իրարմէ կը խորշէին,
 իրարու հետ յարաբերութիւն, խնամութիւն չէին ընէր
 և մէկէն միւսին չէին անցներ, որովհետեւ սովորութիւ-
 նը, որ օրէնքի ուժ էր ստացած, կ'արգելէր այդ բանը:

Այդ քարացած դասերը կը կոչուէին կասսա:

Այս բոլոր դասակարգերէն դուրս՝ Եղիպտոսի
 մէջ կար դասակարգ մը, որ կը կոչուէր դպիրներու դաս, —
 (սգրիպ): Դպիրը գրադիրն էր, գրագէտը, այն ժամանակի դիա-
 նականը: Դպիր կրնային դառնալ բոլոր դասա-
 կարգերէ անձեր, եթէ երկար տարիներ աշխատե-
 լով այս կամ այն վարպետի ձեռքին տակ, սորվէին
 գրելու և կարդալու արհեստը, որ շատ դժուար էր այն
 ժամանակ: Ուշիմ և ընդունակ երեխան կը յանձնէին
 ո՛րեւէ դպիրի մը, որուն քով նախ կը սորվէր քիչ մը
 գրել կարդալ, իսկ յետոյ տասնեակ տարիներ կ'արտա-
 գրէր զանազան պաշտօնական թուղթեր, հրամանագրեր,

Դպիրներու դաս

պայմանագրեր, մասնաւոր նամակներ և այլն: Այդպի-
 սով կամայ կամաց կ'իւրացնէր երկրի բարդ ճիւղերը-
 ները կամ նշանագրերը: Եթէ դպիրը ընդունակ մարդ էր,
 գեղեցիկ գիր ունէր ու
 լաւ կը նկարէր, յա-
 ճախ կը դառնար բար-
 ձըր պաշտօնեայ, նա-
 հանգապետ, երկրի ո-
 ւէէ մէկ մասին կառա-
 վարիչ. կը հարստա-
 նար, մեծամեծ պա-
 տիւներ կը վայելէր:



Դպիր (սգրիպ)

Ֆոլորը զայն կը նկա-
 տէին ազնուական,
 միայն մեռնելէն յետոյ
 անոր գերեզմանին վը-
 րայ կը գրուէր թէ
 «սերած է անյայտ
 նախնիքներէ»:

Սոնարն դասակարգերուն մէջ ամէնէն լաւ կ'ապ-
 րէին դպիրները: Այդ մասին պատկերոս մը շատ ընո-
 րոշ նկարագրութիւն կուտայ: Գրողը դպիր մըն է, որ
 խրատ կը կարգայ իր զաւկին.

— Պղնձագործն ամբողջ օրը կ'աշխատի, իսկ երբ գիշերը կու
 գայ, մտի լոյսով ալ դեռ կը շարունակէ իր աշխատանքը: Կօշ-
 կակարը բոլորովին կը փձանայ, չի կրնար չքաւորութենէն ազա-
 տիլ. ստիպուած միշտ կաշի պիտի կրծէ: Տես քարտաշ որմնագի-
 րը. միշտ տկար է, որովհետեւ ստիպուած է աշխատիլ հովին
 տակ, պատերու ծայրերէն կախուած՝ ինչպէս լուտասի ծաղիկ-
 ները. իր ձեռքերը կը թուլնան, կը կախուին յոգնութենէն,
 զգեստները պատառուտն են, հազիւ կրնայ իր օրական ապ-
 րուստը շահիլ. տուն կ'երթայ և կը ծեծէ իր երեխաները: Ես

շատ տեսեր եմ այդպիսի աշխատանքներ և ամէն տեղ միայն դա-
ժանութեան եմ հանդիպած, միայն դաժանութեանս Այդ պատ-
ճառով կ'ըսեմ քեզի, գերքերով զբաղէ, գրեւ սովորէ:

Յետոյ հայրը զուգիւն կը բացատրէ թէ ինչպէս այդ
«ագնիւ արհեստը» կը պահպանէ մարդու անողջու-
թիւնը, մեծ օգուտներ կուտայ և մարդը կը հասցնէ
մինչև արքայական պալատը:

Սկիզբները իւրաքանչիւր մանր համայնք, իւրա-
քանչիւր շրջան կը կազմէր մէկ
իշխանութիւն, որու զլուխը
կ'անցնէր այս կամ այն զօրեղ
տոհմը: Այդպէսով կազմուեցաւ

Պետական կազմ

երկրի սղնուականութիւնը: Առաջ համայնքները մանր
էին և իրարմէ բոլորովին անկախ, յետոյ աստիճանա-
բար զօրեղ համայնքները կը տիրէին շրջակայ թոյլ
համայնքներուն, կը միացնէին իրենց հետ, կը կլանէին,
կը ձուլէին: Այդպէսով ստեղծուեցան խոշոր համայնք-
ներ կամ լիւրեր, (նկայ) որոնց պետերը կը կոչուէին
լիւրաբոսներ: Անոնց թիւը 42 էր. 22ը վերին, 20ը ստու-
րին Եպիպոստի մէջ: Մէկ համայնքը միւսին տի-
րելով, մէկ լիւր միւսին հպատակ դարձնելով, Եպիպ-
ոստի մէջ աստիճանաբար կեդրոնացաւ իշխանութիւնը,
և ամբողջ երկիրը կազմեց երկու պետութիւն. — Հա-
րաւի և Հիւսիսի:

Հարաւի պետութիւնը, որ կը կոչուէր Վերին
Եպիպոստ, կը սկսէր Մէմփիսի շրջանէն և կը տարած-
ուէր մինչև Հապէշաստանի լեռները: Գլխաւոր քաղաքն
էր Մէմփիս կամ Նէհէն, ուր կը նստէր այդ պետութեան
գլխաւորը՝ թագաւորը: Այդ երկրի փարաւոնը կը գնէր
սպիտակ թագ և իր զինանշանին վրայ կը կրէր լու-

տասի ծաղիկ: Ստորին Եպիպոստը կը տարածուէր Նե-
ղոսի տեղապին վրայ, Մէմփիսի շրջանէն դէպի հիւսիս:
Մայրաքաղաքը շինուած էր Նեղոսի գետաբերանի ձա-
հիճներուն մօտ և կը կոչուէր Սախ: Թագաւորը կամ
Փարաւոնը կը գնէր կարմիր քաղ, իսկ զինանշան էր
պապիրոսի նկարը:

Աւանդութիւնը կ'ըսէ, որ շատ հին ժամանակներէ
Եպիպոստը եղած է մեծ պետութիւն մը որու վրայ
կարգով թագաւորած են չորս աստուածներ, Ռա, Շու,
Քէր և Օզիրիս անունով: Օզիրիսը սպաննած է իր
եղբայրը, բայց անոր որդի Հորը սպասածքած է իր
սպանիչ Սէթի դէմ. պատերազմը եղած է չափազանց
կատաղի և տևած է շատ երկար, մինչև որ Թօս աստ-
ուածը երկիրը բաժնած է այդ երկու քիւն մէջ. Սէթն
ստացեր է Ստորին Եպիպոստը, իսկ Հորը՝ Վերինը: Յե-
տոյ, Քրիստոսէ 3,300 տարի առաջ Մէնէս փարաւոնը
միացուցեր է այդ երկու պետութիւնները և դարձուցեր
է մեծ կայսրութիւն մը, Եպիպոսական պետութիւնը:
Բոլոր նահանգներու իշխանները հպատակեր են Մէնէ-
սին, և այս վերջինը առանց ջնջելու անոնց իրաւունք-
ներն ու իշխանութիւնը, ամէն ինչ թողեր է անոնց
ձեռքը, պահանջելով միայն, որ իրեն հաղանդին և
հարկ ու զօրք տան: Մէնէսը պահած է Ստորին և Վե-
րին պետութիւնները, երկուքի թագն ալ գնելով իր գըլ-
խուն, միացնելով երկուքին ալ գոյներն ու զինանշան-
ները: Նոյն իսկ իր պալատը եղած է կրկնակի, իբր թէ
երկու պետութիւններու պալատներուն միացումը և
կոչուեր է «Փիրատի», որ կը նշանակէ «կրկնակի բարձր
տուն», որմէ առաջ է եկած Փարաւոն տիտղոսը թագա-
ւորներու համար:

Ամբողջ երկիրը բաղկացած էր 42 գաւառներէ կամ

նօմերէ, որոնց 2-ը վերին եգիպտոս էին, իսկ 20ը Սաորին: Այդ շրջաններն ունէին իրենց գլխաւոր քաղաքները, ուր կը բնակէին շրջաններու կառավարիչները կամ նուարխանները: Այնտեղ էին նաև նոյն շրջանի աստուածներու մեհեանները և գլխաւոր քուրմերը: Իւրաքանչիւր նօմ կը կառավարուէր իր ժառանգական իշխաններով, իր ուզած ձևով և ամենևին կապ չունէր դրացի նօմերու հետ: Յաճախ այդ նօմերը, իբր ինքնուրոյն իշխանութիւններ, իրարու հետ պատերազմի կը բռնուէին և զանոնք կը զսպէր Փարաւոնի զօրքը:

Տեղական իշխաններու ձեռքին տակ կային բազմաթիւ պաշտօնեաներ, որոնք կը հսկէին երկրագործութեան, անասնապահութեան, ամբարներու և պետական պահեստներու, կտորեղէններու գործարաններու, հացագործարաններու վրայ. կային նաև զօրքի գլխաւորներ, բերդապետներ, ջրաթումբերու, ջրանցքներու, ճանապարհներու վերահսկիչներ և այլն:

Այդ բոլոր պաշտօնեաներու, իշխաններու, քուրմերու, զօրքի ու ընդհանուր ժողովուրդի գլուխը կանգնած էր երկրի թագաւորը կամ Փարաւոնը:

Ի հարկէ աւանդութեան ըսած ձևով չէ, որ հաստատուած է Փարաւոններու իշխանութիւնը, այլ համայնքները աստիճանաբար զօրացեր են, մէկ համայնք օրեր է միւսին, ստեղծուեր են մանր իշխանութիւններ, որոնց մէջէն մէկը կամ միւսը զօրացեր, կրաներ է դրացիները և այսպէսով ամբողջ երկրին մէջ առաջ են եկեր 2-3 խոշոր պետութիւններ, որոնց մէկուն կամ միւսին թագաւորը զօրանալով, օրեր է ամբողջ երկրին և դարձեր է Փարաւոն: Անոր ուժը, հսկայական հարստութիւնը, պալատի շքեղութիւնը, փառայեղ

զարդարանքներն այնպէս են ազդեր ռամիկ ժողովուրդին վրայ, որ առաջ է եկեր այն համոզումը, թէ Փարաւոնն աստուածներու ցեղէն է, անոր զաւակը. թէ ան մշտական յարաբերութեան մէջ է աստուածներու հետ, կը խօսի անոնց հետ, կը հասկնայ անոնց լեզուն, իսկ մեռնելէ ետք կ'երթայ անոնց մօտ, ինքն ալ աստուած կը դառնայ: Յաճախ Փարաւոնի կենդանութեան ժամանակ մեհեան կը շինէին, անոր արձանը մէջը կը դնէին և կը պաշտէին իբր աստուած:

Փարաւոնին համար բոլոր հպատակները հաւասար էին — քուրմ թէ իշխան, զինուորական թէ առեւտրական, գիւղացի թէ հովիւ: Ամենահնչիս յանցանքի համար ճպտաներով զանակոծել կու տար նոյն իսկ իշխանները:

Անոր հետ կրնային խօսիլ միայն շրջապատող իշխանները, քուրմերը և զինուորականները: Նոյն իսկ բարձր պաշտօնեաներն ու անձնական խորհրդականները իր քով գացած ատեն, ձեռքերը վեր պիտի բարձրացընէին, ինչպէս աստուածներուն աղօթած ատեն, յետոյ երեսի վրայ պիտի պսակէին գետինը, պիտի ըսէին իրենց ըսելիքը և Փարաւոնին հրամանով միայն իրենց տեղերէն վեր պիտի ելլէին: Անոր որ և է բան ըսելէ առաջ, դեռ պէտք էր գովարանական մեծ մաղթանքներ կարդային և ապա խօսէին:

Այսպէս, եթէ Փարաւոնն ուղէր բան մը հարցնել, օրինակ՝ պէտք է այսինչ տեղը ջրանցք շինել, պատասխանը կուտային այսպէս.

Երևն նման ես Ռային, քու բոլոր գործերդ նման են անոր ըրածներուն, թո՛ղ ուրեմն կատարուի քու սրտիդ ցանկութիւնը: Դուն մարմնացած Ռան ես, դուն քու հօրդ (Արև-Աստծու) կենդանի պատկերն ես. քու շրթունքներով կը հրամայէ իմաստութեան աստուածը որ նստած է քու սրտիդ մէջ, քու լեզուդ ճշմարտութեան սրբարանն է: Բոլոր նախկին թագաւորները կ'աշխատե-


տէին ջրանցքներ շինել, բայց չէին կրնար Բայց եթէ միայն ըսեալ
քու հօրդ — Նեղոսին, այսինքն աստուածներու հօրը, «Չուր հանէ
ըերան գլուխը», — ան կ'ընէ ինչ որ կ'ուզես»:

Փարաւոնի իշխանութիւնն անասման էր և զօրութիւնն անչափ, քանի որ ժողովուրդը զայն աստուած կը համարէր. ան կը տեսնէր ամէն բան, կը լսէր ամէն գաղանիք: Մարդիկ գերեզմանաքարերու վրայ հպարտութեամբ արձանագրել կուտային թէ «համբուրած են անոր ոտքը», կամ «ձեռք են դրած անոր ծունկերուն»:

Փարաւոնը բազմակին էր, բայց բոլոր կիներէն միայն մէկն էր իսկական թագուհին, որ մաս կ'ունենար այդ փառքին ու յարգանքին մէջ: Եթէ մէկը յաղթէր Փարաւոնին և ինքը նստէր Եգիպտոսի գահը, կ'աշխատէր ամուսնանալ նախկին Փարաւոնի կնոջ կամ աղջկան հետ, որպէս զի մասնակից ըլլայ անոր երակներուն մէջ հոսող աստուածային արիւնին և իր արիւնն ալ սրբագործուի:

Թագաւորի արտաքին նշաններն էին գլխազարդերը, գայիտներ և մարակը:

Կարմիր և սպիտակ թագի կամ սաղաւարտի ճակատի մասէն առաջ կը զգուսէր՝ գլուխը դէպ ի վեր բռնած, Ռոհուս օձի, արեգակի կործանարար ուժի, նշանը: Կը շինուէր ոսկիէ և ձենապակիէ:



Թեւաւոր արեւ

Փարաւոն արեւի Ռա աստուած որդին էր և իր գլխուն վրայ կը կրէր խորհրդանիշը, թեւաւոր արեւը:

Երկրորդը Գայիտոնն էր — գաւազան, ծայրը կարթածէ: Փարաւոնը տէրն էր երկրի, որու սկզբնական զբաղումն է եղեր խաշնարածութիւնը և երկրագործութիւնը: Յուպաձեւ գայիտոնը այդ խորհրդանիշն էր:

Մարակը նշան էր թէ Փարաւոնը տէր է բոլոր հպատակներուն, անոնց ստացուածքին ու կեանքին, անոնց մահուան:

Սկիզբները թագաւորին զգեստը բաղկացած էր մէկ գոգնոցէ, որ կը կախուէր մէջքէն վար, մինչև ծունկերը: Վայրենի ու բարբարոս շրջաններուն, բոլոր հօրները կը կրէին նոյն գոգնոցը, միայն հասարակ կտորէ. իսկ երբ արհեստները զարգացան և Փարաւոնի իշխանութիւնը զօրացաւ, գոգնոցն ալ սկսան կարել սակեթել և թանկագին կտորներէ: Երբ կեանքն աւելի առաջ գնաց, փարաւոնները սկսան գոգնոցի վրայէն կրել երկար շապիկ մը, որ ուսերէն կ'իջնէր մինչև ոտքերը: Այդ վերնագրեալը կը կարուէր թանկագին ու թափանցիկ կտորներէ, կրկին սակեթել բանուածքներով: Իսկ շապիկի վրայէն կը կապէին լայն ու թանկագին գօտի մը, որու ծայրերը սակեղօժ էին և ձենապակիով զարդարուած:

Թագուհին ալ կը հագնէր նոյն տեսակի գոգնոց, թափանցիկ շապիկ մը և վրան ալ բանուածքներով: Իբր Իւնիսա աստուածուհիի ներկայացուցիչ, թագուհին կը կրէր իր գլխուն վրայ անոր նշանները — ոսկէ գլխազարդ՝ նման բաղէի, իսկ ձեռքը՝ շուշանի ձեւով գայիտն:

Հին Եգիպտացիները չափազանց կրօնասէր, կամ աւելի ճիշտը՝ սնտոհապաշտ էին: Ինչպէս բոլոր վայրենի ժողովուրդները, անոնք ալ կը պաշտէին շրջապատ

բնութեան այն բոլոր երևոյթները, որոնց բացատրութիւն տալ չեն կրցած և որոնցմէ կա՛մ երկիւղ կամ անկալութիւններ ունէին: Այսպէս, Նեղոսը կը հոսէր, կեանք կուտար երկրին, կը զայրանար, կը յորդէր, կ'ողողէր գաշտերը, կը խեղդէր մարդիկն և անոնց հօտերը: Այս՝ թէ կը սքանչացնէր և թէ կ'անարեկէր վայրենի Եգիպտացին ևն: Ան չէր հասկնար թէ ինչո՞ւ գետը կը հոսի, կը հեղեղէ, կեանք կուտայ շրջապատին... Բայց շատ լաւ գիտէր թէ առանց այդ գետին, ինքը մեռած է, թէ զայն պէտք չէ զայրացնել, եթէ ոչ ամերէն դուրս կը խուժէ: և կը խեղդէ ամէն ինչ: Ու նախնական մարդը կը պաշտէր զայն, կ'աստուածացնէր: Ան իր Հապի աստուածն էր, որուն աշօթքներ կ'ուղղէր և «Գաղտնիքներու աստուած» կը կոչէր:

Նգիպտական կրօնը

Ուրիշ օրինակ մը: Եգիպտացին կը տեսնէր որ կոկորդիլոսը կը բռնէ կ'ուտէ մարդիկն ու կենդանիները, միտաներ կուտայ: Ուրեմն ան չար աստուած է, պէտք է պաշտել, որ չմտասէ մարդուն: Այսպէս նաև իսկևեմօն կամ փարաօնի մուկը, որ կը դա՛նէր տւաղներու մէջ գրքուած կոկորդիլոսի ձուերը, կը ծակէր անոնց հաստ կեղեւը և կը ծծէր մէջի հեղուկը, իր անօթութիւնը յագեցնելու համար: Եգիպտացին չէր մտածեր որ իկնէմօնն իր ապրուստին, իր գոյութեան համար կ'ընէ այդոն կը կարծէր թէ մուկը բարի աստուած մըն է, որ օգնութեան կը հասնի մարդուն, կը կոտորէ անոր թըշնամիները:

Նեղոսի յորդումէն քանի մը ժամ առաջ իպիւս թռչունի երամներ կուղային գետի ամերը, կը հաւաքէին բազմաթիւ սրդեր, որոնք բնազդաբար զգալով

հեղեղին վտանգը, դուրս կը խուժէին իրենց բուներէն, փախչելու, ազատելու համար: Իպիսը պարզապէս իր կերակուրը կը փնտռէր. մինչդեռ Եգիպտացին կը կարծէր թէ Իպիսը եկեր է իրեն իմաց տալու որ հեղեղը պիտի ըլլայ...: Ու նախնական մարդը կը պաշտէր զայն իբրև բարի աստուած:

Այդպէս կը պաշտէին կենսատու արեւը, ապիս եզը, — երկրագործութեան անհրաժեշտ կենդանին —, կասուն, — Եգիպտոսը աւերող մուկերու թշնամին, լուստաի ծաղիկը, պապիրոսի բոյսը, որ օգուտներ կուտային մարդուն, և այլն: Մօտ տասը տեսակ սրբազան բոյսեր և հարիւր տեսակ սրբազան կենդանիներ կային Հին Եգիպտոսի մէջ, զորս կը պաշտէր ժողովուրդը իբր բարի կամ չար աստուածներ:

Ահա այս կրօնը որ կ'աստուածացնէ բոյսերը, կենդանիները և բնութեան զանազան երևոյթներ՝ կը կոչուէր փիղիշիզմ կամ ընդհանուր բառով կուսպաշուքիսմ:

Աստուածներէ շատերը տեղական էին, կը պաշտուէին այս կամ այն գուտաւին մէջ: Այսպէս, քանի մը կեռերու մէջ կը պաշտէին, կ'աստուածացնէին կոկորդիլոսը, ուրիշ նոմերու մէջ զայն կ'ոհնչացնէին: Իսկ մէկ քանին ալ ընդհանուր աստուածներ էին ամբողջ երկրին համար. այսպէս՝ Իպիսը, ուրուրը կամ ցինը և չախկալը կամ շնագայլը կը պաշտէին ամբողջ Եգիպտոսի մէջ:

Բայց ժողովուրդը հետզհետէ զարգացաւ և նախկին կողմա Ֆէդիշիզմը դարձաւ տեսակ մը բնապաշտական կրօն: Երկրպագութեան առարկաներ դարձան բնութեան ոյժերը միայն — Արեւը, Լուսինը, Նեղոսն ու իր հովիտը, մօտակայ անապատը և այդ բոլորին

ներքին զօրութիւնները: Ստեղծուեցան այլաբանական պատմութիւններ, դիցարանական աւանդութիւններ, որոնց ամենամեծը Արեւի, Նեղոսի և անապատի կռուի առասպելն է:

Միւս ասուածները

Գլխաւոր աստուածն էր բոլոր երկրի համար Ռա՝ որ կը նշանակէ Արեւ, իսկ յետոյ, աւելի ուշ, Օգիրխար: Ռայի երկրպագութեան կեդրոնական վայրն էր Հէլիօպոլիս քաղաքը: Այդտեղ անոր տաճարին մէջ գրուած էին փիւնիկ թուշուր, Մնէվիս եզը և կոթող մը, որոնք յատկապէս նուիրուած էին այդ աստուածին, անոր սեփականութիւններն էին: Հէլիօպոլիս մէջ Ռան և Թոււն աստուածը կը նոյնացնէին. ուրիշ տեղեր Ռան կը միացնէին Ամօն աստուածին հետ և կը կոչէին Ամօնա-Ռա, և Հնուժայի հետ և կը կոչէին Հնուժա-Ռա. ուրիշ տեղ կը միացնէին Հարմայիսայի հետ և կը դարձնէին Ռա-Հարմայիսա: Այդ պարզ նշան է, որ Ռան յետոյ է ընդհանրացեր, իսկ միւս աստուածները եղեր են նախ գաւառական աստուածներ, նուիրուած արեւին, որ միացած են աւելի հզօր Ռայի անունին հետ և մնացած այս ու այն գաւառներու մէջ:

Ռան սկզբնական Քատսի (Նուն) որդին էր, որու մէջ կ'ապրի մինչև ծնիլը: Իսկ երբ ծնաւ, երբ դուրս եկաւ քառսէն և յաղթեց մութ ու ժերուն, հրամայեց որ շուսաի ծաղիկէն լոյս ծագի աշխարհի վրայ: Առաջ Ռան մինակ էր, առանց աստուածուհիներու. ամէն բան մինակ կը ստեղծէ: «Մեռեղներու Գիրփ»ին, եգիպտական այդ ամենահին դրուոր յիշատակարանին մէջ Ռան պարզ կ'ըսէ իր մտտին.

«Ես Թուժն եմ, որ էնն էութեանը, միակը ես Ռան եմ իր սկզբնական, իր առաջին ծագման ձեռով ես մեծ աստուածն եմ,

որ ստեղծեր եմ ինքս ինձ, իմ անունն ստեղծողը: Ես կայի երէկ, ես դիտեմ վաղուան օրը»:

Ռան կը ստեղծէ աշխարհը և կը թագաւորէ այնտեղ, երջանկացնելով մարդիկը: Այդ երկրի «Ոսկեղարն» է եղեր: Անոր զօրութիւնը և ուժն իր անունի գաղանիքին մէջ էր, որ ծանօթ չէր ոչ մէկուս: Բայց անա անոր թուան աղջիկը, խորամանկ Իսխան, ծէրացած Ռայէն կը խլէ իր գաղա-

նիքը, կախարդական բառը և անով կ'ոչնչացնէ անոր ուժը: Մարդիկ այլևս չեն հնազանդիր ուժասպառ ձերուկին, և Ռան կը լցուի ցասուժով ու կը վճռէ պատժել մարդկային ցեղը: Կ'ուզարիէ դաժան մահարեր Հաթօր աստուածուհին որ կը կոտորէ մարդիկը, արեան գետեր կը հոսեցնէ: Բարեգութ Ռան կը մեղքնայ, կ'արբեցնէ Հաթօրը, որպէս զի գոնէ մարդոց դեռ չկոտորուած մնացորդները կենդանի ազատին: Բայց մարդիկ ապերախտ եղան. անոնք սկսան ծագրել Ռայի ձերութիւնը: «Նայեցէք թէ ձերութիւնը ինչպէս այլանդակեր է Նորին վեհափառութիւն Ռան»: Այն ժամանակ Ռան, զրզուած մարդոցմէ ու աշխարհէն, հեծաւ երկնային կովին մէջքին և երկինք բարձրացաւ: Սակայն այնտեղ ալ չդադրեցաւ մարդոց բարութիւն ընկէ: Երկինքը մեծ սկիւրանոս մըն է: Ռան կը մանէ իր ցերեկուան մա-



Հարօր աստուածուհի

լուած մարդոցմէ ու աշխարհէն, հեծաւ երկնային կովին մէջքին և երկինք բարձրացաւ: Սակայն այնտեղ ալ չդադրեցաւ մարդոց բարութիւն ընկէ: Երկինքը մեծ սկիւրանոս մըն է: Ռան կը մանէ իր ցերեկուան մա-

կոյղը իր բազմաթիւ ծառաներով ու ընկերակիցներով և առտուն կանուխ դուրս կուգայ երկինքի ովկիանտը: Տասերկու ժամ լոյս և ջերմութիւն կուտայ ապերախա երկրին, որ չկրցաւ գնահատել զինքը, իսկ իրիկուան կը մտնէ իր գիշերային մակոյղը և կ'անցնի Ախս աշխարհի տասերկու օթեւանները և լոյս կուտայ մեռելներուն և աստուածներուն, կը յաղթահարէ մթութեան ճիւղները:



Շու ասուած

մտցուցած են ամուսնութեան սովորութիւնը, կրօնական ծէսերը և այլն:

Օգիբիսի և Իսիտայի հետ միասին կը գործէ և Թօարը, լուսնի աստուածը, որ յետոյ դարձաւ գիտութիւններու, օրէնքի ու իրաւունքի աստուածը, գրականութեան և գիտնականներու պաշտպանը:

Ռայէն սերած են երկու աստուած՝ Շու և Թէֆնուր: Այդ գոյգէն ալ ծնած է Քէրը (երկիրը) և Նութը (երկինքը):

Ռայէն յետոյ Եգիպտոսի մէջ կարգով թագաւորած են այդ չորս աստուածները, իսկ անոնց յաջորդեր է Ռայի թուան թուր — Օգիբիսը, իր Իսիտա կնոջ հետ միասին: Օգիբիսն ու Իսիտան են որ, չորս հարիւր տարի թագաւորելով, սորվեցուցած են Եգիպտացիներուն նստակեաց կեանք վարել, երկրագործութիւն ընել, բժշկիկ մարդիկը, քաղաքներ շինել. անոնք են, որ մարդոց մէջ

Եգիպտացիները երջանիկ էին և չափազանց կը յարգէին իրենց աստուած-թագաւորները: Բայց Օգիբիսի եղբայր չար Սէթը, կը նախանձի եղբորը փտութիւն. շուրջը կը հաւաքէ իրեն նման չարահոգի էակներ, և անգամ մը, երբ մեծ բազմութիւն մը հաւաքուած էր Օգիբիսի մօտ խնջոյքի, տակուն գազալ մը գանկով կուգայ:

Խնջոյքի լու ժամանակը, երբ բոլորին գլուխը դարձած էր, Սէթը կ'առաջարկէ ամէնուն պառկիլ իր բերած գազաղին մէջ, չափելու համար թէ որո՞ւ մարմնին յարմար կուգայ: Շատերը կը փորձեն և կը ծիծաղին: Օգիբիսն ալ կ'ուզէ փորձել, բայց գազալ մաածին պէս. Սէթ իր համախոններով վրան կը խոյանայ, կը փակէ գազաղը, պինդ կը գամէ և կը նեղէ Նեգոսի մէջ, որ կը տանի, կը հասցնէ ծովի գոռ ալիքներուն: Ծովը մուած Օգիբիսը կը հանէ փիւնիկեան ափերը: Իսիտան երկար կ'որոնէ իր ամուսնին դիակը, վերջապէս կը գտնէ ու կը բերէ ամուր կը պահէ, որ Սէթը չիմանայ անոր տեղը, բայց չար խորամանկը կը գտնէ և Վ4 կտոր ընելով, կը ցրուէ ամբողջ երկրի վրայ, զանազան նօմերու մէջ:

Այն ատեն երկրին թագաւոր կը դառնայ Սէթը և 350 տարի անարգել կ'իշխէ, մինչեւ որ Իսիտայի և Օգիբիսի որդի Հօրը (Հօուր կամ Հօրս), որ Օգիբիսի



Թօս ասուած

սպանման ժամանակ

դեռ մանուկ էր, չափահաս կը դառնայ: Ան կատաղի կռիւ կը սկսի Սէթի դէմ, լուծելու հօր մահուան վրէժը: Կռիւը կ'ըլլայ չափազանց արիւնալի: Թօսը կը միջամտէ, կը հաշտեցնէ երկուքը, Տելզան բաժին կ'իյնայ Սեթին, իսկ Եգիպտոսի մնացած մասը կը մնայ Հորին:



Հոր աստուած

մէջ: Պէտք է նկատել, որ Օգիրիսի մարմինը կուգայ արեւելքէն, Ասորիքի փերէն. այդ նշան է, որ երկրագործութիւնը, գիտութիւնը, զարգացումն առաջին անգամ Արեւելքէն եկած են Եգիպտոս և այնտեղ զարգացած, մշակուած ու առաջադիմած են:—Հորը նեղուն է, միայն վերանորոգուած, հեղեղէն յետոյ: Բայց որովհետև նեղուն ողջումը կապուած է նաև արեւի հետ (արեւադարձի հետ), այդ պատճառով Օգիրիսը արեւաստուած ևս դարձաւ, միայն ցերեկուան արեւի,

և ժամանակաւորապէս կը յաղթէր Սէթի, խաւարին:

Աւելի ուշ, Օգիրիսը դարձաւ հանդերձեալ աշխարհի աստուած, այնտեղի դատաւոր: Օգիրիսը յետոյ սկսան պաշտել ամբողջ Եգիպտոսի մէջ, իսկ երբ ստացաւ Սեբապիս անունը, անոր կրօնը տարածուեցաւ և ուրիշ երկիրներ: «Մեռելներու Գիրք»ին մէջ Օգիրիսը կը հանդիսանայ իբր անեղ դատաւոր հանդերձեալ կեանքի և ներկայացուած է իբր մոմիս մը զանազան գլխազարդերով, մէկ ձեւքը խարազան, միւսը դայիսոն: Չայն կը ներկայացնէին երբեմն ալ իբր լուսնի աստուած, լուսնի կրօն լուսապսակով: Անոր նուիրուած էին Փիւնիկը և Ապիս եզր:

Սիրը նախ անապատի մարմնացումն էր, յետոյ դարձաւ պատերազմի աստուած և ասիական ժողովուրդներու պաշտպան: Ան կը համարուէր Ռայի ուղեկիցը ցերեկուան ճամբորդութեան ժամանակ երկնքի ովկիանոսին մէջ: Երբ Օգիրիսը դարձաւ եգիպտական ընդհանուր, ազգային աստուած, այն ժամանակ Սէթն, իբր անոր հին թշնամին, վերածուեցաւ թշնամի աստուածութեան, դարձաւ տեսակ մը չար ոգի, դև:

Իսիսան, ինչպէս և Օգիրիսը, Նութի (երկնքի) և երկրի կամ Բէբի զաւակն էր: Անոր կը վերագրէին բժշկական միջոցներու, կախարդական բառերու և դարձուածքներու գիւտը:




Իսիսա Աստուածուի


ան գիտէր տեսակ-տեսակ դաղանիքներ ու հնարներ:

Հասարակ ժողովուրդին համար այդ բոլոր աստուածները, անոնց հետ ալ բաղմամբիւ սրբազան կենդանիներ գոյութիւն ունէին իբր առանձին, իրարմէ անկախ աստուածներ. ժողովուրդը խիստ մտախաղաղ էր և բաղմաստուածեան, իսկ քուրմերը և կրթուած մարդիկ Սզիրիսը, Ռան, Հորը և այլն — կը համարէին մէկ աստուած, մի և անփոփոխ, որ կ'երեւի զանազան կերպարանքներով ու ձևերով:

Առաջին եգիպտացիները կը պաշտէին կենդանիները, իբրև իսկական աստուածներ: Այս, ինչպէս ըսինք, իսկական ֆէտիշիզմն էր: Իսկ յետոյ, երբ ժողովուրդը քիչ մը քաղաքակրթուեցաւ, կենդանիները դաղբեցան այլևս աստուած ըլլալէ, բայց անոնց մէկ քանին մնացին իբր արքայան հակներ, որոնց միջոցով աստուածներն իրենց կամքն ու ցանկութիւնները կը յայտնէին:




Այդ սրբազան կենդանիներուն մէջ ամենայայտնին էր Ապիս եզը: Ամէն եզ սրբազան չէր. պաշտամունքի առարկայ կը դառնար Ապիսը, որ ունէր 29 յատուկ նշաններ: Նախ ամբողջ մօրթը պիտի ըլլար սև, երկրորդ՝ ճակատը պիտի ունենար սպիտակ քառանկիւն մը, երրորդ՝ մէջքը պիտի ունենար արծիւի պատկերի նման նշան, չորրորդ՝ լեզուի ասիւր պիտի ունենար բզէզանման ուսեցք մը և այլն: Երբ, նախկին Ապիսի մեռնելէն յետոյ կը գտնուէր այդպիսի նոր Ապիս մը, ամբողջ երկիրը կ'իյնար ուրախութեան մէջ: Խոշոր նուէրներ կու-




տային եղան տիրոջը, իսկ զայն գտնող քուրմին՝ մեր գրամով 15,000 ոսկի:

Ապիսը նախ կը տանէին Ստորին եգիպտոսի Նիլոպոլիս քաղաքը և ապա դիչերով, լուսնի լուսով, կը նըստեցնէին յատուկ նաւ մը, կը տեղաւորէին եզը ոսկեզարդ նուաանեակը (կայիւտ) և մեծ շուքով կը բերէին Մէմֆիս, կը զետեղէին գլխաւոր աստուածու մայր տաճարը: Այնտեղ զայն կը կերակրէին արծաթէ ու ոսկիէ ամաններով, մեծ պատիւներ կուտային և անոր զանազան շարժումներէն կը վաշակէին աստուածներու կամքը: Այդ Ապիսէն զատ մեծ յարգանքներ



Ապիս եզը

արծաթէ ու ոսկիէ ամաններով, մեծ պատիւներ կուտային և անոր զանազան շարժումներէն կը վաշակէին աստուածներու կամքը: Այդ Ապիսէն զատ մեծ յարգանքներ



Մրբագան նաւակ

բու կ'արժանանար նաև ծնող մայր-կովը. անոր համար ալ յատուկ տաճար կը շինէին: Երբ Ապիսը մեռնէր, ամ-

բողջ երկիրը սուգ կը պահէր, մինչև նորը գտնելը: Փարաւոնը պարտաւոր էր 72 օր սուգ պահել:

Ապիտէն յետոյ ամէնայարգուած սրբազան կենդանին էր ընտանի կոկորդիլոսը ուրուն կուտային Սուխոս անունը:

Սուխոս կոկորդիլոսը

Այս կենդանին կ'ապրէր Կրոփոսի-շոպոյ քաղաքի մօտ գտնուող փոքրիկ լիճի մը մէջ: Կային յատուկ քուրմեր, որոնք այդ կենդանին կը կերակրէին մտեղէնով, անոր գինի կը խմցնէին, շարժումներէն դուշակութիւններ կ'ընէին:

Առհասարակ կատուները կը համարուէին սրբազան էակներ:

Չափազանց կը յարգէին և կը սիրէին գանձօք, թէև չէին պահեր մեհեաններու մէջ, և պաշտօն չէին մատուցաներ:

Սրբազան կատուներ

Կատուներուն դիակները կը դմուսէին և այնպէս կը թաղէին, որպէսզի շուտով չնետէին: Այսօր Եգիպտոսի մէջ կը գտնուին կատուներու միլիոնաւոր դիակներ: Եւ րոպացիները գանձօք կը հաւաքեն, նաւերով կը տանին իրենց երկիրները, կը փռչիացնեն և դաշտերը պարարտացնելու կը դորձածեն:

Բացի իսկական, գոյութիւն ունեցող կենդանիներէն Եգիպտացիները կը ստեղծէին նաև երեւակայական կենդանիներ, ինչպէս են ֆենիքսը (փիւնիկ) և ալիլիֆը:

Աւանդութիւնը կ'ըսէ, որ փիւնիկը ծնած է կրակէն և իսկոյն թռած նստած է ծառի

Փիւնիկ

մը վրայ՝ Հելիոպոլիս քաղաքին մէջ: Այդ խորհրդաւոր թռչունը իր գմայլելի ձայնով կը կախարդէր նոյն իսկ արեւը: Ան նուիրուած էր Ռային—արև

աստուածին և կը հանդիսանար իրր առաւօտեան արշալոյսի մարմնացում. ամէն իրիկուն, երբ արեւը մայր կը մտնէր, փիւնիկն ալ կը մտնէր, և ամէն առաւօտ, երբ Ռան դուրս կուգար, նորէն կենդանութիւն կը ստանար և իր երգով կ'ողջունէր ծագող աստուածը: Այդ է պատճառը, որ քրիստոնեաներն իրենց գեղարուեստի մէջ փիւնիկը հռչակեցին խորհրդանշան յարութեան:

Սփինքսը երեւակայական էակ մըն է, որու մարմինը առիւծի է, իսկ գլուխը՝ մարդկային, երբեմն ալ կուրծքը կանացի: Փողովուրդը կը հաւատար թէ շրջակայ անապատներու մէջ այդպիսի կենդանիներ կան: Սփինքսները

Սփինքս



Սփինքս

կը կանգնեցնէին մեհեաններու և գերեզմանատուներու դուռներուն առջև, իրր պահապաններ չար ու անմաքուր ոգիներու դէմ: Վահնամեհ սփինքսն այսօր կը


գանուի Գահիրէ քաղաքէն 15 քիլոմէդր հեռաւորութեան վրայ, Կիզէի մէջ, Քէօփսի և Քեփրոնի հսկայահան բուրգերուն մօտ: Սփինքսի դէմքը կ'ըլլար միշտ խորհրդաւոր, կարծես բան մը ըսել կ'ուզէր:

Այդքան աստուածներ ունեցող և այնքան կրօնասէր ժողովուրդն անկասկած պիտի չինէր տաճարներ, որոնց մէջ երկրպագութիւն մատուցանէր և պաշտէր իր աստուածները: Եւ արդէն՝ հին Եգիպտոսի մէջ մեհեանները խիստ բազմաթիւ էին և փառաւոր: Եգիպտացիին համար ամենամեծ դժբաղդութիւնն իր մեհեանին սրբապղծուիլն է: Այդ պատճառով ալ անոնց բոլոր մեհեանները շրջապատուած էին 10 մեդր բարձրութեամբ հաստ պարիսպներով. աւնոնք աւելի բերդի կը նմանէին, քան տաճարի: Պարիսպներու մէջ կը հաստատուէր բուն մեհեանին շէնքը, երբեմն քանի մը շէնք միասին: Մեզ հասած մեհեաններու աւերակներուն ամենամեծն այսօր Վերին Եգիպտոսի Քարնակ դիւղի տաճարի աւերակն է. անոր շրջապատը մօտ 4 քիլոմէդր էր. պարիսպներուն մէջ երբեմն եղեր են 11 մեհեան կամ առանձին շէնքեր, իրարմէ անջատ անջատ:

Դէպի մեհեանի գլխաւոր մուտքը կը տանէր լայն ուղի մը, որուն երկու կողմերը շարուած էին 500ական սփինքս, իւրաքանչիւրը 4 մեդր հեռաւորութեամբ: Ճամբուն լայնութիւնն էր 25 մեդր, երկայնութիւնը՝ երկու քիլոմէդր: Մեհեաններու ամենէն ինքնատիպ մասը կը կազմէր պարիսպի գլխաւոր մուտքը կամ, ինչպէս կ'ըսեն, «Փիլոն»ը: Նախ կը շինէին երկու բուրգ, գլուխները կտրած և թեթևօրէն շեղ կողերով:

Եգիպտական մեհեանները

Մէջտեղը կը հաստատուէր դուռը, որուն առջև, այս ձախ կողմերը, պատին կից կը դրուէին երկու արձան,




Քարնակի մեհեանին սիւնազարդ սրահը (Վերանորոգուած)

խակ բուրգերու ճակատի միջին մասին մէջ ալ կրկին երկու արձան: Դրան երկու կողմերը, գլխաւոր ճամբուն բերանը, ցցուած էին երկու կոթող կամ օպելիսկ: Երկու բուրգերու վրայ բարձրացած էին երկու ձող, որոնց գլխուն վրայ կը ծածանէին դրօշակներ: Դրան

ճակատին այ ուռուցիկ կը փորագրուէր եգիպտական խորհրդանշանը:

Մենեան տանող ճամբուն երկու կողմի սփինքսները, ինչպէս գիտենք, տաճարի պահպաններն էին, որոնք մուտքը կ'արգիլէին աստուածներու թշնամիներուն, չար ոգիներուն: Զոյգ կոթողները, որոնք կը շինուէին մէկ կտոր քարէ, սուր կոնաձև ծայրերով, կը ներկա-



Փարեակի մեհեանի մեակասը
(Վերանորոգուած)

յայնէին քառանկիւն նրբատաշ քարեր, որոնց հիմը քիչ մը աւելի լայն էր քան վերին մասը: Անոնց վրայ կ'արձանագրէին բազմաթիւ մեհենագիր խորհրդանշաններ: Մինչև այսօր ալ անյայտ է այդ կոթողներուն իսկական իմաստը. արդեօք անոնք դրուած էին տաճարը շինող փարաօնին, թէ այդ տաճարի աստուծուն, և կամ խաւարը հալածող արեւի փառքին համար:

Մենեանին առջև դրուած արձանները կը ներկայացնէին շէնքը շինել տուող փարաօնը կամ տաճարին մշտական բարերարը: Դրան վերև ծածանող դրօշակ-

ները թոյլ չէին տար որ չար հոգիները մեհեան մտնէին վերէն: Շատ ինքնատիպ ու գեղեցիկ էր տաճարի մուտքի ճակատին փորագրուած եգիպտական թեւաւոր արեւը. մէջտեղը շինուած էր արեւի շրջանը, որուն շուրջը կը գալարուէր Ուրեռա երկգլխանի օձը, որ խորհրդանշանն էր ե՛ւ արեւի, ե՛ւ արքայական իշխանութեան: Արեւի շրջանակէն կ'արձակուէին հսկայական թեւեր, իսկ ամբողջ պատկերը կը նմանէր սրբազան ցինին կամ ուրուրին: Չին աւանդութիւնը կ'ըսէ, որ Հոր աստուածը այգւպիսի կերպարանք ստացած յաղթեց Ռայի դէմ զաւաղրութիւն կազմողներուն, և արդարադատութեան աստուած Թօար, — ինչպէս գրուած է հին արձանագրութեան մը մէջ, — հրամայեց այդ նշանը դնել բոլոր մուտքերու և լուսամուտներու գլխուն:

Եգիպտական տաճարի բուն շէնքը կը բաղկանար չորս մասէ: Պարսպի մուտքէն յետոյ անմիջապէս կը սկսէր բակ մը, որուն չորս կողմը կային սիւներ, վրաները ծածկուած, պատշգամբի ձեւով, իսկ մէջտեղը տանիք չունէր: Այդտեղէն կը մտնէին ընդարձակ սրահը — «սպասելու գահլիճը», որ կը լուսաւորուէր սիւններուն վերին մասի և սուստաղի կողմէն եղած բացուածքներով ու գլխաւորապէս լայն գահէն իջած լոյսով. լուսամուտներ չկային ոչ մէկ տեղ:



Թօս
Արդարադատութեան աստուածը


Հոն ժողովուրդի ընտրեալ՝ սպանուական մասը կը սպասէր կրօնական թափորին, երբ դուրս կը հանէին աստուածը կամ սրբազան կենդանին: Երրորդ մասի յատակն աւելի բարձր էր, քան դանշիճներունը, իսկ առաստաղն աւելի ցած: Այնտեղ ալ լուսամուտ չկար: Այդ սենեակին մէջտեղ մարմարէ ամպիոնի մը վրայ կը դրուէր կա՛մ աստուածը, կա՛մ սրբազան կենդանին և կամ որ և է ուրիշ սրբութիւն մը: Իսկ սրբարանին ետեւի կողմը կը գտնուէր մենեանին չորրորդ մասը—աւելի բարձր յատակով ու ցած առաստաղով մութ սենեակ մը, ուր հաւանորէն կը պահէին տաճարի գանձերն ու անօթները:

Եզիպտական բոլոր տաճարները, — մեծ թէ փոքր — անպայման ունէին այդ բոլոր մասերը: Քարնակի տաճարը, որ նուիրուած էր Ամօն աստծուն, 250 մէդր երկայնութիւն ունէր և բռնած էր 40,000 քառ. մէդր տեղ. բարձրութիւնը 45 մէդր էր, իսկ «սպասելու դանշիճի» մակարդակը 3000 քառ. մէդր: Համաշխարհային պատմութեան մէջ մարդիկ երբեք այդքան մեծ սիւնադարձ գանձիճ չեն ունեցած:

Մենեանի պատերու ներքին երեսները ծածկուած էին պոռոտ ու փայլուն գոյներով, որպէս զի ազգէն ռամիկ ժողովուրդի երեւակայութեան վրայ: Այս վիթխարի շէնքը զուրկ էր համաչափութենէ և զեղեցկութենէ: Այդ պակասութեան տեղը կը լրացնէին պատերու ներքին երեսներուն վրայ գտնուած բազմաթիւ նկարները, որոնք կը ներկայացնէին փարաւոններու զո՞ն մատուցանելն աստուածներուն, անոնց օգնութիւնը թագաւորին, և այլն: Իսկ պատերու դրսի երեսին վրայ կը ներկայացնէին փարաւոններու արչաւանքները, անոնց պատերազմները, յաղթութիւնները, զերիները և այլն:

Ճարտարապետութեան կամ տաճարներ և ուրիշ շէնքեր շինելու արուեստի հետ կապուած էր նաև քանդակագործութիւնը: Այդ արուեստին վրայ ալ կրօնը մեծ ազդեցութիւն է ունեցած: Երբ եզիպտացիները այլևս իսկական աստուած չհամարեցին կենդանիները, պէտք եղաւ աստուածներու կուռքեր շինել: Բայց չէին կրնար այնպէս քանդակել, որ աստուածներու զէմքերուն վրայ պարզ երեւային անոնց այս կամ այն յատկութիւնները: Այդ պատճառով ալ կը շինէին կուռքը մարդու մարմնով, իսկ զլուխը՝ այն կենդանիին զլուխով որ

Քանդակագործութիւնը



Մ. ԲՈՒՆԱԳՈՐԾՆԵՐ

նուիրուած էր այդ աստծուն և կ'արտայայտէր անոր բնաւորութիւնը: Այսպէս, Իսիտա աստուածուհին իբր բեղմնաւորութեան աստուած, կը շինուէր կնոջ մարմնով, իսկ զլուխը՝ կովի. զոյգ եղջիւրով և անոնց մէջտեղն՝ արեւի չրջանակը: Ռան կը ներկայացուէր բազէի գլխով. Հաթօր կատաղի աստուածուհին, որ քիչ մնաց պիտի ոչնչացնէր բոլոր մարդիկը, կը ներկայացուէր առիւծի

գլխով, Թօօր՝ իպիս Թռչունի (քաջահաւ) գլխով, իսկ մեռելներու հողիներուն հովիւ Անուրիս՝ չնազայի գլխով:

Աւելի դժուար էր փարաւոններու արձաններուն շինութիւնը: Այլևս կարելի չէր շինել զանազան այլանդակ էակներ, այլ պէտք էր քանդակել իսկական մարդ, նման այս կամ այն անձին: Առհասարակ Թագաւորին արձանը կը շինուէր բնականէն շատ աւելի մեծ, և որ և է թանկագին նիւթէ: Դէմքը կը նմանէր Փարաւոնի դէմքին, բայց միշտ խաղաղ ու հանդիսաւոր արտայայտութիւնով: Արձանը կը շինուէր միշտ գահի վրայ նստած, ձախ ձեռքը ծունկին վրայ դրած, աջով գայիստնը բռնած: Գլուխը միշտ ծածկուած էր բազմագոյն սաղաւարտաձև փեղոյրով, իսկ ծոծրակի կողմը միշտ կը դանուէր ուրուրի գլխու քանդակը, իբր նշան արքայական իշխանութեան: Զգեստները, գայիստնը, գահը, նստուածքը և ուրիշ շատ նշաններ կը ցուցնէին որ թէև մարդ էակի արձան է, բայց վեհ է, բարձր է, աստուած է:

Եգիպտական ճարտարապետութիւնը և քանդակագործութիւնը շատ չառաջագիմեցին. բազմաթիւ սերունդներ իրարու ետեւէ կը շինէին մեհակներ և կը քանդակէին արձաններ նոյն հին, նուիրագործուած ձևերով:

2. ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ ԵՒ ԳԵՐԵՁՄԱՆՆԵՐ

Եգիպտական շէնքերը և մանուսնդ անոնց պատերու և սիւներու վրայ մնացած նկարները որոշապէս ցոյց կուտան, թէ ի՞նչ կարծիք, ի՞նչ հաւատ ունէին անոնք հանդերձեալ կեանքի մասին:

Անոնք ներկայ կեանքը կը համարէին անցողական

և ժամանակաւոր, որմէ յետոյ պիտի ապրէին յաւիտեանական կեանքով մը:

Սկիզբները համոզուած էին, որ մարդը բազկացած է երկու մասերէ — մարմինէն և «իր երկրորդ»էն: Երբ մարդը մեռնի, իր երկրորդը կը բաժնուի մարմինէն և կը սկսի թափառիլ երկրի վրայ զանազան ձևերով: Պիտի գայ օրը երբ ան նորէն պիտի միանայ իր մարմնին հետ: Այդ հաւատքէն առաջ կուգար երկու երեւոյթ. նախ՝ պէտք էր այնպէս ընել, որ մարմինը չփրձանայ, չնեխի, մինչև այն ժամանակ, երբ «իր երկրորդ» կու գայ, կը միանայ: Ասոր համար մեռելի առնդերէն դուրս կը հանէին ուղեղը, կը մաքրէին, կը կտրէին փորտաբքը, կը լեցնէին կճուճներու մէջ, բերանը կը փակէին կափարիչով մը, որուն վրայ շինուած կ'ըլլար կամ իպիսի, կամ չնազայի, կամ ուրիշ նուիրական կենդանիի մը գլուխը, որ ներս չպիտի թուր չար էակները: Իսկ դիակը նախ 72 օր կը պազուր չար էակները: Իսկ դիակը նախ 72 օր կը պահուէին աջուրի մէջ, յետոյ կը գմուտէին զանազան հատուէտ բազադրութիւններով ու կարմիր խէժերով, կը չորցնէին, կը փաթաթէին հեղ երիզներով, որոնց վրայ կը նկարէին հանգուցեային պատկերը և ուրիշ բազմաթիւ նկարներ, և կը դնէին նախ փայտէ, յետոյ քարէ զազաղի մէջ:

Այդպէս պատրաստուած դիակը կը կոչուէր մեմփա, որ կը դիմանար շատ երկար տարիներ: Մեղի հասած են եգիպտական քանի մը փարաւոններու մոմիաները, որոնք երեք-չորս հազար տարի կեանք են ունեցեր: Ի հարկէ այդպէս զմուտը չափազանց սուղի կը նստէր: Չունենոր մարդիկ կը հանէին իրենց մեռելներուն փորտաբքը, լաւ մը կ'աղէին, կ'ապխտէին դիակները և կը թաղէին չոր աւազներու մէջ:

Սկիզբները, երբ դեռ մոմիա պատրաստել չգիտէին, շինել կու տային հանգուցեային արձանը, որքան կարելի է նման տիրոջը, որպէս զի վերագարձող «երկրորդը»



Մոմիա



Մոմիայի դազալը

մտնէր այդ արձանին մէջ, կենդանացնէր զայն, որովհետեւ զիտին արդէն կրնար նեխած, քայքայուած ըլլալ:

Այդ համոզման երկրորդ հետեւանքն ալ այն էր,

որ թափառող «երկրորդը» մարդ է, ունի մարդկային բոլոր պահանջները. ուրեմն անոր պէտք է տալ ուտելիք, զգեստ, կենդանիներ, ծառաներ, կիներ, գործիքներ և այլն: Եւ այդպէս ալ կ'ընէին: Սկիզբները գերեզմանը կը դնէին ամէն տեսակ անհրաժեշտ իրեր, որոնցմով, ինչ կասկած, կ'օգտուէին քուրմերը: Նոյն իսկ շինել կու տային փայտէ ու քարէ ծառաներ, բանուորներ, կիներ և կը դնէին գերեզմանին մէջ, որ ծառայեն հանգուցեային: Շիրմի ներքին պատերուն վրայ կը նկարէին իրական կեանքէ առնուած պատկերներ մեռելին համար. կային նեղոսի ճահիճներուն մէջ որսորդութեան տեսարաններ, նաւ բեռնաւորել, գիւղական աշխատանքներ՝ գիւղապետի հսկողութեան տակ, գինի պատրաստել, զանազան խաղեր ու պարեր և այլն: Սակայն որքան մարդիկ առաջ կ'երթային, այնքան կը փոփոխուէին նաև այդ սովորութիւնները: Կամաց կամաց, փոխանակ իսկական իրեր դնելու գերեզման, սկսան միայն այդ անհրաժեշտ իրերու պատկերները նկարել, աւելի ևս ք՝ պապիրոսներ դնել գերեզմաններու մէջ, ուր կը յիշէին միայն, թէ ինչ կը ցանկային հանգուցեային. «Թո՛ղ Օգիբիս աստուծոն մասուցուիս արխայակս զոնեք, որպէսզի ան այս հանգուցեային նուիրե 1000 եգ, 1000 սագ, 1000 հագ» և այլն, և այլն: Եւ այնուհետեւ հանգուցեային երջանկութիւնը կախուած էր իր ազգականներու առատաձեռնութենէն և անոնց բարեխօսութենէն՝ Օգիբիսի և ուրիշ աստուածներու առջև: Անշուշտ բարեխօսութիւնն ալ պիտի կատարէին քուրմերը, ստանալով լաւ վարձատրութիւն:

«Երկրորդ»ի հասկացողութեան երրորդ հետեւանքն ալ այն եղաւ, որ մարդիկ այս կեանքը համարելով ոչինչ, կը ճգնէին իրենց մոմիաներուն համար յաւիտենական բնակարաններ շինել:

Սկիզբները կը շինէին սենեկաձեւ շիրիմներ, որ կը կոչուէին մասսաքա և արկղի մը կը նմանէին: Մասսաքայի ներքին մասը քիչ մը աւելի լայն էր քան վերինը. նեղլիկ դուռ մը կ'ունենար և երբեմն ալ տանիքէն օդանոցքներ կամ լուսամուտներ: Մասսաքաները կ'ըլլային երբեմն բաւական մեծ — մինչեւ 56 մէդր երկայն, 29 մէդր լայն և 9 մէդր բարձր, երբեմն ալ բաւական փոքր — 9 մէդր երկայն, 6 մէդր լայն և 4 մէդր բարձր: Մասսաքայի մուտքէն ներս անմիջապէս կը դանուէր ընդարձակ սենեակ մը, ուր աղօթքներ և ծէսեր կը կատարէին: Այդ սենեակին մէջտեղը կը դըրուէր մարմարէ սեղան մը, որուն վրայ կը շարէին ազդականներուն բերած իրերը մեռելին համար: Սեղանին մօտ դրուած էր հանգուցեալին արձանը, որ պիտի գործածէր բերուած նուէրները:

Այդ սենեակէն կը բացուէին քանի մը նրբանոցքներ, որոնց մէջ կը դրուէին հանգուցեալին և զայն շրջապատողներուն արձանները, իսկ վերջին անկիւնը կը դանուէր 20—25 մէդրնոց հոր մը, որու ներսը կը պատրաստուէր մութ սենեակ մը, ուր կը դնէին հանգուցեալին դագաղը:

Աստիճանաբար մասսաքաները փոխուեցան, աւելի հսկայական, աւելի դիմացկուն ձեւ ստացան և դարձան բուրգեր կամ փխրալիսնէր:

Փարաւոններն իրենց մարմինները նեխուժէ ազատելու համար զմուտել կուտային, իսկ շիրիմը կողովուտէ ու պղծուելէ ազատելու համար, շինել կուտային բուրգեր: Ամէն փարաւոն զան բարձրանալու օրէն սկսած, պատրաստել կուտար իր ապագայ բնակարանը, իր շիրիմը:

Թէ՛ մասսաքաները, թէ՛ բուրգերը և թէ՛ աղքատ

մարդոց մեռելներու գերեզմանները կը գտնուէին քաղաքներու և գիւղերու արեւմտակողմը, մեռելներու




Սկիզբի բուրգերը և սիրիմները (Պատմական ժողովրդագրություն)

կրկններն ալ դէպի արեւմուտք դարձած: Արեւը մայր կը մտնէ արեւմուտքէն, այն կողմէն կ'երթայ մեռելներու աշխարհը. այն կողմն է պստնուած Օզիրիսը,

ուրեմն՝ մեռելն ալ պէտք է միւս աշխարհը երթայ այդ ճամբէն :

Աշխարհի ամենամեծ ու ընդարձակ գերեզմանատունը կը գտնուի Կիզէ, հին Մէմփիսի արեւմտակողմը : Այդտեղ դեռ կանգուն են բաւական թուով բուրգեր : Քիչ անդին, այժմեան Հէլուան քաղաքին մօտերը կը գտնուին նախկին Դաշուրայի և Սակկարայի բուրգերը, որոնցմէ մէկը շինուած է նախ պարզ բրգածեւ, յետոյ վերելի մասերը խիստ կորացած, իսկ երկրորդը՝ սանդղածեւ, աստիճաններով, քարէ քառակուսիներ իրարու վրայ դրուած, մէկը միւսէն աստիճան մը աւելի փոքր : Այս երկուքն ալ շինել տուած է, կ'ըսեն, Դ. Հարստութեան հիմնադիր Մնօփրու փարաւոնը :

Ամենամեծ բուրգերը Յ հաս են, Քէօփսի, Քեփրոնի և Միկերինի բուրգերը, անոնց շիրիմները, երեքն ալ



Քէօփսի բուրգը (երկայնքէն կտրուած)

Կիզէի մէջ : Ամենամեծը առաջինն է, որ ունի 479 ոտք բարձրութիւն և հիմէն 767 ոտք լայնութիւն (նոյնն է

և երկայնութիւնը) : Երկրորդը՝ 457 ոտք բարձրութիւն և 705 ոտք լայնութիւն ունի, իսկ երրորդը՝ 219 ոտք բարձրութիւն, 352 ոտք լայնութիւն : Քարերը բերել կուտային կա՛մ Նեղոսի վերին մասերէն, տօփերու (քէլէկ) վրայ կապած, կամ արաբական ժայռերէն : Այդ հսկայական բարձրութեան վրայ կը հանէին պարզ ճախարակներու միջոցով : Գործածուած քարը պինդ որձաքար (կրանիտ) էր, որ իրարու կը կպցնէին քարուկրով : Նախ կը շինէին հին ձեւով՝ սանդղուղածեւ, իսկ յետոյ եռանկիւնածեւ քարերով պինդ կը լեցնէին աստիճանները, այնպէս որ բոլորովին հարթ մակարդակ կը կազմուէր : Բուրգի ներսի մասին մէջ, հիմքին տակը և ճիշդ մէջտեղը կը շինէին սենեակներ և նրբանցքներ, ուր կը զետեղէին դագաղը, զանազան անհրաժեշտ իրեր ու պապիրոսներ և այլն : Շիրիմին մուտքը կը ծածկէին այնպիսի վարպետութիւնով, որ այլևս չափազանց դժուար էր գտնել : Չնայելով այդ բոլորին, Արաքները Թ. դարուն կրցան մտնել Քէօփսի բուրգը և յափշտակեցին դագաղը :

Բայց այդպէս կոպիտ չմնաց Եգիպտացիներու հասկացողութիւնը հանդերձեալ կեանքի մասին : Աստիճանաբար «երկրորդի» հասկացողութիւնը փոխուեցաւ և վերածուեցաւ «հողի» զաղափարին : Մարդը կը մեռնի, — կը նշանակէ հողին կը բաժնուի մարմինէն, և կ'երթայ հանդերձեալ աշխարհը, ինչպէս արեւը : Այս աշխարհի կեդրոնը Եգիպտոսն է. երկիրը կը լողայ անասման ծովի մը մէջ. երկինքը տափակ տանիք մըն է, բաղկացած ովկիանոսէ, որու ափերը կրթնած են բարձր սարերու և ուրիշ չորս սիւներու վրայ. այդ առաստաղէն ջահերու նման կախուած են աստղերը : — Ահա այս էր տիեզերքը՝ Եգիպտացիներու կարծիքով : Իսկ հան-

դերձեալ աշխարհը կը նմանցնէին իրենց երկրին . անոր մէջ աեղէն ալ կը հոսի այնպեղի Նեղոսը , որուն վրայ , նստած նուի մը փակ սենեակին մէջ , կը ճամբորդէ ամէն օր Ռան կամ Օզիրիսը , Արևը : Արևը կը ծնի , կ'ապրի և կը մեռնի : Այդ ճամբորդութեան ժամանակ արևը կը հանդիպի շատ արգելքներու , որոնց ամենազարհուրելին հակայական օձ մըն է , որ կը պատրաստուի կլանել զայն , բայց արևի բարեկամները վրայ կը հասնին և կը շղթայեն զայն : Մարդու բազըն ալ նման է արևի բաղդին . ան ալ կրնայ վերջնական կորուստէ ազատիլ , եթէ իր ազգականներն ու բարեկամներն ազօթքներով ու զոհաբերութիւններով քաղցրացնեն հանգուցեալին վիճակը :

Մահէն յետոյ մարդուն հողին կ'երթայ հանդերձեալ աշխարհ : Այնտեղ պիտի ներկայանայ Օզիրիսի դատաստանին : Օզիրիսը , նստած իր գահուն վրայ , խաբազանը ձախ ձեռքը , գայիտոնը աջ ձեռքը , դատ կ'ընէ—անեղ դատաստան : Անոր ետեւ կանգնած է իր կինը—Իսիսան և որդին—Հորը : Առջեւը կը դանուին Եգիպտոսի չորս աստուածները , որ կարգով կը թագաւորէին երկրի վրայ , իսկ անոր շուրջը կը դանուին երկրի 42 նօմերու 42 դատաւորները : Առջևը (կամ ուրիշ նկարներու մէջ՝ կշիռքի մօտ) կիզած է Նեղոսի ձիազեափն՝ Ոմս , տեսակ մը խառնածին հրէշ , որ բերանաբաց կը սպառնայ կլանել , ոչնչացնել դատապարտուող մեռելի սիրան ու փորոտիքը : Կշիռքի մօտ կանգնած , հողիներ կը կշռեն Հորն ու Անուպիսը : Նժարներէն մէկուն մէջ դրուած է հանգուցեալին սիրտը , որ կը համարուէր մեղքերու և առաքինութիւններու բնակատեղը , իսկ միւս նժարին մէջ դրուած է ջայլամի փետուր , իբր նշան արագ արդարադատութեան : Թօտ աստ-

ուած , գրիչը ձեռքը , կանգնած կը զրէ մեռելներու մեղքերն ու առաքինութիւնները և անոնց դատավճիռները : Թօտի ետեւը կանգնած է մեռելի հողին , որուն պահապան են կանգնած երկու աստուածուհիներ , ջայլամի մէկ մէկ փետուրներ զլուխին : Իսկ կշիռին վերեւը նկարուած է մեղաւոր հողի մը՝ մտած մատակ խողի մարմնին մէջ , և ենթակայ տանջանքներու :

Այս նկարը որոշապէս կը ցուցնէ , թէ ի՞նչ գաղափար ունէին Եգիպտացիները վերջին կամ անեղ դա-



Վերջին Դատաստան

(Այս նկարին մէջ չեն երեւար 42 նօմերու դատաւորները)

ատաստանի մասին : Դատապարտուած հողին կ'ենթարկուէր վերջնական մահուան կամ կը կապուէր սիւնի մը և կ'այրուէր , իսկ արդարացած հողին կամ կը մանէր ուրիշ անասունի մը մէջ , կամ կ'ապրէր ստորերկրեայ աշխարհ մը : Դատավճիռը և հողիներու վիճակն այնուհետեւ՝ այնքան ալ պարզ չէին Եգիպտացիներու համար , և կամ աղբիւրներ չեն մնացած , որ այժմ իմացուի անոնց գաղափարը այդ մասին : Մէկ բան պարզ է ,—Եգիպտացիներն արդէն որոշ գաղափար ունէին հանդերձեալ կեանքի և հողիի անմահութեան մասին :

Գերեզմաններու մէջ գտնուած «մեռելներու Գիրք»էն պարզ կ'երևի նաև թէ անոնք ինչ բան կը նկատէին մեղք, գէշ, անբարոյական և ինչը լաւ, առաքինի, բարոյական: Այսպէս, տեղ մը հողին կը դիմէ Օգիբիսին և կ'ըսէ .

— «Ես ոչ մէկը չեմ խաբած, անգործ ու ծով չեմ մնացած. ես չեմ խլած ստրուկն իր տիրոջ ձեռքէն, չեմ տանջած այրիները, չեմ կողպատած շերիմներ, չեմ որսացած սրբազան կենդանիներ. ես մաքուր եմ, ազգատներուն հաց և ջուր եմ տուած, մերկերուն՝ զգեստ. ես զոհ եմ մատուցած աստուածներուն և կերակրած եմ մեռելները»:

Ուրիշ տեղ մը հանգուցեալ մը կ'ըսէ Օգիբիսին .

— «Ես ձեզ կը բերեմ ճշմարտութիւնը, ձեզ համար կ'օջոջացրեմ սուտը. երբեք մարդոց դէմ չտրութիւն և խորդաւանք չեմ նիւթած. չեմ կեղեքած երբեք մերձուորը և երբ իշխած եմ մարդոց վրայ, չեմ ստիպած զանոնք պէտք եղածէն աւելի աշխատել: Ես ոչ վտակատ եմ եղած, ոչ ալ թոյլ. չեմ քրած, ինչ բան որ արհամարուած է աստուածներէն: Ոչ մէկը անօթի չեմ ձգած, չեմ լացուցած, չեմ սպաննած: Երբեք չեմ խլած երեսայի բերանէն իր բաժին կաթը, երբեք չեմ խլած հարեւանիս արտի ջուրը», եւ այլն:

Վերջին դատաստանի ժամանակ արդարանալու համար, անհրաժեշտ էր կատարել այդ բարոյական պատուիրանները, կատարել կրօնական ծէսերը և գիտնալ իր կրօնի վարդապետութիւնը: Մեռելը թաղած ատեն, քուրմը ծածկաբար կը հաղորդէր հանգուցեալին անհրաժեշտ պատուէրներ և արդարանալու միջոցներ, իսկ մէկ մասն ալ կը գրէին և շիրիմ կը գնէին:

Այդ գրութիւններն են որ կը կոչուին «Մեռելներու Գիրք»:

3. ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԻՐԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եգիպտացիները գրել են սկսած շատ հին ժամանակներէ: Անոնց սկզբնական գրերը նման չեն մեր այբուբէնին: Ամէնէն տառ, անոնք որ և է բան գրելու համար՝ կը նկարէին այն ինչ որ կ'ուզէին ըսել: Բայց կարելի չէր ամէն բան նկարել: Ինչպէս նկարել, օրինակ, վերացական զաղափարները — բարութիւն, չարութիւն, կամ աւարկաներու յատկութիւնները, ինչպէս մեծ, փոքր, փափուկ, նուրբ և այլն:

Այդ պատճառով անոնց սկզբնական գրութիւնը չափազանց անբաւական էր: Յետոյ անոնք մտածեցին այդ վերացական հասկացողութիւններու փոխարէն նկարել որ և է իր, որ և է կենդանի կամ անոր մէկ մասը, որ ծառայէր իբր այդ զաղափարին արտայայտիչը, իբր անոր խորհրդանիշը: Այսպէս, առիւծի թաթը կը նշանակէր «այժ», արծիւի աչքը — սրտեստութիւն, երկու երեք ալիքաձև գծերը (~~~~) — զեռ կամ ջուր կամ հոսանք, երկու քալող ոտքերը — քալել ևւայլն: Օրինակ, եթէ ուզէին ըսել «թագաւորը զնաց գեան անցնելով», նախ կը նկարէին թագաւոր մը, յետոյ քալող զոյգ ոտքեր, յետոյ երկու ալիքաձև գիծեր:

Եւ սակայն այդ ձեւի գրութիւնն ալ չափազանց անբաւական էր: Նախ՝ շատ տեղ կը բռնէր. երկրորդ՝ գրելու համար չափազանց շատ ժամանակ կը պահանջէր և, երրորդ՝ ամէն ժամանակ միատեսակ կարելի չէր կարգալ, և մարդէ մարդ կը տրուէր զանազան բացատրութիւններ:

Աստիճանաբար զարգանալով, եգիպտացիները նկատեցին, որ իրենց գործածած խօսքերը բաղկացած են

Վանկերի և միւսնոյն վանկը կը գործածուի շատ բառերու մէջ: Ու այնուհետեւ անոնք սկսան նոյն նկարները յարմարցնել վանկերուն: Օրինակ՝ առնենք հայերէն «սուրհանդակ» բառը. նկարենք «սուր» մը, «հանդ» մը և «ակ» մը, ամէն մարդ կը կարգայ «սուր-հանդակ»: Այդպիսի վանկերուն թիւը կը հասնէր մօտ 500ի: Այսպէս «ար» (ar), կը նշանակէր «աչք»: Եթէ որ և է բառի մէջ պէտք ըլլար «ար» վանկը կամ «ր» տառը, կը նկարէին աչք-աչածե շրջանակ մը, մէջը մէկ կէտ: Վանկային գրութեանը մէջ հաշուի կ'առնէին միայն բաղաձայն ստուերը և մի և նոյն բաղաձայններն ունեցող բառերը կարելի էր կարգաւ մի և նոյն նկարով:



Ա.կոմեթու



Կլեոպատրա


Այսպէս — «քմէ» (kme) կը նշանակէր «առիւծի թաթիկնչ բառ որ կար ք և մ բաղաձայններով, կարելի էր կարգաւ մէկ «թաթի» նկարով. «Բէմէ» (Keme) — Եգիպտոս, «քոմ» (kom) — գորութիւն, զօրք, «քոմա» (koma) — բարձրութիւն և «քամ» — (kam) — գիրք: Եգիպտացիները կը գրէին այլէն ձայն, կամ վերէն վար:

Զուտ վանկային գրութիւնը շտեղծեց այնքան կրկար, որքան «պատկերագրութիւնը» կամ «գաղափարագրութիւնը». շուտով հնարեցին արդէն ստուեր և սկսան գրել տեսակ մը խառն ձեւով, որուն մէջ կը մտնէին գրութեան յիշուած երեք ձեւերն ալ:

Յոյն ճամբորդները սկիզբները, չհասկնալով եգիպտական ստուերը, կարծեցին թէ ստոնք զանազան կա-

խարդական ու սրբազան նշաններ են՝ այդ պատճառով կոչեցին «Հիէրոկլիֆներ» (հիէրօ-սրբազան, կլիֆ-նշանագիր) կամ սրբազան նշանագիր, մեհնագիր:

Մեհնագրերը կը գործածէին արձանագրութիւններու մէջ և քիչ մը աւելի պարզ ձեւը՝ Մեհնեցի Պրքի»ն մէջ: Արձանագրութիւններով կը ծածկէին տաճարներու և պալատներու պատերը, գերեզմաններու քարերը և այլն, իսկ «Մեհնեցի Պրքը» և ուրիշ գրութեանը կը գրէին պապիրոսի վրայ, որմէ մնա-



Ռօգէթրայի արձանագրութիւնը

ցած է շատ լիզուներու մէջ քուղք անուներ (papier, - ֆրանս. papier, - գերմ. paper, - անգլ. papel և այլն):

Երկար ժամանակ գիտնականները չէին կրնար կարգաւ այդ խառն նշանագրերը, մինչև որ ֆրանսացի գիտնական Շամփոլիօնը կրցաւ լուծել այդ հանելուկը: 1798ին երբ զօրավար Նափոլէօն Պոնափարգը գնաց Եգիպտոսի՝ հետը տարած էր շատ մը գիտնականներ, որոնց մէջ և Շամփոլիօնը: Այդ գիտնականները շատ հետաքրքրուեցան եգիպտական հնութիւններով ու ստուերով: Անոնք Ռօգէթթա աւանին մէջ գտան քար մը, որուն վրայ գրուած էր մի և նոյն արձանագրու-

Թիւնը ե՛ւ նշանագրով, ե՛ւ եզրագտական ժողովրդական-այբուբէնով, ե՛ւ յունարէնով: Այդ քարը հիմ ծառայեց Շամհոսփօն կրասերին կարգալու եզրագտական արձանագրութիւնները 1852ին: Ան գտաւ այդ լեզուին այբուբէնը, կարգաց եղած գրութիւնները և կազմեց անորբառարանը:

Հին և միջին դարերուն եզրագտողը կը համարուէր ոչ միայն հացի, այլ և գիտութիւններու, իմաստութեան շտեմարան: Բայց նորագոյն հեռադատութիւնները ցոյց տուին, որ

Պիտուքիւնները

Ֆիսոքիւնը զարգացած չէր այդ երկրին մէջ և եղածն ար լոկ գործնական գիտելիքներ են եղած և ոչ տեսական, փիլիսոփայական: Եւ բնական էր այդ երեսօթեւու հասկնալի: Կրթութիւն կը ստանալին միայն քորմերն ու պետական պաշտօնականները, — երկուքն ալ գուռա գործնական նպատակներով: Քորմերը կը սորվէին միայն աստուածներուն ծառայելու, անոնց կամքը գուշակելու նպատակով, իսկ պաշտօնականները կը սորվէին միայն իրենց պաշտօնին հետ կապուած անհրաժեշտ տեղեկութիւնները: Ասկէ գտա՛ եզրագտողները չափազանց հնաաէր էին. կարելի չէր չեղիլ հինէն, նոր բան մտցնել. պէտք էր միշտ հինը յարգուէր, պաշտուէր:

Չնայելով այդ բոլոր արգելիչ պարազաններուն, եզրագտողները բաւական առաջ էին գացած գիտութիւններու մէջ: Ասոնք սկսան զարգանալ եզրագտութի մէջ, մեծ բարգերու շինութեան օրերէն:

Ամէնէն աւելի զարգացած էր մաթեմատիքը և յատկապէս աստղաբաշխութիւնը: Ասոնք տարին կը հաշուէին իրենց երկրի ամենակարեւոր երեսօթով — Նեղոսի յորդումով: Յունիսի 20ը իրենց տարուան


առաջին օրն էր, և տարին ունէր ճիշդ 365 օր. մնացած 6 ժամը երբէք չէին հաշուեր: Այնպէս որ 1460 տարուայ մէջ եզրագտական տարին մէկ տարի ետ կը մնար արեգակնային տարիէն: Ասկէ գտա, Նեղոսի յորդումները ստիպեր էին շինել թումրեր, փորել առուներ, կանգնեցնել պատնէշներ և այլն. — իսկ այդ կը պահանջէր փորձնական երկրաչափութիւն և բաւական բարդ հաշուագիտութիւն: Անոնց աստղաբաշխութեան մէջ գիտութիւնը խառնուած էր կրօնական առասպելներու հետ: — Արեւը նաւով կը լսղայ երկնքի օվկիանոսին մէջ, կամ միւս աշխարհի գետին մէջ, աստղերը կանթեղներ են զորս կը վառեն աստուածները: Սակայն եզրագտողներն արդէն գիտէին գոյութիւնը հինգ մոլորակներու, — Լուսնի, Երեւակի, Փայլածուի, Հրատի, Արուսեակի:

Եզրագտողներու պատմական զրականութեան մեղ հասած են միայն երկու բան. — Թագաւորներու ցանկը և Արխայակս սարեգրաքիւնները: Ասոնց առաջինը լոկ անուաններու շարք մըն է, իսկ երկրորդը՝ առանց կանոնաւոր մշակման, պատահաբար գրուած տեղեկութիւններ են: Ներկայ մտքով «պատմութիւն» ամենեւին չկար եզրագտութի մէջ:

Աշխարհագրութիւնն ալ չափազանց անմշակ էր: Անոնց յայտնի էին միայն իրենց երկիրը, ափրիկեան քանի մը դրացի երկիրներ, մօտաւոր Ասիան — մինչև Տիգրիսի ափերը և Յունաստանն ու քանի մը կղզիներ Միջերկրականի մէջ: Անոնց աշխարհագրական զրականութիւնը կաղմուած էր իրենց ափրապետած վայրերուն բնակութիւններու անուններով և քանի մը ճամբորդական արկածներու պատմութիւններով:

Բնական գիտութիւնները ասհասարակ չափազանց

տկար վիճակի մէջ էին: Միայն բժշկութիւնն էր բաւական զարգացած, այն ալ ոչ այնքան, որքան կարելի էր սպասել ժողովուրդէ մը որ միշտ գործ ունէր զիականրու և փորոտիներու հետ: Ճիշտ է, մոմիաներ պարտատելը մշտական առիթներ կուտար լաւ ուսումնասիրելու մարդու և կենդանիներու կազմը, բայց սովորութիւններու բռնակալ ու ժը այնպիսի նուիրագործուած կանոններ հաստատած էր զմշտական արհեստին մէջ,



Նգիպտական նաւ

որ թօթափել անհնար էր: Բայց և այնպէս՝ մեզ հասած գրութիւնները ցոյց կուտան, որ Նգիպտացիները բաւական լաւ գիտէին մարդու սկրակազմը, մկանները, մորթը ու ներքին գործարանները, բայց չա՛տ մտթ հասկացողութիւն ունէին արիւնատար անոթներու մասին: Անոնք բժշկութեան հայրն ու պահապան աստուածը կը համարէին Իմօթէպ աստուածը: Իսկ զեղևրու և բուժելու արհեստը հնարող՝ Մէնէս աստուակական թագաւորը: Հին արձանագրութիւն մը նոյն իսկ կ'ըսէր, որ Գ. հարստութեան փարաւոններէն մէկը միջոցը գտած է զլիսու մազերը շատցնելու և աճեցնելու:

Բժշկութիւնը Նգիպտոսի մէջ միշտ միացած էր զանազան կախարչութիւններու հետ:

Ինչպէս արձանագրութիւնները ցոյց կուտան, միջին և անկիման մօտ ժամանակներու թագաւորներուն օրով Նգիպտոսի մէջ կային մեծ գլխաւորաններ: Յաճախ կը յիշուին «գրքերու պալատներ», «գրքերու տուններ», կամ «գրքերու գլխաւոր», «գրքերու կառավարիչ» ու «գրքերու սան կառավարիչ» պաշտօնեաներ և ուրիշ այլպիսի դարձուածներ. բայց մեզ հասած են գիրքերու համեմատարար շատ քիչ մնացորդներ:

Նգիպտոսի գրականութիւնն ու բանաստեղծութիւնը իրենց նիւթերն առած են կրօնական աշխարհէն, ինչպէս Ռա աստուին նուիրուած օրհներգները, կամ «մեռելներու գրքերու» արթիքներն ու զովեանները:

Երգն ու նուագածութիւնը բաւական զարգացած էին: Գործիքներէն նշանաւոր էին քնարը, սառիղը, սրինգի զանազան տեսակները և այլն:

4. ԱՄՓՈՓՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Նգիպտոսի պատմութիւնը կը բաժնուի երեք շրջանի — Հին, Միջին և Նոր:

Գիտնականները երկու կարծիք ունին հին պատմութեան սկզբնաւորման մասին: Շատերը կ'ըսեն որ այդ պատմութիւնը սկսած է Քրիստոսէ 5700 տարի առաջ. ուրիշները կը սղդեն թէ սկզբնաւորութիւնը պէտք է հաշուել 3200 թուականէն:

Մենք արդէն զիտենք, որ աւանդութեան համա-

ձայն, Եգիպտական պետութիւնը կազմուած է Բրիստոսէ
իրը 3200 տարի առաջ, Մէնէսի կողմէ: Այս հին թա-
գաւորութեան ժամանակ դա՛հ են բարձրացած 10 հա-
ւրստութիւն կամ տուն (տինասթի): Այդ շրջանին մէջ
ծագում առած են զիրն ու գիտութիւնները, շին-
ուած են հսկայական բուրգերը. ան տեւած է մինչև
2100 թուական (Բրիստոսէ առաջ):



Փարաուն ռազմական կառի վրայ

Միջին քաղաւորութեան օրով Եգիպտոսը հասաւ մեծ
զօրութեան ու փայլի: Անոր մայրաքաղաքն էր Թէբէն: Այդ շրջանին թագաւորած են ժԱ. հարստութիւնէն
մինչև ժԳ. հարստութիւնը — այսինքն չորս տուն,
2100էն մինչև 1750 թուականները, Բրիստոսէ առաջ:
Այդ տուներու թագաւորներուն մէջ յաճախ պատահած
են Ամէնէմհատ և Ուսէրաէսէն անունները: Երկիրը բո-

լորովին խաղաղ էր և արագօրէն կը յառաջդիմէր:
Առեւտուրը շատ զարգացաւ, մանաւանդ Արարիայի
հետ: Թագաւորներն զբաղած էին ոչ թէ բուրգեր շին-
ելով, այլ մեհեաններ, պալատներ, ջրանցքներ և ուրիշ
հանրօգուտ շէնքեր կառուցանելով: Այդ ժամանակ գրա-
ւեցին Նուպիան: Ամէնէմհատ Գ. փարաւունը Նեղոսի մէջ
ջրաշտի դնել առաւ և վերին Եգիպտոսի մէջ կանոնա-
ւոր հսկողութիւն հաստատեց գետի վրայ, որպէս զի
իսկոյն ազգաբնակչութեանն իմաց արուի յորդումը:
Ինքն էր շինել առած Մէօրիս լիճը: Գետը յորդած
ժամանակ ջուր կը լեցնէին հսկայական լիճը, իսկ երաշ-
տի ժամանակ անոր ջուրերով կ'ուղղէին դաշտերը:
Նոյն փարաւունին կը վերագրեն հաշակաւոր կարիւրին-
թոսին — այդ 3000 սենեակով պարտաին կառուցումը:
Այդ սենեակներու կէտը գետնի վրայ էր, կէտը՝ ասկը:
Այժմ այդ հսկայական շէնքէն աննշան աւերակներ
են մնացած:

Բրիստոսէ մօտ 1750 տարի առաջ, փարաւուններու
իշխանութիւնն արդէն տկարացած, գուտաւական իշխա-
նութիւնները բարձրացած էին. երկիրն ինկած էր անիշ-
խանութեան մէջ: Այդ միջոցին մօտաւոր Ասիայէն Ե-
գիպտոս խուժեցին Հիսթուսները (Տոլիւներ): Թափա-
ռական ցեղեր էին ասոնք, անորոշ ծագումով. որ յա-
ճախ կուգային Եգիպտոս, ձմեռն իրենց հօտերուն համար
ապրուստ ճարելու: Այդ թուականներուն անոնք օգտը-
ւեցան Եգիպտացիներու անիշխանութենէն և տիրեցին
երկրին, կործանեցին շատ շէն քաղաքներ և տուններ և
կառավարութիւնն իրենց ձեռքը պահեցին քսանի մը հա-
րիւր տարի: Կարգ մը գիտնականներ կ'ըսեն թէ անոնք
Սեմական ցեղէն էին, որովհետև երբ, Յովսէփ Գեղեցիկէ
օրով, սեմական Հրէաները եկան Եգիպտոս, ուր կը թա-

դաւորէր Ապէպի փարաւոնը, — զանոնք շատ լաւ ընդունեցին երկրի կառավարիչները, իբր ցեղակիցներ: Սակայն այս պարզ ենթադրութիւն է. Հրէաները կըրնային շատ լաւ ընդունուիլ ոչ այն պատճառով, որ ցեղակիցներ էին, այլ ուրիշ որ և է պատճառով մը: Ոմանք ալ կ'ըսեն թէ անոնք Քեսոսցիներ կամ Հիթիթներ էին: Կ'ըսեն նոյնպէս որ Հիւքսոսներն առաջին անգամ ձիներմուծեցին Եգիպտոս, ուր մինչև այն ատեն անծանօթ էր նոյն կենդանին: Այսչափ մեծ ազդեցութիւն ունեցաւ Եգիպտական թէ զօրքին և թէ կեանքին վրայ:

ԺԶ. դարու կէսերուն, եգիպտական ժողովուրդը կարողացաւ, երկար պատերազմներ մղելով, ջարդել և դուրս մղել օտարամուտ Հիւքսոսները: Ատկէ յետոյ սկսաւ նոր թագաւորութիւնը, որ երկրին ամենափառաւոր ու յաղթական շրջանը կը կազմէ: Ամէնէն աւելի Ամէնհօթէպ և Թոթմէս անուններուն կը պատահինք փարաւոններու շարքին մէջ: Կը տիրեն ԺԵ.—ԺԸ. հարստութիւնները: Հիւքսոսներու դէմ մղուած պատերազմները ռազմական ոգի մտոյցին Եգիպտացիներուն մէջ. և անոնք զօրեղապէս կազմակերպուած, դուրս եկան իրենց երկրէն, տիրեցին Նուպիոյ, Եթովպիոյ, անցան Ասիա, գրաւեցին Ասորիքը և հասան մինչև Եփրատ, թերեւս մինչև Տիգրիս գետի ափերը. գրաւեցին նաև Փիւնիկէն ու Պաղեստինը: Անշուշտ անհնար էր այդքան ընդարձակ երկիրներ հպատակութեան մէջ պահել այն ժամանակ, երբ հաղորդակցութեան յարմար ուղիներ չկային և երբ կեղերոնը միայն թոնի ուժով կրնար տիրուածները պահել իր ձեռքին

Նոր
թագաւորութիւն

մէջ: Փարաւոններու ամենահզօրը — Թոթմէս — 17 տարուան ընթացքին, 14 անգամ արշաւանքներ գործեց իր կայսրութեան ներսերը, որպէս զի հպատակութեան մէջ պահէ ապստամբ ժողովուրդները: Անոր ջորդները անվերջ արշաւանքներու մէջ էին կամ պատերազմներու, կամ ապստամբութիւն զսպելու և կամ հարկեր հաւաքելու համար: Սակայն փարաւոններու այդ մշտական պատերազմներն ու բացակայութիւնները առիթ եղան քուրմերու զօրանալուն. անոնք այնքան զօրացան, որ նոյն իսկ կը սպառնային փարաւոններու կեղերոնական իշխանութեան:

Ամէնհօթէպ Գ. փարաւոնի մահէն յետոյ սկսաւ Եգիպտոսի անկման շրջանը: Գրաւուած երկիրները մէկ-մէկ ազատեցան: Հիւսիսային Ասորիքի մէջ կազմուեցաւ Հեքեթի (Հիթիթ) կամ Քեսոսցիներու հզօր պետութիւնը, որու ազդեցութիւնը տարածուեցաւ ամբողջ Փոքր-Ասիոյ վրայ: Պաղեստինի մէջ մշտական ապստամբութիւններ տեղի կ'ունենային: Սէթի Ա. և Ռամսէս Բ. Միամուն (1348—1281) փարաւոնները բազմութիւ արշաւանքներ կատարեցին Պաղեստին և Ասորիք, բայց ստիպուեցան վերջի վերջոյ ձեռք քաշել ասիական երկիրներէն: Ատոնցմէ յետոյ գործերն աւելի և աւելի վատացան. ծովանէններն անդադար կը կողոպտէին Ստորին Եգիպտոսը. Փղշապցիները կազմեցին բաւական հզօր իշխանութիւն մը հարաւային Ասորիքի մէջ. Եգիպտոսի ներսը սկսան ազդամիջեան կռիւներ ու խառնակութիւններ. դահ կը բարձրանային այնպիսի փարաւոններ, որոնք կը կըր-

Եգիպտոսի անկումը

Թընէին վարձկան յոյն և ուրիշ



Պամսէս Բ. Միամուհ (Սեսոսոր)

նախ ինկաւ քրմական դասուն, և ապա անտանձ զինւորներուն ձեռքը: Երկրի կեդրոնական իշխանութիւնը քայքայուեցաւ և խրաքանչիւր նոմարքոս ինքզինքը ինքնազուխ հռչակեց: Պաղեստինի մէջ հիմնուեցաւ Դաւիթի և Սողոմոնի թագաւորութիւնը, իսկ Եփրատ-Տիգրիսի հովտին մէջ՝ հզօր Ասորեստանը: Եթովպիան զօրացաւ և նոյն իսկ տիրեց Եգիպտոսին: Ասորեստանը խից Եգիպտոսը Եթովպիայի ձեռքէն: Վերջապէս Բրիտանոսէ առաջ 664—610 թուականին Պամէտիկոս Ա. փառաւորը կրցաւ անդամ մըն ալ ազատել Եգիպտոսը

ասորական զինուորներու վրայ: Այդ ասորականներէն շատերը նոյն իսկ փարաւուն դարձան: Ռամսէս Գ. փարաւոնի օրով եգիպտական իշխանութիւնը քիչ մը վերականգնուեցաւ. ծովանէնները զսպուեցան, լիբիական հրոսակաւորները ջարդուեցան, բայց Եգիպտոսը չփրկուեցաւ:

Ռամսէս Գ. ի մահէն յետոյ երկիրը արագօրէն կը գլխաւորէր անկում: Ներքին խռովութիւնները սյրան աճեցան որ փառաւորներու ախտը

Թշնամիներէն, բայց այդ արդէն վերջին անգամն էր. անոր յաջորդները չկրցան զիմադրել ասիական հսկայ կայսրութիւններուն և ԾՅՅին, Պամէտիկոս Գ. ի օրով Եգիպտոս ինկաւ Պարսիկներուն ձեռքը (Կամբիսի օրով) և մնաց անոնց իշխանութեան տակ 200 տարի: 332ին (Ք. Ա.) Աղեքսանդր Մակեդոնացին տիրեց Եգիպտոսի: Անոր մահէն յետոյ երկիրը բաժին ինկաւ իր Պաղամէս զօրավարին: Պաղամէսները 2½ դար այդ երկիրը կառավարեցին: Վերջապէս 30ին (Ք. Ա.) Հռոմայեցիները տիրեցին Եգիպտոսի ու դարձուցին իրենց համաշխարհային կայսրութեան մէկ նահանգը:



Բ. ՄԻՋԱԳԵՏՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

1. Բ Ա Բ Ե Լ Ո Ն

ՍԵՆԱԱՐԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՆԱԳՈՅՆ

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սենաար կը կոչուէր Միջագետքի այն մասը, ուր Եփրատն ու Տիգրիսը կը մօտենան իրարու, ուր կը գտնուէր Բաբելոնը: Սենաարի մասն էր նաև երկու գետերու միացած հոսանքը, Շաթ-էլ-Արաբի ամերու երկիրը, մինչև Պարսից ծոցը:

Ինչպէս որ Եգիպտոսը «Նեղոսի պարզեւն» էր, այնպէս ալ Սենաարը Տիգրիսի ու Եփրատի պարզեւն էր: Այստեղ ալ չորս կողմը աւազուտ անապատ էր, և միայն այդ գետերու ամերն էին և աղբիւրներ եղած տեղերը, որ պաղարեր կը դառնային: Եփրատի ամերը ցած են, սեւահողէ կազմուած. գետն ալ դանդաղ կը հոսի, ինչպէս Նեղոսը, այնպէս որ երբ հայկական բարձրաւանդակին ձիւները կը հային, գարնան վերջերը գետը կը յորդի և սեւահողէ տիղմ կը բերէ կը լեցնէ դաշտերը, կը ստեղծէ արգասանդ երկիր մը: Իսկ Տիգրիսը կը հոսի բաւական սրնթաց, ժայռոտ ու նեղ հունով. իր հեղեղները դուրս կը խուժեն ամերէն, և եթէ առաջքը չառնուի, կը քշեն կը տանին ոչ միայն բոյսեր, կենդանիներ ու բնակարաններ, այլև շրջապատ դաշտերու հողը, թողլով մերկ ժայռերը: Եփ-

Նփրատ և Տիգրիս

րատի ամերը ցած ըլլալով, երբեմն կը գոյանային բազմաթիւ առուակներ և կը թափէին շրջակայ դաշտերը, կը հասնէին մինչև Տիգրիս, կը կազմէին ճահիճներ, որոնք ամառուան սաքերուն կը հոտէին, վատառոյջ միջնոլորտ կը ստեղծէին շուրջը: Շատ տեղեր գետերու ամերն ու ճահիճները ծածկուած էին հսկայական եղէգնուտներով: Բայց հսկառակ ասոր, շատ վայրերու մէջ հիանալի հացարոյսեր ու արմաւ կը հասնէր: Հացահատիկները կուտային մէկին 200, նոյն իսկ 300 բերք: Գետերը լեցուն էին ձուկերով:

Այդ նպաստուոր պարագաներուն շնորհիւ էր որ Սենաարը շատ հին ժամանակներէ սկսած բաւական խիտ ազգաբնակիւթիւն ունէր: Միայն անոր ժողովուրդը մեծ ջանքեր պիտի թափէր, որպէս զի դապեր գետերու կործանիչ հեղեղները և ազատուէր անոնց գոյացուցած ճահիճներու սպանիչ, վատառոյջ նեւեւանքներէն:

Որքան մեղ յայտնի է, այդ երկրի ամենահին բնակիչները կը կազմէին երկու շրջան. — դէպի հարաւ, Պարսից ծոցին աւելի մօտ Սումէրացիները (Սումիր կամ Շումիր — կը նշանակէ հարաւի երկիր), հիւսիսակողմը՝ Ակկատացիները (Ակկատ — հիւսիսային կամ վերին երկիր): Ասոնց լեզուի մնացորդները գտնուած են հնագիտական հետազօտութիւններու շնորհիւ: Կ'ենթադրուի որ ասոնք գուրանական ժողովուրդներ եղած են: Այդ ժողովուրդը կամ իրեն հետ, իր նախկին հայրենիքէն բերած և կամ Սենաարի մէջ մշակած էր բաւական բարձր գիտութիւն, արհեստ, քաղաքակրթութիւն. ան ունեցած է գիր. գրաւոր մատաղներ հալեցնել, ձուլել ու գործիքներ շինել, ջրանցքներ փորել, կաւէն աղիւսներ պատրաստել և շէնքեր շինել, որովհետև

քարը շատ սակաւ է այնտեղ : Առանց այդ գիտութեան
և արձեւաններուն՝ անոնց երկիրը կը դառնար անբնակ
անապատ մը կամ վատառողջ ճահիճ մը :

Այդ ժողովուրդներէն մնացած են կրօնական գրա-
կանութեան հատուածներ և ուրիշ գրութիւններ : Անոնց
մէջ բաւական զարգացած էին մաթեմատիքը և աստ-
ղաբաշխութիւնը : Անոնք ասորին բաժնած էին 12 ամ-
սուան, իսկ օրը՝ 12 ժամի, որոնց ամէն մէկը հաւա-
սար էր մեր երկու ժամին, ժամը՝ 60 րոպէի : Շարաթը
բաժնած էին 7 օրուան, որոնցմէ առաջինը կը պատկա-
նէր արեւին (Բարբար), երկրորդը յունին (Նաննար),
միւսները արդէն յայտնի հինգ մոլորակներուն : Քանի
մը գիտնականներ կը կարծեն որ այդ ժողովուրդները
կ'ապրէին Քրիստոսէ մօտ 4000 տարի առաջ, իսկ գիտ-
նականներու մեծագոյն մասը կ'ենթադրէ որ անոնք ար-
դէն բաւական զարգացած էին Քրիստոսէ դեռ 7500 տարի
առաջ, իսկ Սենաար եկած են Քրիստոսէ 9000 տարի
առաջ : Անոնք իրենց երկիրը կը կոչէին «Եղեգներու և
ջրակցներու երկիր» :

Սոււմէրներն ու Ակկաացիները բնակելով Սենաարի
մէջ, չկազմեցին խոշոր պետութիւններ : Անոնք կ'ապ-
րէին առանձին առնձիրով կամ համայնքներով, որոնց
ամէն մէկն ունէր իր կեդրոնատեղին՝ քաղաքը, ուր կը
նստէր ցեղին կրօնական ու քաղաքական պետը — պա-
սէսիլն, որ և՛ քուրմ էր, և՛ գաւառի իշխանը : Ամէն
քաղաք ունէր իր աստծուն նուիրուած գլխաւոր տա-
ճար մը : Այդ քուրմ-իշխաններն անզազար պատերազմ
կը մղէին իրարու դէմ և կը ձգտէին իրենց ձեռքին տակ
առնել բոլոր միւս իշխանները, ու քաղաւոր կոչուիլ :
Կը պատահէր որ միաժամանակ քանի մը փոքր իշխան-
ներ, գրաւելով դրացի մէկ երկու շրջան՝ կը դառնային

վեհապետներ : Անոնք կը պատերազմէին ոչ միայն իրա-
րու հետ, այլ և Եփրատէն դէպի արեւմուտք, անա-
պատները թափառող սեմական ցեղերու հետ, որոնք
յաճախ յարձակումներ կը գործէին Սենաարի ծաղկած
քաղաքներուն վրայ : Այդ քաղաքներէն նշանաւոր էին
Ուրու-Քուկիսն, Ուրը, Լարսան և այլն :

Քրիստոսէ մօտ 4000 տարի առաջ, Սենաարի մէջ
երեւացին սեմական ցեղի մար-
դիկ : Հաւանօրէն անոնք եկած
են աւազուտ ու անջրդի Արա-
քիայէն, հմայուած Սենաարի ջը-
րարբի և սիդաւէտ դաշտերէն, անոր հարուստ արտե-
րէն : Այդ եկուորները թափառականներ էին, որ կը
պատկանէին սպիտակ ցեղին. սակայն իրենց զարգա-
ցումով խիստ ստոր էին Սոււմէրներէն և Ակկաացիներէն :
Բայց ըլլալով շատ ընդունակ, եռանդուն և վառ երե-
ւակալութեան տէր ժողովուրդ, Սեմականները շուտով
խւրացուցին տեղացիներու քաղաքակրթութիւնը, փոխ
առին անոնց կրօնը, մշակեցին, աւելի բարձր ու սրբա-
զան կերպարանք տուին անոնց կոպիտ, սկզբնական
կրօնին. սորվեցան անոնց արձեւանները, դարձան նստա-
կեաց : Գաղթելէն հազիւ 2—3 դար անցած, Սեմական-
ները տէր դարձան երկրի ամբողջ հարաւին, որ և ստա-
ցաւ Քաղդէաստան անունը : Անոնց առաջին թագաւորը
կը համարուի Սարգոն Ա. որ ապրած է Քրիստոսէ 3800
տարի առաջ :

Սեմականներ
և Ռաբլոն

Այդ տիրապետութիւնը կամովին ու գիւրութեամբ
ձեռք չինկաւ. երկու երեք դար շարունակ ռազմասէր
Սեմականները պատերազմներ ու անվերջ մանր կռիւներ
մղեցին տեղացիներուն դէմ, մինչեւ որ տիրացան հիւ-
սիսին : Այնուհետեւ հարաւն ու հիւսիսը երկար շա-

բունակեցին իրենց պատերազմները, որմէ և երկու-
կողմն ալ թուլացան, ուժասպառ եղան: Ասկէ օգտուե-
ցան Էլամցիները և տիրապետեցին Սենաարի: Թէ Սե-
մականներ և թէ Սումէրո-ակկատեանները հպատակե-
ցան անոնց:

Վերջապէս սեմական ցեղերէն մէկը յաջողեցաւ
Ջարդել Էլամցիները, աստիճանաբար իր իշխանութեան
ենթարկել երկրի բոլոր մասը համայնքները ու իշխա-
նութիւնները և կազմել սեմական մեծ պետութիւն մը:
Այդ ցեղի առաջին նշանաւոր թագաւորն եղաւ Համմու-
րապին (2300 տարի Ք. ա.), որ վերջնականապէս յաղ-
թեց Էլամցիներուն, Սենաարի այս կամ այն մասին
մէջ մնացած փոքրիկ անկախ իշխանութիւններն ալ
հպատակեցուց իրեն, դուրս ելաւ իր երկրէն և դրաւ եց
ամբողջ Ասորիքը: Անոր մայրաքաղաքն էր իր ծննդա-
վայրը՝ Եփրատի ափին հաստատուած Բաբելոնը, որ
ակկատերէն կը կոչուէր Թիւ-թիւ-կի, այսինքն «Կեանքի
Տեղ»: Յետոյ այդ անունը փոխեցին և կոչեցին Կա-Գիւ-
Հիրա, այսինքն «Աստու Դուռ»: Երբ Սեմականները
ներս խուժեցին և սկսան տիրել հիւսիսային մասերուն,
անոնք իրենց լեզուով «Բաբ-Իրա», «Աստու Դուռ» կո-
չեցին այդ հին քաղաքը:

Համմուրապի նշանաւոր դորավար էր, կառավարիչ
և օրէնսդիր: Ան մեծ խնամք
տարած է երկրի խաղաղ զար-
գացման. շինած ու վերանորո-
գած է բազմաթիւ տաճարներ:
Դեռ Մովսէսի տասը պատուիրաններէն հինգ դար
առաջ՝ ան հրատարակած է «Համմուրապի Արքայի
Օրհնակնու ժողովածուն», որ ամենահինն է աշխարհի մէջ:

Համմուրապիի
օրհնակներ

Այս ժողովածուն փորագրուած է սեպաձեւ տաւերով,
աւելի քան երկու մեղր բարձրութեամբ ժայռի մը վրայ:

Այդ օրէնքները չափազանց խիստ ու դատան են.
«Ահն ընդ ականի» սկզբունքը լիապէս կը տիրապետէ
անոնց մէջ.

«Եթէ մէկը փճացնէ միւսին աչքը, կամ կտորէ անոր ոսկորը,
այդպէս ալ պէտք է վտրուել անոր հետ: Եթէ սրգին ծեծէ հայրը,
պէտք է կտրել անոր երկու ձեռքը: Եթէ բժիշկն անյաջող անդա-
մահ օտուժիւն կատարէ և հիւանդը մեռնի, պէտք է կտրել անոր
երկու ձեռքերը: Եթէ ճարտարագետի մը շինած տունը փլի և
սպաննէ տանտէրը, պէտք է մահուան պատժի ենթարկել ճար-
տարագետը. իսկ եթէ տան քանդուելէն մեռնի տիրոջ որդին, պէտք
է սպաննել ճարտարագետին զաւակը»:

Սակայն այդ նոյն օրէնագրութիւնը մեծ յարգանք
ու վստահութիւն կը ցուցնէ մարդու խիղճին, անոր
ազատութեան մասին. թոյլ չի տար որ կեղեքեն խեղ-
ճերը:

Համմուրապին փորել տուած է բազմաթիւ ջրանցք-
ներ, որոնցմէ ամենամեծը կը կոչուէր նախ իր անու-
նով — «Նար Համմուրապի», իսկ յետոյ յայտնի էր
«Բաբելոնի արքայական մեծ ջրանցք» անունով: Եին-
ուած էր զսպելու համար Տիգրիսի ողողումները: Անկէ
կը ձեւանային բազմաթիւ մանր ջրանցքներ, դէպի աջ
և դէպի ձախ ու խիտ ցանցով կը ծածկէին բոլոր շր-
ջակայ դաշտերը:

«Ես Հրամայեցի, — կ'ըսէ Համմուրապին արձանագրութեան մը
մէջ, — Փորել նար Համմուրապի ջրանցքը (Նար=պարգև), որ Սու-
մէրներու և Ակկատացիներու համար բարեքի անսպառ աղբեր
մըն է: Ես անոր երկու ափերը յատկացուցի երկրագործութեան և
հրամայեցի ցանել հացահատիկներու և Սումէրներուն և Ակկատա-
ցիներուն պարգեւեցի պողաբերութիւն, առատութիւն և խա-
ղաղ կեանք»:

Սակայն այդ հսկայ ջրանցքը չկրցաւ զսպել Տիգ-

րիսի կատաղի հեղեղները, ուստի Համմուրային վիթխարի պատ մը քաշեց գետափը, որ կոչուեցաւ «Տիգրիսի մեծ պարիսպ»: Յետոյ կարդի գրաւ դատաւորութեան ձևերը և եզաւ արդար դատաւոր, կանոնաւորեց հարկերն ու տուրքերը, յինեց բազմաթիւ ճամբաներ, թէ ջրային և թէ ցամաքային հաղորդակցութեան համար: Համմուրային Հին Արեւելքի ամենամեծ պետական անձերէն մէկն է:

Իր մահէն ետք Բաբելոնը դեռ քանի մը դար խաղաղ կեանք ունեցաւ, իսկ յետոյ սկսաւ անկման շրջանը. ծագեցան ներքին քաջքայիչ կռիւներ և կեղծոնական իշխանութիւնը թուրացաւ: գաւառական մանր իշխանները ապստամբեցան: Այս վիճակէն օգտուելով, դրացի կասիսները արեւելիկ երկրին, բայց չուսով ինկան բարեկական մշակոյթի ազդեցութեան տակ, ձուրուեցան անոնց հետ: Վերջնական վասնզը հասաւ հիւսիսէն: Այնտեղ ժն. գարուն հիմնուած էր Ասորեստանի պետութիւնը, որ չորս դար շարունակ կախ մզեց Բաբելոնի դէմ և ժն. գարու վերջերը կործանեց Բաբելոնն ու տիրեց ամբողջ Միջագետքին:

Բաբելոնցիներու կրօնը կազմակերպուած ու գարգացած է Սումերներու և Ակկատացիներու կրօնի ազդեցութեան տակ, ուստի անհրաժեշտ է ծանօթանալ նախ այդ ժողովուրդներու կրօնին:

Սումերո-Ակկատականներու կրօնը նախնական կոպիտ դաւանութիւն մըն էր: Բոլոր կիսարարքարոս ցեղերունման, անոնք ալ կը կարծէին թէ բնութեան բնորդ երեւոյթները կենդանի էակներ են, որոնք կրնան մարդուն թէ բարիք, թէ չարիք պատճառել: Այսպէս՝ ա-

Սուսմերո-Ակկատականներու կրօնը

րեւը որ կը հասցնէ իր արտերը և կը տաքցնէ զինքը, երբեմն ալ կ'այրէ, կը փճացնէ բերքերը. հովը, որ երբեմն կը զովայնէ հրատոչոր մարդը, երբեմն ալ յանկարծ խորշակ կը դառնայ և կ'ոչնչացնէ բոլոր կանաչները. անձրեւը, որ կենարար ջուր կուտայ բոլոր բոյսերուն, կենդանիներուն և մարդուն, երբեմն ալ յորդանոս տեղարով, հեղեղ կը դառնայ և կը կործանէ ամէն ինչ: Ուստի՝ մարդը ինքզինքը կը գտնէր շրջապատուած զանազան ոգիներով, որոնց ստուար մեծամասնութիւնը չար էր: Մէկ մասը միշտ կը խանդարէր բնութեան կարգ ու կանոնը. յաւաջ կը բերէր, օրինակ՝ երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ, կայծակ եայլն. միւս մասը, թափառելով երկրի վրայ, կը մտնէր մարդոց մէջ, կը ցանէր ժանտախտ և ուրիշ հիւանդութիւններ, կը կոտորէր կենդանիները, կախ ու խռովութիւն կը յարուցանէր ընկերներու, հօր և զաւկի, էրկան ու կնոջ միջև, մանուկներ կը փախցնէր եայլն:

Այդ ոգիներու ամենասոսկալիներն են «Անյուրեղի Եօրը Ազիները»: Հիները կ'ըսէին որ թէև անոնց բնակավայրը ան-

Ոգիները

դունդն է, երկրի խորերը. բայց յաճախ անոնց ձայնը կը լսուի սարերու կատարներէն, օդին մէջ, անհուն տարածութեան բոլոր մասերու մէջ. սակայն «անոնք բարի համբաւ են վայելիք երկնքի մէջ ու երկրի վրայ»: Անոնք կը համարուին ապստամբ, խառնակիչ ուղիներ. անոնք չեն ճանչնար նոյն իսկ երկնքի տէրը-Անա աստուածին իշխանութիւնը: Ատեն մը անոնք աստուածներու պաշտամբներն են էին, բայց «ժամկարար չար դարձ մը սկսան» — ապստամբեցան երկնային ոյժերու դէմ, խաւարեցուցին

լուսինը և մազ էր մնացած, որ գահընկէջ ընէին զայն: Հին արձանագրութեան մը մէջ կ'ըսուի.

Անոնք եօթն են. եօթն են ջուրերու խորը, եօթն են երկնային եթերի մէջ. աճած են ստորջրեայ փոսերու մէջ... Անոնց համար անհասկանալի են յարգանքն ու բարի գործերը, անոնք ակամբ չեն դներ աղաչանքներուն և աղօթքներուն:



Չար ոգին

Սուժերօ-Ակիտանաները կը կարծեն որ անոնք երբևիմ կ'երևին կրակէ օձերու ձևով, երբևիմ իբրև ուրուականներ, վամպիրներ, երբևիմ այ կ'սոջ կերպարանքով:

Բացի այդ չար ոգիներէն ու սասանաներէն, Սուժերները և Ակիտացիները կը հաւատային նաև կախարդներու գոյութեան: Անոնք կը կարծէին թէ կախարդը չար մարդ մըն է, որ կրնայ զա-

նազան միջոցներով լրեն հպատակեցնել չար ոգիները և անոնց չնորհիւ ամէն վնաս հասցնել միւս մարդոց. ան կրնայ հիւանդութիւն, սանջանքներ և նոյնիսկ մահ պատ-

ուել ուրիշներուն իր աչքով (նազար), անէծքներով, զանազան կախարդական բառերով, խմիչքներով, զորս կը պատրաստէր զանազան բոյսերէ և պատրաստութեան պահուն կախարդական բառեր և աղօթքներ կը մրմնջէր: Կը հաւատային,

Կախարդներ,
բաղիամաններ եւլն.

վերջապէս, թէ կախարդը իր վնասելու զամ մարդուն արձանիկը շինելով մեղրամոմէ կամ ուրիշ նիւթէ, կը թաղէ գեանին տակ, եթէ ուղէ մեռցնել այդ մարդը. կը կտրէ անոր թեւը, եթէ աջնպէս ուզէ են: Երբ կախարդը ուղէր մարդը հիւճել անեղով կամ ուրիշ հիւանդութիւնով մը, գանդաղօրէն կը հարեցնէր անոր արձանը:

Այդ բոլոր չար էակներէն ազատելու մէկ ճար ունէին. — դիմել բարի ոգիներու և բարի աստուածներու օգնութեան: Իսկ անոնց կարելի էր դիմել կրկին կախարդներու միջոցով: Այդ նոյն կախարդները գիտէին ինչպէս չարիք գործել, նոյն պէս կ'իւ մղել չար ոգիներու դէմ: Անոնք կը շարադրէին մասնաւոր աղօթքներ՝ ուղղուած բարի աստուածներուն,



Չարի ոգին, արձուի գլխով

իրբև կախարդանք չար ոգիներու զէմ: Այդ կախարդական ազօթքներով, անոնք իրբև թէ բոլոր չար գեւերը կը հարածէին մարդկային բնակավայրերէն հեռու — մութ անտառները, լեռներու կտարները, անջրզի անապատներն ու անմարդաբնակ վայրերը, ուր չեն կրնանար մնասել մարդ արարածին: Այս կախարդները վայրենի ու կխարարարոս ժողովուրդներու մէջ կը դառնային մարդոց և աստուածներու միջնորդներ, — հոգեւորականներ. անոնք կը հարածէին չար գեւերը, որոնք կը մըռնէին մարդոց մէջ և կը հիւանդացնէին զանոնք: Անոնք զանազան բոյսեր զանկելով, գեղեր կը պարբաստէին հիւանդութիւն բերող չար ոգին: մարդու մէջէն զտրտ հանելու համար: Վերջապէս կը սրտարաստէին զանազան կախարդական աշուտներ, լաթի ու կաշիի կտորներ, որոնց վրայ կա՛մ նշաններ կը գնէին, կամ կախարդական ազօթքներ կը նշանադրէին և կը փակցնէին, կամ փոքրիկ արձաններ կը շինէին և կը կախէին մարդոց վրայ, որ չար գեւերն այլ ևս չհամարձակէին մտնելու այդ հմայեակը կրողին:

Սոււե՛րները և Ակիատացիները միշտ իրենց վրայ կը կրէին այդպիսի «թապիմաններ» և «հմայիլներ»: Հնագէտները աւերակներու մէջ զատած են այդպիսի շատ կախարդական իրեր և գրաւոր ազօթքներ:

Բայց որքան կ'աճէր ժողովուրդին թիւը, որքան յաճախ յարաբերութեան կը մանէին զբայցիներու հետ, — մէկ խօսքով, որքան կը զարգանար ժողովուրդը, այնքան կը զարգանային, կը բարձրանային իր կրօնական հաստատիքները: Այսպէս՝

Աստուածներ

բարի ոգիներէն մէկ քանին, ժամանակի բնթացքին մէջ, բարձրացան միւս ոգիներէն և դարձան աստուածներ. երկնքի ոգին դարձաւ Երկնքի աստուածը — Անուկամ Անու (Բարեկրօնի մէջ), ծովերու ոգին դարձաւ Էա կամ ովկիանոսի աստուած, երկրի ոգին — Դաւակիւն (երկիր-աստուած) և այլն:

Այդ աստուածները կը համարուէին չափազանց բարձր, չափազանց զօրեղ. կարելի չէր միշտ դիմել անոնց, ձանձրացնել, որովհետեւ կը բարկանային: Այդ պատճառով մարդը շուտով գտաւ միջնորդ մը իրեն և մեծ աստուածներուն միջեւ: Էայլ և Դաւակիւնցի որդին էր այդ, բարի ոգին — Միրի-Դուկիսն: Հասարակ մահկանացուն, օրինակ, երբ գլխուցաւ ունենար, կը դիմէր կախարդին կամ հոգեւորականին. ան ալ կ'երթար Միրի-Դուկիւնցի և կ'ըսէր.

— Դիտու ցաւը բարձրացեր է անդունդէն, Անդունդի հրամայողի բնակարանէն, մտեր է այսինչ մարդուն մէջ և այս ու այս ձեւով կը տանջէ զանս:

Ինչ բարի Միրիին կը դիմէր իր հօրը.
 «Նայ, Դիտի ցաւը բարձրացեր է անդունդէն. հիւանդ մարդը չգիտեր թէ ի՛նչ ընէս ի՛նչպէս բժշկուելու:
 Էան կը պատասխանէր.

«Որդիս, ի՛նչ կտակած որ դուն ինքդ ալ գիտես. ե՞ս պիտի սովորեցնեմ քեզ ինչ որ յայտնի է ինձի, յայտնի է և քեզի Բայց եկուք այստեղ, որդիս, Միրի-Դուկիս վերցուր դու լը, անոր մէջ ջուր լեցուր գետի բերանէն. այդ ջուրին հաղորդէ քու կախարդական մեծ ուժդ, անով սրսկէ մարդը, իր աստուած որդին ... լաթով փաթթէ անոր գլուխը .. Իսկ ադ ջուրը թափէ մեծ ճանապարհին վրայ թող հալածուի ցաւը թող կրտուի ցաւը, ինչպէս դիշերուն ուրուակունը թող իմ խօսքը հալածէ զանս և թող Դաւակիւնս բուժէ այդ մարդը»:

Միրիին այդ միջոցը կը հաղորդէր կախարդին, կախարդն ալ կը բժշկէր: Արեւը կամ Բարբառը նոյնպէս

հզօր աստուած մըն էր Սոււմէրներու և Ակկատացիներու մէջ: Անոր համար դադանիք չկար երկրի վրայ, ան կը տեսնէր ամէն ինչ, մանաւանդ կէս օրին: ան բարձրագոյն զատուոր էր երկնքի մէջ և երկրի վրայ, ան սուտը կը զատէր ճշմարիտէն: ան էր որ «գիտէր մարդու սրտին չարն ու բարին»:

Բաբելոնական և քաղզէական ազգաբնակիչներն ընդունեց Սոււմէրո-ակկատեաններու այդ կոպիտ կրօնը, բայց իր սեմական վառ երեւակայութեամբ, աւտիճանարար զարգացուց և իր ընդհանուր զարգացման հետ միասին՝ բարձրացուց, սրբացուց իր կրօնը: Շուտով բաբելոնական կրօնը հետագա սոււմէրո-ակկատեաններու գունդիկ կառապաշտութենէն թէև ամբոխք մնաց կրկին նոյն նախնական հաւատալիքներուն գերի, իսկ քուրմերն ու միւս կրթուած զոսակարգերն ստեղծեցին աւելի բարձր կրօն մը:

Բաբելոնական աստուածները

Այս վերջինը բաւական բարդ էր և վերացական: Անոնց աստուածներու գլուխ կանգնած էին երկու երրորդութիւն: Աւաջին՝ Անու կամ Անա — «Ատաղալից երկնքի տէրը», էա — «Չուրերու հրամայողը» և Բիշ կամ Բիշա (Տէր, պարոն) — «Անդունդի կամ գծովքի տէրը»: Սա բարձրագոյն երրորդութիւնն էր, որ շատ հեռու էր մարդոցմէ և անոնց ցուերէն: Երկրորդ երրորդութիւնն աւելի մօտ, աւելի մատչելի էր մահկանացուներու համար: Անոր մէջ կը մտնէին — Սիւնը (լուսին), Շաւաշը (արեւ) և Բաւնիսը (ամպրոպը):

Այդ երրորդութիւններէն զատ, կար և աստուած-

ներու տարրեր խումբ մը, որու մէջ կը մտնէին ժամանակի բոլոր յայտնի մոլորակները: Սոււմէրո-ակկատեաններու Միլրի-Պուկկան Բաբելոնացիներուն մէջ դարձաւ



էա բարի աստուածը

Բաբելոն քաղաքի հովանաւոր բարի աստուածը — Անուր-Ուշուալիս անունով: Այդ անունը կրճատուեցաւ դարձաւ Մարդուկ, որ եղաւ անոնց գլխաւոր աստուածը, երկրի հովանաւորը:

Բաբելոնական քուրմերն այդ բոլոր աստուածները

կը համարէին «ամենարարձրեալ էակի» մը, աստուածի մը զանազան արտայայտութիւնները: Իւրաքանչիւր աստուած ունէր իր ամուսին աստուածուհին, իսկ բոլոր աստուածուհիներու միակ, իսկականն էութիւնը, միակ իղական սկզբնաւորութիւնը բնութեան մէջ կը կոչուէր Բեիլիս:



Ռէյի եւ Տիամասի կախը

Ուրեմն բոլոր բաբելոնական աստուածները 32 էին և կը կոչուէին Անու-Կրկինք, Էս-Ուվկիանոս, Բեյ-Տէր, Ղրամայոզ, Բեյիսա-Տիրուհի, Բաննան-Ամպոպեան, Շամաշ-Աօրե (սա կիրակի օրուան աստուածն էր), Սիմ-Լուսին (երկուշաբթի օրուան աստուածը), Նեթգալ-Ղրատ (երեքշաբթի), Նարու-Փայլածու (չորեքշաբթի), Մարդուկ-Լուսնթագ (հինգշաբթի), Իշար-Արուսեակ (ուրբաթ), և Նի-Նիբ-Երեւակ (շաբաթ): Մինչև այսօր ալ այդ մտորակ-աստուածներու անունները այս կամ այն ձեւով մնացած են շաբթուան օրերուն վրայ, Ֆրանսերէն, անգլիերէն կամ գերմաներէն լեզուներուն մէջ:

Անգլիացի գիտնական Սմիթ Բարեյնի աւերակներէն երեւան հանեց բազմաթիւ գրուած աղիւններ, որոնց ընթերցումը պահանջած է հսկայական ջանքեր: Այդ աղիւններու արձանադրութիւնները կը հաստատեն որ

Բարեյնի ամենահզօր աստուածն էր Բեյ-Մարդուկը (Մուսնու Թիամաս) կամ սկզբնական քառսր որ կը սպառնար կլկլ բոլոր աստուածները: Այս վերջինները կը դիմեն Մարդուկին, որ ոչնչացնէ այդ չար ոյժը: Բէլը կը համաձայնի այն պայմանով, որ բոլոր աստուածները զինքը ճանչնան իրրեւ գլխաւոր, իրրեւ առաջին աստուած: Աստուածները ժողով կը կազմեն, խնջոյք կը սարքեն, կ'ուանեն կը խմեն և իրենց բոլոր իրաւունքները կուտան Մարդուկին: Ան կը յարձակի քառսին վրայ, թուրով երկու կէս կ'ընէ զայն, մէկ կէսէն կը ստեղծէ երկիրը, միւսէն-երկինքը. յետոյ կը ստեղծէ երկնքի լուսաւորները և երկրի շնչաւորներն ու բոյսերը: Բոլոր աստուածները կրկին կը հաւաքուին և կ'երկրպագեն անոր:

Աւելաւորի սեղ-
ժագարձուրիւնը

Միւս աստուածներէն ամենէն աւելի յարգուած էր Իշարը՝ գեղեցիկութեան, սիրոյ և քաջութեան աստուածուհին, որ կը կառավարէր Արուսեակ մտորակը:

Միւս աստուածներէն ամենէն աւելի յարգուած էր Իշարը՝ գեղեցիկութեան, սիրոյ և քաջութեան աստուածուհին, որ կը կառավարէր Արուսեակ մտորակը:


Այլևս այդպիսի կրօնի մը չէին կրնար ծառայել Սումերո-Ակկադականներու նախկին կախարդները և գուշակողները: Սակայն այդ սկզբնական հոգեւորականները չանհետացան, այլ մնացին ժողովուրդի ստորին դասակարգերու մէջ, որոնց վրայ դեռ երկար դարեր հզօր ազդեցութիւն ունէին: Իսկ նոր կրօնի համար ստեղծուեցաւ նոր ու կրթուած դասակարգ մը—Քուրմերու դասակարգը:

Հոգեւորականներ,
Բուրմեր, կախարհ-
ներ և վիուկներ

Քուրմերը ժամանակի ամենազիտուն մարդիկն էին: Անոնք բաւական մեծ պաշար ունէին աստղաբաշխութենէ և դարձան թագաւորներու խորհրդականներ:

Քուրմերը ժամանակի ամենազիտուն մարդիկն էին: Անոնք բաւական մեծ պաշար ունէին աստղաբաշխութենէ և դարձան թագաւորներու խորհրդականներ:

Մենոնց համար երկնակամարը հսկայական զիրք մըն էր, որմէ կը քաղէին ամէն տեսակ գազանիքներ. ասաղեքու զանազան դրութիւններէն կը կարգային ամէն տեսակ գուշակութիւններ: Իսկ կախարդներն ու վհուկ-



Ռաբելական մեհեան եօթ յարկով

ները, մանեկով ամբոխին մէջ և կազմելով հոգեւորականութեան ստորին դասը, գուշակութիւններ կ'ընէին երազներէ, վիճակ նետելով, տերեւներու սօսափիւնով (ինչպէս Հայերու «Սօսանուէր»), ջուրերու կարկաչիւնով, և այլն: Քուրմերը ամենագօրեղ զասակարգը կը

կազմէին երկրին մէջ. պաշտօն կը մատուցանէին աստուածներուն, գիտէին անոնց սրբազան ծագումն ու պատմութիւնը: Կը հագնէին երկար զգեստներ:

Ռաբելական մեհեաները կը շինուէին աղիւսներով. այդ պատճառով ոչ մէկը կանգուն չէ մնացեր, գոնէ աւերակ վիճակի մէջ: Բայց աղիւսներու ու քարերու վրայ մնացած ուռուցիկ պատկերներէն և զրաւոր յիշատակարաններու նկարագրութիւններէն կ'երեւի որ մեհեանները կ'ըլլային բազմայարկ — 7 յարկանի, իբր նշան շարաթուան 7 օրերուն կամ 7 մօրթակներուն. ստորին յարկը լայն քառակուսիի ձեւով էր. անոր վրայ կը բարձրանար երկրորդը, աւելի փոքր քառակուսի մը, անոր վրայ՝ երրորդ քառակուսին և այլն: Մէկ յարկէն միւսը կը ասնէին երկու կողմերէն քարէ սանդուղներ — դէպի աջ և դէպի ձախ: Սանդուղները դուրսէն էին: Ամենավերջը կը շինուէր սենեակ մը գմբէթով, ուր կը դբուէր գլխաւոր աստուածին արձանը և ուր կը կատարուէր անոր պաշտօնը:

Մեհեաներ

Այսպէս՝ Տուր-Շարուկինի (Իուր-Սարուկինի) մեհեանը 7 յարկ էր, իւրաքանչիւր յարկը առանձին գոյնով ներկուած: Ամբողջութեան բարձրութիւնը 42 մէրը էր. չունէր ոչ մէկ դահլիճ, բացի վերին յարկէն, որուն գլուխը ծածկուած էր գմբէթով, իսկ մէջը դրուած էին Խշատի արձանը, երկու քարէ զոհարան և զոհաբերութեան բոլոր պարագաները: Թագաւորներէն և քուրմերէն դատ, ոչ մէկը իրաւունք ունէր մտնելու այդ սրբավայրը: Ամբողջ շէնքին պատերուն վերին մա-

սերը զարդարուած էին ատամնաձև զարդարանքներով: Մեհեանի ընդհանուր տեսքը զուրկ չէր ճարտարապետական համաչափութենէ և գեղեցկութենէ:

Միրատի և Տիգրիսի հսկայական ուղղումները Բաբելոնացիներուն ներշնչած էին այնպիսի երկիւղ մը, որ անոնց մէջ ծնած էր մեծ քրիեղելի մը աւանդութիւնը: Աստուածները անգամ մը սաստիկ բարկացան մարդոց դէմ անոնց անառակ կեանքին պատճառով, կ'ըսէ այդ աւանդութիւնը, — և ուղեցին ոչնչացնել բոլոր արարածները: Այդ նպատակով երկնքէն թափեցին տեղատարափ անձրեւներ, դրոս, կոյճակ ու փոթորիկ: Տեղատարափէն հեղեղներ կազմուեցան ամէն կողմէ և արար-աշխարհ ծածկուեցաւ ջուրով: Սուկայն էա բարի աւառածը իր սիրելի մէկ մարդուն՝ Բաբելոնի թագաւորին առաջուքնէ իմացուց որ շինէ ասպան մը, և ընտանիքով ու ամէն տեսակ կենդանիներով պան մը, և ընտանիքով ու ամէն տեսակ կենդանիներով մանէ անոր մէջ ու իսկուռի, թաղելով սուրբ գիրքերը գեանին տակ: Տապալտ բարձրացաւ ջուրերուն վրայ, Դ օր թափառեցաւ յետոյ անձրեւները դադրեցան և ջրհեղեղն սկսաւ իջնել: Տապանի բնակիչները երեք անգամ թռչուն արձակեցին, անանկու թէ ցամաքը բացուած է: Տապանն իջաւ լերան կառարը, և այն. — Ամբողջ աւանդութիւնը գրեթէ կէտ առ կէտ նման է Աստուածաշունչի ջրհեղեղի պատմութեան:

Գրուոր աւանդութիւններու մէջ կան նաև Բաբելոնի աշտարակաշինութիւնը և լեզուներու խառնակումն յեղեցնող պատմութիւններ: Առհասարակ թէ աշխարհի ստեղծագործութեան, թէ ջրհեղեղի և այլ աւանդութիւնները շատ նման են Աստուածաշունչի պատմածներուն: Եւ զորմանալի չէ այս. Հոնները և Բաբելոնացի-պատմածներուն նման զորմանալի չէ այս. Հոնները և Բաբելոնացիները ոչ միայն միեւնոյն սեռական ծագումն ունէին, այլ և իրարու դրացի բնակիչ, փոխադարձաբար կ'ազդէին մէկ մէկու վրայ:

Ջրհեղեղ

Եգիպտացիներուն համար մահը կեանքի շարունակութիւնն էր. մեռնիլ՝ կը նշանակէր անցնիլ ուրիշ կեանք մը, հանդերձեալ աշխարհը. մահը ոչ մէկ դժուարութիւն, ոչ մէկ տանջանք չունէր: Քաղղէացիներու և Բաբելոնացիներու համար, ընդհակառակը, մահն ամենատակալի բանն էր և ամենամեծ չարիքը: «Մահը չազատեր մարդը», այլ «կը նետէ ծանր շղթաներու մէջ», «դաշուհանար կ'ընէ»: Մարդը երբ կը մեռնի, աշխարհի և կեանքի բոլոր փառքն ու հրաշալիքները կը չքանան անոր համար:

Հանդերձեալ կեանքը


Բաբելոնացիները կամ կը կիզէին մեռելը, և կամ կը զնէին զլանածեւ դազաղի մը մէջ և կ'ընէին: Դադազը կը բաղկանար երկու գլաններէ, որոնց ծայրերը իրարու մէջ կ'անցընէին: Դիակը տեղադրելէ ետքը, այդ միացած մասերը ամրապէս կը փակէին սեւ ձիւթով: Առհասարակ գերեզմաններ ու դազաղներ չափազանց հազուադէպ են Բաբելոնական աւերակներու մէջ: Ուրեմն, կը հետեւի որ միայն հարուստները կամ նոյն իսկ միայն թագաւորները դադազով կը թաղէին գերեզմանի մէջ. իսկ հասարակ ժողովուրդը կ'այրէր իր դիակները:



Բաբելոնական դազաղ

Մեռելին հետ կը թաղէին ամաններով լեցուն կերակուրներ և ուրիշ այնպիսի գործիքներ, զորս կը գործածէր այս աշխարհին մէջ: Ուրեմն Բաբելոնացիները կը հաւատային որ մեռելները ունին այն բոլոր պա-

հանջները, ինչ որ ունին կենդանի մարդիկ. եթէ այդ պահանջներուն համար սլաշար են. չգրուի գերեզման,



Բաբելական գերեզման

հանգուցեալը գիշերները կ'ելլէ, կը թափառի մարդկային բնակավայրերու շուրջը և կը խօսվէ բոլորին հանգիստը :

Բաբելական կրօնին մէջ չկայ վարձատրութեան գաղափարը հանդերձեալ կեանքին մէջ: Արդար թէ մեղաւոր, — բոլոր մարդիկ մեռնելէ յետոյ կ'երթան Արալու, — աշխարհ մը որ կը գտնուի երկրի տակ, — մտայ աշխարհ մը, որ լեցուած է ամէն տեսակ հրէշներով: Այդ հրէշներուն միջեւ կը թափառին մեռածներու հոգիները: Արալուի մասին այսպէս կ'ըսեն հին արձանագրութիւնները.

Սա անշարժ երկիր մըն է, աշխարհ մը ուրկէ ետ չեն դառ-

Արալու

նար երբէք, բնակարան մը ուր կը մտնեն, բայց դուրս չեն ելլեր, ճանապարհ մը, ուրկէ կ'իջնեն, բայց երբեք ետ չեն դառնար, քանա մը, ուր անօթիները կը կերակուին փոշիով և ճարսանքը



Արալու

կը յողենան ցեխով, ուր մարդիկ լոյս չեն տեսներ և կը թափառին խաւարի մէջ, ուր ստուերները կը սլանան թւչուններու պէս:

Այդ երկրին կառավարիչն ու տէրն է Աղլաքու աստուածուհին, որուն ամուսինն է Ներգալը-դժոխքի տէրը:

Մեզ հասած աւանդութիւն մը կը պատմէ, որ Իշսար աստուածուհին (Աստարտէ) անգամ մը Արալու

իջաւ : Վարազը վիրաւորած էր իր ամուսինը՝ Դուսու-
ղին, որ մեռաւ : Իշտարը որոշեց երթալ Արալու, բերել
անձնահարսան ցուր, խմցնել իր
ամուսնին, կենդանայնել և ան-

ԻՇՏԱՐ
Կ'ԻՉԳԷ ԴԺՈՒՄ

մաս դարձնել զայն : Այդ նպա-
տակով գնաց և ծեծեց Արալուի
դարպասները, սպառնալով կործանել ամէն ինչ, եթէ
իրեն չթոյլատրեն ներս մտնել : Դռնապանը խնդրեց Իշ-
տարէն սպասել, մինչև որ երթայ Ալլաթուէն հրաման
բերէ : Ալլաթուն թոյլատրեց, պայման դնելով որ իւ-
րաքանչիւր դուռէ ներս մտած ատեն, Իշտարի վրայէն
հանեն զգետ մը կամ զարդարանք մը : Իշտարը հա-
մաձայնեցաւ և ներս մտաւ . բայց եօթերորդ կամ
վերջին դուռնէն մտած ատեն, արդէն բոլորովին մերկ
էր, զրկուած բոլոր զգեստներէն, զարդերէն ու նը-
շաններէն : Կատողած այդ թշնամանքէն, Իշտար խո-
յացաւ դժոխքի աստուածուհիին վրայ, յանդիմանեց
զայն մարդիկը տանջելուն համար և խատորէն անմա-
հական ջուր պահանջեց : Ալլաթուն ալ զայրանալով,
հրամայեց Իշտարի մարմինին ամէն մէկ մասը վարակել
հիւանդութիւնով մը, գոսացնել . այնպէս որ խեղճ
աստուածանուհին այլևս չկրցաւ դուրս ելլել Արալուէն :

Իշտարի բացակայութիւնը շուտով զգացին երկրի
վրայ . դժբաղդութիւնները ծայր առին իրարու ետե-
ւէ : Երկիրն ամայացաւ, ամլացաւ . մարդիկ դադրեցան
աճելէ . սէրն անհետացաւ, ամուսնութիւնները կասե-
ցան . նոյնիսկ ցանքերն այլևս պտուղ չտուին և ազ-
րիւրները ցամքեցան : Աստուածները սեսան երկրի այդ
վիճակը և խղճացին : Հասկցան որ Իշտարը չկայ, զե-
րի է ինկած անդուժ Ալլաթուի ձեռքը, և ժողով ըրին,
պատգամաւոր զրկեցին հզօր ու բարեգութիւն հայի մօտ :

Էան Ալլաթուի քով զրկեց իր պատուիրակը և հրա-
մայեց արձակել Իշտարը, տալով անոր կենդանի ջուրը :
Ալլաթուն կատղեցաւ . «կը ծեծէր իր կուրծքը և կը
կրծէր իր մասները» : Բայց ճար չկար, պէտք էր կա-
տարել հզօր էայի հրամանը : Իշտարը խմեց կենդանի
ջուրէն, առողջացաւ, հետն ալ առաւ այդ ջուրէն,
դուրս ելաւ Արալուէն, անմահացուց իր ամուսինը : Ու
այնուհետեւ կրկին աստութիւնն ու կենդանութիւնը
սիրեցին երկրի վրայ :



Ակիզները երեւի միայն Արալուի գաղափարը
կար . իսկ յետոյ ծնած է Դժոխ-
քի և Դրախտի գաղափարը :
Արալուն դարձեր է դժոխք,
իսկ դրախտի համար ստեղծե-
ր են նոր վայրեր :

ԴՐԱԽՍՏ-
ԴԻՂՂԱԹԻՇ

Հեռուոր արևմուտքի մէջ, ուր մայր կը մանէր
արևը, Բարեխայներու կարծիքով, կը զանուխն «Եր-
ջանիկներու կղզիներ»ը, ուր չկայ սխրութիւն, չկայ
մահ : Հին աւանդութիւնը կ'ըսէ որ Գիլգամիշ հզօր ար-
քան երկար ատեն ճամբայ կը փնտռէ այդ կղզիները
երթալու համար : Իր ընկերոջ հետ կ'ուզեւորի դէպի
այդ երջանիկ կղզիները : Ճամբան ընկերը կը մեռնի,
ինքն ալ բորոտութենէ վարակուելով, կը տանջուի
հազար ցաւերով . բայց դարձեալ չուզեր հրաժարիլ
իր յանդուգն միտքէն : Ընդհակառակը, աւելի մեծ
եռանդով առաջ կ'երթայ, որ իր մեռած ընկերը խլէ մահ-
ուան ճիրաններէն և հասկնայ վերջապէս անմահութեան
գաղանիքը : Իր ճամբորդութեան մէջ յոյսը դրած էր իր
նախահօր՝ Փոխութրայի վրայ, զոր աստուածները ողջ

ողջ տարած էին իրենց մօտ—դէպի արև մուտք, որովհետեւ իրենց սիրելին էր: Կ'անցնի դարհուրելի կիրճերէ, մութ ջուրերէ, ուր կը հանդիպի մարդ-կարծններու և հաղարաւոր ուրիշ հրէշ-գազաններու: Կը մտնէ վիթխարի լերան մը մէջ, խաւարակուռ այր մը, կ'անցնի լերան միւս երեսը և ահա այնտեղ իր առջեւ կը բացուի հրաշաղեղ, աստուածային պարտեզ մը, որուն մէջտեղը բուսած էր սքանչելի ծառ մը իր պտուղներով, որոնք թանկագին քարերու պէս սեփական գոյն ու փայլ ունէին: Վերջապէս Գիլգամիշը կը հասնի Մանուան Ծովի ափը, երկար կը փնտռէ և կը գտնէ մակուկավարը, և մեծ դժուարութիւններով ու արկածներով կ'անցնի միւս ափը, Անմահութեան Կղզիները:

Այնտեղ իր Բաբելոնի քաղաքին կը պսամէ իր կրօն բոլոր աստուգանքը: Նախահայրը կոխարգական քուն մը կը բերէ իր վրայ և կը հրամայէ քնացողը տանիլ անմահական ջուրի աղբերակին քով: Հիւանդը կը բժշկուի, կը տեսնէ Կեանքի Ծառը որ անմահութիւն կուտայ մարդուն: Գիլգամիշ իրեն հետ կ'աննէ թէ անմահական ջուրէն և թէ Կեանքի Ծառէն, որպէս զի ամբողջ անտառներ բուսցնէ իր երկրին մէջ և անմահ ու երջանիկ դարձնէ մարդիկը: Բայց վերադարձին կը կորսնցնէ թէ ծառի ճիւղերը և թէ անմահական ջուրը: Աստուածները ուզեր էին խլել այդ ամէնը, որպէս զի մարդիկ աստուածներ չդառնան:

Քաղաքական ու Բաբելոնական այս բոլոր կրօնական աւանդութիւններն ու աստուգանքները երկրի ստեղծագործութեան, սկզբնական քառօթի, դժոխքի, դրախտի, ջրհեղեղի, Իշտարի և Գիլգամիշի միւս աշխարհ կատարած ուղեորութեան մասին տարածուեցան ոչ միայն Ասորեստանի, Հայաստանի, Հրէաստանի և ուրիշ բնակչի

երկիրներու մէջ, այլ և անցան անդին, — Եգիպտոս, Յունաստան, մինչև խակ Հռոմ, և ընդունեցին զանազան ձևեր ու կերպարանքներ:

Բաբելոնի մէջ շատ զարգացած էին մաթէմատիքը, աստղաբաշխութիւնը և բժշկութիւնը: Անոնք են հնարած բազմապատկութեան աղիւսակը. առաջին անգամ անոնք մտցուցին չափերն ու կշիւրը, որոնք աննշան փոփոխութիւններով, անցան Պարսկաստան, Ասորեստան, Եգիպտոս, Փիւնիկէ, Յունաստան և Հռոմ:

Փիւնիկէ, Վանա-
ուականութիւն, Փիւ

Ըլլալով խաչնարած ժողովուրդ, անոնք շատ հինէն սկսել էին ուսումնասիրել ամբողջ երկնակամարը: Լաւ ծանօթ էին լուսնի և արեւի խաւարումներուն, անոնց տեսանլի շարժումներուն: Անոնց կարծիքով արեւը 360 օրուան մէջ շրջան կ'ընէր երկրի բոլորափքը և ամէն ամիս կը մտնէր համաստեղութեան մը կամ կենդանակերպի մը (չօղիակոսի) մէջ: Տարին բաժնած էին 12 ամսուան, ամիսը՝ 4 շաբաթի կամ 30 օրուան: Մեծեաններու մօտ քուրմերն ունէին աստղադիտարաններ, որոնց շնորհիւ կը դիտէին լուսաւորներու բոլոր շարժումները և գուշակութիւններ կ'ընէին:

Բաբելոնի աստղաբաշխները օրացոյցներ կը կազմէին ամէն տարուան համար, գուշակելով ոչ միայն արեւի և լուսնի խաւարումները, այլ և օրուան ու շաբաթուան եղանակները: Անոնք երկնակամարը բաժնած էին 180 աստիճանի կամ 3×60 աստիճանի: Յը, 7ը և 60ը զարձան անոնց մէջ սրբազան թիւեր: Առաջին անգամ անոնք են որ ամբողջ շրջանը բաժնեցին 360 կամ 6×60

աստիճանի: Անոնց յայտնի էին հինգ մոլորակները, զորս ինչպէս ակտոնք, կը պաշտէին իրրեւ աստուածներ:

Բժշկութիւնն ալ Բաբելոնի մէջ հասած էր բաւական բարձր զարգացման, բողբատարար միւս երկիրներու հետ: Բաբելոնի բժշկութիւնը մեծ համբաւ կը վայելէր չրջակայ երկիրներու մէջ և Բաբելոնէն անցաւ Յունաստան և Հռոմ, այնտեղէն ալ մեծ ազդեցութիւն զործեց Եւրոպայի միջնադարեան բժշկութեան վրայ:

Աշխարհագրութիւնը Բաբելոնացիներուն մէջ գիտութեան աստիճանին չէր հասած: Պարզապէս երկիրներու, քաղաքներու, լեռներու և երբեմն ալ գետերու անուններու ցանկ մըն էր: Պատմութիւնը դեռ գոյութիւն չունէր, բայց ժամանակակիցները կը գրէին թագաւորներու կատարած գործերը, պատերազմները, հաւաքած հարկերը և այլն:

Գիտութիւններու և կրօնի այդ զարգացման կը համապատասխանէր նաև կեանքի միւս ճիւղերուն զարգացումը: Ամբողջ երկիրը ծածկուած էր ջրանցքներու, ջրամբարներու և ոռոգման յատուկ թումերու խիստ ցանցով մը: Բոլոր թագաւորներն ու տեղական իշխանները, իրենց հետ ունենալով երկրի ժողովուրդը, մեծ եռանդով կ'աշխատէին, կը վերաշինէին կամ կը կառուցանէին այդ ոռոգման միջոցները, որովհետև առանց ջուրի՝ այդ դաշտավայրերն ալ, Եգիպտոսի պէս, անպատաս կը դառնային ինչպէս որ Արաբներու, Թաթարներու, Սելճուքներու ևն. արապետութեան օրով այդ ջրանցքները ոչնչացան և ամբողջ Միջագետքը այսօր դարձեր է անջրգի անպատաս մը:

Թագաւորները, իշխաններն ու ժողովուրդը նոյն եռանդով կը շինէին տաճարներ, պալատներ, պարխաւներ, հանրային ու անհատական փառաւոր շէնքեր:

Այստեղ ալ քար չկար, ինչպէս Եգիպտոսի մէջ. շէնքերու մեծամասնութիւնը կը շինէին թրծուն աղիւտով և ասփալտով: Շէնքերու պատերը կը շինէին չափազանց հաստ: Փայտեղէնը կը ստանային իրենց երկրէն, արմաւենիներէ: Արդէն Բաբելոնի չրջակաները, գետերու և ջրանցքներու արկերը ծածկուած էին արմաւենիներու արհեստական պուրակներով:

Ամէնէն նշանաւոր շէնքերը կեդրոնացած էին մայրաքաղաքին մէջ, — Բաբելոն: Քաղաքը չրջապատուած էր հսկայական հաստ պարիսպներով, որոնց վրայէն կառքեր կրնային անցնիլ: Այդ պարիսպներուն երկայնութիւնը կը հասնէր 12 մղոնի, ինչպէս կը վկայէ յոյն պատմիչ Հերոդոտոս, լայնութիւնը՝ 50 ոտնաչափ էր, իսկ բարձրութիւնը՝ մօտ 200 ոտք: Քաղաքը շինուած էր քառանկիւնի ձևով: Մէջտեղէն կը հոսէր Եփրատը: Քաղաքին մէջ ամէն տուն ունէր ընդարձակ բակ և պարտէզ. տակէ զատ, քաղաքին մէջ մշակութեան համար կային ընդարձակ դաշտեր, որոնք հաց կը մատակարարէին բնակիչներուն, երբ քաղաքը կ'ենթարկուէր երկարատեւ պաշարման:

Քաղաքի արեւմտեան մասին մէջ կառուցուած էր արքայական պալատը, չրջապատուած երրեակ պարխաւներով և աշտարակներով: Ամբողջ պալատը կը բռնէր մէկ ու կէս մղոն տարածութիւն և աւելի կը նմանէր անտառի բերդի, քան պալատի: Պարիսպներուն ներսը պալատը մէկ շէնքէ շէնք բաղկացած, այլ կային քանի մը պալատներ, որոնց շատերը տաշուած քարերէ շինուած էին: Դարպասները կը շինէին պղինձէ, չափազանց հաստ ու ամրակուռ, դիմադրելու համար թշնամիներու յարձակման:

Քաղաքի ամենափառաւոր շէնքն էր Բէլի տաճարը,

շրջապատուած վիթխարի պարիսպներով և պղնձէ ամրակուռ դարպասներով: Պարիսպներուն ճիշտ մէջտեղը կը բարձրանար քառակուսի տաճարն իր եօթը յարկերով և ամենավերջը շինուած գմբեթածածկ սենեակով. ամբողջ բարձրութիւնը 600 ոտնաչափ էր: Կը կարծուի թէ այդ աշտարակ-տաճարին է, որ կ'ակնարկէ Աստուածաշունչը, լեզուներու խառնակումը պատմելով:

Այդպիսի փառաւոր շէնքերը ցոյց կուտան, որ Բաբելոնի մէջ կար մեծ հարստութիւն և թէ բարեկան կան արքաները, ազնուականները, քուրմերը և առևտրականները փարթամ կեանք կը վարէին: Շուայութիւնը հասած էր իր գագաթնակէտին.



Բաբելացի քաղաւոր

տութեան ու քաղաքականութեան մասին մտածելու:

թիւնը մեղկացած, բոլորովին պաղած էր զինուորական չարքաշ և կտրիճ կեանքէն: Այդ մասին փաստեր կը ցուցնեն թէ հին պատմագիրները և թէ Աստուածաշունչը: Նոյն իսկ բարբելական թագաւորներն ամէն ջանք կը կը թափէին, իրենց հպատակներուն մէջ զարգացնելու համար փարթամ կենցաղի և շուայութեան պահանջը, որպէս զի անոնք միշտ զբաղէին այդ հաճոյքներով և երբեք ժամանակ չունենային պե-

թէ և երկրի կլիման տաք էր, բայց բոլոր բարձր ու հարուստ դասակարգերը կը հագնէին երեք տեսակ զգեստ. — մարմնի վրայ կը կրէին քաթանէ երկար շապիկ, անոր վրայէն բուրդէ երկար զգեստ, գօտի մըն ալ կոպկելով, իսկ այդ բոլորին վրայ կը կրէին կարճ, անթև վերարկու մը: Մազերը ու մօրուքը երկար կը ձգէին, զլիսու մազերը կը կոպէին լայն ժապաւէնով և գլուխ, մօրուք ու մարմին կ'օծէին անուշաոտ իւղերով: Ոտնամանները շատ սիրուն էին և նման սովորական սանդաղներու. յաճախ մասնիկներ ալ կը գնէին, որոնց վրայ փորագրուած կ'ըլլար կրողին կնիքը: Կը գործածէին նաև դաւազան կամ հովանոց, որոնց կտիւթերը կը շինէին փայտէ, ոսկորէ և այլն և կը ներկայացնէին կամ պտուղ մը, կամ թուշու մը և կամ ծաղիկ մը: Իրենց ստուները յաճախ կը զարդարէին գորգերով:

Այդ փարթամ կեանքն իր բազմազան պահանջներով երկրին մէջ յառաջ բերած էր բազմաթիւ արհեստներ, զարգացնելով ընդարձակ վաճառականութիւն մը: Իրենց գործած գորգերը, բրդեայ կտորեղէնները յայտնի էին բոլոր դրացի երկիրներու մէջ: Հսպակաւոր էին նաև բաբելական վարպետները թանկագին քարերու վրայ իրենց կատարած փորագրութիւններով, իրենց պատրաստած հոտաւէտ իւղերով ու ջուրերով: Դեռ այսօր ալ, պեղումներու ժամանակ երեւան կը հանուին բազմաթիւ փորագրուած, քանդակուած իրեր՝ պրոնզէ, քարերէ, ապակիէ և ուրիշ նիւթերէ, բոլորն ալ ընդհանրապէս զարդարանքի իրեր:

Բաբելոնն այնքան հոչակաւոր էր իր արհեստով, որ Եգեկիէլ մարգարէն գայն կ'անուանէ «Վաճառականներու Երկիր»: Եւ իսկապէս, Բաբելացիներու ծովային և ցամաքային առևտուրն իրենց երկրէն դուրս էր


եղած և հասած մինչև Հնդկաստան, Հայաստան, Արաբիա, Եգիպտոս և Միջերկրականի ափերը: Գանգէս-Ինդոսի ափերէն անոնք կը ստանային ոսկի, թանկագին քարեր, փղոսկր, կարմիր ներկ, անուշահոտ բոյսեր ու իւղեր և այլն. Եփրատի և Տիգրիսի վերին ափերէն, Հայաստանէն Բաբելոն կը բերէին մրգեղէններ, փայտեղէն, գինի և ձիեր, իսկ այնտեղէն Հայաստան կը տանէին գոյնզգոյն կտորներ, գորգեր և այլն: Յոյն պատմագիր Հերոդոտոս կը նկարագրէ Հայաստանի և Բաբելոնի առևտուրը: Հայերը կը շինէին ուռած տիկերու վրայ վահանի նման՝ բոլորաձև նաւեր, որոնց ծայրերը կը հիւսէին ուռնիի ձիւղերով: Նաւերու յատակն ու ափերը ներսէն կը ծածկէին կաշիներով և մարթիներով, որպէս զի ջուրը չթափանցէ: Նաւերուն մէջ կը բեռցընէին մեծաքանակ ապրանք, իրենց հետ կ'առնէին էշեր և թիավարելով, ինչպէս այսօրուան լաստերը, ջուրի արագ հոսանքն ի վար կ'իջնէին Բաբելոն: Այնտեղ կը ծախէին բոլոր ապրանքները, նաւերու փայտեղէնը և կաշին ու տիկերը բեռցնելով իրենց էշերուն վրայ, միասին կ'առնէին բաբելական ապրանքներ և գետի ափն ի վեր կը տանէին իրենց երկիրը: Գետի արագ հոսանքը թոյլ չէր տար նաւարկելու գետն ի վեր:

Բաբելացիները կարաւանային մեծ առևտուր ունէին Փոքր - Ասիայի և մանաւանդ Փիւնիկէի հետ, որմէ կը ստանային արևմուտքի ապրանքներ, փոխարէն տալով իրենցը: Կարաւանի ճանապարհներուն վրայ շինած էին թաղաւորական կայարաններ՝ ճամբորդներու համար: Իրենց առևտուրի ամենամեծ կեդրոններն էին Պարսից ծոցի ափերը և չրջակայ երկիրները, — Արաբիա և Հրնդկաստան: Խունդ, մարգարիտ և հոտաւէտ իրեր կը ստանային Արաբիայէն, իսկ Արևելքէն կը ստանային հա-

մեններ և թանկագին փայտեր՝ քանդակագործութեան համար:

Բաբելացիներու մասին այսքան ընդարձակ տեղեկութիւններ մեզ հասած են այն պատճառով, որ անոնք գիր ունէին:

Այդ գիրը բաւական զարգացած էր, բայց կը մնար վանկային ձևով, և այբուբէն գոյութիւն չունէր: Անոնց գրութիւնը ծանօթ է սեպագիր անունով, որովհետև իւրաքանչիւր տառ ունի երկաթէ սեպի ձև: Այդ բեւեռները երեք գիրքով կը նկարուէին կամ կը գրուէին, — Նորիզոնական, ուղղահայեաց և շեղ: Բաբելոնի մէջ չկար պապիրոս բոյսը, այլ կը գրէին կաէ ազիւաներու վրայ, երբ անոնք թաց էին: Կը գրէին սրածայր փայտէ կամ ոսկորէ գործիքով մը և յետոյ կը դնէին աբեւին տակ, չորցնելու կամ կրակին մէջ թրծելու: Երբեմն ալ կը գրէին կաէ զրաններու վրայ: Գտնուած ազիւաներու կամ զրաններու արձանագրութիւնները յաճախ



Սեպագիր արձակագրութիւն

կը կարդացուէին երկու ձևով — զուտ բաբելական և Սումերո - տիկաստան:

Պարսիկները փոխ առին Բաբելացիներու այդ սեպաձեւ գրութիւնը և շատ դիւրացուցին. բաբելականն ունէր 400 նշան, իսկ պարսկականը 50 (յետոյ 33): Գերմանացի գիտնական Կրոտէֆէնա

(1802 ին) նախ դիմեց պարսկական դիւրին ձեւով ընթերցանութեանս։ Անոնց արձանագրութիւններուն մէջ գտաւ թէ՛ պարսկական նոր ձեւը և թէ՛ տակը՝ բարեւական հին ձեւը։ Նախ սկսաւ ջոկել Դարեհ (Վշտասպեան), Բսերքսէս և ուրիշ յատուկ անուններ և կազմել այբուբէնը։ Բայց այդ ծանր գործը չկրցաւ վերջացնել իր ձեռնարկը շարունակեցին Փրանսացի Պիւրնուֆ, ազգիացի Բուլիւսըն և ուրիշները, Ասոնք կազմեցին հին զէնդական այբուբէնը, կարդացին Աքէմէնեան Պարսկաստանի սեպաձեւ արձանագրութիւնները, յետոյ անցան բարեւական և ստորական բարդ արձանագրութիւններուն։ Այսօր մենք ունինք այդ արձանագրութիւններուն թէ իսկականը և թէ թարգմանութիւնն՝ անոնց տեսութիւններով։

2. ԱՍՈՐԵՍՏԱՆ

Ասորեստան, երբ դեռ չէր ընդարձակուած և տիրած չրջակայ երկիրներուն, կը գտնուէր Տիգրիսի միջին հոսանքին վրայ, ձախ ափը, Բաբելոնէն դէպի հիւսիս-արեւելք։ Բաբելոնը գրեթէ ամբողջովին դաշտավայր էր, իսկ Ասորեստանը կը ներկայացնէր բլուրներու շարքերով կարատուած, ալիքաձեւ անջրդի երկիր մը։ Բուսականութիւնը և պտղաբերութիւնը սահմանափակուած էին միայն գլխաւոր գետին—Տիգրիսի և անոր վտակներու Մեծ ու Փոքր Զապի ափերով, խիստ նեղ չրջանակի մը մէջ, որովհետեւ գետերը կ'անցնէին բաւական բարձր ափերու մէջէն։ Երկրի մնացած մասը շատ քիչ կը զանազանուէր դրացի անապատէն։ Այդ երկրին մէջ անձրեւները հազուադէպ ըլլալով, կարելի չէր բոյսեր մշակել, քաղաքակրթութիւն ստեղծել՝ առանց մեծածախ ջրանցքներ շինելու, առանց կազմակերպուած և ուժեղ ձեռ-

Երկիրը

քով ղեկավարուած աշխատանքի։ Երկիրը բաւական հարուստ էր զանազան հանքերով, ինչպէս պղնձի, արծիճի և երկաթի խաւերով, և մանաւանդ շինութեան քարերով։

Ասորեստանի հին ազգաբնակութիւնը բոլորովին նման էր բարբելականին։ Դժուար է ենթադրել, որ սումէրո-ակկատեաններէն և սեմականներէն առաջ այդ անջրդի երկրին մէջ ազգաբնակութիւն գտնուած ըլլայ. ոչ մէկ հետք, ոչ մէկ նշան չկայ այդ մասին։ Հասանական է որ երբ էլրամցիներն սկսան նեղել Սումէրները և Ակկատացիները, անոնց մէկ մասը կամաց-կամաց սկսաւ քաշուիլ դէպի հիւսիս, մեծ գետերու ափերը։ Մօտաւորապէս ժ. Պ. դարուն (Ք. ա.) շուտով անոնց ետեւէն, թերեւս անոնց հետ միասին, եկան և Սեմականները, հիմնեցին այնտեղ Ասուր քաղաքը, որու անունով իրենք ալ կոչուեցան Ասորեստանցիներ, իսկ երկիրը՝ Ասորեստան։ Մայրաքաղաքէն յետոյ նշանաւոր էին նաև Նինուէ, Կալախ, Արբելա, Դուր-Սարուկին կամ Դուր-Շարուկին և ուրիշ քաղաքներ։

Ազգաբնակութիւնը

Մութ է Ասորեստանի պետութեան սկզբնաւորութիւնը։ Արդեօք սկիզբները կը կառավարուէր Բաբելոնէն զըրկուած կուսակալներով, թէ ունէր իր սեփական պրահները կամ քուրմ-իշխանները, ինչպէս ուրիշ շատ բարբարոս ցեղերու տոհմեր։ 1800 թուականներուն (Ք. ա.) արդէն կը հանդիպինք քուրմ-իշխաններու, որոնք կ'ընդունէին Բաբելոնի անուանական գերիշխանութիւնը։ Այդ քուրմ-

Ասորեստանի պետութիւնը

իշխանները, կամ տոհմական ու ցեղական վարիչները շուտով գրաւեցին իրենց շրջակայ ցեղերը, մանաւանդ զէպի հիւսիս ինկածները (հարաւակողմը՝ Բաբելոնն էր) և ժԶ. դարուն արդէն կ'երեւան Ասորեսուսի քաղաւոր տիազոսով: Այդ դարէն մնացած է նամակ մը՝ Բաբելոնի թագաւորէն ուղղուած «Ասորեսուսիներու քաղաւորներուն», իսկ ժԵ. դարէն գտնուած է դաշնագիր մը՝ կնքուած Ասորեստանի և Բաբելոնի քաղաւորներուն միջև: 1600 թուականներուն Ասորեստանն ալ շրջակայ երկիրներուն հետ միասին կ'իյնայ եգիպտական փարաւոններու իշխանութեան տակ և հարկատու կը դառնայ անոնց, բայց կարճ ժամանակի համար: Ազատուելով Եգիպտացիներէն, Ասորեստանցիները յամառ կռիւներ կը մղէին մէկ կողմէ Բաբելոնի դէմ, միւս կողմէ Հիթիթներու (Քեսացիները — որոնց մայրաքաղաքը Կարխէմիշն էր — Եփրատի ափը) և «Նայիրիի երկրի» ժողովուրդներու հետ, որոնք կ'ապրէին վանայ և Ուրմիոյ լիճի աւազաններուն մէջ: Ասորեստանցիները կամայ-կամայ կը զօրանան և առաջին անգամ 1300ին (Ք. ա.) կը գրաւեն Բաբելոնը: ԺԲ. դարուն, Թիզլատ-Պէլասար Ա.ի օրով (1120-1100) արդէն Ասորեստանը հզօր ու մեծ պետութիւն մըն է:

Առաջին անգամ Ասորեստանն այս թագաւորին օրով էր որ լիապէս կազմակերպուած դուրս ելաւ իր սահմաններէն և, անցնելով Եփրատը, տիրեց բոլոր երկիրներուն, մինչև Միջերկրական ծովը, Հաթիներու կամ Հէթերու երկրի մէկ մասին և Բաբելոնին: Այս ռազմասէր և անխոնջ թագաւորին ամբողջ կեանքն անցաւ արշաւանքներու ու պատերազմներու մէջ:

Թիզլատ-Պալասար

Ասոր քաղաքի աւերակներուն պեղումներէն գրտնուած արձանագրութիւնները կը ցուցնեն այդ թագաւորին պատմութիւնը, իր իսկ հրամանով գրուած. —

«Ես անցայ անանցանելի կիրճերէ, կ'ըսէ ան, որոնց ներսի մասերը դեռ ոչ մէկ թագաւոր չէր տեսած, շատ լեռներու գլուխ բարձրացայ ես իմ ռազմական կառքով, ուր որ կարելի էր կառքով բարձրանալ, իսկ ուր որ կառքը չէր կրնար անցնիլ, ես դացի իմ սեփական ոտքերով: Իմ ձեռքը նուաճած է, թագաւորութեանս սկիզբէն մինչև հինգերորդ աօրին, ընդամենը 42 երկիր՝ երեսնց թագաւորներով, սկսած անտառապատ հեռաւոր երկիրներէն, որոնք կը գտնուին Ստորին Զապի մէկ կողմը, մինչև Հաթի երկիրը, Եփրատի միւս կողմը և մինչև վերին Արեւմուտքի ծովը (Միջերկրականը՝ Օրոնտի գետաբերանէն հիւսիս): Ես բռնադատեցի զանոնք բոլորին խօսիլ մէկ լեզուով, պատանդներ առի անոնցմէ և հարկատու դարձուցի բոլորը: Ես թշնամիներու դեպիներով լեցուցի կիրճերը մինչև լեռնագագաթները. կտրեցի անոնց գլուխները և անոնցմով զարդարեցի իրենց քաղաքներուն պատերը . . . Ինկայ անոնց ետեւէն և կռուի մտայ անոնց հետ: Փոթորկի նման անցայ կռուողներու շարքերէն, փախցուցի զանոնք, ինծի հալածակեցուցի անոնց ամբողջ երկիրը և մտցուցի Ասորեստանի պետութեան սահմաններուն մէջ: Այդ ես եմ, Թիզլատ-Պալասարը, հզօր արքան, անպէտները ոչնչացնողս և թշնամի զօրքը փճացնողս»:

Սակայն ուժեղ արքան այդ գրաւումներով և արիւնարբութիւններով չի գոհանար, այլ շինարար գործեր ալ կը կատարէ.

— Ես բարելաւեցի իմ հպատակներուս վեճակը և զանոնք բնակեցուցի խաղաղ բնակավայրերու մէջ: Ես ամրացուցի հին, փլիկլած բերդերը, հացով լեցուցի ամբողջ Ասորեստանի արքայական ամբարները, հաւաքեցի վայրի այծերը, եղնիկները, եղջերուները և քարայծերը և անոնցմէ հօտեր կազմեցի, ինչպէս օչխարի հօտերը . . .

Թիզլատ-Պալասարէն ետք, ինչպէս կ'երեւայ, Ասորեստանի նոր տիրապետութիւնները ձեռքէ ելան: Այ-

նուհետև ամբողջ երկու դարու պատմութիւնը անյայտ է, որովհետև ոչ մէկ յիշատակարան չէ մնացած: Թ. դարուն նորէն

Ասուր-Նազիրբայ

կը գտնենք այդ երկրի պատմութեան կտրուած թելը — Ասուր-Նազիրբայ Ա. Թագաւորին օրով (884-860): Գտնուած է անոր ընդարձակ «Տարեգրութիւնը», որուն մէջ կը պատմէ իր գործերը: Ամէնէն առաջ, ինքզինքը գովելով կ'ըսէ:

«Ես վե՛հապետ, տէր, հզօր, յարգուած. հսկայ, առաջին, ուժեղ, համարձակ, առիւծ և Ներս Ասուր Նազիրբայս, հզօր արքայ, Ասուրի տէրը».

Յետոյ կը պատմէ իր գործերը: Իր առաջին արշաւանքը կատարած է կրկին Նայիրի-Երկրի անզուսպ ժողովուրդներուն դէմ.

«Հասայ մընչ սոյն լեռը, որ մտուած է երկնքի մէջ դաշոյնի պէս, ուր երկնքի թռչուններն անբաժ չեն հասնիր, բարձրանալով այդ լեռան գլուխը, ես վար գլորեցի այն մարդիկը, որոնք բերդեր շինած էին այնտեղ, ինչպէս արծիւի բռնեբը, և անոնց արիւնով ներկեցի լեռները. ինչպէս կը ներկեն բուրբը»:

Կը պատմէ, որ թշնամիներու քաղաքին դիմաց պարիսպ չինեց և զայն ծածկեց թշնամիներէն քերթած կաշիներով. կարեց անոնց գլուխները և նիզակներու վրայ անցնելով, անկեց պատերու գլուխը, ատամներու պէս. ցիցի հանեց բռնած գերիները և քաղաքէն հեռու ցուցադրեց, որ պաշարուածները տեսնեն ու սարսափին:

Թ. դարուն նշանաւոր էր նաև Սաղմանասար Բ. Թագաւորը: Անոր օրով մօտաւոր Ասիոյ մեծագոյն մասն ինկաւ Ասորեստանի ձեռքը. անոր պետութիւնը մէկ կողմէն կը տարածուէր մինչև Պարսից ծոցը և Էլամ, միւս կողմէ

Սաղմանասար Բ.

և Էլամ, միւս կողմէ

մինչև Կարմիր ծով ու Եգիպտոսը: Սաղմանասարը շատ արշաւանքներ կատարեց դէպի Սիւրիոյ լեռնային մասերը, դէպի Կիլիկիա և, մանաւանդ, դէպի Հայաստան (Ուրարտու): Անոր պալատին աւերակները (Նեմրուդի մօտ) պեղելու ժամանակ, անգլիացի գիտնական Լէյարտ գտաւ սքանչելի սև կոթող մը՝ մօտ 7 սանաչափ բարձրութեամբ և տարաւ Լոնտօն, Բրիտանական թանգարանը: Կոթողին (օպէլիսկ) երեսները ծածկուած են արքային քաջագործութեան նկարազրութիւններով, իսկ ուռուցիկ պատկերները կը ներկայացնեն անոր հպատակները, որոնք հարկեր, տուրքեր և նուէրներ կը բերեն հզօր արքային:

Սակայն այդ թագաւորին օրով ալ, ինչպէս միշտ, ասորեստանեան տիրապետութիւնները հասատուն չեղան. բոլոր զբաւած երկիրները նեղուած անասման տուրքերէն, ան միջապէս



Սաղմանասար Բ.ի սև կոթողը

կ'ապստամբէին, երբ կը տեսնէին որ արքան զբաղած է ներքին գործերով կամ հեռու տեղ մը արչաւանքի է գացած: Ասորեստանի թագաւորները կը տիրէին, կը պատժէին, կը կոտորէին, հուրէ և սուրէ կ'անցընէին ամէն տեղ, բայց իրենց գրաւած երկիրները լաւ ճանապարհով, կանոնաւոր վարչութեամբ կամ քաղաքակրթական կապերով չէին միացներ կեդրոնին հետ: Այդ իսկ պատճառով ամէն աւիթէ օգուտ կը քաղէին տիրուած երկիրները և նորէն գլուխ կը բարձրացնէին:

Թիզլատ-Պալասար Գ.ը և մանաւանդ Սարկօնը (Սարուկին) և Սենեքերիմը (Լ. դարու սկիզբը) Ասորեստանը հասցուցին իր փառքի ու զօրութեան զագաթնակէտին: Առաջինը ոչ միայն կորիճ պատերազմով էր, այլ և նշանաւոր կառավարիչ: Ան նոր ձեւով վարչութիւն հաստատեց նուաճուած երկիրներուն մէջ, որոնք դարձան պէտական ևսահմաններ: Կառավարիչները կը նշանակուէին նինուէէն: Երբ նուաճուած երկրի մը բնակիչները չափազանց անհանդարտ և անհնազանդ երեւային, Թիզլատ-Պալասար կը հրամայէր զանոնք տեղափոխել ընտանիքով, ունեցած-չունեցածով և տանիլ բնակեցնել ըստ Ասորեստանի այս կամ այն մասը, իսկ անոնց երկիրը լեցնել իսկական Ասորեստանցիներով: Այդ գաղթականութիւններուն նպատակն էր — նախ՝ նոր տիրուած երկիրները լեցնել ասորեստանցի ազգաբնակչութիւնով և զանոնք ձուլել Ասորեստանի հետ, դարձնել միապաղաղ ազգաբնակչութեամբ երկիր մը: Երկրորդ՝ օտար ու անհանդարտ տարրերը քշել երկրին ներսերը, անձանօթ վայրեր, ուր անոնք պիտի ձուլուէին բուն

Թիզլատ-Պալասար Գ. և իր յաջորդները

Ասորեստանցիներու հետ, և ճնշուելով հացի հոգէն, այլ ևս ժամանակ ու պատենութիւն չպիտի ունենային ապստամբելու:

Սկիզբները այդ քաղաքականութիւնը շատ յաջող արդիւնքներ տուաւ: Երկիրն այնքան խաղաղ օրեր ունեցաւ, որ Թիզլատ-Պալասարի յաջորդները կրցան կատարել կարգ մը տեւական և բնագար ձակ նուաճումներ: Բայց շուտով երեւան եկան այդ քաղաքականութեան աննպատակողմերը: Բուն Ասորեստանցիները, չափազանց ցրուելով, կորսնցուցին անհրաժեշտ խտութիւնը, կորսնցուցին իրենց գերակշիւթիւը, իսկ Ասորեստանի սեփական նահանգները լեցուեցան օտար ժողովուրդով, որոնց մէջ Ասորեստանցիներ մնացին միայն զօրքը և կառավարիչները: Վերջ ի վերջոյ այդ քաղաքականութիւնը կործանեց Ասորեստանը:



Սենեքերիմ քաղաւոր

Թիզլատ-Պալասարի յաջորդներուն — Սալմանասար Գ.ի, Սարկոնի և Սենեքերիմի ուշադրութիւնը դարձաւ գլխաւորապէս Միջերկրականի ափերուն վրայ, ուր կը կեդրոնանային բոլոր շրջակայ երկիրներու ապրանքները: — Արարիա, Հնդկաստան, Բաբելոն, Եգիպտոս, Փոքր-Ասիա և հայկական բարձրաւանդակն իրենց հա-

բուստ բերքերը կ'ուղարկէին այդ ափերը, ուր տեղի կ'ունենար միջազգային փոխանակութիւնը: Սակայն Ասորեստանի թագաւորներու նուաճողական ձգտումներուն արգելք կը հանդիսանային Ը. դարու սուրիական զօրեղ պետութիւնները, ինչպէս Սրաւեականը (մայրաքաղաքը՝ Դամասկոս), Իսրայէլներ — (մայրաքաղաքը՝ Սամարիա), Յուդայիներ — (երուսաղէմ): Ասոնցմէ զատ՝ կային և շատ հզօր պետութիւններ, ինչպէս Փիւնիկեան Տիրօսը, Սիդոնը և ուրիշները, Փղշայիներու կողան, Ասիալօնը, և այլն: Այդ բոլոր մանր ու խոշոր իշխանութիւնները, որոշ տեաներով Ասորեստանէն սպառնացող վտանգը, կը միանային, դաշնակցութիւն կը կազմէին, վերահաս փորձանքին դէմ կուսկու համար: Եզրագտան այ, ձգտելով իր ձեռքն առնել Միջերկրականի նոյն հարուստ ափը, գլուխ կ'անցնէր այդ մանր պետութիւններու դաշնակցութեան:

Բայց այդ բոլոր ջանքերն ի զուր անցան: Սարկոն 721ին գրաւեց Սամարիան: Այդ աշխարհակալը արձանագրութեան մը մէջ կ'ըսէ.

— «Ես գրաւեցի Սամարա քաղաքը. բնակիչներէն 27,280 հողի գերի վարեցի: 50 սայլ աւար եղաւ իմ արքայական բաժինս»:

Սարկոն 4-5 անգամ արշաւեց Հայաստան: Այնտեղ՝ Ուրարտուի թագաւորն էր հայրենապէր ու յանդուգն Ուրասն, Սարիզուրիս Բ.ի յաջորդը, որ արեւմուտքէն 23 մանր իշխանութիւններ գրաւած և միացուցած էր Ուրարտուին, դաշնակցած էր քանի մը դրացի խոշոր իշխանութիւններու հետ և մասնաւորապէս Մաննայի Ուլո սուն թագաւորին հետ: Սա Ուրասոյին առաւ իր ամբողջութիւններէն 22 հատ: Սարկոն արշաւեց, կոտորեց և լեռները փախցուց թէ դաշ-

նակիցները և թէ մանաւանդ Ուրասն, որ անգամ մը «մատակ ձի հեծած» փախաւ, կ'ըսէ արձագրութիւնը (մատակ ձի հեծնին անպատուութիւն էր): Սակայն Ուրասն երբէք անկի չառաւ և միշտ նոր ու նոր սեւերով վերականգնեց իր իշխանութիւնը թէ Ուրարտուի և թէ չրջակայ երկիրներուն վրայ: Ուրասոյի եզ-



Բարի ասածուն գոհ կը մասուցանեն

բայրն ու յաջորդը—Արգիստիս Բ., նախ հպատակութիւն յայանեց Սարկոնին, իսկ երբ անոր զօրքն գրաւած էր Քաղզէաստանի մէջ, ապստամբեցաւ, իր եղբորմէն խլուած երկիրները ևս առաւ Ասորեստանէն և նոյն իսկ Մաննան հպատակեցուց իրեն: Սարկոն անգամ մըն ալ 708ին արշաւեց Արգիստիսի դաշնակիցներուն վրայ, բայց Ուրարտու չհասաւ: 705ին Դուր-Սարուքինի (Դուր-

Շարուքին) փառայեղ պայտափն մէջ Մարկոն, դաշու- նահար ըրին և սեղն անցաւ որդին, Սէննախերիպը կամ Սենեքերիմը: Սա արշաւեց Յուդայի թագաւորութեան վրայ, պաշարեց Երուսաղէմը և հասաւ մինչև Եգիպտոսի սահմանները. երեք անգամ արշաւեց անհնազանդ Բաբելոնի վրայ, երրորդ անգամ գրաւեց քաղաքը և հիմնայատակ կործանեց: Իր որդին և յաջորդը Ասուր-Հատասնը (է. դար) վերաշինեց փառայեղ Բաբելոնը, մինչև իսկ աթոռն այնտեղ փոխադրեց: Ասուր-Հատասնը տիրեց Եգիպտոսի և Ասորեստանը դարձուց այդ շրջանի ամէնէն ընդարձակ պետութիւնը: Սակայն Ասուր-Հատասնի յաջորդներուն օրով Ասորեստանն արագօրէն իջաւ գէպի կործանում: Թիզրատ-Պալասարի սկսած քաղաքականութիւնը առաւ իր արդիւնքները:

Հաղարամեայ անընդհատ պատերազմներն ուժասպառ ըրած էին Ասորեստանը, թէև ան եղած էր գրեթէ միշտ յաղթական: Աստիճաւ, երկիրն արդէն զրրկուած էր իր հարազատ զաւակներէն: Ասորեստանցիները ցրուած էին ամէն տեղ և կը կազմէին միայն զինուորներ ու պաշտօնեաներ, իսկ բուն երկիրն մէջ ասորեստանցի ժողովուրդին տեղը բռնած էին բանի բերուած օտար դաղթականներ, որոնք ամէն վայրկեան պատրաստ էին դէնք ամենիւր և թօթափելու ճնշողներուն, կեղեքողներուն լուծը: Վերջապէս՝ հսկայ պետութեան բոլոր զաւառները կը հեծէին ծանր հարկերու տակ, կը հարստահարուէին, կը կեղեքուէին. իսկ բռնատիրուած հարստութիւնը կը կեղբոնանար զինուորական, Նոգեւոր և կառավարական դասերու ձեռքը, որոնք կը յղփանային շուսյութեամբ, և կ'իշխային զեղիւթեան և անառակութեան գիրկը: Եւ Ասուր-

Հատասնի երեք յաջորդները [Ասուրբանիբալ, Ասուրտիլ-Իլանի (Թերեւս յունական Մարդանարալը) և Սինշանիսքու (Մարագոս?)] չկրցան պաշտպանել իրենց հրահայ պետութիւնը: Նախ անկախութիւն շահեցան բոլոր գրաւուած երկիրները, իսկ յետոյ Բաբելոնի փոխարքայ Նաբոպարսասը, միանալով Մարաստանի Կիւսիսար կուսակալին հետ(*), յարձակեցաւ Ասորեստանի վրայ, գրաւեց Նինուէն (608) և կործանեց զայն: Այսպէս հիմնուեցան Նոր-Բաբելական և Մարական պետութիւնները:

Հազիւ մէկ սերունդ անցած, Ասորեստանի հսկայական պետութիւնէն մնացին միայն աւերակներ: Նախկին ծաղկած դաշտերը չքացան. աւազները ծածկեցին ամէն ինչ. ջրանցքները քանդուեցան ու ցամքեցան. քաղաքները, մեհաններն ու պալատները դարձան փլատակներու կոյտեր: Նոր-Բաբելական պետութիւնն ալ հազիւ 80 տարի կեանք ունեցաւ և կործանեցաւ Պարսիկներու ձեռքով: Այնուհետեւ ամբողջ Միջագետքը դարձաւ անջրդի անապատ:

(*) Հայոց պատմութեան հայրը—Մովսէս Խորենացին կ'ըսէ Թէ Կիւսիսարին և Նաբոպարսարին դաշնակից էր նաև Հայոց Պարոբ իշխանը: Սակայն ոչ օտար պատմիչները, ոչ ալ գտնուած արձանագրութիւնները կը հաստատեն մեր աւանդական պատմութեան այդ մասը: Ընդհակառակը՝ այդ շրջանին Խալդեան վերջին թագաւորը Իրիսան էր, որուն պետութիւնը կ'իյնար Երասխի հիւսիսակողմը, մայրաքաղաք ունենալով Լուխիունիսը: Սա ևս Հայաստանի թագաւորներէն է, բայց, ինչպէս կ'երեւի, նախանշյ ժողովուրդներէն. իսկ արմէն ցեղն այդ ժամանակ արդէն Տաւրոսի ու Փոքր Հայքի կողմերէն սկսած էր առաջ խաղալ և գրաւած էր Ուրարտական Մանայի, Մուսասիրի և ուրիշ մանրիկ պետութիւնները և իր անունը կցած այդ երկիրներուն, այնպէս որ ուրարտաւարտոտեան ցեղին անկախ իշխանութիւնն ազատանա՞ծ էր Երասխէն դէպի հիւսիս:

Բայց ի զուր չանցան անոնց արշաւանքներն ու կեանքը: Անոնց ստեղծած քաղաքակրթութիւնն անցաւ Պարսիկներուն, Ուրարտացիներուն, Փիւնիկեցիներուն և անոնցմէ ալ՝ Յունաստան ու Հռոմ, ծառայելով իբր համամարդկային քաղաքակրթութեան:

3. ՆՈՐ-ԲԱՐԵԼՍԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ասորեստանի աւերակներուն վրայ բարձրացաւ Նոր-Բարելական կամ Քաղզէական պետութիւնը: Ասորեստանի գրեթէ բոլոր երկիրները հպատակեցան Բարելոնի թագաւոր Նաբոպալասարին, որուն հետ միասին առաջ անցան Քաղզէացիները:

Նաբոպալասար

Ինչպէս ըսինք, Նաբոպալասարը միացաւ Մարաստանի Կիաքսար կուսակալին հետ, զրաւեց Ասորեստանը, ոչնչացուց անոր թագաւորութիւնը և պատերազմ սկսաւ Եգիպտոսի դէմ: Եգիպտոսի Նեքսուով կամ Նէխաս փարաւոնը, տեսնելով որ Ասորեստանը կը ձգտէր զրաւել և հաստատուիլ Միջերկրականի ափերը, զօրք հաւաքած և եկած էր այդ կողմերը, դաշնակցած էր տեղական իշխանութիւններուն հետ: Նաբոպալասարը անոր դէմ զրկեց իր որդին՝ Նաբոգոզոնոսորը (ասորերէն՝ Նաբու-Կուրուրի-Ուսուր կամ Ուցուր): Երկու բանակները իրարու զարնուեցան Կարխեմիշ քաղաքին մօտ, Եփրատի ափերը: Եգիպտացիները սաստիկ ջարդ կրեցին ու փախան. Նաբոգոզոնոսոր արդէն կը մտածէր Եգիպտոս արշաւել, բայց լուր առաւ որ հայրը մեռած է. ուստի անմիջապէս շտապեց Բարելոն:

Այս թագաւորը կը կեդրոնացնէր իր ժամանակի ամբողջ քաղաքական և քաղաքակրթական զարգացումը: Իր հորմէն ժառանգած էր Միջագետքը և կը ձգտէր իրականացնել իր բոլոր նախորդներուն քաղաքականութիւնը — զրաւել Միջերկրականի արեւմտեան ափերուն հարուստ երկիրները: Իսկ այդ կը նշանակէր սպաննել Եգիպտոսի առեւտուրը: Ուստի Եգիպտոսն ու Բաբելոնը կատաղի կռուի բռնուեցան: Փարաւոն կրցաւ զինուորական զաշինք կապել Պաղեստինի, Սուրիոյ և Փիւնիկեան Տիրոս ու Սիդոն հարուստ ու հզօր քաղաքներուն հետ: Յուդայի թագաւոր Յովակիմն ալ սկսաւ բանակցել, որպէսզի միանայ դաշնակիցներուն, բայց Նաբոգոզոնոսոր լսեց և քաղեց իր վրայ, խեղդեց ժողովուրդին և թագաւորին ծրագիրը, Յուդայի թագաւորութիւնը հարկատու դարձուց իրեն: Քանի մը տարի հազիւ անցած, Հրէաները կրկին ապստամբեցան, իրենց յոյսը դրած փարաւոնի (Նեքսուովի) վրայ: Նաբոգոզոնոսոր կրկին եկաւ, զրաւեց Երուսաղէմը, կողոպտեց Սողոմոնի սաճարը և Յովակիմ թագաւորը գերի տարաւ Բաբելոն, իսկ անոր տեղը թագաւոր հռչակեց Յուդայի թագաւորներու ժառանգ Սեդեկիան:

Նաբոգոզոնոսոր
(601-562)

Սակայն ժողովուրդին մէջ զօրեղ էր Բաբելոնի լուծը թօթափելու ցանկութիւնը: Այդ պատճառով երբորդ անգամ ապստամբութիւն ծագեցաւ, երբ Եգիպտոսի կազմած դաշնակցութիւնն իրականացաւ: Սեդեկիան, չհամակերպելով երեմիա մարգարէի բազմաթիւ յորդորներուն, միացաւ դաշնակիցներուն հետ: Նաբոգոզոնոսոր պացաւ Յուդայի երկրին վրայ: Մէկ ու կէս տարի պաշարելէ յետոյ՝ զրաւեց Երուսաղէմը, կողոպ-

տեց և անխնայ կործանման ենթարկեց քաղաքը: Կոտորեց բնակիչներուն մէկ մասը և մնացածները հաւաքելով, գերի տարաւ Բաբելոն (588ին):


Այս է Բաբելոնի մեծ գերութիւնը, որ տեւեց 70 տարի:

Երուսաղէմը կործանելէ յետոյ՝ թագաւորը գնաց Փիւնիկեան քաղաքներուն վրայ և 13 տարի պաշարելով Տիւրոսը, վերջապէս հարկատու դարձուց ամբողջ երկիրը: Յետոյ գնաց Եգիպտոս, աւարի և կոտորածի մասնեց այդ ծագկամ երկիրը և մեծ հարստութեամբ վերադարձաւ:

Այժմ արդէն իրեն կը պատկանէին Միջագետքը և Միջերկրականի բոլոր արեւելեան ափերը, այսինքն այդ ժամանակի ամենազարգացած ու հարուստ երկիրները: Հզօր թագաւորն այնուհետեւ սկսաւ բարեկարգել իր պետութիւնը և մանաւանդ, զարդարել ու ճոխացնել իր մայրաքաղաքը, որ շուտով դարձաւ իր ժամանակի լուսաւորութեան, հարստութեան, գիտութեան ու փառքի կեդրոնը: Յոյն պատմիչ Հերոդոտոս ասկէ մօտ 100 տարի յետոյ այցելեց Բաբելոն և հիացումով կը նկարագրէ անոր հրաշալիքները:

Բաբելոնի բոլոր շէնքերէն ամենազարմանալին և ամէնէն հրաշագեղը կը համարուէին «կախուած պարտեզներ»ը: Աւանդութիւնը կ'ըսէ թէ, Նաբուգոդոնոսոր այդ պարտեզները շինել տուած է իր սիրելի կնոջ, — Ամիտիսի համար: Թագուհին Մարերու թագաւորին աղջիկը ըլլալով, սաստիկ կարօտը կը քաշէր իր հայրենի լեռներուն ու բլուրներուն, կը ձանձրանար բաբելոնեացի տափաստաններէն: Պարտեզները շինած էին իրարմէ աստիճանաբար բարձր սիւներու վրայ զետեղուած տանիքներու մէջ: Ընդ որ պարտեզները քառա-

յարկ տան կը նմանէին: Նախ շքեղ պարտեզ մը կար գետին վրայ. յետոյ շարք մը սիւներու կատարը՝ քարի, սափալտի և աղիւսի շերտերու վրայ կը քաշէին կապարի շերտեր. որպէսզի ջուրը վրայէն չկաթկթէ: Այդ տանիքին վրայ կը լեցնէին հողի հաստ խաւեր, որոնց մէջ կը անկէին ու կ'աճեցնէին ամէն տեսակ ծառեր ու ծաղիկներ: Սիւներէն մէկուն ներսը պարապ ըլլալով, ջրհան մը կը դնէին և ջուր կը բարձրացնէին պարտեզին առաջին յարկը: Յաջորդ յարկի սիւներն



Բաբելոնի կախուած պարտեզները

աւելի բարձր էին, երրորդը՝ աւելի բարձր, և այլն: Այդպէսով բոլոր պարտեզները կարծես կախուած էին օդին մէջ:

Մեր ձեռքն է հասած Նաբուգոդոնոսոր արքայի մէկ աղօթքը, որ զարմանալի նմանութիւն ունի Դանիէլ մարգարէի Սաղմոսներուն հետ:

«Տէր Յաւիտեան, որ կանգնած ես բոլոր էութիւններէն բարձր, Բաբելոնի համաձայն առաջնորդէ թագաւորս, զոր կը սիրես և որուն անունը կուտաս. առաջնորդէ զայն արդար ճանապարհով, ես, թագաւորս՝ Նաբուգոդոնոսոր: Բայց ես Բաբելոնեացի տեղաբնիկ եմ. Տէր իմ, Բաբելոնեացի եմ, զոր կը տարածես

ամենուն վրայ, Դուն զիս ստեղծեցիր և իշխանութիւն տուիր ինձ բոլոր ժողովուրդներուն վրայ, Հրամաէ՛ ինձ սիրել Քու բարձր իշխանութիւնդ, թող Քու աստուածութեան երկիւղն ապրի իմ սրբիս մէջ, և նուիրէ՛ ինձ այն ինչ որ հաճելի է Քեզ։»

Նաբուգոդոնոսորի մահէն յետոյ իր հզօր պետութիւնն սկսաւ արագօրէն իյնալ։ Իրարու ևս եւ է կորսընցոց զբաւուած երկիրները։ Վերջին թագաւորն էր Նաբօնիս (Նաբու-Նահիզ) որ աւելի հնազէտ գիտնական մըն էր, քան մեծ պետութեան մը զլուխ։ Երկրի կառավարութիւնը յանձնած էր զաւելին՝ Պաղատասորին (Բէլշարուսսոր), իսկ ինքն զբաղած էր վերաշինելով բոլոր աստուածներու մեհեաններն իրենց ամենաշին ձեւերով։

Պարսկոցի անկումը

Սակայն արեւելքի մէջ կազմուած էր Պարսկական նոր պետութիւնը, որ կը սկսէր սպառնալ Բաբելոնին։ Նաբօնիզն ու իր որդին, նկատելով այդ նոր վտանգը, դաշն կապեցին Լիւդիայի թագաւոր Կրեսոսի և Եգիպտոսի փարաւոն Ամագիսի հետ՝ Պարսկաստանի Կիւրոս թագաւորին դէմ։ Վերջինս արագօրէն արշաւեց Բաբելոնի վրայ և քաղաքն առաւ ՏՅԳին։ Վերջնապէս ինկաւ Բաբելական պետութիւնը և Միջագետքը դարձաւ պարսկական հզօր պետութեան մէկ մասը։ Ու այսպէս Մոսաւոր Արեւելքի մէջ սեմական ցեղին տեղը բռնեց Արիական ցեղը։

ԱՍՈՐԵՍԱՆԻ ԲԱՂԱԲԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Ասորեստանցիներու կրօնը նոյնն էր բաբելականին հետ, միայն քիչ մը աւելի բարձր և աւելի ազգային։ Անոնք ընդունած էին բաբելական երկու երրորդութիւնները և հինգ մոլորակ աստուածները, անոնց բարի ու չար ողիները, անոնց դժոխքն ու զրախալը, կրօնական աւանդութիւնները, և այլն։ Բայց անոնց վրայ աւելցուցած էին վիսսուսածուքեան զաղափարը։ Ասոր աստուածը մէկ էր, ամե-

Ասորեստանի կրօնը



Ասոր Ասուած

նազօր և ամենազէտ. ան իրենց ազգի աստուածն էր, իրենց անունը առւած էին անոր։ Ան էր իրենց ստեղծողը և պոչապանը թէ՛ պատերազմի, թէ՛ խաղաղութեան ժամանակ։ Սակայն այդ միաստուածութիւնը խիստ չէր, ինչպէս Հրէաներուն մէջ, այլ միշտ խառն բազմաստուածութեան հետ։ Ասորական թագաւորներն ամէն ինչ կ'ընէին «Ասորի և միւս մեծ աստուածներու հրամանով», որպէսզի «հաճելի ըլլայ Ասորին» և այլն։

Ասորբաստանի մէջ կը գործածուէին նոյն սեպագիր- ները: Անոնք կը գրէին եղէգէ սրածայր փայտիկներով, մաք- րուած մորթի, Եգիպտոսէն բեր- ուած պապիրոսի, յղկուած տախ- տակներու վրայ: Սակայն այդ նիւթերուն վրայ կը գրէին տարրական, մանր-մունր գործերը. երբ պէտք ըլլար գրել որեւէ կրօնական, գրական գործ կամ տարեգրութիւն, պետական կարեւոր փաստաթուղթ մը, թագաւորի մը կատարած գործերը և այլն, այն ժամանակ անոնք ու կը գիմէին թաց աղիւսին, զոր կը չորցնէին կամ կը թրծէին՝ գրելէ յետոյ, ինչպէս Բաբելոնցիները: Ամե- նորեայ գործածութեան կամ սովորական գրութիւն- ներու համար կը գործածէին Փիւնիկէէն փոխ աւ- նուած սառանչաններ, իսկ կարեւոր գրութիւնները կ'արձանագրէին սեպտձև տառերով:

Վիր

Աղիւսներէ կը կազմէին ամբողջ գրքեր, բազմա- թիւ երեսներով: Իւրաքանչիւր աղիւս մէկ թերթ կը համարուէր և կը կրէր էջերու թիւը. ամէն աղիւսի սկիզբը կը գնէին նա- խընթաց աղիւսի վերջին բառերը, նաև այն գրքին սկզբնական բառերը, որու մէկ երեսն էր գրուած ա- ղիւսը:

Ասուրբանիպալի գրադարանը

Այդպիսի գրքերը կը հաւաքէին զանազան մեհակա- ներու և պալատներու մէջ և կը կազմէին գրադարան- ներ: Ամենամեծն էր Ասուրբանիպալի գրադարանը, որ Նինուէի աւերակներուն մէջ զանուեցաւ անդլիացի գիտնական Լէյբրախի կողմէ:

Կը պարունակէր մօտ 30,000 աղիւս, բոլորը կրկ- նակի թիւերով, որոնց մէկը ցոյց կուտար գրքին երե- սը, իսկ միւսը՝ գրադարանին գրահամարը:

Ասուրբանիպալը հրամայած էր կազմել այդ հսկայ գրադարանն իր պալատին մէջ, պահած էր բազմաթիւ արտագրողներ զանազան քաղաքներու մէջ, որոնք արտագրած են շատ հին արձանագրութիւններ ու ա- ղիւսներ և ուղարկած արքայական գրադարանը: Նշա- նակած էր գրադարանի ընդհանուր տեսուչ, բազմաթիւ օգնականներ ու ծառայողներ, որոնք օրինակելի կարգ կանոն կը պահպանէին անոր մէջ:

Հազարաւոր տարիներ զետնի տակ մնացած այդ գանձերը ըստ աշխարհ հանուեցան ժի. գարուն, հաւաքուեցան ու տարուե- ցան Լոնտոն, ուր իւրաքանչիւր աղիւսը ենթարկուեցաւ մանրազնին ուսումնասիրութեան: Կարգացուեցան բոլոր նիւթերը և գրի առ- նուեցան Այնտեղ կան գրքեր ու գրութիւններ թէ կրօնի, թէ գրականութեան և թէ գիտութիւններու բոլոր ճիւղերու մասին: Կան բազմաթիւ օրացոյցներ, որոնց մէկ քանին հասարակ ժողո- վուրդին համար էին, միւսները՝ աւելի զարգացածներու համար: Անոնց մէջ կան բազմաթիւ գու- շակութիւններ, բարի ու չար օ- րեր, աստղերու շարժումներ և այլն Գրադարանին մէջ գլխ- նուած են այբբենարաններ, քե- ղականութիւններ, բառարաններ, պատմական բովանդակութեամբ գրութիւններ, կառավարիչներու և այլ պաշտօնեաներու տեղե- կաբերի կան բազմաթիւ գրու- թիւններ բժշկութեանց, մտթէմաբիքի, աշխարհագրութեան (մեծ մասը միայն անուններ), բնական գիտելիքներու և մանաւանդ աստ- զագիտութեան մասին, որ հին դարերուն կը նկատուէր խիզական գիտութիւն մը: Մեծ արժէք ունին նաև կրօնական կարգ մը ա- ւանդավէպերը (Ձրհեղեղ, Գիլգամէշ, Իշտարի դժոխք իջնելը և այլն) և աստուածներուն նուիրուած սաղմոսանման փառաբանութիւն-



Վրանակներ

կազմուած են բազմաթիւ գրու- թիւններ բժշկութեանց, մտթէմաբիքի, աշխարհագրութեան (մեծ մասը միայն անուններ), բնական գիտելիքներու և մանաւանդ աստ- զագիտութեան մասին, որ հին դարերուն կը նկատուէր խիզական գիտութիւն մը: Մեծ արժէք ունին նաև կրօնական կարգ մը ա- ւանդավէպերը (Ձրհեղեղ, Գիլգամէշ, Իշտարի դժոխք իջնելը և այլն) և աստուածներուն նուիրուած սաղմոսանման փառաբանութիւն-

ները Գրադարանին մէկ մասն ալ բաղկացած է հանրային և մասնաւոր փաստաթուղթերէ. կան քաղաքական գրուածքներ, արքայական հրամաններ, հեռագրեր կամ ստիպողական հրամաններ, հարկերու և տուրքերու ցուցակներ, զինուորականներու և կուսակալներու զեկուցագրեր, արքայական աստղագիտորաններու ամենօրեայ հաղորդագրութիւններ, տան, հողերու և ստրուկներու առ ու ծախի թուղթեր՝ իրենց ստորագրութիւններով ու կնիքներով, գրաւականներ, պայմանագրեր, իրենց տոկոսներով, գտնուած են նաև գրելու քանի մը գործիքներ, և ուրիշ բազմազան ամենօրեայ գործնական գրութիւններ:

Ասորեստանի թագաւորները եգիպտական թագաւորներու պէս անսահման ինքնակալներ էին: Բայց անոնց մէջ խոշոր տարբերութիւն մը կար: Փարաւոնները տեսակ մը կիսատտուածներ էին. մահէն յետոյ զանոնք կը պաշտէին, աստուած կը դարձնէին: Իսկ Ասորեստանի թագաւորներն իրենք զիրենք կը համարէին աստուածներու ծառան, անոնց ստրուկը, ինչպէս ամէն մէկ մահկանացու: Ժողովուրդն ալ նոյն համոզումն ունէր: Երբ թագաւորը զոհ մատուցանէր աստուածներուն, կը հանէր իր թագը և բոլոր արքայական նշաններն ու զգեստները, կը զանար սոսկական էակ մը և կը հազուէր այնպէս, ինչպէս սովորաբար ստրուկները: Մահէն յետոյ զանոնք չէին աստուածացիներ ոչ Բաբելոնի, ոչ ալ Ասորեստանի մէջ: Բայց և այնպէս արքաները կը պահէին իրենց անսահման իշխանութիւնը. անոնք իրենց բոլոր հպատակներու կեանքին, զոյքին ու պատւին տէրն էին: Կրնային յետին ստրուկը դարձնել պետութեան առաջին անձը, իսկ ամենամեծ պաշտօնեան սորկայնել, զրկել ասացուածքէ, նոյն իսկ կեանքէ:


**Ասորեստանի
թագաւոր**

Ամբողջ Ասորեստանը կը ներկայացնէր զինուորական բանակ մը: Ամէն մարդ պարտական էր անպայման և ամէն բանի մէջ հնազանդիլ երկրի պետին՝ թագաւորին: Թագաւորէն յետոյ պետութեան մէջ առաջին անձն էր զօրքի հրամանատարը կամ արքանը. երկրորդ և երրորդ տեղը կը բռնէին պալատականները, չորրոր-



Ասորեստանի արքայական զգեստները

դը — քուրմերը, իսկ վերջին կամ հինգերորդը — քաղաքային մասի կառավարիչը: Թագաւորներու ամէնէն էական գործն էր պատերազմը, իսկ քաղաքային գործերով կը զբաղէին միայն հարկէն ստիպուած ատեն: Անոնց ամենամեծ զուարճութիւնն էր վայրի դազաններու, մանուսանդ առիւծի և վայրի ցուլի որսը: Որսորդութիւնը խաղաղութեան ատեն կը դիտուէր իբրև ուղղմական վարժութիւն:



Ասորեացիական թագաւորը սրբի կ'երայ

Ասորեացիական իւրաքանչիւր թագաւորը գոհ բարձրանալուն պէս կը հրամայէր իրեն յատուկ պալատ մը շինել, որքան կարելի է շուտ:

Ասորեացիական մէջ ալ, ինչպէս և Բաբելոնի մէջ, պալատները կը շինուէին ապիսէ: Պատերը կը շարէին չորցած հում աղիսէ, իսկ երեսները կը ծածկէին ալպաստրով, ապակիով, կամ ուրիշ փայլուն և յզկուած նիւթով:

Այգպիսի պալատներէն մնացած են միայն հեռքեր և կառուցման նիւթերու կոշտեր: Գտնուած յատակագծերու, բնկորներու և մանաւանդ արուած նկարագրութիւններու շնորհիւ կարելի եղած է վերարտադրել պալատներու ընդհանուր ձևը: Եթէ եզրապատի մէջ

Պալատներ
և Բաբելոններ

ամէնէն առաջին շէնքը մեկնանք էր, Ասորեացիական մէջ ալ թագաւորին պալատն էր:


Ամէնէն նշանաւոր պալատներէն մէկն էր Սարկոնի կամ Սարուքինի շինել առած «Իւր-Շարուքին (Իւր-Սարուքին) կամ «Սարկոնի քաղաք» կոչուած շէնքը՝ նինուէի մտերը: Եթէր տարի է տեսած այդ հսկայական շէնքին կառուցումը: Անոր արտաքին պատերը շինուած էին քարէ, իսկ ներքին պատերու երեսները ծածկուած էին փղուկրով, նոճիի, արմաւի և եղևինի փայտով: Պարսպին ներքը կալին քանի մը շէնքեր — թագաւորին, զահաժառանգին, ունոր կիներուն ու ծառաներուն բնակարանները, հանդիսական գահիճները և վերջապէս Ասորի փառաւոր տաճարը: Կրկնակի սարխապներն ունէին բազմաթիւ աշտարակներ, որոնք բոլորն ալ կը վերջանային աստամնածե ծայրերով: Պարխապները ունէին ութ դարպասներ, որոնց երկու կողմերը կանգնեցուցած էին թեւաւոր հսկայ եզներ — «գահապան բարի ոգիներ», վեհ և հանդարտ գիրքով: Այդ ցուլերէն շարուած էին նաև պալատի պատերուն ասկ, Գիլգամիշի հսկայական արձանին երկու կողմերը: Իսկ Գիլգամիշը ներկայացուած էր իբրև ազգային հերոս մը, որ մէկ ձեռքով կը խեղդէ ամենի առիւծ մը: Շէնքին զլխաւոր



Թեւաւոր ցուլը

դարպասը կատարեալ բերդի դուռ էր, կառուցուած մեծ ճաշակով:

Պալատին շէնքերը պատուհան չունէին. լոյսը կ'իջնէր անագին ճասաւթեամբ պատերու մէջ բացուած դուռներով և սանիքներուն վրայ շինուած բացուածք-



Սարկոնի պալատին նախասր

ներով, այնպէս որ նեղ ու երկար գանձիճները, մթութեան պատճառով, առկի դամբարաններու կը նմանէին, քան պալատներու:

Պալատներու պատերուն վրայ կային բազմաթիւ քանդակներ, այլազան բովանդակութեամբ: Այդտեղ կային բարի ողիներ՝ արծուի գլխով ու թևերով, չոր ողիներ, ինչպէս անապատի տաք ու չոր հովի դեւը —



Կասիած առիժը

հրէշուոր, գարշկի դէմքով, թևերով, ձեռքերով և ստքերով, սրսնք կը վերջանային ճանկերով և ճիրան-



Ռոսի շուներ

ներով: Քանդակուած էր դժոխքն իր բոլոր սարսափներով, բայց քանդակուած էին նաև թագաւորներու արչաւանքներէն ու կատարած գործերէն պատկերներ:

արքայական որսորդութեան տեսարաններ, աստուածներ և զոհ բերող թագաւորներ, քուրմեր և այլն: Սորաքանդակներէն շատերը գունաւոր էին. մնացորդներու վրայ դեռ կը նշմարուին ներկերու հետքեր:

Ընդհանրապէս Ասորեստանի ճարտարապետութիւնը ծանր է, ճապաղ. անոնց շէնքերուն զանազան մասերուն միջեւ համաչափութիւն և ամբողջութիւն չկայ. մէկ մասը երբեմն շատ մեծ է, միւսը չափազանց փոքր: Դուռը կամ ուրիշ մաս մը հրաշալի դարձարուած է, մնացած մասերն անձաշակ, կոպիտ: Նոյնը կարելի է ըսել նաև անոնց քանդակներուն ու նկարներուն մասին: Նկատելի է որ անոնց քանդակագործները և նկարիչներն աւելի լաւ կենդանիներ կը պատկերացնէին քան մարդիկ: Ասորեստանի և Բաբելոնի բոլոր թագաւորները նկարուած են միօրինակ — կիսադէմքով, ծանր զիրքով, ուռուցիկ կամ հպարտ ձեւերով:




Ասորեստանը, բաղկացած բլլայով բազմաթիւ հպատակնահանգներէ ու ժողովուրդներէ, պէտք էր իր զօյութիւնը պաշտպանէր պատերազմներով: Ծնործիւ անվերջ պատերազմներուն, բոլոր Ասորեստանցիները դարձեր էին սոկուս և կարիճ կռուողներ: Ասկէ զատ՝ ստեղծուած էր բանակ մը, որու նմանը Հին Արեւելքը երբէք չէր տեսած: Ասորեստանի բանակին մէջ կարգն ու հնազանդութիւնը հասած էին կատարելութեան:

Զորքը բազկացած էր երկու մասերէ, — հեծելազորքէ և հեռակազորքէ: Հեծելազորքն ալ իր կարգին բազկացած էր բուն ձիաւորներէ, որոնք զինուած

Ասորեստանի զօրքը և պատերազմը

էին թիթեւ զէնքերով և կառքի խումբերով: Թշնամիներուն համար ամէնէն սոսկալին այդ վերջիններն էին: Սպառազէն ծանր վահաններով, սաղաւարաններով և զէնք ու զրահներով, անոնք կը նստէին երկանիւ ամբակազմ կառքերու վրայ, որոնց կը լծէին երկու կամ



Պատերազմական կառքեր և կռուողներ

երեք ամենի ձիեր: Կռուողը նետը, նիզակը և սուրը կը գործածէր, իսկ օգնական մը ձիերը կը վարէր: Ասոնք սարսափելի էին մանաւանդ այն ժամանակ, երբ թշնամին փախուստի կը դիմէր: Ասորեստանի քանդակներուն վրայ յաճախ ներկայացուած են այդ զօրակառքերը, որոնք կը սլանան փախչող թշնամիին ետեւէն և անխնայ կ'օջնչացնեն անոր շարքերը:

Հեռակազորքն ալ կ'ըլլային ծանրազէն և թիթեւազէն: Ծանրազէնները կը կրէին վահան և նիզակ: Անոնց գլուխները ծածկուած էին կոնաձեւ, սրածայր պղնձէ սաղաւարաններով, իսկ մարմինը կաշիէ վերնաշապիկով, որուն վրայ կային բազմաթիւ մետաղէ թեփեր: Առջեւնին կը կապէին հաստ կաշիէ զօգնոց, որ

կիջներ մինչև ծունկերը: Տէգերը ունէին մօտ 7 ոտք երկայնութիւն, ծայրերէն անցուած պղինձէ կամ պրօնզէ սուր սուրին: Նիզակաւորներն ալ ունէին գօտիներէն կախուած կարճ և տափակ սուրեր և անաղին կլոր



Ասորեստանցի զինուորեհեր


վահաններ: Նետածիգները վահան չունէին, իսկ նետերը կը կրէին կտպարձներու մէջ, որոնք ամրապէս կապուած էին կոնակներուն:

Թեթև աչրուծին կը կրէր մանր ու թեթև վահաններ՝ ուռնիի փայտէ շինուած, և երկար նիզակներ: Թէ՛ աչրուծին և թէ՛ հետևակ աղեղնաւորները կը կազմուէին կա՛մ բնիկ Ասորիստանցիներէ և կա՛մ արդէն շատոնց հպատակ և իրենց կցուած ժողովուրդներէն:

Իոլոր զօրքը կանոնաւորապէս բաժնուած էր մանր ու խոշոր զօրաբանակներու և զօրաբաժիններու: Ասորեստանի զօրքն իր արագաշարժութեամբ և կարգ ու կանոնով հիացում կը պատճառէր օտարներուն. մինչև իսկ Ս. Գրքի մէջ Նաայի մարզարէն զարմանք կը

յայտներ: Անոնք գլուերէն և ջուրերէն կ'անցնէին կամ ստքով, գա՛ւերով ծա՛նծա լուսներ, կա՛մ հեծնելով ուսած տիկերու վրայ և կամ լողալով: Քաղաքներ պաշարած ստեն անոնք կը գործածէին մետաղապատ փայտէ աշտարակներ, հաստատուած անխներու վրայ: Այդ աշտարակները պարաններով կը քաշէին մինչև պարիսպներուն մօտերը և յետոյ պատ քանդող մեքենաներով հարուածներ կ'արձակէին պարիսպներուն:

Պատերազմի երթալէ առաջ, անոնք կը հարցընէին աստուածներուն կամքը: Եթէ աստուածները յաջողութիւն խոստանային, կը կռուէին առիւծի պէս. իսկ եթէ պատասխանը ժխտական ըլլար, կը կորսնցնէին կռուչու ամէն փտիաք և յաճախ կա՛մ կը փախչէին, և կամ գունդագունդ անձնատուր կ'ըլլային, առանց զիմադրութեան:



Կոխ բերդի մը վրայ

Հին զարերու մէջ պատերազմներն անհասարակ շատ աւելի դժամն և կատաղի էին քան այժմ: Պատերազմի ենթակայ երկիրը քարուքանդ կ'ըլլար և բնակիչները յաճախ բոլորովին կ'ոչնչանային, որովհետև մէկ մասը գերի կը տարուէր, մէկ մասն ալ կը ջարդուէր: Գերիներուն հետ ալ մարդասիրաբար չէին

վարուեր, այլ երբեմն կը կտրատէին այս կամ այն



Թագաւոր կը փորձ
բեկամիներունն աչկերը

Handwritten scribbles and a large flourish in ink, possibly a signature or decorative element.

մարմնամասերը, աչ-
քերը կը փորէին, մոր-
թաղերձ կ'ընէին, ջի-
ղերը կը քաշէին, եր-
կաթէ ճանկերով մէջ-
քի միտերը կը փըր-
ցընէին և այլն: Իսկ
լաւագոյն գարագա-
յին՝ կը դարձնէին
սարուկ, ձրի կ'աշ-
խտացնէին, կամ կը
ծախէին իբրեւ գերի:
Արձանագրութիւնները
լեցուն են այգալիտի
դազանութիւնն եր ու
նկարագրութիւններով
և նոյնիսկ քանդակ-
ներով:

3. Փ Ի Ի Ն Ի Կ Է

Ասորիքի հիւսիս-արեւմտեան կողմը, Միջերկրականի
արեւելեան ափերը, Կիլիկիայէն
դէպի հարաւ, կ'երկարի լեռնա-
շղթայ մը, որ կը կոչուի Անգը-
լիբանան (Երևոնի և Կարմէյի լեռ-
ներ, ըստ Ս. Գրքի): Այդ լեռնաշղթային և ծովուն միջև
ինկած նեղ երկրամասն էր Փիւնիկէն, որ ունէր մօտ
200 քիլոմ. երկայնութիւն, իսկ 4-15 քիլոմէթր լայ-
նութիւն: Տեղ-տեղ լեռները կը մօտենան, կը կպչին
ծովուն. ուրիշ տեղեր ծովն է որ կը միտուի երկրի
սիբար և կը կազմէ ծոցեր, բնական նաւահանգիստներ
և խորշեր:

Երկիրը, բնակիչները
և պետութիւնը

Լեռնաշղթայէն իջնող սրնթայ գետակները երկիրը
կը բաժնեն մանր մասերու: Այդ գետակները նաւար-
կելի չեն, բայց արտազանօս ըլլալով և յաճախ յորդե-
լով, կը դժուարացնեն անցուղարձը: Լեռները ծածկը-
ւած էին եղևնի, նոճիներու, մայրիներու և սոճիներու
խիտ սնտառներով, իսկ աւելի ներսերը առասօրէն
կ'ածէին և զեռ կ'ածին արմաւը, ձիթապտուղը, նա-
րինջը և այլն: Երկրի կլիման բարեխառն է:

Տափարակ դաշտերու և առնասարակ հողի պակա-
սութիւնը ոչ մէկ յարմարութիւն չէր ստը զբաղելու,
ապրելու անասնապահութեամբ և երկրագործութեամբ:
Փողովուրդը ստիպուած էր օգտուիլ ծովէն, դառնալ
ձկնորս, իր լեռներու առատ փայտէն շինել նաւեր,
դառնալ վաճառական:

Այդ կտրատուած ծովափն ու մերձակայ մանր կղզ-
ղիները ոչ մէկ յարմարութիւն չէին ներկայացնել կազ-
մելու ամբողջ, կեդրոնացած պետութիւն մը: Իւրա-

Քանչիւր անջատ դաւառ, քաղաք իր չըջապատով աւանձին պետութիւն մը կը կազմէր: Փիւնիկեցիները երբեք չկազմեցին ազգային մէկ ամբողջութիւն մը: Անոնց մանրիկ քաղաք-պետութիւնները միշտ իրարու թշնամի էին, իրարու դէմ կը դաւաճանէին: Այդ պատճառով ամբողջ Փիւնիկէն իր հարստութեամբ զիւրին աւար մըն էր ռազմատէր դրացիներուն համար: Ճիշտ է, անոր քաղաք-պետութիւններէն երկուքը—Տիրոսը և Սիդոնը հասան միտ զօրութեան, բայց կարճ տեւեց այդ:

Երկրի ազգաբնակչութիւնը սեմական ցեղէն էր: Հաւանական է, որ անոնք դրացի ժողովուրդներու հայածանքներէն փախած, լեռներու արեւմտեան կողմերն ապաստանած Սեմականներ են, որոնք իրենց հօտերուն հետ իյնալով այդ անդ, ստիպուէր են յարմարիլ երկրին: Ամբողջ ծովափը ծածկուած էր մանր ու խոշոր քաղաքներով. Տիրոսէն և Սիդոնէն զատ, նշանաւոր էին Արատը, Պիպը, Պերիթը, Ակիօն և այլն:

Ս. Գրքին մէջ այդ ժողովուրդը կոչուած է Բաւանացիներ. Յոյները կ'անուանէին Փիւնիկեցիներ, իսկ Հռոմայեցիները — Փուններ:

Սկիզբները Փիւնիկեցիները կ'ապրէին մանր համայնքներով. յետոյ այդ համայնքները մեծնալով, կամ մէկ քանին իրար խառնուելով կազմեցին մանրիկ պետութիւններ: Գրիստոսէ 300 տարի առաջ երկիրը կը գտնուէր Բաւելացիներու, յետոյ եգիպտացիներու իշխանութեան տակ:

Ամէնէն առաջ հզօր պետութիւն մը կազմեց Սիդոն

Պատմութիւն

քաղաքը, որ իրեն հպատակեցուց դրացի քաղաքներէն շատերը, իսկ դաշնակից բրաւ Տիրոսը և ուրիշները (ժԲ. դար, Բ. ա.): Սիդոն գրաւեց ամբողջ Կիպրոս կղզին, որ հարուստ էր պղնձի հանքերով (այդ մետաղին անունը շատ լեզուներու մէջ դեռ այսօր ալ կը կոչուի նոյն այդ կղզիին անունով): ԺԱ. դարուն Տիրոսը զօրացաւ և ինքզինքը անկախ հռչակեց: Մօտ 1000 թըւակամներուն Տիրոսի թագաւոր Հիրամը դրաւ շատ դրացի քաղաքներ ու կղզիներ և դարձաւ Արեւելքի զօրաւոր պետերէն մէկը: Ան ժամանակակից էր Հրէաստանի Սողոմոն արքային: Հիրամ ամբացուց իր քաղաքը. մանաւանդ անոր այն խոշոր մասը, որ շինուած էր կղզիին վրայ. վերանորոգեց հին մեհնանները, նորեր ալ շինեց, և վաճառականութիւնը ծաղկեցուց:

Հիրամէն յետոյ Տիրոսն սկսաւ իյնալ: Ներքին գժտութիւններու պատճառով Թ. դարու սկիզբները նշանաւոր քաղաքացիներէն ու սոնմերէն շատերը գաղթեցին և ծծէին Ափրիկէի ափերը, Սիկիլիոյ դիմացը, հիմնեցին «Նոր-քաղաք» մը, Կարթեգոնը կամ Կարթագէնը: Ասոր նաւահանգիստը շատ յարմար ըլլալով, կարելի եղաւ շուտով ստեղծել ծաղկած վաճառականութիւն մը և կազմել հզօր պետութիւն մը, որ տիրեց չըջակայ բոլոր երկիրներուն, մաս մըն ալ Սպանիային:

Շատ չանցած Տիրոսի վրայ յարձակեցան Ասորեստանցիները և հարկատու դարձուցին ամբողջ Փիւնիկէն, որ յետոյ ինկաւ Պարսիկներուն ձեռքը: Իսկ վերջին հիւսիսը տուաւ Ալէքսանդր Մակեդոնացին, որ հիմնայատակ կործանեց զայն:

Ընդունակ և ճարպիկ ժողովուրդ ըլլալով, Փիւնիկեցիները շուտով կ'ենթարկուէին տիրող պետութեան քաղաքակրթութեան: Այնպէս որ իրենց երկիրը դարձաւ խառնարան բոլոր Հին Արեւելքի քաղաքութեան, տեսակ մը ամբար: Սակայն՝ որովհետեւ երկիրը երբեք չունեցաւ երկարատեւ խաղաղ կեանք, դուրսէն ստացած քաղաքակրթութիւնը չկրցաւ մարտել, իւրացնել և ստեղծել սեփական քաղաքակրթութիւն: Իր դերն այն եղաւ, որ մեծ ժողովուրդէ մը ստացածը կը տանէր կը հաղորդէր միւս ժողովուրդներուն, որովհետեւ մշտական յարաբերութեան մէջ էր բոլորին հետ ալ: Այսպէս, Արեւելքի զարդացած քաղաքակրթութիւնը սարածեց Յոյներուն ու Հռոմայեցիներուն մէջ, որոնք այնուհետեւ զարգացուցին և ստեղծեցին իրենց ինքնուրոյն և հզօր քաղաքակրթութիւնները: Փիւնիկէն սեփական չափազանց քիչ բան սուսած է մարդկութեան:

Փիւնիկեցիները

Այդ միջնորդ առեւտրական երկրի քաղաքական և հանրային կազմը ամենուին նման չէր Արեւելքի միւս պետութիւններու ներքին կազմին:

**Հանրային
և
հարգաւորական կազմը**

Ամէն քաղաք ունէր իր ժառանգական թագաւորը, որ միեւնոյն ատեն կրօնապետ էր: Թագաւորը աստծու ներկայացուցիչն էր՝ յերկր վրայ, բայց միաժամանակ ամենահարուստ ու ճարպիկ վաճառականը:

Առհասարակ Փիւնիկէի քաղաքական կազմը շատ յայտնի չէ, բայց մեր ձեռքը հասած հասուկոտը տե-

ղեկութիւններէ կ'երեւայ որ թագաւորները միանձնաինքնակալներ չէին: Ամէնէն հարուստ և նշանաւոր վաճառականները, որ կը կազմէին երկրի ազնուականութիւնը, 100 հոգիէ բաղկացած խորհուրդ մը ունէին, առանց որու թագաւորը ոչ մէկ կարեւոր որոշում չէր կրնար տալ: Իսկ այդ հարիւրէն ալ կը զատէին 10 հոգի, — թերեւս ամէնէն նշանաւոր տոհմերու գլխաւորները — և կը կազմէին երկրի ամենաբարձր խորհուրդը: Ուրեմն այդ քաղաքներէն շատերը մէկ-մէկ ազնուապետական հանրապետութիւններ էին, քան միապետութիւններ:

Հարուստ առեւտրականներու կողքին, ինչպէս ամէն տեղ, Փիւնիկէի մէջ ալ կային բազմաթիւ մանր առեւտրականներ, արհեստաւորներ, աղքատ աշխատուորներ և մանաւանդ սարուկներ:

Գիւղական ժողովուրդը ճորտ էր: Հողը կը պատկանէր տիրող դասակարգին, իսկ գիւղացին կը մշակէր և հողատէրերուն կը վճարէր արդիւնքի մէկ քառորդը կամ մէկ երրորդը: Յաճախ տիրող դասակարգը գիւղացիները բռնի կը տանէր գաղթավայրեր, կը բանեցնէր և աշխատանքին արդիւնքը ինք կը վայելէր:

Ստորին դասակարգերու այդ հալածական ու թըշուուռ վիճակը զանոնք կը գրգռէր տիրող դասակարգին դէմ. աղքատները միշտ պատրաստ էին սպստամբելու և կործանելու հարուստները: Երբ թշնամիները կը յարձակէին երկրին վրայ, աղքատ ու կեղեքուած դասակարգերը ոչ միայն սրտանց չէին պաշտպաններ իրենց երկիրը, այլ յաճախ կը միանային թշնամիներուն: Այդ պատճառով ալ Փիւնիկէն միշտ խաղալիք, դիւրին աւար էր օտարներու ձեռքը:

Սեմական խաչնարած ցեղի անդամները, հաստատուելով Փիւնիկէ, երբ տեսան որ արօտատեղիներ չկան, ափազուեցան շուտով դիմել ծովին: Ենորհիւ լեռներու արտադրած փայտեղէնին, կարելի էր քիչ աշխատանքով շինել լաւ մակոյկներ և նաւեր: Հետզհետէ սկսան յառաջանալ դէպի

Ծովագնացութիւնը.
արտադրութիւնը և
գաղութները

քաց ծովը. — նախ ափերէն լողալ դէպի դրացի ափերը, յետոյ աւելի հեռու ափեր և երկիրներ: Մովի վրայ կը զբաղէին ապաստակութեամբ. կը յարձակէին ծովեզերեայ բնաշիջներու վրայ և կը թաղանթէին: Բայց իրենց զլխաւոր զբաղումն եղաւ առեւտուրը: Եւ Փիւնիկէն ունեցաւ իր փառաւոր վաճառականութիւնը, որ սպառնաւ նաբար զարգայալ երկար տարիներու ընթացքին:

Փիւնիկեցիներու կարաւանները կը համէին Ասորեստան, Բաբելոն, Պարսից ծոցի ափերը, Հնդկաստան, Հայաստան, Պոլսարա ևն.: Անոնք կ'երթային Սուրիա, Կիլիկիա և Փոքր Ասիա, Արաբիա և Եգիպտոս: Ասորեստանի, Բաբելոնի և Եգիպտոսի ժողովուրդներն ունէին արդէն ծաղկած արգիւնարերութիւն և արհեստներ, բայց շատ դանդաղ էին առեւտրական գործերու մէջ: Փիւնիկեցիներն օգտուեցան այդ հանգամանքէն և հանդիսացան փոխանակութեան միջնորդներ նոյն հարուստ երկիրներուն միջև:

Փիւնիկեցիներու առեւտրական գլխաւոր ասպարէզը ծովն ըլլալով, իրենց նաւերը կը պտտէին Միջերկրականի գրեթէ բոլոր ափերը և կղզիները. անոնք դուրս կուգային Մելիպտեան կամ Հերկուլէսեան նեղուցէն (Ծիպրալթար), կ'այցելէին Ափրիկէի արեւմտահիւսիսային ափերը, Բրիտանական կղզիները և, շատերու կարծիքով, նոյն իսկ Պալթիկ ծովը, ուրկէ կ'արտածէին

աթ: Հին պատմիչները կ'ըսեն նոյն իսկ թէ՛ Եգիպտոսի նեքաւով փարաւոնին հրամանով, Փիւնիկեցիները շրջեցան Ափրիկէի շուրջը:

Միջերկրականի ափերուն և կղզիներուն մէջ Փիւնիկեցիները կը հիմնէին առեւտրական հաստատութիւններ — ապրանքներու մեծ մթերանոցներ և վաճառատուներ, ծառայողներու և զինուած պահապաններու քաղմութիւն մը յատկացնելով անոնց: Այդ հաստատութիւնները յաճախ այնքան կ'ընդարձակուէին և բնակիչներն այնքան կը շատնային որ, կը կազմէին ճշմարիտ գաղութներ: Նախ կը հիմնուէին քաղաքներ, յետոյ այդ տեղի բնակիչները կը սփրէին շրջակայ հողերուն, կը հպատակեցնէին տեղացիները և կը դառնային խոշոր գաղթավայրեր և նոյն իսկ մեծ պետութիւններ: Այսպէս՝ գրեթէ ամբողջ Կիպրոս կղզին անոնցն էր. Միկիլիա, Սարաինիա և Պալէարեան կղզիներուն մէջ ունէին խոշոր գաղութներ. Բոալիոյ, Փրանսայի և Սպանիոյ հարաւակողմը նոյնպէս հիմնած էին գաղութներ: Ունէին գաղութներ Ափրիկէի արեւմտեան և հիւսիսային ափերը, որոնց մէջ նշանաւոր էր Կարթէգոնը, ինչպէս բարնք:

Իրր վաճառականներ, Փիւնիկեցիները միշտ կ'աշխատէին գաղտնի պահել իրենց նաւարկութեան ճամքաները և նպատակները: Այսպէս, երբ հաստատուեցան Կիպրոսի մէջ, թոյլ չէին տար որ Յոյներն ալ նաւահանգիստներ հաստատեն կամ օտար վաճառականներ զամաք ելլեն: Անոնք լուրեր կը տարածէին թէ Մէլիպրտեան նեղուցներէն անդին ծովը չափազանց թանձր է, տիզմի նման, այնպէս որ ոչ մէկ նաւ չի կրնար յառաջանալ. թէ անդունդ մը կայ և այլն: Յաճախ նոյն իսկ այդ ճարպիկ ծովագնացները, նկատելով իրենց և

տեւէն եկող Ծառի նաւերը, դիւմամբ ճամբան կը փոխէին, և մրցակիցներու նաւերը կամ ծանծաղուաներու վրայ կը նստեցնէին և կամ խուժերու և ժայռերու զարնել տայով, ջարդ ու փշուր կ'ընէին:

Ծովագնացութեան ժամանակ կ'օգտուէին բեւեռային աստղով, որ բազդատարար անշարժ է: Անով կ'որոշէին իրենց ուղղութիւնը: Յոյներն այդ աստղը կոչեցին Փիւնիկեան աստղ:




Այր

Կին

Փիւնիկեցիներ

Բոլոր երկիրներէն Փիւնիկէ թափող հում նիւթերն ու ապրանքները առիթ եղան երկրի արդիւնաբերութեան գարդացման: Փիւնիկէի բրդեղէնը և ուրիշ դործածածքները, մետաղները և մետաղէ շինուածքները,

ներկերը, մանաւանդ որդան կարմիրը, ատաղձները հռչակաւոր էին այն ժամանակի բոլոր լուսաւոր երկիրներուն մէջ: Փիւնիկեան աւերակներու ու գերեզմաններու մէջ գտնուած բազմաթիւ զարդերն, ամանները և ուրիշ իրերը կը ցուցնեն թէ ո՞րքան զարդացած էին այդ երկրին արհեստները:



Փիւնիկեան արուեստի նմուշներ

Աշխարհէ աշխարհ թափառելով և մշտապէս առևտուրի մէջ ըլլալով, Փիւնիկեցիները դարձան փորձ, խորամանկ, ազան և շահամոլ վաճառականներ: Շահը և հարստութիւնն էին որ կը մղէին զիրենք յանձն առ-

նել ծովագնացութեան բոլոր վտանգները: Հոմերոսի «Ողիասական»ին մէջ Փիւնիկեցիներ կը նկարագրուին շափագանց մութ գոյներով:

Սկիզբները Փիւնիկեցիները կը պաշտէին բնութեան երեւոյթները, ծառեր, քարեր և ուրիշ կուռքեր, ինչպէս միւս սեմական ժողովուրդները: Յետոյ անոնց կրօնը զարգացաւ, ինչպէս Ասորա-բաբելական և եգիպտական կրօններու ազդեցութեան տակ. բայց մինչև վերջն ալ սկզբնական կուսապաշտութիւնը խոշոր հետքեր ձգեց իրենց կրօնին մէջ:

Փիւնիկեան կրօնը

Ըլլալով վաճառական և օրուան գործնական հարցերով կլանուած ժողովուրդ, Փիւնիկեցիները շատ չէին զբաղւել կրօնով, աստուածներով, անոնց ցեղագրութիւնով ու յարաբերութիւններով, աշխարհի սահլճագործութեամբ, հողի անմահութեամբ կամ հանդերձեալ կեանքով: Անոնց իւրաքանչիւր քաղաքն ունէր իր սեփական Բաաղը (Տէր) և Բաաղարը (Տիրուհին): Իրարմէ զանազանելու համար, կ'ըսէին Սիւրնի Բաաղ կամ Արալի Բաաղ և այլն: Տիրոսի Բաաղը շունէր սեփականան անուն. այլ կը կոչուէր Մեղիարս կամ «Բաղասի թագաւոր» և սկիզբները կը պաշտուէր միայն Տիրոսի մէջ: Բայց Տիրոսը երկար ժամանակ Փիւնիկէի ամենազօրեղ և հարուստ քաղաքն ըլլալով, Մեղիարսը դարձաւ բոլորին համար պաշտելի: Զայն կը ներկայացնէին թեւաւոր ձիու վրաք նստած, յանդուզն ու քաջ ծովագնաց մը, որ հիմնած էր բազմաթիւ գաղութներ, ջարդած էր բազմաթիւ հրէշներ ու գաղաններ: Առաջ արեւի աստուած էր, յետոյ դարձաւ ծովերու աստուած:

Աստուածները

Բոլոր քաղաքներու մէջ գլխաւոր աստուածն արաւկան էր - Բաաղը. բայց կային քաղաքներ, ուր առաջնութիւն տուին իգական աստուան, Բաաղաթին, կու-



Բաաղ աստուած (Գանուած կիպրոսի մէջ)

չելով զայն, ասորական Իշտարի անունով, Աշտարէթ կամ Աստարէ: Բաաղը մնաց իրր երկնքի, անձրեւի, փոթորիկի աստուած, իսկ Աստարաէն՝ երկրի. երկուքն ալ պաղաքներութեան աստուածներ էին:

Փիւնիկեան տեղի նոր դրամներու վրայ կը տեսնենք զանազան ծովային աստուածներ, ձեռքերնին՝ երեքմանի բռնած և կանգնած ծովային զլիխներու վրայ:



Փիւնի կեան աստուածուհի

բէռուք, եղան կոտոջները ու արեւը:

Փիւնիկեցիները եգիպտոսէն փոխ առին նաև կենդանապաշտութիւնը: Անոնք այլ սկսան պաշտել Ապիսը և ուրիշ կենդանիներ, միամամանակ փոխ առին և ա-

Եգիպտոցիներու սողեցութեան տակ, անոնք պաշտել սկսան նաև Օզիրիսը, Թօզը և այլն, սկսան իրենց աստուածները ներկայացնել ոչխարի գլխով (ինչպէս Եգիպտոսիան Արնու մն էր) կամ եղան կոտոջով (ինչպէս Թօսար) և Ուրէտուս օձով (ինչպէս Իսիտան): Այսպէս, կիպրոսի մէջ զանաւոր է Բասազ մը՝ ոչխարի գլխով և ձերանի մօրու քով, իսկ աստուածուհի մը ներկայացուած էր կնոջ գլխով ու մարմնով. գլխուն ձեւն ու սանտրուածքը բոլորովին Ասորա-բարբելական է, իսկ զլուխը դրուած է եգիպտական Ու-

սորա-բարբելական շատ աստուածներ: Սակայն այդ բոլոր փոխառութիւնները չմշակեցին և ամբողջացած կրօն մը չկազմեցին, այլ իրար խառնեցին ամէն տեսակ աստուածներ և կրօնական աւանդութիւններ:

Երկար ժամանակ Փիւնիկեցիները չունէին կուռքեր ու աստուածներու պատկերներ, այլ անոնց տեղ կը պաշտէին քարէ կամ ուրիշ նիւթէ շինուած պարզ մարմին մը: Այդ աստարկային կուտային Պերիզ կամ «աստուծոյ տուն» անունը: Անոր մէջ էր ամփոփուած աստուածը: Պէթիլը՝ որ յաճախ կ'ըլլար կոնածու, կը զրնէին մէջտեղը, պատուանդանի մը վրայ և կը պաշտէին:

Յետոյ սկսան շինել աստուածները՝ մարդու կերպարանքով. բայց իբր զեգարուստական արտադրութիւններ, այդ արձանները արժէք չունին, որովհետև շատ անշնորհն և միայն պարզ հետեւողութիւն բարբելական կամ եգիպտական արուեստի:

Փիւնիկէի առաջին մենեանները շատ պարզ են և հասարակ, - քառանկիւն, պարսպապատ բակ մը, չուրջը սիւներ և մէջտեղը դրուած կուռք մը կամ Պէթէլ մը, ինչ որ կը մատնէ եգիպտական մենեանի պարզ և



Պերիզ կամ «աստուծոյ տուն»

անշնորհ ձևը: Իսկ Տիւրոսի
զարգացած և հարուստ շրջանի
մենեանները բաւական փառա-
ւոր էին և նման յունական մենեաններուն:

ՄԵԼԵԿԱՆՆԵՐ

Փիւնիկեցիները Եգիպտացիներէն փոխ առին նաև
գերեզմաններ կամ բուրգեր շինելու սովորութիւնը:

Միայն թէ, իբրև գործնական
մարդիկ, բուրգերը կը շինէին
փոքր, հիմը՝ խորանարդածև և

ՊԵՐԵԳՄԱՆՆԵՐ

վերևը միայն բրդածև: Այդ բուրգերը կը նմանէին
գերեզմանական մեծ քարերու: Իսկ անոնց մէջ քարէ
մահարձաններու կամ գեանագամբաններ, որոնց մէջ կը
տեղաւորէին ննջեցեալները, — կը շինէին փոքր, ճիշդ
մարդու չափով, որպէսզի աւելորդ ծախսեր չըլլան: Մե-
ռիկներու մարմինները չէին զմուտք, որովհետև հողի
անմահութեան մասին որոշ գաղափար չունէին:

Փիւնիկեցիները խիստ կրօնասէր մարդիկ էին: Ծո-
վագնացութիւնն իր բազմաթիւ փորձանքներով կը
ստիպէր զանոնք միշտ զիմել

ԿՐՈՆԻ ԲՆԱՅՐԸ

աստուածներուն: Անոնց աստ-
ուածները չունէին ասորական
կամ եգիպտական աստուած-
ներուն վեհութիւնը, այլ աւելի բազմ կամ յաճողու-
թիւն, ձախողանք կամ կործանում բերող էակներ էին:
Անոնց կրօնին մէջ չկար բարոյական որևէ սկզբունք-
ամէն բան հիմնուած էր առեւտուրի գանձիկ սկզբուն-
քին վրայ: Անոնց աստուածները կը ներկայացնէին իբ-
րև գաժան և արիւնարբու էակներ զորս պէտք էր սի-
րաշահիլ մշտական զոհերով: Կային որոշուած սակագ-
ներ, — թէ որքան պէտք է վճարել, որպէսզի այսինչ
աստուածը կատարէ այնինչ խնդիրը, կամ ինչ պէտք

է զոհարել, իբր շնորհակալութիւն տառնու ըրած այս-
կամ այն շնորհի համար: Բան մը խնդրելու համար
նշանակուած զոհարելութիւնն աւելի մեծ էր, քան որևէ
շնորհի փոխարէն զոհարանու թիւն մատուցանելու զինը:



Մալոս

Ձոհ կը բերէին կենդանիներ, զանազան նիւթեր, և
նոյն իսկ մարդիկ: Մարդոց զոհարելութիւն կը պա-
հանջէր հոչակաւոր Մողոթ աստ-

ՁՈՒՆ

ուածը, որուն զխառ որ մենեանը
կը զանուէր Կարքեղոնի մէջ:
Մենեանին առջև դրուած էր
անոր պրօնդէ վիթխարի արձանը՝ եզան գլուխով, երկու
ձեռքերն առաջ երկարած: Արձանի ներսը կ'արծարծէին
բոցակէզ կրակ, իբր նշան արեւի կիզիչ զօրութեան, իսկ

խոստացուած մարդկային զօնը կը դնէին լափող աստուածին երկարած բազուկներուն վրայ, ուրկէ կ'իյնար. ներսը բորբոքող հնոցին մէջ:

Մարդկային զօներ կ'ընէին հանրային արտակարգ աղէտներու ժամանակ: Զոն կը բերէին երբեմն նոյնիսկ տան առաջին զաւակը կամ սիրտկան անդամը, որպէսզի մեղմացնեն մոլեղնած աստուածին սիրտը: Զոնին ծընողներն ու բարեկամները պարտաւոր էին ոչ թէ լալ ու ողբայ, այլ աղօթել, ուրախանալ ու պարել:

Քուրմերու դասակարգը խիստ մեծ էր և զօրեղ՝ Փիւնիկէի մէջ: Թագաւորէն յետոյ ամէնէն ազդեցիկ մարդը քրմապետն էր:

Քուրմերու հազուսանները եզիպտական էին, պաշտամունքի ձևերը և ծէսերը՝ ասորեստանեան: Բարձր սկզբունքներու բացակայութիւնը կը ծածկուէր ծիսակատարութեան շքեղութեամբ, մեհեանի զարդերով, քուրմերու և քրմուհիներու բազմութեամբ և հանդէսներով: Կրօնական ծէսերը կատարելու ժամանակ քուրմերը կը նուազէին թէ թելաւոր և թէ փչելու գործիքներ. թմբուկ ալ կը զարնէին: Ծիսակատարութեան մասնակցողներն այնպէս կ'ոգեւորուէին, որ կը սկսէին ճանկուտել իրենց մարմինը, արիւն հանել, իրենք զիրենք հարուածել ու վիրաւորել, ինչպէս այսօր կ'ընեն պարսիկ շիա մահմէտականները՝ Մուհարէմի տօնին:

Մեհեաններու մէջ զոհարերութիւնները կը կատարուէին կամ արեւի ծագման կամ մայր մանկու պահուն: Զոհարերութեան ժամանակ կ'երգէին, կը նուագէին և խնկարկութիւն կը կատարէին:

Եզիպտոսն ու Միջագետքը շատոնց զիր ու դրգ-

Քուրմեր

քուրմիւն ունէին, բայց սնունց գրուածն է՝ ձկն, ինչպէս գիտենք, չափազանց բարդ էր: Փիւնիկեցիները, իբրև գործնական մարդիկ, առին ասորական բեւեռագիրները և սնունցմով կազմեցին իրենց այբուբէնը, բազկացած միայն 22 բաղաձայն տառերէ: Իւրաքանչիւր նշան ունէր միայն մէկ ձայն, և այդ ձայներէն կամ տառերէն կը կազմէին կամ կը գրէին բառեր: Դիւրութեան և կարճութեան համար, սնունք չէին գրեր ձայնաւոր տառերը, այլ միայն բաղաձայնները կը դնէին:

Փիւնիկեացի տառեր

Փիւնիկեան այբուբէնն անցաւ Յունաստան: Յոյները փոփոխութիւններ և բարելաւումներ մտցուցին անոր մէջ և ստեղծեցին իրենց տառերը: Այնտեղէն ալ տառերն անցան Հռոմ և ասորածուեցան բովանդակ Եւրոպայի մէջ:

Փիւնիկեցիները ասոր մէջ ալ ինքնուրոյն առաւելութիւն մը չունէին: Անոնք արտայայտուեցան, դարձեալ, իբրև գործնական մարդիկ, արդէն հնարուած բարեփոխելով և կեանքի պահանջներուն յարմարեցնելով: Ամէն պարագայի մէջ, այբուբէնի դիւար նոր դարագլուխ մը կազմեց մարդկային պատմութեան մէջ, բանալով գրաւոր պատմութեան շրջանը:

Արուեստներու մէջ ալ Փիւնիկեցիները նոր բան չեն ստեղծած, այլ եղած են Եզիպտոցիներու և Միջագետցիներու հաւասարիմ ընդօրինակողները: Մեհեանները, պալատները, նոյն փակ զերեզմանները միշտ կը շինէին խառն ոճով մը, որու մէջ չկար ոչ մէկ ամբողջութիւն: Կ'առնէին, օրինակ, եզիպտական լուսասի քանդակը, կամ թեւաւոր արիւր, և անոր հետ կը միացնէին ասորական մարդարտածա-

Արուեստներ և Փիւնիկէի մէջ

զիկը, կամ թեւաւոր արևի գլխուն կը տեղաւորէին ասորական տախտը: Շէնքերու մէջ ասրիօրէն կը պահէին ասորական ատամնաւոր պարիսպները, որ արտայայտութիւն էր Ասորեստանի ռազմական ոգին, թէև քրենք երբէք ռազմիկ ժողովուրդ չեն եղած:

Մնացած են փիւնիկեան սիւնադրոյիներ, որոնց վրայ պարզ կը տեսնուի եգիպտական թեւաւոր արեւը, իսկ անոր գլխուն ասորական դոյզ տախտի ծները. բայց թէ մէկ և թէ միւս ուղղէն փոխ տանուածներն ալ իրենց իսկական քանդակներէն շատ աւելի կոպիտ ու գռեհիկ են:

Յաճախ կը տեսնուին փիւնիկեան անօթներ, որոնց յատակի նկարներու միջին շրջանակն ամբողջովին եգիպտական է, իսկ շրջանակները՝ ասորական են նաև (Տես 183 երեսի նկարը):

Հետաքրքրական են նաև փիւնիկեան սփինքները: Անոնք ունին կանաչի դէմք և թեւեր, իսկ գլխազարդերը խառնուրդ են բարեբախտի և եգիպտականի:

Այդ ընդօրինակման և արուեստներու ստորացման երեւոյթը շատ բնական է: Փիւնիկեցիները, իբրև առեւտրականներ, ժամանակ չունէին երկար խորասուզուելու փիլիսոփայութեան, գիտութիւններու և գեղարուեստի մէջ: Անոնց համար ամէն բան առեւտուրի նիւթ էր: Անոնք իբր օրինակ կ'առնէին ասորական և եգիպտական արուեստները, կը շինէին մետաղէ, փայտէ կամ քարէ իջեր, քիչ շատ համաձայն իսկականին: Այդ առարկաները շինած ատեն, փիւնիկեցի վարպետն ու վաճառականը կը մտածէին որ պիտի ծախեն, օրինակ, Ափրիկէի վայրենիներուն, Յունաստանի կամ Իտալիոյ բարբարոսներուն. ու ատոր համեմատ ալ կը ստորնացնէին ճաշակաւոր գործերը: Ինչո՞ւ մտածել նրբութեան ու ճաշակի մասին, երբ գնորդը կոպիտ, գռեհիկ էակ է:

Եթէ Փիւնիկեցիներն աւելի երկար դարեր անկախ ու ինքնավար կեանք ունենային, շատ կարելի է որ անոնք ալ ստեղծէին իրենց ինքնուրոյն արուեստները: Բայց անոնց դերը դարձեալ փոքր չէ համաշխարհային պատմութեան մէջ: Անոնք էին որ Ասորեստանի և Եգիպտոսի բաւական ծաղկած քաղաքակրթութիւնը տարածեցին ամբողջ Միջերկրականի աւազանին մէջ:

Սխալ է այն կարծիքը, թէ Փիւնիկեցիներն են գտած ապակի պատրաստելու միջոցը: Այժմ արդէն ծանօթ է, որ Եգիպտոսի մէջ ապակին աւելի կանուխ յայտնի էր: Առ հասարակ աւանդութիւնը շատ բան կը վերագրէ Փիւնիկեցիներուն, բայց նոր ու գիտական պատմութիւնն այսօր կամ կը հերքէ այդ աւանդութիւնները, կամ բաւարար նիւթ չի գտներ զանոնք հաստատելու:

4. ՀՐԷԱՍՏԱՆ

Հրէաստանը կամ Պաղեստինը (Սուրբ-Երկիրը) կը գտնուի Միջերկրականի հարաւային-արեւելեան ափերուն վրայ: Հիւսիսային դրացին էր Փիւնիկէն, իսկ հարաւէն սահմանակից էր Եգիպտոսը. արեւելքէն մասամբ չրջապատուած էր արաբական անապատով, մասամբ ալ հին Ասորիքով: Առաջ կը կոչուէր Բաւնա:

Երկիրը եւ ժողովուրդները

Այս երկիրը կը բաժնուէր երկու մասի - արեւելեան եւ արեւմտեան, սահման ունենալով Յորդանան գետը եւ Մեռեալ ծովը: Պաղեստինը կազմուած է բազմաթիւ բլուրներէ ու լեռներէ, որոնք երբեմն ծածկուած էին անառններով: Լեռները հարուստ են կիրճերով եւ հովիտներով: Իսկ հարաւ - արեւելեան մասը լերկ դաշտավայր մըն է, որ կ'երթայ խառնուելու արաբական մեծ անապատին: Կլիման ամառները խիստ տաք է, ձմեռը տեղ-տեղ շատ մեղմ, մանաւանդ ծովափերը:

Յորդանանը չի ծառայեր այս երկրին այնպէս՝ ինչպէս Նեղոսը Եգիպտոսին, Եփրատն ու Տիգրիսը՝ Միջագետքին և այլն: Անոր հունը խոր է և խիստ քարուտ. Նուրը սրբնթաց է և անյարմար կանոնաւոր հաղորդակցութեան: Այդ գետը երբեք չի յորդիր և չի պարարտացներ երկիրը, ինչպէս նախորդ մեծ գետերը:

Երկրի և կլիմայի այս յատկութիւնները ազդած են նաև անոր հին բնակիչներուն վրայ: Պատմական դեռ շատ հին շրջաններու մէջ, մենք կը գտնենք այդ երկիրը բռնուած սեւակրակ ժողովուրդներով, որոնք զուրս մղած են նախկին բնակիչները - Բաւնեանները:

Սակայն այս սեմական ցեղը հոս չմիացաւ և մէկ ազգ չկազմեց, ինչպէս ուրիշ վայրերու մէջ. այլ բաժնուած մնաց մանր ցեղերու, որոնք ստացան առանձնայատուկ յատկանիշ, համաձայն իրենց բնակած շրջաններու երկրային և կլիմայական յատկութիւններու:

Լեզուով և մշակոյթով Հրէաներուն ամէնէն աւելի մօտ էին Մօաբեանները, որ կը բնակէին Մեռեալ ծովին և Արարիոյ անապատին միջև: Հրէաներու հարաւային դրացիներն էին Էդոմացիները - հարուստ և հզօր ցեղ մը, որ կարաւանով մեծ առեւտուր ունէր Պաղեստինի, Սուրիոյ և Փիւնիկէի հետ: Հիւսիսի դրացիներն էին Ամոնացիները: Այս երեք ժողովուրդներէն զատ, Յօրդանանի ձախ ափին վրայ տարածուած էին բազմաթիւ մանր ցեղեր, որոնք Ս. Գրքին մէջ յայտնի են Ամորեան անունով: Ասոնք ժամանակի ընթացքին ամբողջապէս ձուլուեցան Հրէաներուն հետ:

Յորդանանի աջ ափը ամբողջապէս գրաւուած էր Հրէաներով, որոնք բաժնուած էին 12 ցեղերու: Հրէաներուն չէր պատկաներ միայն ծովեզերեայ նեղ երկրամասը, ուր կը բնակէին Հրէաներու կատաղի թշնամիները - ռազմասէր և ձեռներէց Փղշացիները: Այս ցեղը սեմական ծագում չուներ: Վերջապէս, Պաղեստինէն դէպի հիւսիս, Լիբանանի և Անդրլիբանանեան լեռներու վրայ կը տարածուէին Բեւացիները կամ Հիթիթները, որոնց մայրաքաղաքն էր երբեմն ծաղկած Կարխիսիշը, Եփրատի ափը, Իսկէնտէրունի ծոցին զիմացը: Ասոնք ալ սեմական ծագում չուներին:

Ս. Գրքի պատմութեան համաձայն, Աբրահամ Բաղդէայի Ուր քաղաքէն զաղթած և եկած է Բաւնա

երկիրը (Աւետեաց Երկիր) Գրիստոսէ մօտաւորապէս 2000 տարի առաջ: Անոր ցեղը տեղական բնակիչներէն ստացաւ Հրեա (Hibrim) անունը, որ կը նշանակէ միւս կողմէն ելած: Այդ օրէն Բանանու հին երկիրը եղաւ Հրէաներու հայրենիքը:

Ծագումը

Ուրեմն՝ Հրէան զաղթական ժողովուրդ մըն էր, որ եկած էր Միջագետքէն և Միջերկրականի ափերը բնակութիւն հաստատած: Հոս Հրէաները կը վարէին թափառական կեանք մը, շրջապատուած աւելի զարգացած քանանացի հին ժողովուրդներով: Անոնք նման էին սեմական շատ մը ցեղերու. — խաչնարած էին, դեռ չէին զիտեր հողը մշակել, տուներ չունէին. եղներու, կովերու, ոչխարներու և ուղտերու հօտերը իրենց սուղեր ձգած, անոնք կը թափառէին տեղէնեղ, արօտավայրեր կ'որոնէին, բնակելով վրաններու տակ: Այսօր ալ արաբական անապատին մէջ շատ մը ցեղեր այդ տեսակ կեանք կ'անցնեն:

Ինչպէս բոլոր բարբարոս ժողովուրդները, հրէական ցեղերն ալ կ'ապրէին տնտեսական կազմով: Յեզը կազմուած էր առանձին տոհմերէ: Տոհմերէն ո և է մէկը ազգեցութիւն կը ստանար և կը դառնար ամբողջ ցեղին գլխաւորը. անոր տոհմապետը կը կոչուէր ցեղի Նահապետը կամ Պատրիարքը (Սախէմ): Թէ այս ցեղապետը և թէ միւս տոհմապետները ունէին իրենց կիները, զաւակները ու ժառանգը: Յեզապետը և՛ հայր էր, և՛ քահանայ, և՛ դատաւոր, և՛ թագաւոր: Անոր հեղինակութիւնը և իշխանութիւնը անսահման էր: Բոլորը կը յարգէին զայն և կը հնազանդէին անոր: Այդ տեսակ աւանդական նահապետներ կը համարուին Արրահամը, Թասակը և Յակոբը:

Աւանդական պատմութիւնը կ'ըսէ թէ Արրահամ իր Աստուծոն - Եհովայի կամ Եահվիի հետ յախօնական զաշն կնքեց. ինքը և իր սերունդը անխախտ պիտի պաշտէին երկնքի և երկրի միակ տէրը, իսկ Բարձրեալն Աստուած կը խոստանար աճեցնել և բազմացնել Արրահամի սերունդը աւելի քան երկնքի աստղերը և կամ աւազն «առ օրն ծովու»: Յակոբը, որ կոչուեցաւ Իսրայիլ (Աստու զէմ մարանչող), Եհովայէն խոստում առաւ որ իրմէ պիտի սերի մեծ ազգ մը:

Յակոբի կամ Իսրայիլի անունէն Հրէաները կոչուեցան, Պէնի-Իսրայէլ այսինքն Իսրայիլի որդիներ, իսկ մենք կը կոչենք Իսրայելացիներ կամ Հրէաներ:

Հին-Կտակարանը կ'ըսէ որ Յակոբ իր 12 զաւակներով, կիներով և ծառաներով, մասնուեցաւ սովի և ստիպուած եղաւ գաղթել Եգիպտոս: Հոն իր կրօնը որդին-Յովսէփ Գեղեցիկը մեծ ազգեցութիւն ձեռք բերած էր Փարաւոնի արքունիքի մէջ, նախարար դառնալով: Անոր շնորհիւ Իսրայելացիները բնակութեան տեղ ստացան Սուէզի պարանոցի մօտերը, Հեռահմ կոչուած նահանգին մէջ: Բարեբեր հողը, 17րդ և 17րդ փարաւոններու Տուներուն պաշտպանութիւնը և հանգիստ կեանքը 430 տարուան մէջ նպաստեցին Հրէաներու բազմանալուն. 70 հոգիով եկած այդ տոհմը Եգիպտոսէն մեկնած ատեն ունէր 600,000 զինուած այր մարդ, չհաշուելով կիներն ու երեխաները:

Արեւազաղիր

Փարաւոններու 19րդ Տունը կը փոխէ իր քաղաքականութիւնը Հրէաներուն հանդէպ: Երեւի փարաւոնները կը սկսին վախճալ Հրէաներու յարածուէն թիւէն ու զօրութենէն: Եւ անա սկսաւ հալածանքի և

գերութեան շրջան մը: Փարաւոնները բռնութեամբ կ'աշխատեցնէին Հրէաները, բուրգեր ու քաղաքներ կառուցանեցու և ուրիշ ծանր գործերու: Այդ ատեն տառապող հրեայ ժողովուրդին գլուխ կը կանգնի Մովսէս, եգիպտական

Մովսէս



Մովսէս (Միքէլ Անճէլօի)

գիտութեամբ և իմաստութեամբ օժտուած Հրէա մը: Ան կ'առաջնորդէ Հրէաները եգիպտոսէ դուրս, Սուէզի պարանոցէն դէպի Սինայի թերակղզիին հիւսիսակողմի անապատները: Սինա լեռան վրայ Մովսէս Ենովայէն կը ստանայ իր Տաւր պատիւանները, հրէական այդ առաջին օրէնքները: Հրէաները քառասուն տարի կը

թափառին անապատին մէջ և միայն Մովսէսի մահէն յետոյ կը յաջողին մտնել Աւետեաց Երկիրը^(*):

Անապատներու մէջ թափառելը Հրէաներուն սորվեցուց կռուելու արհեստը: Անոնք մտան Քանանու երկիրը և աստիճանաբար դուրս մղեցին Մեռեալ ծովէն մինչև Գէնեսարէթի լիճը բնակող մանր ցեղերը ու բռնեցին Յորդանանի երկու ափերն ալ: Հոս հաստատուեցան Հրէաներու 12 ցեղերը իրենց ցեղապետներու կառավարութեան տակ, հիմնելով գիւղեր ու քաղաքներ և սկսան զբաղիլ երկրագործութիւնով և արհեստներով, որոնց վարժուած էին եգիպտոսի մէջ:

Այնտեղ երեք դար շարունակ Հրէաները կուր մղեցին Քանանու երկրի միւս մանր - մունր ժողովուրդներուն դէմ, մինչև որ կրցան վերջնականապէս փրել Պաղեստինի: Այս երեք դարերու միջոցին Հրէաները կ'ապրէին տուժածական կազմով. չէին հասած դեռ ազգային միութեան

Պատարուներ

(*) Մինչև այսօր կարելի չէ եղած եգիպտական անհամար արձանագրութիւններու և ուրիշ պատմական յիշատակարաններու մէջ գտնել ո և է յիշատակութիւն թէ Հրէաները գաղթած են եգիպտոս և ա՛յդչափ դարեր պարած: Ատկէ զատ, հրէական լեզուի, սովորութիւններու, կրօնի և օրէնքներու մէջ ալ ոչ մէկ հետք կայ եգիպտական ազդեցութեան: Հրէաները գիրը սորված են ոչ թէ Եգիպտացիներէ, այլ Սուրիացիներէ. անոնց օրէնքներու մէջ պարզ կ'երևայ քաղդէական ազդեցութիւնը: Անոնց անունը (Hibrim, Եկուր), նոյնպէս նշան կը համարուի ոչ թէ եգիպտոսէն, այլ արեւելքէն եկած ըլլալու: Այս ամէնը տեղի տուին որ քանի մը գիտնականներ կասկած յայտնին թէ արդեօք Հրէաները եղած են եգիպտոս, և մանաւանդ ա՛յդչափ երկար ժամանակ պարած են հոն:

գաղափարին: Երբեմն, երբ 12 ցեղերը խիստ նեղը կը մնային, առաջ կուգային կտրիճ և խելացի անձեր, որոնք կ'անցնէին Հրէաներու գլուխը, կը միացնէին ցրուած ցեղերը, մեծ ուժ մը կը կազմէին և կը հալածէին Իսրայէլի թշնամիները: Ժողովուրդը այդ քաջ մարդիկը կ'անուանէր Դասառներ (Zofim): Ասոնցմէ նշանաւոր են Գեղէոնը (Մանասէի ցեղէն), Սամսոնը և ուրիշներ:

Հրեայ ժողովուրդը այդ ցրուած վիճակին մէջ սկիզբները մէկ կապ միայն ունէր—Նճովայի կրօնը և այդ կրօնի ծառայող քահանայական ցեղը, Ղեւսացիները, որոնց թիւը Քանանու երկիր մտած ժամանակ, կը հաշուէին 23,000 հոգի (միայն այր): Ասոնք կ'ապրէին միւս բոլոր ցեղերու մէջ ցրուած և կը կազմէին կրօնական դասը: Ղեւսացիներու գլուխը կանգնած էր քահանայակալը:

Բազմաթիւ մեծ և պզտիկ թշնամիները և անոնց դէմ մղուած երկար կռիւնները ստիպեցին Հրէաները աստիճանաբար միանալ, մէկ ազգ կազմել: Երբ Գեղէոն հալածեց Ամազեկացիները և ժողովուրդը զայն անուանեց Դասառ, արդէն Հրէաներու ազգային միութիւնը բաւական ամրացաւ (ժ.Ա. դար): Անոր իշխանութիւնը անցաւ զաւկին, — Աբամելիքին: Բայց հրէական հին ազնուակալութիւնը չուզեց զայն ճանչնալ իբրև թագաւոր, թէ. Աբամելիք կը պնդէր թէ «իմ հայրս թագաւոր էր»: Թափօր բերդը պաշարած ատեն, Աբամելիք մեռաւ և Իսրայէլի առաջին միութիւնը կրկին լուծուեցաւ: Ժողովուրդը նորէն մնաց քահանաներու և տոհմական ազնուականութեան ձեռքը:

Ժ.Ա. դարու վերջերը, Փղշտացիները մեծապէս զօ-

րացան և գրաւեցին հրեայ ցեղերու երկիրները, հասան նոյնիսկ անոնց լեռնային վայրերը: Այդ ընդհանուր մեծ վտանգին առջև ժողովուրդը զգաց միութեան պէտքը և Սամուէլ քահանայակալէն պահանջեց կտրիճ զօրավար Սաւուղը (Բենիամինի ցեղէն) թագաւոր օծել: Սամուէլ, հակառակ իր կամքին, ստիպուեցաւ համակերպիլ ժողովուրդի բաղձանքին (չուրջ 1000 թ.):

Սաւուղ եղաւ առաջին թագաւորը: Ան յաղթեց Անապատի ժողովուրդներուն, ստիպեց Քանանու երկրի մէկ քանի մանր ժողովուրդները հեռանալ հրէական շրջաններէն:


Այդքան դորձեր կատարելէ, փառք վաստակելէ յետոյ, Սաւուղ ուղեց աղափիլ քահանայակալին և հողեւորականութեան լուծէն: Սամուէլ նկատելով անոր այդ ձգտումը, իսկոյն թագաւոր օծեց ուրիշ կտրիճ զօրական մը, Սաւուղի սիրելին, — Դաւիթ Պէնի Իսայի (Յուդայի ցեղէն):

Դաւիթ՝ վախնալով Սաւուղի վրէժէն, մտաւ Փղշտացիներու հովանաւորութեան տակ: Փղշտացիները երբ տեսան Հրէաներու այս բաժանումը, մեծ զօրքով քայլեցին Սաւուղի վրայ, յաղթեցին և կռուի մէջ սպաննեցին Սաւուղն ու իր սրդին (930 թ.): Այսպէս կանգուն մնաց Յուդայի թագաւորութիւնը, թէև Դաւիթ ընդունած էր Փղշտացիներու գերիշխանութիւնը:

Դաւիթ չուտով դարձաւ բոլոր Հրէաներու թագաւոր (985ին): Քանի մը ճակատամարտերով խորտակեց Փղշտացիներու ուժը, տիրեց թէ՛ անոնց երկրին, թէ՛ Դամասկոսի ու Ասորիքի: Հասաւ մինչև Պարսից ծով, Սին-կեպեր նաւահանգիստը, նաև Սինա լեռը և Երուսաղէմ, ուր և հաստատեց իր աթոռը: Այսպէս կազմուեցաւ հրէական ընդարձակ և հզօր պետութիւնը, որ

կը տարածուէր Եփրատէն մինչև Միջերկրական, Պարսից ծոցէն մինչև Լիբանանի և Անդրլիբանանի լեռները :

Սակայն Դաւիթ ապագայ սերունդներու մէջ մեծ հռչակ ստացաւ ոչ այնքան իր ռազմական և պետական գործունէութեամբ, որքան իր Սաղմոսներով, որոնք սահմանուած էին մեծ ու հզօր Ենովային փառքը երգելու : Դաւիթ մեռաւ 955ին :



Սողոմոնի երկրօրդ բաճար (վերահորզուած)
(Շինուած է 46 տարիէն, ունէր երեք խորան, միայն քահանաները կրնային մտնել երրորդ խորանը)

Հրէաները իրենց պետական կեանքի գաղաթնակէտին հասան Դաւիթի որդի Սողոմոնի օրով (955-925) : Սողոմոն հիմնեց հրէական մնայուն բանակը, որ կազմուած էր 20,000 զինուորէ : Անոր սահմանները ամէն կողմէ ապահով էին . թշնամիները սաստիկ կը վախճային անկէ : Սողոմոն եռանդուն մասնակցութիւն ունեցաւ Փիւնիկեցիներու ծովային առեւտուրին : Թէ առկէ

և թէ ժողովուրդի վրայ դրուած խիստ ծանր հարկերէն՝ ահագին գանձ զիջուեցաւ Երուսաղէմի մէջ : Սողոմոն ամէն կերպով կը հետեւէր Բաբելոնի և Նինուէի կենցաղին : Շինել տուաւ իր փառաւոր պալատը և մանաւանդ հռչակաւոր հրէական տաճարը (Սողոմոնի Տաճարը) : Ասոնց համար զլիսաւոր ճարտարապետները բերել տուաւ ծաղկած Տիրուէն :

Սողոմոնի օրով Հրէաները առեւտրական բանուկ յարաբերութեան մէջ էին Միջագետքի, Սուրիոյ և Եգիպտոսի զլիսաւոր կեդրոններուն հետ :

Թագաւորին անձնական արժանիքները, անոր խնամքով մեծ համբաւ հանեցին զբացի ազգերու մէջ : Հրէաները երբէք չէին ունեցած և այլևս չունեցան այդքան փայլուն պետական կեանք մը : Սողոմոն յաճախ կը շեղէր Ենովայի կրօնէն և կը հետեւէր կռապաշտութեան :

Սակայն այդ բարեկական և նինուէական շքեղութիւնը և շապտութիւնը պատճառեղան հրէական թագաւորութեան կործանման : Ժողովուրդը, որուն մէջ դեռ չէին հիմնաւորուած արհեստները, ճարտարարուեստը և ընդարձակ առեւտուրը, չզիմացաւ Սողոմոնի ծանր հարկերուն : Այդքատութիւնն աճեցաւ, անոր հետ և դժգոհութիւնը : Սողոմոնի մահէն յետոյ, հրէական տասը ցեղեր բամբուկեցան և հիւսիսային մասին մէջ կազմեցին Իսրայելի քաղաւորութիւնը, որուն կեդրոնն եղաւ Սամարիան : Իսկ Յուդայի և Բենիյամինի ցեղերը հաւատարիմ մնացին Սողոմոնի որդի Ռոբովամին (925) և կազմեցին հարաւակողմը

Ռամսեսուս
և անկուս

Յուդայի քաղաքապետները, մայրաքաղաք ունենալով Երուսաղէմը: Իսրայէլի թագաւորութիւնը ընդունեց փրկչիկեան կուսակցութիւնը, իսկ Յուդայի թագաւորութիւնը հաւատարիմ մնաց Մովսիսականութեան:

Այդ պետութիւններուն մէջ առաջ եկան երկուորոշ հոսանքներ. մէկ հոսանքին ներկայացուցիչներն էին քաղաքականութենէ հասկցող պետական անձեր: Անոնք կ'ըսէին որ Հրէաները պէտք է միանան զրացի ժողովուրդներու հետ, որպէս զի ոյժ ունենան զիմազրելու Արեւելքէն եկող ասորեստանեան վտանգին: Այս կուսակցութեան մարդիկը շատ ալ ուշադրութիւն չէին ընել Ենոփայի հին կրօնի մաքուր պահպանմանը: Միւս հոսանքին զլուխ կ'անցնէին Մարգարեկները, որոնք ծայրայեղօրէն կրօնատէր մարդիկ էին: Անոնք առ հասարակ կը քաշուէին անապատ, իրենց օրերը կ'անցնէին ծով ու պահքով, երկրպագելով Ենփային: Երբ բաւական երկար կը տանջէին իրենք զիրենք, կուգային քաղաքները և կոչ կ'ընէին ժողովուրդին՝ որ դասնայ գէպի Ենփայի կրօնը: Անոնք կը քարոզէին թէ Հրէաներու գլխուն եկած բոյոս փորձանքները Ենփան կը զրկէ, որովհետեւ մենք հեռացած ենք անոր ճշմարիտ կրօնէն: Մէկ խօսքով, անոնք հակառակ էին ամէն տեսակ քաղաքական գործունէութեան և պարզապէս կը քարոզէին թէ Հրէաներու միակ փրկութիւնը Ենփայի կրօնին մէջ է:

Այդ երկու թագաւորութիւնները եղան իրարու մրցակից ու թշնամի, և թուլացան, դարձան զիւրիւն որսեր թշնամի մեծ ազգերու համար: Իսրայէլի թագաւորութիւնը հազիւ 200 տարի աննշան կեանք մը ունեցաւ. 722ին Սարկոն նուաճեց զայն և բնակիչները զերի տարաւ Ասորեստան, անոնց տեղ լեցնելով Աստ-

րեստանէն բերած զաղթականներ: Ատէք առաջ եկաւ Սառհարուցի խառնուրդ ժողովուրդը: Իսկ 136 տարի յետոյ, 586ին (Ք. ա.) Նոր-Բաբելական, թագաւոր Նարուզոդոնոսոր փրկեց Յուդայի երկրին, կործանեց Երուսաղէմը և Հրէաները զերի տարաւ Բաբելոն (Բաբելոնեան գերութիւն): Հրէաները հոն մնացին 70 տարի: Երբ



Հրէաները կարկ կը բանին Սաղմանասարի

պարսկական համաշխարհային Քիւսթրութեան հիմնադիր Պիւրոս զբաւեց Բաբելոնը, ազատ արձակեց Հրէաները և թոյլատրեց վերաշինել Սիոնը և Սողոմոնի քանդուած տաճարը: Սակայն այնուհետեւ այլ ևս Հրէաները անկախ քաղաքական կեանք չունեցան, այլ ինկան նախ Պարսիկներու, յետոյ Մակեդոնա-սելեւկեան և հռոմէական լուծի տակ: Անոնք աստիճանաբար հեռացան իրենց հայրենի երկրէն և ցիր ու ցան եղան ամբողջ աշխարհի մէջ, սկսած հին դարու վերջերէն: Այդ հալածական և տարագիր վիճակի մէջ կը մնան մինչև այսօր ալ: Միայն անոնց մէջ հինէն մնացած է կրօնական համոզում մը

թէ՛ Մեսիան պիտի գայ և պիտի փրկէ Հրէաները, վերահանգնելով իրենց պետութիւնը:

ՀՐԷԱՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս նախընթաց երեսներու մէջ տեսանք, Հրէաները չեն ունեցած խոշոր համաշխարհային պետութիւն մը, ինչպէս Եգիպտոսը, Ասորեստանը, Բաբելոնը և այլն: Անոնք չեն ունեցած նաև մշակուած գիտութիւն մը, ոչ ալ իրենց սեփական նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը: Այս ամէն ճիւղերու մէջ անոնք Փիւնիկեցիներու պէս միայն ընդօրինակող են եղած եգիպտական կամ ասորա-բաբելական արուեստի: Առեւտուրի և արհեստներու մէջ ալ հին Հրէաները ոչ մէկ մասնաւոր նշանակութիւն չեն ունեցած:

Հրէական քաղաքակրթութեան գլխաւոր գիծը

Սակայն Արրահամի աւանդական պատմութենէն սկսած մինչև հրէական պետութեան վերջնական անկումը, այսինքն 1500 տարի, անոնք եղած են մշտական յարաբերութեան մէջ ժամանակի բոլոր զարգացած երկիրներուն հետ: Այս բոլոր յարաբերութիւններուն մէջ հրէայ ժողովուրդը կրցաւ մշակել մէկ ինքնուրոյն գիծ մը — իր կրօնը, որով արժանացաւ ամբողջ մարդկութեան յարգանքին: Այսօր բոլոր քրիստոնեայ ազգերը Հրէաներու պատմութիւնը կ'անուանեն Մրբազան Պատմութիւն: Անոնց կրօնի հիմներուն վրայ ծլեցաւ ու զարգացաւ քրիստոնէական կրօնը: Անոր սկզբունքներէն շատերը իւրացուց Մահմէտ և կաղմեց իր կրօնը:

Հրէաներու ամբողջ գրականութիւնն ու կեանքը կեցուած է Մովսիսական կրօնով. Աստուած մէկ է — Ստեղծող տիեզերքի, Ամենագէտ, Ամենիմաստուն, Ամենատես, Ամենազօր, Տէր և Թագաւոր տիեզերքի: Մովսէս քաշուեցաւ Սինա լեռը. փոթորիկի, մրրիկի ու կայծակներու մէջ անյայտացաւ և անկէ բերաւ Ենօվայի Տասը Պատմութիւնները: Այնուհետև զարգացաւ այս Ենօվականութիւնը կամ Ենօվայի կրօնը, աստիճանաբար ազատեցաւ նիւթական տարրերէն և դարձաւ խիստ միաստուածութիւն մը:

Հրէաներուն հանրային-ընկերային կազմը աստուածպետական (թէօքրատիք) էր: Մովսէսի օրէնքներով, Իսրայէլի գեղապետին պետը կամ Թագաւորը Ենօվան էր. Ղեկապետները կամ հոգեւոր գասակարգը, գլուխ ունենալով քահանայապետը, կը կառավարէին ժողովուրդը Ենօվայի անունով: Ինչպէս Եգիպտոսի մէջ, հոս ալ տիրող գասակարգը հոգեւորականութիւնն էր. անոնց էին արուած 35 փառաբանութիւններու տարիքը. անոնք կ'առնէին բոլոր Հրէաներէն սաւակնորդ երկրադորձական բերքերէ: Ժողովուրդը վեց տարի կը մշակէր երկիրը, եօթներորդ տարին ազատ կը թողուր հողը հանգստանալու. այդ տարին երկրի վրայ աճած բոլոր բերքը կը պատկանէր Ղեկապետներուն, որոնք կը ժողվէին և կը բաժնէին աղքատներուն:

Հանրային կազմը

50 տարին անգամ մը (Յոթեղևակալական տարի) բոլոր գնուած կալուածները պիտի վերադարձուէին իրենց նախկին տէրերուն: Այս հին օրէնքը չէր թոյլ տար որ հարստութիւնները հաւաքուէին այս ու այն ընտանի-

քին ձեռքը, այդ ընտանիքը զօրանար և կազմէր ազնուականութիւն: Ուրեմն՝ երկրին մէջ միակ հզօր դասակարգը կը մնար հոգեւորականութիւնը: Ան էր որ կը վարէր բոլոր հանրային պաշտօնները. ան իրեն մենաշնորհ դարձուցած էր գրականութիւնն ու գիտութիւնը:

Թագաւորական իշխանութիւնը եկաւ և քիչ մը նուազեցուց Ղեւտացիներու նշանակութիւնը Հրէաներու մէջ: Բայց այդ ատեն ալ մեծ ազդեցութիւն ձեռք բերին մարգարեները: Ասոնք ալ նոյն հոգեւորականներն էին: Կը քարոզէին Ենովայի կրօնը: Ասոնք այնքան մեծ բարոյական ուժ ստացան ժողովուրդին մէջ, որ նոյն իսկ թագաւորներուն յանդիմանութիւն կը կարգային յանուն Ենովայի: Ասոնք եղան տեսակ մը վերանակիչներ Հրեաներու կրօնին և բարոյականութեան վրայ: Մարգարէներուն դարը տեւեց աւելի քան 400 տարի: Սկսաւ Սամուէլի օրերէն: Բայց Դաւիթի և Սողոմոնի ժամանակ մարգարէները շատ արժէք չունէին: Անոնց հեղինակութիւնը զօրացաւ այն ատեն, երբ Հրեաներու թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ և մէկ կողմէ կապալաշտական սովորութիւններն սկսան յաղթել, միւս կողմէ ծայր սուին թշուառութեան ու պարտութեան օրերը: Ահա այդ ժամանակները երեւացին Եսայի, Եզէկիէլ, Երեմիա և Դանիէլ, խրոխտ հուժկու և տաղանդաւոր մարգարէները:

Բոլոր մարգարէներն ալ աստուածպետութեան սկզբունքի քարոզիչներ են. անոնք ամէնքն ալ կը պնդեն որ կեանքի բոլոր ճիւղերը պիտի ենթարկուին կրօնին և անոր ծառային:

Հրէական գրականութիւնը նոյնպէս համակուած է կրօնական ոգիով: Այդ գրականութեան լաւագոյն գործերը մեղի հասած են ընդարձակ ժողովածուի մը ձեւով, որ կը կոչուի Աստուածաշունչ, Ս. Գիրք և կամ Հին Կտակարան:

Պրականութիւնը

Հրէական մտքի այդ հոյակապ արտադրութեան մէջ, ամէն տեղ կը ցոլայ ջերմ հայրենասիրական զգացում, բայց անոր հետ մէկտեղ, ամէն տողէն կը բուրեցուժար կրօնամտութիւն, — միաստուածութեան գաղափարը, տիեզերքի մխարևս ծագումի ըմբռնումը: Ուստի, որքան որ Ս. Գիրքը հրէական է իր հայրենասիրական ձգտումով, այնքան ալ և դեռ շատ աւելի՝ համամարդկային է իր ընդհանուր կրօնական և փիլիսոփայական ոգիով:

Հրէաներու գրական այդ փառայեղ կոթողը կը բաժնուի հինգ զլխաւոր մասերու. ա) Օրեւագիտական, որու մէջ կը մտնեն Մովսէսի հինգ գրքերը կամ հնգագետեանը. բ) Մարգարեներու գրութիւնները — Եսայիի, Նաուամի, Եզէկիէլի, Երեմիայի և այլն. գ) Պատմական գրքեր — ինչպէս Յեսու Նաւեայի, Դատաւորաց, Թագաւորաց գործերը և ուրիշները. դ) Կրօնական ֆիւրերգուերաց գործերը և ուրիշները. ե) Դաւիթի Սաղմոսքիւններ — որոնցմէ լաւագոյններն են Դաւիթի Սաղմոսքերը և Սողոմոնի երգ երգոցը. Ն) Փիլիսոփայական գրութիւններ, ինչպէս Յօբի գիրքը և Սողոմոնի Առակները:

Այս անուններէն ալ կը տեսնուի որ հրէական գրականութիւնը մշակած է մարդկային ընդհանուր գրականութեան շատ մը ճիւղերը, բայցի զուտ գիտականէն:

Գ. ԱՐԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Նշխարոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Փիւնիկիի և Հրէաներու համառօտ պատմութիւնը վերջացնելով, մենք աչքէ անցուցինք զրեթէ բոլոր սեմական կարեւոր ժողովուրդներու հին պատմութիւնը: Չյիշեցինք միայն Արաբներու պատմութիւնը: Արաբները հին դարերու մէջ ոչ մէկ ուրոյն քաղաքակրթութիւն չեն ստեղծած, ուրեմն և չունին ինն պատմութիւն:

Սեմական եւ Արիական ժողովուրդներ

Սեմական ժողովուրդները, բաւական մեծ դարգացում ստանալէ ետք, այլևս դադարեցան առաջդիմելէ՝ քայքայուեցան և կրկին ինկան բարբարոսութեան մէջ: Իրենց ստեղծած գիտութիւնը, լուսաւորութիւնը և արուեստներն անցան ուրիշ ցեղի մը ժողովուրդներուն, որոնք սեմական ժողովուրդներու քաղաքակրթութիւնը իւրացնելով, մշակեցին ու կատարելագործեցին զայն և հիմ դրին արդի եւրոպական հսկայ քաղաքակրթութեան:

Այդ նոր ցեղի ժողովուրդները կը կոչուէին Արիներ կամ արիական ժողովուրդներ:

Արիական ցեղի սկզբնական հայրենիքը կամ ծննդավայրը մինչև օրս ալ ճշգրտւած չէ: Կարգ մը գիտնականներ կը կարծեն որ անոնց բնակավայրը եղած է Ասիան, մանաւանդ Փամիրի բարձրաւանդակը և շըրջակայ երկրները: Այդ տեղ երկար դարեր ապրելով, անոնք ստեղծած են նշակակիւթ քաղաքակրթութիւն մը: Ժողովուրդի թիւն այնքան

Արիներու ծագումը

ածեր է, որ մէկ ճիւղը դիմեր է դէպի հարաւ և հարաւարեւելք, և լեցուցեր է Ինդոս և Գանգէս գետերու հովիտները, այնտեղէն ալ մտեր է Հնդկական թերակղզին: Այդտեղ դաղթական ժողովուրդը կոչուեցաւ Հնդիկ ժողովուրդ, որ ստեղծեց սանսկրիտ լեզուն, արիական լեզուներու ամենահին ճիւղերէն մէկը:

Երկրորդ ճիւղը, որ լեցուած է Իրանի կամ Երանի երկիրը՝ բաժնուած է քանի մը մասերու — Մեսսցիներ, Բակտրիացիներ, Պարթեներ եւ Պարսիկներ: Իրանեան լեզուներն են Հին-Պարսկական և Հին-Բակտրիական կամ Չեկոսկական լեզուները: Կան գիտնականներ ալ, որ զենդական լեզուն կը համարեն Մեսսցիներու հին լեզուն: Սանսկրիտ և զէնդ լեզուները կը կազմեն արիական լեզուներու ասիական խումբը:

Արիներու երրորդ ճիւղը ուղղուեր է դէպի Եւրոպա երեք ճանապարհով — անցնելով Կովկասը, Ռուրը դետը և Փոքր Ասիոյ ու Պալքանեան թերակղզիները, սպոհճանաբար բռնած է ամբողջ եւրոպական ցամաքը: Այդ ճիւղն ստեղծած է լեզուներու վեց առանձին խումբեր. 1) Թրակիո-Իլլիրական լեզուախումբ, որմէ այժմ կան աննշան մնացորդներ — Թրակիականէն՝ Հայերէնը, Իլիրականէն՝ Ալպաներէնը. 2) Յունական լեզուախումբ. 3) Իտալական լեզուախումբ, որու փայլուն ներկայացուցիչն է լատիներէնը, 4) Կելտական լեզուախումբ, որ զէն մեռնելու վրայ է, 5) Սլաւական լեզուախումբ, որու հնագոյն ձեւը սլաւական-եկեղեցական լեզուն է: Սլաւոնականի խիստ մօտ են Լիտովցիներու, Լատիշներու և հին Փրուսներու լեզուները. 6) Գերմանական լեզուախումբ:

Գիտնականներու բաւական ստուար խումբ մըն ալ կը կարծէ, որ Արիներու բնագաւառը եղած է Եւրոպան, մասնաւորապէս Վոլկայի ափերը, ստորին և մի-

Չին մասերը . յետոյ միայն եւրոպական Արիներն անցեր են դէպի Ասիա :

Այս երկրորդ ենթադրութիւնն այժմ աւելի շատ հետեւորդներ ունի և աւելի մեծ թուով ապացոյցներ :

Փաստերու մեծագոյն մասը գիտնականները կ'առնեն համեմատական լեզուագիտութիւնէն : Արիները երկար դարեր միասին ապրած են և նախ մէկ տոհմ, յետոյ մեծ ցեղ մը կազմած են բազմաթիւ տոհմերով, ի հարկէ նախ քան իրարմէ բաժնուիլը : Միասին բնակած ժամանակ, անոնք ստեղծած են բաւական նշանակելի քաղաքակրթութիւն և մշակուած լեզու մը : Գրիստոսէ մօտաւորապէս 4,000 տարի առաջ Արիներն սկսած են ելլել իրենց բնազաւառէն, բաժնուիլ իրարմէ, գաղթել տարբեր երկիրներ, ապրած են առանձին պայմաններու մէջ և ստեղծած առանձին լեզուներ : Սակայն անոնց էին, մայրենի բարբառը բոլորովին չէ անհասցած . անոր արմատական բառերն ու քերականական ձևերը մնացած են բոլոր այն ազգերու լեզուներու մէջ, որոնք սերած են Արիներէն : Այդ արմատական բառերու և լեզուի էական ձևերու ուսումնասիրութիւնը կ'ապացուցանէ թէ ո՛ր ազգերը կը պատկանին արիական ցեղին :

Արիները տարածուեցան դէպի արեւելք՝ մինչև Հիմալայիան լեռները, որոնք արգելք

հանդիսացան անոնց Չինաստան մտնելուն : Հիւսիս-արեւելքէն ալ

Արիներու սկզբնական վիճակը

յառաջխաղացութեան արգելք զրին Միջին Ասիոյ տափաստաններն ու Հինդուքոչի,

Եապլոնովի և ուրիշ լեռնաշղթաները : Իսկ անոնց Արեւմտեան սահմանը դարձաւ Ատլանտեան ովկիանոսը :

Ուրեմն՝ անոնց մէկ ծայրը հասաւ Հնդկաստան, իսկ միւս ծայրը բռնեց Եւրոպան : Ահա թէ ի՞նչու այդ ցեղը կոչուած է Հնդեւրոպական :

Ունենալով բաւական բարձր քաղաքակրթութիւն, իրենք զիրենք կը կոչէին Արիներ կամ ազնուականներ, և խիստ արհամարհանքով կը վարուէին միւս ժողովուրդներուն հետ : Որ երկիրն ալ մտնէին, զարմանալի արագութեամբ կ'ոչնչացնէին կամ իրենց հետ կը ձուլէին տեղեկան ցեղերը և կը կամ ստրկացնէին :

Անոնք մէկ երկիրէն միւսը կը գաղթէին քառանիւկոշտ սայլերով (վաչէ), եզներու լծուած և վրանաձև ծածկուած : Գաղթելու կամ արշաւելու ժամանակ իրենց առջև ձգած կը քշէին իրենց հօտերը, որ կը բազկանային եզներէ, կովերէ, ոչխարներէ, ընտանի շուներէ և ձիերէ : Էջը, խոզը, այծը և հաւերը դեռ ընտանեցած չէին : Չիերն ալ կը կազմէին կիսավայրենի ջուկաններ, որոնք սանձարձակ կը թափառէին ընդարձակ արօտատեղիներու մէջ : Անոնք չէին գործածուեր տեղափոխութեան կամ բեռներ տանելու համար, այլ կը ծառայէին իբր կաթնտու և մսացու անասուններ :

Այդ խաշնարած ցեղը դեռ բարբարոս վիճակի մէջ էր : Մետաղներէն կը ճանչնար միայն պղինձը, որմէ զարդարանքներ կը շինէին : Անոնց գործիքներն ու զէնքերը քարէ ու փայտէ էին շինուած : Տէք, նիզակ, նետ ու աղեղ-ահա իրենց զէնքերը : Զգեստները կը կարէին կենդանիներու մորթերէն, կը ծակէին և կը կապկպէին ջիղերով կամ կարգ մը բոյսերու թելերով : Վուշն ու կանեփը դեռ անձանօթ էին : Իրենց կերակուրը կը բաղկանար միսէ և կաթէ, որմէ դեռ պանիր կամ իւղ պատրաստել չգիտէին : Հացհատիկները նախ կը գործածէին միայն իրենց կենդանիները ձմեռը կերակրելու

համար, իսկ յետոյ վարժուեցան իրենք ալ գործածել իբրև սնունդ: Աղի գործածութիւնը նախ յայտնի էր ասիական Արիներուն, յետոյ տարածուեցաւ Եւրոպայի Արիներուն մէջ: Չմեռը կը բնակէին գետնափոր փոսերու կամ խրճիթներու մէջ, որոնց կեղրոնը կը ծխար ընտանեկան օջախը: Ծուխը դուրս կ'ելլէր առնէն կամ երգիքի ծակէն: Տանիքը կը ծածկէին անասուններու ազրով, որպէս զի խրճիթը տաք ըլլար: Իսկ ամառը կը բնակէին ոստերէ հիւսուած տաղաւարներու կամ քիչ անդին նկարագրուած քառանիւ սայլերու մէջ: Միակ ողելից ըմպելին կը պատրաստուէր վայրի մեղրէ: Գարեջուրն ու գինին գեւ սննամօթ էին: Արդէն գիտէին բրուտի արճեատը. կաւէ կը շինէին կոշտ անօթեղէններ: Ծառերուն հաստ բուները կը կտրէին, ներքին մասը կ'այրէին, քարէ գործիքներով կը փորէին և մակոյկներ կը շինէին:

Համբանքի մասին արդէն բաւական որոշ գաղափար ունէին: Կը համբէին մասներով, բայց հարիւրէն աւելի չունէին: Անկէ աւելին «չատ» բառով կ'որակէին:

Անոնք յաճախ կ'ոչնչացնէին իրենց ձերերը, հիւանդները և նոյն իսկ մանր երեխաները, իրր աւելորդ բնուր:

Արիներու կրօնի մասին որոշ տեղեկութիւններ կը պակսին: Կ'ենթադրուի որ կը պաշտէին բնութեան երեւոյթները: Անոնք Dyaus կը կոչէին երկնքի տարածութիւնը. իսկ յետոյ այդ բառը դարձաւ «Աստուած» (Dieu) Դև, Դէյվա եայլն:

Արիական ցեղը չափազանց տոկուն էր, չըջապատին յարմարող և ընդունակ: Ան պատմութեան բնթացքին ցոյց տուած է զարմանալի ընդունակութիւն՝ իւրացնելու իրմէ բարձր ցեղերու քաղաքակրթութիւնը և զարգացնելու, կատարելագործելու սեմական ժողովուրդներէ ժառանգած մշակոյթը:

1. Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

Հնդկաստանը բաղկացած է երկու մասէ — 1) Մայր ցամաքի մասը և 2) Թերակղզիներ: Մայր ցամաքի մասը հին ատեն կը կոչուէր Արիախարսա կամ Արիներու երկիր, իսկ Թերակղզիներ կը կոչուի Տեխան:

Սրկիրը եւ բնութիւնը

Արիախարսան բաղկացած է երկու մեծ հովիտներէ — Ինդոսի և Գանգէսի, որոնք իրարմէ կը բաժնուին բաւական ընդարձակ անապատով մը: Երկու գետերն ալ կը սկսին Հիմալայեան լեռներէն, իրենց մէջ կ'ընդունին բազմաթիւ վտակներ և ծով կը թափին խոշոր Տեքրակնոսի, ինչպէս Նեղոսը: Երկու մեծ հովիտներն ալ պտղաբեր ու հարուստ են, բայց Գանգէսի հովիտը և՛ աւելի ընդարձակ է, և՛ աւելի գերազանց իր բարեբերութեամբ և ուրիշ հարստութեամբ:

Հնդկաստանի հիւսիսային մասի (Արիավարտայի) կլիման բարեխառն է: Ամառները շատ յաճախ երաշտութիւն կը տիրէ, ցանքերը, բուսականութիւնը կը փճանան և սովը ծայր կուտայ: Ուրեմն՝ Հնդիկները շատ հին ատեններէն ստիպուած պիտի ըլլային երաշտութեան դէմ կռուելու — ջրանցքներ կառուցանելու, ինչպէս Եգիպտացիները, — գործակցելու, համախմբուելու և մէկտեղ մաքառելու բնութեան կործանարար ուժին դէմ: Պարզ է որ անոնք շատ կանուխէն պիտի կազմէին զարգացած հասարակութիւն մը:

Ինուն Թերակղզիներ կը ներկայացնէ բարձրաւանդակ մը, որու արեւմտեան մասերն աւելի լեռնոտ ըլլալով, գետերը կը հոսին դէպ ի արեւելք: Այս գետերը երկրի ներսէն շատ հող են տարած ծովափ, կազմելով տափա-

բակ դաշտավայր մը և բազմաթիւ յարմար խորշեր ու ծոցեր: Սակայն այս բոլորը արեւելեան մասին մէջ ըլլալով, չեն կրցած նպաստել երկրի քաղաքակրթութեան, որովհետեւ անկէ արեւելք ինկած երկիրները բոլորովին վայրենի էին:

Հնդկաստանի բնութիւնը ճնշող է, ամէն բան հրակայական. արեւադարձային փոթորիկներ ու ամպրոպներ, կուսական հսկայ անտառներ, փիղ, առււժ, վազը և ամէն տեսակի կատաղի օձեր — այս բոլորը սարսափ կ'ազդէին մարդուն և կը զրգռէին անոր երեւակայութիւնը: Ատոր համար ալ հնդկական կրօնը տարօրինակ ձևեր առաւ, հնդիկ երեւակայութիւնը հրէշաւոր պատկերներ ստեղծեց:

Շատ հին դարերէն սկսած՝ Հնդկաստանը միշտ համարուած է հրաշքներու աշխարհ:

Սկզբնական Արիւնները, երկար տարելով Փամիրի լեռնազաշտի արեւմտեան և հարաւային դաշտավայրերուն մէջ, աճեցան ու բազմացան:

Թերեւս այդ իրենց որրանք, բուն իսկ ծննդավայրը չէր, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներու մէջ. սակայն ստոյգ է որ այդ ժողովուրդը հոտ, Բաշմիրեան հովիտներուն և անկէ հիւսիս տարածուող դաշտերուն մէջ երկար առեն ապրած ու աճած է: Խիստ բազմանալով, արիական խոշոր տոհմերն սկսան բաժնուիլ իրարմէ. մէկ ճիւղը դիմեց դէպի Իրան, միւսը աստիճանաբար եկաւ դէպի Ինդոս կամ Հինդու (Չինդ) մեծ գետի ափերը, կոչուելով Հնդիկ ժողովուրդ:

Գաղթող արիները հոն զտան բնիկ ժողովուրդ մը

— Թուխ մորթով, հարթ մազերով և բարբարոս վիճակի մէջ: Նորեկները այդ ցեղը կոչեցին Դապիու, որ սանսկրիտերէն կը նշանակէ թշնամի: Յայտնի չէ թէ ինչ ծագում ունեցած է հնագոյն ցեղը: Արիները մասամբ կոտորեցին այդ «թշնամիները», մասամբ քշեցին խիստ կուսական անտառները, ուր անոնք սկսան ապրիլ իրենց վայրենի, բայց անկախ թափառական որսորդի կեանքովը, մաս մըն ալ բուն հպատակեցուցին իրենց, ստրկացուցին, գործածելով ամէն տեսակ ստորին աշխատանքներու համար:

Այս շարժումը — Փամիրի սահմաններէն մինչեւ Փէնձապի ամբողջ հովտին գրաւումը — տեւած պիտի ըլլայ հաւանաբար մինչեւ 3000 - 1500

թուականները (Ք. է առաջ):

Արիները Փէնձապի մէջ

Հնդիկ Արիները բաժնուած էին բազմաթիւ տոհմերու, որոնց կ'առաջնորդէին տոհմապետները կամ տոհմերու Սպիտակամորուսները: Անոնք կ'ապրէին խաչնարածութեամբ և քիչ մըն ալ որսով ու երկրագործութեամբ, որ դեռ նոր սկսած էր: Բանի մը արեւնակից մեծ տոհմեր միասին ունէին հովիւ-թագաւոր մը կամ ռամա մը: Անոնք կ'երկրպագէին Ինդրային՝ արեւի, որոտի և անձրեւի աստծուն, Վառունային՝ երկնքի անհուն կապուտակի աստծուն, Ակնիին՝ կրակի և լոյսի աստծուն, և ուրիշ բնական ուժերու: Անոնք կը պաշտէին իրենց աստուածները (Deva) երգեր կամ սաղմոսներ (Veda) երգելով և զոհեր մատուցանելով: Փայտերն իրարու քսելով՝ կրակ կը շինէին և կրակի վրայ իւղ, կաթ և առևս կոչուած օգելից ըմպելին կը լեցնէին: Աստուածներուն կը բերէին

պատուղներն ու խմորեղէններ. նոյնիակ եղներ, խոյեր ու ձիեր կը մորթէին: Կը կարծէին թէ աստուածները կ'ուտեն ու կը խմեն իրենց բերած զօները, և անոնց փոխարէն իրենց ալ բարիք կ'ընեն: Հին Վէտա մը (երգ) կ'ըսէ.

«Չոնաբերոսքիւններոյ ճոխացուցիք աստուածները եւ ակնով աչ ձեզ կը ճոխացնեն: Ո՛վ Ինչրա, սախարկուած գիւներոյ փոխանախոսքիւն ընենի մեր ուժերու եւ փայտքեակ. տ'ըր ինձի ո՛ր եւ աչ փեզի սաւ, բե՛ր ինձի ո՛ր եւ աչ փեզի բերեւ»:

Փէնճապի արգուանդ երկիրը մզեց Հնդկիկները շուտով երկրագործութեան վարժուելու: Ամէնէն հին երգերու մէջ կան բազմաթիւ նշաններ թէ Հնդկիկ-Արիները շատոնց անցած էին երկրագործութեան. յիշուած զօները կամ զօճաբերութեան առարկաները երկրագործական բերքեր են:

Այդ հովիտներու և երկրագործներու սկզբնական հասարակութիւնը դեռ ևս չունէր բաժանումներ կամ դասակարգեր. ամէնքն ալ իրարու հաւասար էին: Իւրաքանչիւր տօճի պետ և՛ քուրմ էր, և՛ ընտանիքի հայրան էր աստուածներու ազօթք ընողը և զօճ մատուցանողը: Միայն արտակարգ և շատ կարեւոր կրօնական հանդէսները կը կատարէին թագաւորները և կամ մասնաւոր յարգանքի արժանացած ընտանիքի գլխաւորները:

Հաւանօրէն Հնդկիկները ժ.Վ. կամ ժ.Վ. դարու մէջ հասած են մինչև Ինդոսի գետաբերանը, բնակութիւն են հաստատած ծովափերու վրայ և առեւտրական յարաբերութեան մտած փիւնիկեցիներու և Եգիպտացիներու հետ: Աղօտ ակնարկներ կան թէ անոնք կ'իւնսր և ուրիշ բազիլումներ են ունեցած Միջագետցիներուն հետ:

Հնդիկներու և անոնց դրացի Արիներու (Իրանցիներ, Մազկութներ, Կիմմէրներ կամ Կումմէրներ, և այլն) հնագոյն կեանքի մասին կան շատ մը տեղեկութիւններ Հընդ-կական Վէսաներու մէջ:

Ճնազոյն գարգացումը

Վէտաները երգեր կամ սաղմոսներ էին, զոր կ'երգէին Հնդիկները իրենց աստուածներուն պաշտօն մատուցած ատեն: Անոնց ծագումը շատ հին է: Բերնէ բերան անցնելով, անոնք հաւանօրէն մէկտեղ ամփոփուած են ժ.Վ. դարուն:

Վէտաներու մէջ նկարագրուած հնագոյն կեանքը շատ նման է հին Պարսիկներու ու հին Գերմաններու կեանքին: Անոնք կը բնակէին գիւղերու մէջ և կը պաշտպանուէին քարէ պարիսպներու և աշտարակներու ետին: Արդէն ունէին հայրական ընտանիքներ: Արեւակից ընտանիքներու մեծ խումբ մը կը կազմէր տնակը, իսկ տօճմերու խումբը կը կազմէր ցեղ մը: Թագաւորութիւնն առ հասարակ ժառանգական էր: Թագաւորը առաջնորդ էր պատերազմի ատեն, իսկ խաղաղութեան ատեն իր ցեղին քուրմը: Այրերու համար պատերազմը զուարճութիւն մըն էր: Պատերազմելու կ'երթային կամ հետիտան, կամ ձիով, կամ երկանիւ կառքերով: Զէնքերն էին նետն ու աղեղը, աէզն ու նիզակը: Հօրատու թիւնը իրենց հօտերն էին, բայց երկրագործութիւնն ալ արդէն սկսած էր ծաղկիլ: Կինը բաւական յարգուած դիրք մը ունէր: Ամուսնութիւնը կը կատարէին կամ ազջիկը առեւանգելով, կամ գնելով: Կրօնը քրիստոնէութիւնն էր: Տարին կը հաշուէին լուսնի շարժումներով:

Հնդիկներէն մեզի հասած հնագոյն գրականութիւնը Վէսաներն են: Ասոնց ամէնէն հին մասը կը կոչուի Բիլլիհես, որմէ կարելի է քաղել տեղեկութիւններ

Հնդիկներու և Արիներու հնագոյն կեանքի մասին: Երկ-
րորդ մասը կը կոչուի Սաւալիէսա, երրորդը՝ Եանուրի-
սա, իսկ նորագոյնը՝ Արարիլիէսա: Ամէնքն ալ գրը-
ւած են սանսկրիտերէն, հարուստ, հնչուն և գեղեցիկ
լեզուով:

Ինգոսի հովտին տիրանալը, ինչպէս կ'երեւայ,
այնքան ալ դժուար չէ եղեր
Արիներու համար. թերեւս ասոր
պատճառը տեղացի Դասիուներու
վայրի վիճակն էր, անոնց յաղ-
թելը շատ դիւրին ըլլալով: Ժ.Գ. դարէն Հնդիկներու
համար կը սկսի հերոսական շրջան մը, որ կը տեւէ
մինչև 10րդ դար: Այդ ասան անոնք կը սկսին Գան-
գէսի հովտի և ամբողջ թերակղզիին գրաւումը: Իսկ
այդ մասերուն մէջ բնակող Դասիուները (հաւանօրէն
Դրաւիդ և Մոնկոլ ժողովուրդներ) շատ աւելի զարգա-
ցած էին քան Ինգոսի հովիտներունը. այդ պատճառով
ալ մեծ դիմադրութիւն ըրին Արիներուն, և սուրն էր
միայն որ ճամբայ բացաւ յաղթական և յառաջդիմելու
ընդունակ Արիներու առջև:

Սկսուած նոր դարաշրջանը հիմնականապէս փո-
փոխեց հին Հնդիկներու հաւասարասէր սկզբնական
կեանքը: Առաջ անոնք կը բնակէին մանր խումբերով,
կ'արշաւէին նոյնպէս մանր խումբերով: Այժմ այլ ևս
այդ մանր խումբերը պիտանի չէին. պատերազմը
կը ստիպէր զանոնք միանալ, կազմել մեծ համախմբում-
ներ: Երեւացին մեծ գիւղեր, հիմնուեցան քաղաքներ:
Առաջուան մանրիկ արքաներու և տոհմապետներու տեղը
բռնեցին բաւական մեծ թագաւորներ, որոնք իրենց ձեռ-

Հերոսական օրջան

քին տակ ունէին հազարաւոր կռուողներ: Վերջապէս
նախորդ հաւասարասէր տոհմական կազմին տեղը բռնեց
նոր հասարակութիւն մը, որուն մէջ մարդիկ իրարու
հաւասար չէին: Թագաւորութիւնը դարձաւ ժառանգա-
կան: Արքայի կողքին կազմուեցաւ յաղթական և ռազ-
մասէր ազնուականութիւն մը և այլն:

Հնդիկներու դարեւոր կռիւներու ասան մարդիկ
այլ ևս մոռցան հին վէտաներու
խաղաղ աղօթքներն ու փառա-
բանութիւնները, և սկսան երգել
քաջ պատերազմողներու գործե-
րը, հերոսներու սխրագործութիւնները, պատերազմնե-
րու գոռ արհաւիրքներն ու յաղթականներուն փառքը:
Կազմուեցաւ Հնդկական Դիւցազներգութիւնը, հսկայ ինչ-
պէս զինքն ստեղծող երկիրն ու ժողովուրդը:

Դիւցազներգութիւն

Այդ Դիւցազներգութիւնը դարեր շարունակ երգուե-
ցաւ և բերնէ-բերան հաղորդուեցաւ սերունդէ սերունդ,
մինչև որ բանաստեղծութեան ընդունակ անձեր հա-
ւաքեցին և մշակեցին զանոնք: Այսպիսով կազմուե-
ցան հնդկական երկու հսկայ դիւցազներգութիւնները—
Մահաբարատս և Բաւիյեաւան: Առաջինը ունի 200,000
տող, երկրորդը՝ 50,000: Երկուքին ալ իսկական նիւթը
կը կազմէ «Մեծ պոստերազմի աւանդալիկը», — պատե-
րազմ՝ որ տեղի է ունեցեր երկու հերոսական մեծ տոհ-
մերու — Կուրուներու և Փանճուներու միջև: Երկուքն
ալ կ'ապրէին Գանգէսի վերին ափերուն վրայ:

Այս զլխաւոր և էական մասին վրայ եկող-անցնող
սերունդներն աւելցուցած են շատ մը նորութիւններ —
կրօնական երգեր ու աւանդութիւններ պրահմական

դարերէն, սիրավէպեր-ինչպէս «Նագա եւ Տառնայեանի», որու հայերէն թարգմանութիւնն ալ կայ, — փիլիսոփայական խորունկ հարցերու վերլուծումն և այլն, և այլն:

Մեր ձեռքը հասած Հնդկական դիւցազներգութիւնները, ինչպէս կ'ենթադրեն գիտնականները, պէտք է խմբադրուած ըլլան Ք. է հինգ դար առաջ, բայց անոնք շինուած ու երգուած են ժ. Գ. - ժ. Բ. դարերուն մէջ (Ք. ա.), երբ Հնդիկները կը պատերազմէին Գանգէսի հովտին տիրանալու համար: Ատոնք աշխարհի մեջ անհնկն հին դիւցազներգութիւններն են:

ՀՆԴԻԿՆԵՐՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Դարեւոր պատերազմները քանդեցին վէտաներու մէջ երգուած սկզբնական արդար

ու հաւասարասէր կարգերը:

Կազմուեցաւ նոր տեսակ հասարակութիւն մը, որու մէջ երկու խաւեր իրարու դէմ էին կանգնած. մէկը տիրող խաւն - Արիները, ազնուականները, միւսը տիրուածներն էին - Սուսրաները, հնազանդ իրենց յաղթողներուն, անոնց ծառաները, սև աշխատանքներ կատարողները: Թերեւս Սուսրա իրենց նախկին անունն է:

Սակայն տիրողներն ալ չմտացին նախկին միապաղաղ զանգուածը: Անոնք ալ դարերու ընթացքին, մանաւանդ պատերազմներու ատեն, բաժնուեցան երեք գլխաւոր խաւերու: Առաջուան աղօթքներ ու սաղմոսներ երգող պարզ հովիւ-քուրմերը դարձան արհեստով աստուածաբան կրօնաւորներ - Պրահմաններ:

Երկար պատերազմները ծնունդ տուին կռուողներու

Պատակարգեր

յատուկ դասի մը - Քշատրիաներուն, որոնք կը շրջապատէին զօրապետ-արքան, կը պաշտպանէին երկիրը, կը հալածէին թշնամիները:

Սակայն անկարելի էր միայն աղօթքներով, աստուածաբանութեամբ ու կռիւով ապրիլ. անհրաժեշտ էին մարդիկ որ ապրուստի միջոցներ արտադրէին, զանոնք վաճառէին, կօշիկ, զգեստ կարէին, ամաններ և այլ գործածական իրեր շինէին: Կռուողներու և աղօթողներու կողքին Արիներու մեծամասնութիւնը շարունակեց զբաղիլ արհեստներով, առեւտուրով, երկրագործութեամբ: Ատոնք կոչուեցան Վայիյա:

Առաջ ալ Արիներու մէջ կային հոգեւորականներ, զինուորականներ, արհեստաւորներ, երկրագործներ, առեւտրականներ և այլն: Բայց ատոնք հասարակ դասակարգեր էին. կարելի էր մէկ դասակարգէն անցնիլ միւսին: Կարելի էր մտնել մէկ դասակարգի մէջ և դուրս ելլել: Սակայն դարեւոր պատերազմներու ատեն նոր հաստատուած հասարակարգը տարբեր սկզբունք ընդունեց. այդ դասակարգերը փարսցան, կաստ (caste) եղան. այլևս անկարելի էր մէկ դասակարգէն անցնիլ միւսին, կամ ելլել մէկէն, մտնել միւսին մէջ: Ամէն մարդ պիտի մնար այն կաստային մէջ ուր որ ծնած էր:

Պրահմանները եկան սրբագործեցին այդ անհաւասար ու անարդար կեանքը, աստուածային ծագում տալով անոր: Մեծ Պրահման, երկնքի, երկրի ու մարդոց ստեղծողը, այսպէս է ստեղծէր մարդկային ընկերութիւնը. Պրահմանները ստեղծուէր են անոր բերանէն, այդ պատճառով անոնք աստուածաբաններ են, պիտի սորվեցնեն աղօթքներն ու ծէսերը. Քշատրիաները ելած են անոր բազուկներէն, ասոր համար ալ անոնք ուժի և քաջութեան ներկայացուցիչ են, պիտի պա-

տերազմեն. Վայխիսիաները ելած են անոր ազդերէն, և պիտի կատարեն պարզ աշխատանքներ. իսկ Սուրբաւաները ելած են անոր ոտքերէն և պարտաւոր են ծառայելու միւս դասակարգերուն:

Միայն այս 4 ճանչցուած և ընդունուած դասակարգերուն անդամներն էին

Մահուր և անմահուր դասակարգերը

Հնդկաստանի քաղաքացի, այդ երկրին զաւակ, ուրեմն և մաքուր էակներ: Անոնցմէ կը բաղկանայ հնդիկ ազգն ալ. ատոնցմէ զուրս այլևս Հնդիկ չկայ. միւսները բոլորն ալ անմաքուր էակներ են:

Սակաւ չէ անոնց թիւը. ժամանակի ընթացքին մէջ անոնք այնքան են աճած, որ այսօր կը կազմեն 44 դասեր: Ատոնցմէ ալ ամէնէն ստորը կը կոչուի ջանրաշ կամ փարիս: Այդ անունն անգամ հայտնութիւն կը համարուի Հնդկաստանի մէջ: Անմաքուրները իրաւունք չունին ապրելու քաղաքներու և գիւղերու մէջ. անոնք պիտի ապրին յաւիտենապէս թափառելով: Անոնք իրաւունք չունին ո և է պատուաւոր զբաղման հետեւելու. անոնց գործն է նեխած դիակներ քաշել, ոճրագործները քանել և ուրիշ նման ստորին ծառայութիւններ կատարել: Անոնք կրնան ունենալ միայն շուն և էջ — այդ երկու անասուրը կենդանիները, և ուրիշ ոչինչ: Անոնք պիտի հազնին մեռելներու զգեստները, իբր աման պիտի գործածեն կոտորած կաւէ ամաններ, իսկ իրենց զարդերը միայն երկաթէ պիտի ըլլան: Անոնք պէտք չէ երեւան Պրահմաններու աչքին. անոնք իրաւունք չունին շնչելու այն օդը զոր կը շնչեն մաքուր դասակարգերը, խմելու այն ջուրը զոր կը խմեն մաքուրները: Փարիս սպաննողը պատասխանատու չէ օրէնքին առջեւ:

Այդ անմահուրները առաջ են եկած Հնդկաստանի

նախկին ժողովուրդներու այն մասերէն որոնք չեն ենթարկուած Արիներու քաղաքակրթութեան և ապրած են անոնցմէ հեռու, միշտ անոնց հետ կառուի մէջ: Կ'ենթադրուի թէ Բոշաները սիրած են հնդկական Փարիսներէն կամ միւս անմաքուր դասերէն:

Պրահմանները, Քշատրիաները և Վայխիսիաները իրաւունք ունին Վէտաները կարգալու, կրօնական արարողութեանց մասնակցելու,

իսկ Սուտրաները զրկուած են այդ իրաւունքէն: Առաջին երեք դասերը կը համարուին կրկնածնունդ, երկու անգամ աշխարհ եկած, իսկ Սուտրաները միայն մէկ անգամ են ծնած:

Պրահմաններ

Ճի.էն մինչև ժ. դարը տեւող հերոսական շրջանէն ետքը, Հնդկաստան կը սկսի խաղաղօրէն զարգանալ, գրեթէ երբէք չենթարկուելով արտաքին լուրջ ու վտանգաւոր արշաւանքներու: Այդ ներքին խաղաղ զարգացմանատեն, Արիներու նախկին թագաւորները և զինուորական դասակարգերը կ'ենթարկուին Պրահմաններու դասակարգին: Հնդկական ընկերութիւնը կը քարանայ, և անոր մէջ էն զօրեղ դիրքը կը զբաւեն Պրահմանները կամ հոգեւոր դասը: Թէև աշխարհական թագաւորը կը մնայ, բայց անոր իշխանութիւնը կ'ենթարկուի Պրահմաններու հզօր ազդեցութեան: Հնդկական պետութիւնները կը դառնան տեսակ մը կրօնապետութիւններ կամ, ինչպէս ընդունուած է ըսել, սասուած պետութիւններ (թէօկրատի):

Այդ հնդկական ընկերութեան մէջ Պրահմանները կը հանդիսանան ամենազօր: Անոնք ունին անսահման

հողեր, ազատ ամէն տեսակ սուրքերէ: Կը նստանան ժողովուրդէն մեծամեծ սուրքեր, և կ'ապրին ժողովրդական նուէրներով: Պրահմային անձը սուրբ է և անձեռնմխելի: Ան չի կրնար ենթարկուիլ ու է մարմնական պատժի՝ ու է յանցանքի համար: Ընդհակառակը, անոր դէմ եղած ամէն մէկ յանցանք խտորէն կը պատժուի թէ այս աշխարհի և թէ յաւիտեանական կեանքի մէջ:

«Խելացի կենդանիներու մէջ առաջինը մարդն է, — կ'ըսէ շրնդկական օրէնքը (Մանուի օրինագիրքը): Մարդերու մէջ ալ էն առաջինը Պրահմաններն են: Անոնք աւելի բարձր են քան զինուորականները, քան նոյնիսկ թագաւորը: Եթէ Քշատրիան 100 տարեկան է, իսկ Պրահմանը 10 տարեկան, այս վերջինը հայր պիտի համարուի»:

Պրահմանները եզրիպտական կամ ասորական քուրմերու պէս չեն. ասոնք միայն կրօնը հասկցող, աստուածներու կամքը բացատրող, կարդացող և փիլիսոփայող էակներ էին: Անոնք շատ աղէկ պահած են հին արիական բուն տիպարը, որովհետեւ չեն ամուսնանար, չեն խառնուիր միւս դասերուն: Այդ պատճառով աւելի նման են Եւրոպացիներու:

Հին Արիներու Ինտրան, Ակնին և Վարունան չմուսան Պրահմանական ընկերութեան մէջ: Այդ բնապատական աստուածներու կողքին

աստիճանաբար զարգացաւ նոր աստուածութիւն մը — աղօթիլ (Պրահմա): Աղօթքը աւելի գորաւոր է, կ'ըսէին Պրահմանները, քան աստուածները, որովհետեւ աղօթքով կարելի է ստիպել աստուածները որ կատարեն ամէն բան:

Այդ աղօթքը կամ Պրահման աստիճանաբար դարձաւ նոր և հզօրագոյն աստուածութիւն մը: Անկէ են

Հնդկական կրօնը


քղխած միւս բնապատական աստուածները: Ան ոչ սկիզբ ունի, ոչ վախճան: Անբաժանելի է, ամենազօր, ամենագոյ. անգանձն է տիեզերքի: Ան կը լեցնէ երկնքի և երկրի միջեւ եղած ամբողջ տարածութիւնը: Ան ինքն է երկինքն ալ, երկիրն ալ, լուսաւորներն ալ: Մէկ խօսքով՝ — տիեզերքի հոգին է: Բոլոր էակները անկէ են բրդխած և անոր մէջ ալ պիտի վերադառնան: Պրահման չէ ստեղծեր աշխարհը, այլ աշխարհի եռրթւեր ինքն իսկ է:



Պրահմա

Ուրեմն՝ նախորդ նիւթական աստուածներու տեղը կը բռնէ Պրահման, հոգեկան սկզբունքը, որովհետեւ կեանքի մէջ ալ արդէն նոյնօրինակ փոփոխութիւն մը եղած էր. նախկին հերոսական կամ սուրի շրջանին յաջորդած էր խաղաղ զարգացման շրջան մը, որուն մէջ գերակշիռ էին փռմուսը կամ հոգեւորականները (Պրահմանները): Ասոնց տիրապետութիւնը և ոյժն այնչափ հզօր էր որ, ճգնաւորներու աղօթքներով, անոնց

կախարդական խօսքերովը նախկին Ինտրան սխառ-
աղօտիլ, նսեմանալ ու մեռնիլ:



Աճխարհի սեղծագործուհի

Պրահմայի գաղափարի հետ կապուած էր նաև հո-
գիի անընտրելի գաղափարը:

Ան գոյութիւն ունէր բոլոր արիա-
կան ցեղերուն մէջ, բայց Հըն-
դիկներուն մէջ ընդունեց տար-
բեր ձև մը:

Հոգիներու
բաժանումը

Պրահման տիեզերքի հոգին է: Ամէն ինչ հոգի ունի
— մարդը, կենդանին, բոյսը և նոյն իսկ քարերը:
Անոնք բոլորն են Պրահմայէն և պիտի կրկին դառնան

անոր մէջ, պիտի ձուլուին անոր հետ: Իսկ տիեզերքը,
այսինքն Պրահման՝ անմահ է. ուրեմն՝ անմահ են և հո-
գիները:

Մեռնելէն յետոյ հոգիներու քննութիւն կ'ըլլայ.
Եթէ հոգի մը բարի է, կ'երթայ Ինտրայի երկինքը և
հոն երջանիկ կ'ըլլայ. եթէ չէ՛ր է. կ'իյնայ 28 դժոխք-
ներէն մէկը, ուր դեւերը կը տանջեն զինքը:

Սակայն հոգիները յաւիտենապէս չեն մնար ոչ եր-
կնքի, ոչ ալ դժոխքի մէջ: Անոնք պիտի ելլեն անկէ,
պիտի մանեն նոր մարմնի մէջ. չարերը պիտի մանեն
քարերու, բոյսերու, անասուրբ անասուններու կամ
ստորին դասէ մարդոց մարմնին մէջ, պիտի սպորին,
պիտի տառապին ու մաքրուին: Իսկ իմաստուններու,
հերոսներու, բարոյական մարդերու հոգիները կը մըտ-
նեն մաքուր դասերէ մարդոց, սուրբի մը, հրեշտակի
մը և նոյն իսկ աստու մը մարմնին մէջ: Մէկ էակի
մը մարմնին մէջ որոշ ատեն մնալով, հոգին կ'անցնի
ուրիշ էակի մը մարմնին մէջ: Այս թափառումը կը
չարունակուի այնքան ատեն, երբ հոգին իր բարի գոր-
ծերով աստիճանաբար կը մաքրուի և արժանի կ'ըլլայ
մանելու Պրահմայի մէջ, միանալու անոր, կազմելու
մասը այն մեծ, տիեզերական հոգիին որմէ նախապէս
կ'լամ էր:

Կրնայ ըլլալ որ այդ թափառման ատեն հոգին գէշ
գործեր ընէ և աւելի ևս ստորին և անասուրբ էակնե-
րու մէջ իյնայ, թափառման տարիները աւելի կ'երկա-
րին: Մաքրագործման սանդուղի ստորին աստիճանէն
մինչև վերինը կամ մինչև Պրահման հասնիլը՝ պէտք է
24 միլիան տարի:

Յողթող Արիները ստեղծեցին Պրահմայի կրօնը։
Սակայն Պենկայի առատ և ճոխ
գաշտերուն մէջ կար Վիշնուի
կրօնը։ Վիշնուն ընտրեցան վե-
րակենդանացնող, թարմացնող,
կարգ և կանոն մտցնող ուժն էր։ Իսկ հիւսիսի լեռ-

Srīhūrīsh



Վիշնու

նոտ մասերու, Հիմալայեաներուն, Գանգէսի ափերուն
անանցանելի կիրճերուն մէջ կար Սիվայի կրօնը։
Անոր կիսն էր Տուրկան կամ Դժուարակցակեցին, այ-
սինքն լեռնային կիրճերը։ Սիվան խիստ էր, կործա-
նարար, ինչպէս լեռներէն հոսող գետակները, ինչ-

պէս հոն կատարօրէն մանչող քամին ու փոթորիկները։
Պրահմանները վերջէն, շատ ուշ, Ժ. դարէն յետոյ,



Սիվա

պէտք տեսան այս լեռնական և դաշտային զոյգ աստ-
ուածները միացնել իրենց Պրահ-
մային հետ, որպէս զի բոլոր Հըն-
դիկները միանան մէկ կրօնի մը
շուրջ։ Ու ստեղծուեցաւ հնդկա-

Պահասար



Տրիմուրտի

(Հնդկական երրորդութիւն)

մէջ, որպէս զի ազատէ արդարները, կործանէ չարերը և փրկէ առաքինութիւնը: Այդ մարմնացումները կը կոչուին աւասար:

Վիշնուն մինչև այժմ, կ'ըսեն Պրահմանները. ինն անգամ աւասար է ունեցեր. եկեր է աշխարհ, կարգ-կանոն ստեղծեր և հեռացեր է: Տասներորդ անգամ ալ պիտի գայ, երբ աշխարհի վախճանը հասնի:

կան Տրիմուրտիին կամ Երրորդութիւնը:

Պրահման մէկ է, անբաժանելի, բայց անոր մէջ կայ Սիվան, քանդող, կործանարար ուժը, որ արիւնարբու է. անոր հետեւորդները նոյն խեղճ իրենք զիրենք կը զոհեն, նետուելով Գանդեսի ալիքներուն մէջ: Անոր մէջ կայ նաև բարբար, վերանորոգիչ Վիշնուն: Երբ ան տեսնէ որ աշխարհը մեղքի մէջ թաղուած է, տառապանքի մէջ կը լողայ, — կը խզճարի. կ'ընդունի որ և է էակի մը — ձուկի մը, առիւծի մը, իմաստունի մը, գաճաճի մը կերպարանք. կը մարմնանայ այդ էակներուն



Վիշնուի ու Երրորդ մարմնացումը

Չախ կողմը՝ Սիվա, աջը՝ Վիշնու, գլուխը՝ Բրիհա

Սկզբնական Հնդիկներու պարզ կրօնը չքացաւ իր ինտրայով ու Ակնիով: Պաշտամունքի պարզ ձևերը և վէտաները սկսան ճոխանալ: Պրահմանները, բացի երգերէն ու սաղմոսներէն, հազարաւոր մանր ու խոշոր ձէսեր ստեղծեցին: Ատոնցմով լեցուած էր ամբողջ կեանքը. ալօթք, զոհ, ուխտ, լուացում, օծում և այլն, և այլն: Կեանքի բոլոր երևուոյթները — զգեստը, զարդերը, հագուստը, քայլերը,

Կրօնը եւ կեանքը


պառկիրը — մէկ խօսքով ամէն ինչ ենթարկուեցաւ ծէսերու ճնշող ուժին: Կրօնը կը պահանջէր որ Պրահմանս մը չանցնի այն չուանի վրայէն, որու ծայրէն հորթ մը կապուած է, երբեք ափով ջուր չիմէ, կամ անձրևած ատեն ամենևին չվազէ: Ան իրաւունք չունի իր գլուխը քերելու երկու ձեռքով միաժամանակ: Մարդ մը որ իր եղունգները կը կրծէ, իր եղունգներով խռա կը կարէ կամ հողի կոշտերը կը կոխտէ ու փշրէ, անմաքուր էակներու պէս կ'երթայ դէպի կործանում: Արգելուած էր կենդանի մը սպաննել, որովհետեւ կրնայ ըլլալ որ անոր մէջ մարմնացած ըլլայ մարդու մը հոգին: Արգելուած էր անասունի միսն ուտել, որովհետեւ հանդերձեալ կեանքի մէջ ան ալ քու հոգիդ կրնայ ուտել:

Ով այս բոլոր ծէսերը խառութեամբ կը պահէ, սուրբ է. իսկ ան որ չի գործադրեր, զանցառու է, մեղաւոր է. անոր հողին պիտի մտնէ անասունի մը մարմինը և պիտի թափառի, որպէս զի մարդու է:

Պրահմանները սուրբ կամ մաքուր պիտի մնան: Անոնք պէտք չէ դպչին անմաքուր էակներու — ընկերային խաւերէն դուրս մնացած մարդոց, անսուրբ կենդանիներու, նոյն իսկ շատ մը գործածական ամաններու: Եթէ դպան կամ քսուեցան ատոնց, կը պղծուին. պարտաւոր են իսկոյն մաքրագործուիլ: Իսկ մաքրագործուիլ կարելի է քաւելով գործուած մեղքը: Օրինակ՝ ո՛վ որ անգիտակցաբար կով մը սպաննէ, պարտաւոր է երեք ամիս անոր կաշին վրան առնել և հօտի մը մէջ ապրիլ. իսկ ով որ օդի խմէ, եւացած հեղուկ մը պիտի կլլէ այնքան ատեն՝ որ այրէ իր ներսը, մինչև մահանալը: (Այս ամէնը Մանուի օրինադիրքէն են:)

Մակոյն կեանքի մէջ ապրիլ և չմեղանչել՝ անկարելի էր: Պրահման մը միշտ ենթակայ էր մեղքի, զան-

ցառութեան և պղծութեան, քանի դե՛ռ կ'ապրէր զի դեռու կամ քաղաքներու մէջ: Այդ պատճառով Պրահմանները երբ կը ծերանային, կը հրաժարէին կեանքէն, կ'երթային հնդկական չքեղ անտառները (Jungle) կամ կը քաշուէին անապատ, կը նուիրուէին ճգնաւորական կեանքի ու է ծառի մը կոճկին կամ խեղճուկ քարանձաւի մը մէջ, և հոն գիշեր ցորեկ կը մտածէին Պրահմայի հետ միանալու, մաքրագործուելու, իրենց մարմինը տանջելու և մեղքերէ զերծ մնալու մասին: Կ'ապրէին միայն ողորմութիւնով, ամբողջութեամբ կ'աշխատէին քիչ, հետզհետէ աւելի դանդաղ շնչել, կանգնիլ մէկ ոտքի վրայ, կամ մէկ ձեռքը միշտ դէպի վեր պահել. դանակներու սուր բերանով կը կրտատէին իրենց մարմինը և կամ բուռնցքները այնքան ատեն փակած կը պահէին, որ եղունգները կ'աճէին և



Պրահմական սեկեան

քաղաքները մահաբեր էր: Կ'ապրէին միայն ողորմութիւնով, ամբողջութեամբ կ'աշխատէին քիչ, հետզհետէ աւելի դանդաղ շնչել, կանգնիլ մէկ ոտքի վրայ, կամ մէկ ձեռքը միշտ դէպի վեր պահել. դանակներու սուր բերանով կը կրտատէին իրենց մարմինը և կամ բուռնցքները այնքան ատեն փակած կը պահէին, որ եղունգները կ'աճէին և

կը ծակէին ափի միտը, կ'անցնէին միւս երեսը: Այս ամէն չարչարանքներու միջոցով անոնք կը սպաննէին կիրքն իրենց մէջ. կը մեռցնէին ցանկութիւնները, կը սրբանային և կը ջանային դեռ ևս կենդանի վիճակի մէջ՝ հասնիլ Պրահմային, ձուլուիլ անոր հետ, չգգալ, չմտածել, չապրիլ, — անէանալ բոլորովին:

Փրկութեան այս ուղին միայն Պրահմաններու համար է. միւս դասերու մարդիկ չեն կրնար փրկուիլ այդ ճամբով: Իսկ Պրահմաններն ալ կրնան այդ ճամբէն երթալ միայն ծերացած ասէն. երիտասարդ Պրահմանները պիտի ապրին. ծերերը միայն իրաւունք ունին ճգնելու, երբ ամբողջ կեանքի ընթացքին լաւ մը ուսումնասիրած ոլլան վէտաները:



Պրահմանները միայն կրօնը չափին իրենց աղդեցութեան տակ. անոնք իրենց դասակարգին կնիքը դրին ամբողջ Հնդկաստանի պետական կեանքին և իրաւունքին վրայ ալ: Այդ նպատակով շատ հին աստուծոցէն (կ'երեւի դեռ ժ. դարէն) աշխարհ բերին Մանուի վերագրուած օրէնքներու ժողովածուն. անոր տունն աստուածային ծագում և ան եղաւ ամբողջ Հնդկաստանի մէջ ամէնուն համար պարտադիր օրինագիրք մը:

Մանու մերթ կը ներկայացուի իբր առաջին մարդը. մերթ իբր աստուած մը:

Մանուի օրէնքներուն համեմատ կառավարուած Հնդկական բոլոր պետութիւններն ալ ենթակայ էին թագաւորի մը բռնապետական իշխանութեան: Ոստիկանութեան և պաշտօնէութեան բռնութիւններն աւելի

կը սաստկացնէին Հնդիկներու վրայ ծանրացող կամայական իշխանութեան լուծը:

Հնդիկ ազգը երբեք մէկ մեծ, միացած կամ կեդրոնացած պետութիւն չէ ունեցած: Ինչպէս որ հնդիկ ընկերութեան մէջ դասակարգերը կ'ապրէին իրենց ուրոյն շահերով, սուսնց իրարու հետ կապ ունենալու, այնպէս ալ Հնդկաստանի մէջ կային բազմաթիւ մանր բռնապետական իշխանութիւններ, որոնց գլուխ կանգնած էին իրենց թագաւորները կամ ռաճաները: Ասոնք ալ իրարու հետ և ոչ մէկ կապ ունէին:

Այդ պետութիւններէն իւրաքանչիւրը բաժնուած էր առանձին շրջաններու, գաւառներու, գիւղախումբերու և գիւղական համայնքներու, որոնք նոյնպէս և ոչ մէկ կապ, ոչ մէկ առնչութիւն չունէին իրարու հետ: Բաժանումներն ըրած էին միայն հարկ ժողովելու և վերահսկողութեան նպատակով:

Գիւղական համայնքներու և շրջաններու այս բաժանումները շատ հին են Հնդկաստանի մէջ. կառավարութիւններ և պետութիւններ կուգային և կ'անցնէին իրարու ետեւէ, իսկ հնդիկ ընկերութեան այդ գիւղական կազմը միշտ անխախտ կը մնար: Նոյն այդ գիւղական-համայնական կազմը կը գտնենք Լատիններու, Հռոմայեցիներու, Գերմաններու, Սլաւներու, Հայերու և միւս բոլոր արիական ցեղերու մէջ:

Հարկերը այնքան բազմազան և ծանր էին որ, կողոպուտի և թալանի հանգամանք ունէին: Ոչ միայն արտերու և այգիներու բերքերուն խոշոր մասը կը խլէին մշակողէն, այլ և անոր անասունները: Ծանր հարկեր ու տուրքեր կը վճարէին նաև առեւտրականներն ու արհեստաւորները: Արհեստաւորները և վարձու բանուորները պարտաւոր էին ամիսը մէկ օր ձրի աշխատիլ Պրահմաններու և Քչատրիաներու համար:

Այդ ամէնուն հետ մէկտեղ, հին ատեններէն ծնունդ առին գլխաւարկը և կաւաւոր ևռէր կոչուած տուրքը: Այս վերջինը թէև կաւաւոր կը կոչուէր, բայց պարտաւորիչ տուրքի ձեւ էր առած:

Մանուի օրինագիրքը նուիրագործեց այդ բոլորը, աստուածային սնօրինութիւն հոշակելով զանոնք:

Հնդիկ ժողովուրդի այս քաղաքական և բնկերային կեանքը չէր կրնար գոհացում տալ մարդ էակի հոգիին: Հնդիկը, ծանրաբեռնուած հարկերով, հեծելով բանութեան լուծի և մտաւի տակ, չէր կրնար գոհ ըլլալ իր կեանքէն: Բայց Գանդէսի հովտին ձոխ, տաք և քիչ մը խոնաւ բնութիւնը, միանալով բազմադարեան բռնակալ կարգերու հետ, մեռցուցեր էին Հնդիկներու մէջ ըմբոստութեան ոգին: Այդ պատճառով ալ մենք չենք հանդիպիր անոնց պատմութեան մէջ տպատամբութեան կամ ըմբոստացման ուշագրաւ փորձերու:

Միւս կողմէն նոյն առտա և մեղկացնող բնութիւնը, և նոյն խաղաղ դասակարգային կազմը միջոց էին տուեր Պրահմաններուն կեանքը ենթարկել անթիւ, անհամար ձէսերու: Անոնց ստեղծած պրահմանական կրօնը կարուած էր կեանքէն, դառնալով երեւակայական կրօն մը: Հողիններու թափառումը կ'արդիւէր կենդանիներու միս ուտել, որով խոտածարակութիւնը լայնօրէն տարածուած էր: Ծէսերը կը խեղդէին այն միլիոնաւոր աղքատ ժողովուրդը որ կը ստեղծէր Հնդկաստանի առասպելական հարստութիւնն ու շքեղութիւնը, բայց որ միշտ անօթի կը մնար և կ'ապրէր ձէսերու զարհուրելի խարազանին տակ:

Այս պարագաներուն մէջ տարբեր ժողովուրդ մը թերեւս ապստամբէր: Հնդիկը չապստամբեցաւ, բայց անոր մէջ ալ բողոքն ընդունեց կրօնական ձեւ մը: Ծնաւ նոր կրօն մը:

Պրահմաններու բռնակալ, զուտ ձեւական և կեանքէ կտրուած կրօնին դէմ, առաջին անգամ բողոք քարձրացնողն եղաւ ոչ թէ Պրահման մը, այլ Բշտարիաներէն մէկը, թագաւորի մը զաւակը — Կաւասաւա, Սաֆիա ընտանիքէն:

Պուսսայակաու-
րիւն

Ատոր համար այ կոչուեցաւ Սաքիա-Մունի, այօինքն Սաֆիակերու մեկակեացը: Զայն կ'անուանէին Սիս-հարսա, որ կը թարգմանուի «կատարեալ». իսկ վերջէն աշակերտները զայն կոչեցին Պուսսա, որ ըսել է «լուսամիտ» կամ «գիտնական»:

Պուստա ծնած էր Կապիլալաստա մայրաքաղաքին մէջ, Հիմարայեան լեռներու ստորոտը, Զ. դարուն (Բ. է. առաջ 557-477): Մինչև 29 տարեկան հասակը ապրած է հօրը պարստին մէջ և խորապէս ուսած պրահմանական կրօնը: Յետոյ եօթը տարի քաշուեցաւ անտառ, Պրահմաններուն պէս տանջեց ինքզինքը, որպէս զի գտնէ ճշմարտութիւնը: Քաշեց ցուրտի և անօթութեան դառնութիւնը. դիմացաւ ամէն սեռակ տառապանքներու: Բայց ներքին գոհացում չգտաւ:

Այն ատեն Պուստա թողուց անտառը, նորէն մտաւ կեանքի մէջ. կերաւ, խմեց, զօրացաւ և սկսաւ քարոզել Պրահմաններու կրօնին դէմ: Իր խօսքը չուղղեց քարձրկերու կամ «Երկու անգամ ծնածներուն», ինչպէս կ'ընէին Պրահմանները. այլ քարոզեց ամէնուն — Սուտրաներուն, Վայիսիաներուն, Զանտալներուն և նոյն իսկ Փարիաներուն: Իրեն համար՝ դասակարգը յիմարութիւն է. մարդիկ իրարու հաւասար են, ամէնքն ալ պիտի միանան Նիրվանայի հետ: Ծէսերը բոլորն ալ անամէջ ձեւեր են, լոկ խաբերայութիւններ: Մարդ պէտք է սիրէ իրեն նման մարդ-արարածը, պէտք է

մաքրատէր ըլլայ, բարիք ընէ ու թիշնեւուն, բարոյա-
կանի տէր ըլլայ:



Պուսսա

Պրահմաններու կրօնը հիմնուած էր Պրահմայի —
մէկ աստուծու մը զազաւարին
վրայ որ երեք արտայայտու-
թիւններ ունէր (Տրիմուրտի):
Իսկ Պուստայի կրօնին մէջ աս-
տուած չկայ. տիեզերքը միայն նիւթէ կազմուած հսկայ
մեքենայ մըն է: Հողին ենթակայ է մարմնին: Մար-

Նիրվանա

դիկ ծնած են նիւթէն, պիտի վերադառնան դարձեալ
նիւթին:

Սակայն Պուստան ալ ծնունդ էր Հնդկաստանի տաք
և մեղկ միջավայրին: Ան ալ պիտի ենթարկուէր նոյն մեղ-
կայնոյ ազդեցութեան:

Ապրիլ՝ կը նշանակէ տառապիլ, կ'ըսէ Պուստան:
Ամէն մարդ կը տառապի, որովհետեւ կը ցանկայ կեանքի
վայելքներ — երիտասարդութիւն, հարստութիւն, սէր,
առողջութիւն, կեանք եւ այլն: Բայց ունեցածն ալ մշտապէս
պահել անկարելի է, որովհետեւ կայ ծերութիւն և մահ:
Ուրեմն՝ կեանքը տառապանք է, իսկ տառապանքը կը
ծնի ցանկութիւններէն: Հետեւաբար, տառապանքը ջն-
ջելու մէկ միջոց մը կայ, — ջնջել ցանկութիւնը: Բայց
ցանկութիւնը կարելի է ջնջել միայն այն ատեն, երբ
ջնջենք սպրեղը պահանջը:

Ուրեմն՝ իմաստունը ան է որ կ'ոչնչացնէ իր մեք
առեկ ինչ որ զիւր կը կապէ կեանքի հետ և կը դժ-
բախտացնէ, կը սակոյ: Պէտք է աշխատիլ կամաց-կամաց
չզգալ, չկրակնալ, չնճածել: Այսպէս ազատուելով բոլոր
կիրքերէն, բոլոր զգացողութիւններէն, բոլոր միաքերէն
ու դատողութիւններէն, մարդ կը դադրի տանջուելէ և
կ'ազատուի կեանքէն, տառապանքի միակ աղբիւրէն:
Իմաստունը մէկ ձգտում մը պիտի ունենայ — անէացում
իր անձին, իր եսին — այսինքն՝ Նիրվանա:

Եւ իմաստունները կը քաշուէին մարդոցմէ, կ'ա-
ռանձնանային ու Նիրվանայի մէջ կ'իյնային: Ծալա-
պատիկ նոտած, անոնք իրենց աչքերը անշարժ կը յա-
ռէին մէկ կէտի մը, և կը ջանային չյսել, չտեսնել,
չզգալ, չմտածել: «Կեանքը արեղի ըստ է, քան քաղքը»,

ևսիրը աւելի շաւ է, քան կենալը, մեռնիրը աւելի շաւ է, քան սպիրիրը», կ'ըսէ պուստոյական խմաստութիւնը:

45 տարի չարունակ Պուստա քարոզեց իր վարդապետութիւնը: Իր կրօնը աւրագ, շատ արագ տարածուեցաւ ոչ թէ չնորհիւ իր բովանդակած հաւատալիքներուն, այլ որովհետեւ ան աւելի մարդասէր, աւելի հաւատարմակեր էր:

Պիլատոս գիծերը

«Պրահմանն ալ, կ'ըսէ Պուստա, ծնած է կնոջէ մը, ճիշտ այնպէս՝ ինչպէս փարիա մը. ինչո՞ւ ուրեմն ան աղնիւ պիտի ըլլայ, իսկ միւսը անմաքուր»: Բոլոր մարդիկ իրարու հաւատար են, և Պուստա ամէնուն ալ կոչ կ'ընէ և կը հրաւիրէ դէպի փրկութիւն: Ինչպէս Քրիստոս իր աշակերտներն ընտրեց ձկնորսներէն, մաքսաւորներէն և ուրիշ ստորին նկատուած խաւերէն, այնպէս ալ Սաքիա-Մունին աշակերտ կ'ընդունէր փողոց աւլողներ, մուրացիներ, հաշմանդամներ և նոյն իսկ գողեր ու մարդասպաններ: Ամէնուն կը մօտենար, չէր վախնար պղծուելէ: Անոնց կը քարոզէր սրբող, դիւրբմբանելի լեզուով: Գրութիւնը և մարդասիրտը Պուստայականութեան հիմերն են: Պրահմաններն ալ կը քարոզէին ճգնաւորական կեանք, անձի չարչարում, անէացում, ինչպէս և Պուստան. սակայն այս վերջինը նոր զգացումներ կը մտցնէր իր հետեւորդներուն սրտին մէջ: Փոքրիկ բարեգործութիւն մը, փոքրիկ ողորմածութիւն մը ընելը հազար անգամ աւելի լաւ է, քան բոլոր ծէսերը ճշդութեամբ կատարելը: Պէտք է բարիք ընել ոչ միայն իր դասակարգի մարդոց, այլ և ամէնուն — նոյն իսկ փարիսներուն, նոյն իսկ բարբարոսներուն:

Պուստա մեռաւ խոր ծերութեան մէջ: Անոր կենդանութեան վերջին տարիներուն նոր կրօնն արդէն բաւական տարածուած, ամրացած էր: Պուստայականութիւնը չուներ ոչ պաշտամունք, ոչ ծէս: Անոր պատուէրներն էին — սիրել իրեն նման մարդը, բարիք ընել անոր և կատարելագործուիլ: Պուստա իր հետեւորդներուն դրախտ չխոստացաւ, ոչ ալ հանդերձեալ կեանք, այլ միայն միացում Նիրվանայի հետ, անէացում: Նախկին կրօններու ետեմութեան դէմ, ան քարոզեց իր այլասիրութիւնը. բարիք ըրէիք լոյն իսկ ձեզ սակոյողներուն, ձեր քչնակներուն:

Տարածումը

Եւ հասարակութեան ստորին խաւերը անձկութեամբ կը լսէին այդ մարդասէր քարոզները, կը դառնային հաւատարիմ հետեւորդներ: Նոր կրօնը արագութեամբ տարածուեցաւ ամբողջ Հնդկաստանի մէջ — Հիմալայաներէն մինչեւ Սէյլան կղզին: Ամէն կողմ կը թափառէին դեռ Պուստայի օրով կազմուած կրօնաւորներու խումբերը — պատառոտուն զգեստներով, ողորմութեամբ ապրող բազմութիւններ — և կը քարոզէին մեծ ուսուցչին գաղափարները:

Պրահմանները զգացին վերահաս վտանգը: Ճիշդ է, Պուստա ուղղակի դասակարգերու ոչնչացում չէ քարոզած, բայց անոր «մարդոց եղբայրութեան և հաւատարմութեան» սկզբունքներն արդէն իսկ ժխտած են դասակարգերը: Ան կը մերժէր Վէտաներու հեղինակութիւնը և կը հերքէր ծէսերը. ատով արդէն իսկ Պրահմանները կը դառնային աւելորդ և անպէտ բեռ մը: Պրահմանները ուժգնորէն ցնցուեցան, տեսնելով այդ անգլին սպառ-

նախքն իրենց հարստութեան, իրենց զօրութեան և աւանանաչորհներուն դէմ:

Անոնք մէկ կողմէ սկսան իրենց կրօնը յարմարցնել նոր կրօնի քանի մը սրահանջներուն. օրինակ՝ սկսան քարոզել թէ Պուտտան ուրիշ մէկը չէր եթէ ոչ Վիշնուն որ մարմնացեր, աշխարհ էր եկեր քարոզելու համար: Միւս կողմէ ալ կազմակերպեցին կատաղի հայածանք մը Պուտտայականներու դէմ: Այս առթիւ, հնդկի ուսուցի մը վերագրուած հրամանագիր մը կ'ըսէ.

« Կամուրջէն (Սէյլանի եւ մայր ցամաքի միջեւ) սկսած մինչեւ ձիւնապս գագաթները՝ (մինչեւ Հիմալայաները) ո՛վ որ հանդիպի Պուտտայականներու — ըլլան անոնք ձեր թէ մանուկ, պիտի խողխողէ: Ով որ զանոնք չխողխողէ, ինք պիտի սպաննուի »:

Այս հայածանքին առջեւ, Պուտտայի աշակերտներն ալ կազմակերպուեցան: Ժողովներ ըրին, որոշեցին իրենց հաւատոյ հանգանակը և աւելի կատաղի եռանդով առաջ տարին իրենց քարոզութիւնը, հարկը ստիպած ատեն դէնքի ալ դիմելով: Կռիւք երթալով սաստկացաւ և տեւեց քանի մը դար: Յաղթեցին Պրահմանները և Հնդկաստանը մաքրեցին Պուտտայականներէն:

Պուտտայականութիւնը մնաց Սէյլանի մէջ. Հնդկաստանէն ալ անցաւ Թիպէթ, Չինաստան և Ճափոն: Այս երկիրներուն մէջ կամաց կամաց Պուտտայականութեան մէջ մրտան նոր, անոր ոգիին աններդաշնակ ծէսեր, հաւատայիքներ և նոյն իսկ աստուածներ ու սուրբեր: Պուտտայականութիւնը ստորացաւ, աղճատուեցաւ և յարմարեցաւ մոնղոլեան խաւար ժողովուրդի հասկացողութիւններուն:

Երած աղմուսումները

Պուտտան աստուած հռչակուեցաւ. սկսան անոր համար տաճարներ և կուռքեր կանգնել և սպառել զայն: Պուտ-



Պուտտայ կ'աստուածանայ

տայի աշակերտները դասուեցան սուրբերու կարգը: Այսօր հազարներով ուխտաւորներ կ'երթան անոնց վերարկուին, ոտքերու կռիւմ տեղերուն երկրպագութեան: Պուտտան Չինաստանի մէջ կոչուեցաւ Յօ:

Պուտտայականութեան գլխաւոր կեդրոնը (Բ. է վեց դար յետոյ) եղաւ Թիպէթը: Հոն հիմնուեցան կրօնա-

ւոր այրերու և կիներու բազմաթիւ միաբանութիւններ : Այսօր Թիպէթի բնակիչներուն $\frac{2}{5}$ մասը կրօնաւորներ և կրօնաւորութիւններ են : Ունին աճազին հարստութիւն — վանքեր, կալուածներ ևւին : Իրենց մէջ կը տիրէ խիստ կարգապահութիւն և հնազանդութիւն : Գլուխն է կրօնապետը — Տայայ-Լաման : Ժողովուրդը զայն կը պաշտէ իբրև աստուծոյ մամնացումը երկրի վրայ :

Կրօնաւորները աստիճանաբար Պուտտայի կրօնին մէջ մտցուցին անոր ոգիին բարբոթիւն խորթ բազմաթիւ ա-



Պուտտայական Մեհեան

ղօթքներ ու ծէսեր : Այսօրուան Պուտտայականները աղօթքին կը վերադրեն տեսակ մը կախարդական զօրութիւն. անոնք կ'աղօթեն միշտ — ուտելու, խմելու և պտոյտի առին, պառկած ժամանակ : Այդ ալ բաւական հնկատելով, անոնք հնարած են գլանակներ, որոնց վրայ

տպուած են աղօթքներ : Գլանակները կը դնեն փոքրիկ մեքենայի մը մէջ, որ խնքն իրեն կը դառնայ. ամէն մէկ շրջան հաւասար է մէկ սնագամ աղօթելու :

Այսօր մարդկութեան $\frac{2}{5}$ մասը Պուտտայական կրօնին կը հետեւի, թէև ներկայ Պուտտայականութիւնը հինէն շատ տարբեր է, շատ աւելի ստոր է : Այդ մարդասէր կրօնը կրցած է մեծ բարիքներ առաջ բերել յետամնաց Մոնկոլ ցեղի ժողովուրդներու մէջ, մեղմացնելով անոնց բարքերը : Անոր հետեւորդները պատերազմի ոչ մէկ սէր ունին, մարդասպանութիւնէն կը խորշին, կռիւլն սիրեր, գողութիւնէ չեն ախորժիր և այլն : Այդ ալ հսկայական ծառայութիւն մըն է : Պանքոք քաղաքը ուր 400,000 բնակիչ կայ, տարեկան հազիւ մէկ մարդասպանութիւն կը կատարուի : Այդ կրօնն է որ առաջին անգամ քարոզեց մարդասիրութեան վեհ զազախարը բարբարոս մարդկութեան մէջ :

Ինչպէս բախք, Հնդկիները երբէք չմիացան և մեծ ազգային պետութիւն մը չկազմեցին : Հնդկաստանի բազմաթիւ մանր իշխանութիւններն իրենց ուսմաներով շարունակ իրարու հետ պատերազմի մէջ էին : Ատոնց ամէնէն մեծն ու կարեւորն էր Մակատհա կոչուած պետութիւնը որ կազմուած էր հերոսական շրջանի սկիզբները, հաւանօրէն Ք. է 14-15 դար առաջ : Մակատհա կը տարածուէր զրեթէ ամբողջ Գանգէսի հովտին վրայ : Մայրաքաղաքն էր Փալիպոթրա :

Հնդկաստանի պատմութիւնը

Հնդկաստանի հսկայական հարստութիւնները շատ

հին դարերէն կը հրապուրէին արեւմտեան դրացիները — Մօսաւոր Ասիոյ մեծ պետութիւնները: Մակիդոնացին: Մակիդոնացիները, ո՛չ ալ Մակեդոնացիները չկրցան օրիւր ամբողջ Հնդկաստանին. անոնք հաղիւ յաջողեցան կարծ միջոց մը գրաւել Ինդոսի և մասամբ ալ Գանգէսի հովտի երկիրները:

Հին դարերու մէջ Հնդկաստանի աշխարհակախներէն՝ ամէնէն աւելի զօրաւորը եղած է Ալեքսանդր Մակեդոնացին: Անոր ծրագիրն էր հիմնել համաշխարհային կայսրութիւն մը որու հիմը Հելլենականութիւնը ըլլար: Մակիդոնացիները զօրքերն ապստամբեցան և չուզեցին շարունակել Հնդկաստանի գրաւումը: Իսկ անոր յաջորդները չկրցան երկնց ձեռքը պահել նոյն իսկ նուաճուած հիւսիսային հնդկական հովիտները: Հնդիկ հերոս մը — Մանդրապոստ (Չանդրագուպտա, Tchandragupta) կ'ազատէ իր հայրենիքը, դուրս կը վանէ Մակեդոնացիները և տէր կը դառնայ Ինդոսի հովտին (317-291): Հոս գործնալով, Չանդրագուպտա կը յարձակի Մակասանայի վրայ, կը գրաւէ ամբողջ երկիրը, կը նստի Փալիպոթրայի մէջ (Փաղալիբուդրա), և տէր կը դառնայ ամբողջ հիւսիսային Հնդկաստանին — մինչև Տեքանի բարձրաւանդակը:

Չանդրագուպտայի թոռը — Ասոկա, երկար ատեն կը մարանչի Պուտտայականութեան դէմ, շատ արիւն կը հոսեցնէ, բայց յետոյ ինքն ալ կ'ընդունի Պուտտայի կրօնը: Ասոկա կիշիւ է երկար ատեն (260-219 Ք. ա.) իբր հզօր և շատ իմաստուն թագաւոր մը: Մեղի հասած են քարերու վրայ անոր փորագրել տուած հրովարտականքը, որոնք կը ցուցնեն այդ հնդիկ թագաւորին իմաստութիւնը:

Ասոկան յետոյ Հնդկաստանը հին դարերու մէջ ոչ մէկ յարարերութիւն կ'ունենայ արեւմտեան ազգերու հետ:

ն

ՆՆԴԻԿ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԿՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱՌԵՒՏՈՒՐԸ ԵՒ ԱՐՈՒԵՍԸ:

Հնդիկներու սկզբնական շրջանի փառաւոր գրականութիւնը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնն ու ճարտարպետութիւնը շուտով ինկան: Հասարակութեան դասակարգային կազմը, Պրահմաններու խեղդիչ տիրապետութիւնը և բռնակալ կառավարութիւնը միանալով երկրի կլիմայական պայմաններուն հետ, սպաննեցին յառաջդիմութեան ձգտումը ժողովուրդին մէջ: Հնդիկը քարացաւ, այլևս առաջ չդնաց: Ան դարձաւ մեղկ, անբնդունակ կռուելու, իր հայրենիքը պաշտպանելու և զայն սիրելու: Գարձաւ դիւրամատչելի որս հեռուէն ու մօտիկէն դէպի հնդկական առասպելական հարստութիւնները վազող ուղղմանէր թշնամիներու (Արաք, Թաթար եւայլն) համար:

Յոյներու ազդեցութիւնը

Երբ Յոյները մտան Գանգէս-Ինդոսի հովիտը, հնդիկ հասարակութիւնն արդէն քարացած էր. անոր միտքը այլևս չէր կրնար ո և է նոր բան ստեղծել, մինչև որ արմատապէս չփոխուէին հասարակութեան կազմը, անոր համոզումներն ու անտեսութեան ձեւերը: Յոյներու ազդեցութեան տակ, Հնդկաստան մտաւ սերտ յարաբերութեան մէջ Շաթ-էլ-Արապի և Նեղոսի ծաղկած արիւնքներուն հետ: Անոնց ազդեցութեան տակ քիչ մը շարժեցաւ

հնդիկ ուղեղը • գիտութիւն և գրականութիւնը քիչ մը թռիչք առին: Բայց շուտով վրայ հասաւ այն կարեւոր անշարժութիւնը որ յատուկ է արեւելեան պետութիւններուն:

Հին դարու վերջին շրջանին մէջ զարգացան Հնդիկ փիլիսոփայութեան զանազան ուղղութիւնները և կրօնական բազմաթիւ ազանդները: Գիտութեան ճիւղերէն բաւական զարգացան քերականութիւնը, աստղաբաշխութիւնը և, մանաւանդ մաթեմատիքը: Հանրահաշիւը (ալճեպրա) և աստղաբաշխութիւնը հաշիւը Հնդկաստան են ծնած, անկէ անցած են Արաբներուն, իսկ անոնց միջոցով ալ Եւրոպա: Պատմական գիտութիւնը մեծ զարգացում է ունեցած հոն. մեր ձեռքը հասած են միայն քանի մը պուտուլակայան արեգորոշիւններ:

Պիտութիւն

Հերոսական շրջանի մեծ ու սքանչելի գրականութիւնը թէև չկայ հին դարու վերջերը, բայց Հնդիկներն այս շրջանի մէջ ալ ստեղծեր են բաւական գեղեցիկ և արժէքաւոր գործեր: Հինէն արդէն անոնց օտար չէր թատերագութիւնը նուազով ու պարերով մէկտեղ. սակայն Յոյներու ազդեցութեան տակ, շատ աւելի զարգացաւ: Թէ Յոյներու և թէ Հնդիկներու մէջ թատերագութիւնը սկիզբ է առած կրօնական արմատէ. կ'երգէին և կը ներկայացնէին աստուածներու երեւումը երկրի վրայ. կը խօսէին բարձր, ուռուցիկ լեզուով մը և չափածոյ կտորներով կամ ոտանաւորներով: Պարերը յետոյ կազմեցին կրօնական արարողութեան անբաժան մասը: Արբազան պարեր պարող

Գրականութիւն

կիները կոչուեցան Պայտակներ՝ որ մինչև օրս ալ գոյութիւն ունին:

Սակայն Հնդիկ գրականութեան այդ շրջանի ամենէն զարգացած մասն է առակագրութիւնը: Յոյներու և Արաբներու միջոցով մեզի են հասած բազմաթիւ հնդկական առակներ: Մեր մէջ տարածուած առակներէն շատ-շատերը հնդիկ ծագում ունին: Հագար ու մեկ գիշերներու առակներուն մեծ մասը նոյնպէս հնդկական են: Ամէնէն հռչակաւորն է Բրիհատսէ երկու դար ետք ասորոյ հնդիկ բանաստեղծի մը — Բալիսագաի մէկ գործը, Սակաբարա կամ Ինասուքեան Մասալի սնունով: Անոր գունագեղ, փարթամ ոճն ու ձոխ պատկերները գրաւեցին ամէնուն ուշադրութիւնը, երբ անգլիերէն թարգմանութիւնը երեւաց. իսկոյն թարգմանուեցաւ եւրոպական բոլոր լեզուներու:

Արհեստն ու առեւտուրը շատ գնահատուած էին Պրահմաններէն: Անոնք ամբողջովին մնացեր էին Վալիսիաներուն ձեռքը: Ասոնք գրկուած ըլլալով կրօնի, գիտութեան, կառավարական պաշտօններու և նոյն իսկ գրականութեան ասպարէզէն, իրենց բոլոր ուժը թափեցին արհեստներու և առեւտուրի վրայ, և բաւական զարգացուցին, առաջ մղեցին զայն: Ստեղծեցին երկաթէն պողպատ չինելու արհեստը: Հնդկական ոտայնանկութիւնը շատ հին գարեբէն մեծ հռչակ ունէր, բուրդէ, բամբակի թելերէ և մետաքսէ գործուածները հասած էին վերին աստիճանի նրբութեան: Հզօր թագաւորները կը սիրէին իրենց ծիրանիները կարել տալ հնդկական կերպաներէ: Հնդիկ բազմաթիւ բռնապետները կը վարէին այնպիսի ձոխ ու զարգարուն կեանք մը, որու նմանը շատ

Առեւտուր և արհեստներ

քիչ տեսնուած է աշխարհի մէջ : Ատ ալ մեծ զարկ կու տար նուրբ արհեստներու զարգացման :

Առեւտուրը բաւական մեծ չափերու էր հասած : Հնդկական ապրանքները, անոնց թանկագին քարերը, խունկերը, անուշահոտութիւնները, աղնիւ փայտերը, կերպանները եւ այլն, կարաւաններով կ'երթային Բապուլի ճամբով Պարսկաստան, Հայաստան և Յունաստան : Անոնց նաւահանգիստները բաց էին օտար նաւերու առջեւ : Ծովային բանուկ առեւտուր կար Արաբիոյ, Բաբելոնի և Ափրիկէի հետ :



2. Ի Ր Ա Ն

ՄԱՐԱՍՏԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Իրան անունը ծագած է Արիւներու անունէն — Այրիւնա, որ կը նշանակէ Արիւներու երկիր :

**Իրանի
ժողովուրդները**

Արիւները լցուեցան Իրանի երկիրը և այն տեղէն դուրս մղեցին Դուրանեան ընդի ժողովուրդները : Սակայն նախապէս մարդաբնակ էին այդ երկրի միայն արեւելեան և արեւմտեան մասերը, ուր հաստատուած էին երեք արիական ժողովուրդներ — Մետացիները (արձանագրութիւններու և Ս. Գրքի Մադոցները), Բակարիացիները և Պարսիկները : Մետացիները և Պարսիկները նախ կ'ապրէին արեւելեան մասին մէջ. իսկ յետոյ անցան Իրանի միջին անջրդի բարձրաւանդակէն, ընակութիւն հաստատելին Չակրոջ լեռներու լանջերուն կից Իրանի արեւմտեան մասերուն մէջ :

Այս երեք ազգերէն ամենահինը Մետացիներն են : Առաջին անգամ ասորեստանեան արձանագրութիւններու մէջ անոնց անունը կ'երեւի Ք. է 81/2 դար առաջ : Այդ ժամանակ անոնք արդէն բռնած էին Չակրոջ լեռներու արեւելեան լանջերն ու ձորերը : Անոնց մասին խօսած ատեն, արձանագրութիւնները երբեք չեն յիշեր թագաւոր, իշխան, թագաւորութիւն բառերը, այլ կուտան լոկ քաղաքներու և դիւղերու անուններ, ինչ որ պարզ կը ցուցնէ թէ Մետացիները դեռ ազգ մը և պետութիւն մը չէին կազմեր, այլ կ'ապրէին տոհմական կազմով : Թ. դարուն կէսերէն

սկսած՝ ասորեստանեան արձանագրութիւններն աւելի յաճախ կը յիշատակին Մեռացիները, որովհետեւ այդ ժողովուրդը արագ օրէն կ'աճէր, կը զօրանար և կը կազմակերպուէր: Ասորեստանի թագաւորները նախ կը յիշատակին իրենց փոքրիկ արչաւանքները Զակրօշ լեռներու աննշան տոճմբու դէմ, իսկ յետոյ արդէն կ'արչաւեն մտտական ժողովուրդի դէմ ոչ միայն յիշուած լեռներուն վրայ, այլ և դէպի արեւելք՝ մինչև Իրանի տափաստանները: Այս ալ կ'ապացուցանէ որ Մեռացիները աճած և տարածուած էին արագարար:

Իրանի հարաւ-արեւմտեան մասին մէջ հաստատուեցաւ պարսիկ ժողովուրդը, դառնալով Էլամի դրացի արեւելեան կողմէն: Այդ լեռնական մասը ստացաւ Պէրսիդա կամ Պարսկաստան անունը, որ և յետոյ տարածուեցաւ ամբողջ Իրանի վրայ:

Իրանի արեւելեան մասին, Բակտրիաշի մէջ, մնացին Բակտրիացիները, որոնք առանձին պատմութիւն ըստեղծեցին: Իսկ Կասպից ծովի հարաւ-արեւելեան լեռնալանջերու վրայ յետոյ հաստատուեցան Պարթևները, որոնց մայրաքաղաքն եղաւ Թարս:

Այդ չորս ցեղերէն ամենէն առաջ պատմութեան աստարտէզն իջան Մեռացիները, յետոյ Պարսիկները և Պարթևները: Իսկ Բակտրիացիները հռչակուեցան Իրանի մեծաշուք ու վեհ կրօնով:

Իրանի կրօնը յայտնի է Մադդիզականութիւն անունով: Ե՛րբ է սկսած այդ կրօնը, որոշ չէ: Միայն գիտենք, որ շատ հին օրերէ ծնունդ առած և զարգացած է քանի մը դարերու ընթացքին: Յետագայ սերունդներն իրենց կրօնի հիմնա-

Իրանի կրօնը

դիր, քարոզիչ և մարդարէ հռչակեցին Զրադաշտը (Զարադուստրա կամ Զօրոաստր):



Զրադաշ

Այդ հիմնադրի կեանք և սպեհու ժամանակն ալ մեզ յայնի չեն: Ինչպէս բոլոր կրօններու հիմնադիրներուն, Զրադաշի անձի մասին ալ յետագայ սերունդներ կազմած են առասպելներ և աւանդութիւններ: Աւանդութիւնը կ'ըսէ որ ան առեայազուն էր: Գեւ դուքիւններ: Աւանդութիւնը կ'ըսէ որ ան առեայազուն էր: Գեւ աշխարհ չեկած, Աստուած զայն նշանակած էր իբրև միջնորդ մարդկային վերածնութեան: Ան իր ամբողջ կեանքն անցուց չար ո-

գինե՞րու դեմ մարտնչելով եւ միշտ կը յաղթէր անոնց ու ամէն անգամ կռիւէն կ'ելլէր ա՛լ աւելի մախուր սրտով, ա՛լ աւելի կասարեղագործուած: Երեսուն տարեկան հասակին մէջ տեսաւ Ասուածը եւ արժանացաւ անոր հետ զուգեղու: Շուրճ բան իմացաւ Արարչէն, նոյն իսկ տեղեկութիւններ ստացաւ հրեշտակներու մասին: Բարձրացաւ եւ անցաւ կրակէ լեռը թող տուաւ, որ բանան իր սիրքը, նեղեմն իր մարմինը եւ արժին մէջ լեցնեն հալած հրաշքի մետաղ, եւ ինքը ոչինչ չզգաց: Ահա այդ ժամանակ միայն Ասուած տուաւ անոր Ձէն՝ Ավետան կամ Օրէններու Գիրքը (Ավետա-ու-Ձէնը) որ կը նշանակէ «Օրէնն ու անոր մեկնաբանութիւնները»: Այդ գանձն ստած, երկիր իջաւ եւ գնաց Բաղեսրայի բազումորին քով, որ անոր հետ միմեկու ուղարկեց իր 60 իմաստունները: Ասոնք պարտեցան վէճին մէջ եւ խոստովանեցան իրենց սկառուքիւնն ու Չրադաշի գերագանցութիւնը: Այն ատեն Չրադաշ յայտնեց, թէ ինքը կուգայ Ասուծու քովէն եւ սկսաւ կարգաւ Ձէնը Ավետան: Չայն սկսան հալածել իբրեւ կախաւոր, խաբէբայ եւ անտուրք էակ. բայց ան միշտ յաղթական նանդիսացաւ: Թագաւորը, Թագուհին եւ արհայորդին հաւատացին անոր. ժողովուրդին մեծ մասն ալ նետեցաւ անոր եւ նոր կրօնը սարածուեցաւ: Ասկէ յետոյ ալ Չրադաշը երկար ապրեցաւ երկրի վրայ, բոլորէն յարգուելով ու սիրուելով իր մախուր եւ սուրբ կենցաղին համար:

Չանագան պատմաբաններ կ'ըսեն թէ Չրադաշտ կ'ապրէր Ք. է 600 տարի, 1000 տարի, նոյն իսկ 6000 տարի առաջ: Պարսիկ պատմիչները կը պնդեն, որ ան ծնաւ աշխարհի ստեղծագործութենէն ճիշդ 9,000 տարի ետքը:

Չրադաշտէն առաջ Բակորիայի ժողովուրդը կը պաշտէր լոյսի եւ արեւի աստուածը, Միհրը (Միարա), որ « կը սպաննէ ամպ-օձը », « օդը կը մաքրէ իր հովերով » կ'ոչնչացնէր լեռներու ձիւնը, կը հողածէ ձմեռը: Անոնք կը պաշտէին արշաղոյնը, որ կը հարածէր գիշերուան խաւարը, կը պաշտէին կրակը (ատր) եւ կը դնէին կրակարաններու (ատրուչանի) մէջ, որովհետեւ կրակը երկնային լոյսի ներկա-

յացուցիչն է երկրի վրայ: Բակորիայիները կը հաւատային որ անապամներու մէջ կ'ապրին շատ ուղիներ, դէւեր (Դէյլա), սուրիչ էակներ, եւ կը սարսափէին անոնցմէ:

Բակորիան ցամաքային երկիր էր: Չկար ծով, չըկային առատ անտառներ, որ մեղմէին ամառուան տաքերը եւ ձմրան ցուրտերը: Տաքն ու ցուրտը չտիպողանց էին եւ իրարու կը յաջորդէին յանկարծակի, առանց միջին, մեղմացուցիչ եղանակի: Մէկ կողմը կը գտնուէին խիստ արգաւանդ ու բերրի լեռնալանջերը, միւս կողմը՝ անջրդի անապատը — կանանչն ու աւազը, տաքն ու յանկարծակի մրրիկը:

Երկրի այդ երկասյրի բնութիւնը ժողովուրդին ներշնչած էր կրօն մը, որուն մէջ իստօրէն իրարու դէմ կանգնած էին երկու սկզբունքներ — Բարին եւ Չարը: Ուրեմն՝ Չրադաշտէն առաջ Բակորիայի ժողովուրդն արդէն ունէր երկարմատ (Dualiste) կրօն մը: Չրադաշտը եկաւ եւ կարգ ու կանոնի ենթարկեց այդ կրօնը:

Չրադաշտի կրօնն ունի երկու տեսակ աստուածներ. առաջին տեսակի աստուածները վերացական են, անմատչելի ժողովուրդին համար: Ատոնք են՝ անկուն սարածութիւնը եւ անխախտ ժառանգակը, բացարձակ լոյսը եւ բացարձակ խաւարը: Ատոնք կը կազմեն տիեզերքի սկզբունքները: Երկրորդ տեսակի աստուածները ըմբռնելի էին ժողովուրդին, եւ այդ մասն է, որ յատկապէս կը կոչուի Մադդիզեան կրօն:

Արիւներու Չրադաշտական կրօնը կ'ըսէ, որ սկիզբը գոյութիւն է ունեցիր «Ճաճանչագեղ, մեծագոյն, ամենողորմած, ամենակատարեալ, ամենխմաստ եւ ամենագէտ» միակ Աստուածը՝ Որմիզդը կամ Անուրա-Մազդան, մեր Արամազդը. ոչ ոք է ստեղծած զայն, այլ ինքն է ստեղծած աշխարհը ոչինչէ մէկ տարուան մէջ:

Նախ ստեղծած է երկիրը, հողը, ջուրը, երկրն-
քի լուսաւորները, թռչուններն ու անասունները և վեր-
ջը միայն մարդ արարածը: Որմիզդ կ'ապրի մշտական
լոյսի թագաւորութեան մէջ: Սկիզբէն ինք իրեն օգնա-
կան է նշանակած եօթը բարի ոգիներ՝ կառավարելու
համար աշխարհը: Այդ ոգիները կը ներկայացնեն Իմաս-
տութիւնը, Ոգորմութիւնը, Արդարութիւնը և այլն: Անոնք Որմիզդին կ'օգնեն չար ոգիներուն դէմ մղուած
պայքարին մէջ:

Սակայն միայն Որմիզդը չէր բարի աստուածը: Ընդ
է որ ան ամենագլխաւոր բարի աստուածն էր, բայց
կային և ուրիշ բարի աստուածներ. այսպէս Իրան-
ցիները կը պաշտէին կրակը և անոր համար մեհակներ
կը կանգնէին, կը պաշտէին նաև ջուրը կամ ջուրի ոգին:
Անոնց համար սուրբ էին կրակը, ջուրը և հողը: Կարելի
չէր ոչ մէկ պիղծ, նեխած բան նետել կրակը կամ ջուրը
և պղծել զանոնք: Մարդոց գիակները ոչ կ'ալրէին, ոչ
ջուրը կը նետէին, ոչ ալ կը թաղէին, որպէս զի չպղծեն
այդ սրբութիւնները, այլ կը դնէին բարձր և բաց տեղ
մը, ազիւսներու վրայ և ազիւսով շրջապատուած,
մինչև որ թռչունները կոտորէին բոլոր միտերը, բոլոր նեխած
մասերը, իսկ սակորները կ'ամփոփէին ազիւսաչէն գերեզ-
մանի մէջ և վրան շիրիմ կը կանգնէին: Շիրիմներ կը
չինէին միայն հարուստներու համար, իսկ հասարակ մահ-
կանացուներու սակորները կը թաղէին գետնի մէջ, ա-
ռանց որ և է շիրմի: Այդ է պատճառը, որ Պարսիկնե-
րէն շատ քիչ շիրիմներ են մնացած: Հանգուցեալի բա-
րեկամներն ամէն կերպ կ'աշխատէին շուտ ազատիլ զիւ-
րէն. սպիտակ հագուած երկու բեռնակիրներ կը տանէին
զիսկն ազիւսով շնուած տեղը. ոչ մէկը զիսկին ձեռք
չէր դպցուններ, որովհետև պիղծ էր: Երկու բեռնակիր-

ներն ալ կրօնական ծէսերով պիտի մաքրութեան ենթար-
կուէին, կը թաղուէր վերջանար:

Որմիզդ կը աշխարհն ստեղծեց, կ'ուզէր ամէն ինչ
լաւ, մաքուր, գեղեցիկ պահել, բայց ստեղծագործութեան
սկիզբէն իսկ երեւան եկաւ նաև Ահրիմանը (Անկրօ-Մայ-
նիւս), խաւարի և չարութեան աստուածը: Ան կը
ստեղծէր այն ինչ որ չար է: Որմիզդ կ'ապրի լուսաւոր
երկնքին մէջ, իսկ Ահրիման՝ գետնի խաւարին մէջ, ուր
մթութիւնը այնքան թանձր է որ, ձեռքով կարելի է
չօչափել: Ահրիմանի օգնականներն էին դեերը, չարու-
թեան ոգիները: Ահրիմանն է ստեղծած դաժան ձմեռը,
հեղձուցիչ ասթըր, կարկուտը, միտասկար և պիղծ կեն-
դանիները, ինչպէս օձերը, կարիճները, մողեսները և այլն:
Ան է թափանցած երկրի խորերը և ստեղծած դժոխքը
(դիւզախ). ան է ստութեան հայրը, բոլոր չարիքներու
սկզբնապատճառը: Ահրիմանի ձեռքի տակ կան նաև
իդական չար ոգիներ — դրոմներ (այսեր) և փերիներ
(պայեր, ինչպէս Հայերու պարիկները և յուշկապարիկները):


Չար և բարի աստուածներու երկու ահեղ բանա-
ներն իրարու դէմ են կանգնած տիեզերքի մէջ և յաւի-
տեան կռիւ կը մղեն իրարու դէմ: Որմիզդի իւրաքանչիւր
բարի գործի դիմաց Ահրիման կ'աշխատի ստեղծել իր
չարութիւնները, խանգարել աշխարհի երջանկութիւնը,
կարգն ու կանոնը: Այդ կռիւը պիտի տևէ 12,000 տա-
րի, իսկ այնուհետև Որմիզդ պիտի յաղթահարէ, պիտի
ոչնչացնէ Ահրիմանը և անարգել պիտի իշխէ տիեզերքին:
Սկիզբները, 3,000 տարի շարունակ Որմիզդ կը ստեղ-
ծէր սուրբ, մաքուր էակները — երկինքը, երկիրն ու բոյ-
սերը, մարդիկ և կենդանիներ, և այդ ժամանակ երջան-
կութիւնը կը տիրէր: Հետեւեալ 3,000 ամեակին երկիրն
իջաւ իր այժմեան տեղը: Ահա այդ 6,000 տարիէն յե-

տոյ երեւոյց Ահրիմանը , որ սկսաւ 3,000 տարի շարունակ ոչնչացնել մարդիկը , կենդանիները և ուրիշ մաքուր ստեղծուածները :

Այդ շրջանին վերջը ծնաւ Զրադաշտը և չարի թագաւորութիւնը վերջ դրաւ : Ահրիմանն աներեւութացաւ : Այն ատեն սկսաւ չորրորդ 3,000 ամեակը , որու մէջ մենք կ'ապրինք : Ահրիմանը կայ , կը գործէ , թէև չերեւար : Ան ամեն կերպ կ'աշխատի տարածել սուտը , զրբպարտութիւնը , խարհբայութիւնը , ոչնչացնել Որմիզդի բոլոր բարիքներ :

Այդ կուռին մէջ մարդը պարտաւոր է դէմ երթալ Ահրիմանին , նպաստել Որմիզդի յաղթութեան : Անոր բարի և չար գործերը մահէն յետոյ պիտի քննուին և խտորէն պիտի կշռուին . եթէ բարին շատ է , մարդու հոգին կ'երթայ դրախտ , եթէ չարն է շատը , կ'երթայ դժոխք : Մարդու պարտականութիւններուն ամենագլխաւորը մաքրութիւնն է—մաքրութիւն մարմնի , մաքրութիւն հոգիի : Ստախոսութիւնը , պարտք առնել չտալը կը համարուին ամենատոր մեղքեր : Յոյն պատմագիրները կ'ըսեն (Հէրոդոտոս , Քսենոֆոն) որ Պարսիկներն իրենց երկխաներուն կը սորվեցնէին երեք բան—ձի նստիլ , նեա ու աղեղ գործածել և ճշմարիտ խօսիլ : Ստախօսը չար աստծու գաւակ է և անոր օգնող . ան դժոխքի բաժին պիտի դառնայ :

Չար աստուծու իւրաքանչիւր գործին դիմաց պէտք է ջանալ աւելցնել բարի գործերու թիւը կամ նուազեցնել չար էակներու թիւը : Զէնտավեստայի մէջ մանրամասնօրէն յիշուած է , թէ չար գործ կատարողն ինչ պէտք



է ընէ , որպէս զի իր մեղքերէն ազատի ու մաքրուի : Այսպէս , մարդ սպաննողը պարտաւոր է մոզին կամ քուրմին ներկայացնել իր ձեռքով սպաննուած 140 պիղծ կենդանի (օձ , կարիճ , մորմ , մողէս և այլն) : Շունը կը համարուէր ամենասուրբ կենդանիներէն մէկը . այդ պատճառով շուն սպաննողը պէտք է քուրմին ներկայացնէր 1600 սպաննուած պիղծ կենդանի , որպէս զի քաւէր իր յանցանքը :

Կարելի չէր երբէք իրար խառնել մաքուրն ու անմաքուրը , Որմիզդի և Ահրիմանի ստեղծածները : Ամենամաքուր էութիւնը կրակն է , որ սուրբ է և կը սրբացնէ , կը մաքրէ ամէն ինչ : Այդ պատճառով արգիւտուած էր որ և է անմաքուր բան նետել կրակի մէջ : Կրակը վառելու համար կային յատուկ աղօթքներ : Երբ տունը մեռել գտնուէր , խեղոյն դուրս կը հանէին կրակը , ամանեղէնները և ուրիշ մաքուր իրերը , որ դիակի ներկայութիւնը չպղծէր զանոնք :

Որմիզդի ստեղծածն էր մշակուած , բերրի , ջրառատ հողը , իսկ Ահրիմանինն էր խոպան , անջրդի , անպտուղ հողը : Ով որ կտոր մը հող մշակէր , ջրէր պաղարեւ ծառ մը , բոյս մը անկէր , նպաստած կ'ըլլար Որմիզդի թագաւորութեան ընդարձակման և կը կրճատէր Ահրիմանի թագաւորութիւնը : Ուրեմն՝ հողի մշակութիւնը ոչ միայն օգտակար է մարդու համար , այլ և աստուածահաճոյ գործ :

Զէնտավեստայի մէջ կը տիրէ «աչքի տեղ աչքը և ատամի տեղ ատամ» ի սկզբունքը : Պատիժ կար ոչ միայն մարդասպան յանցագործին , այլ և անոր մերձաւորներուն համար , որովհետև մարդասպանութիւնը կը համարուէր վատթարագոյն յանցանքներէն մէկը . ան կը

նուազեցնէր մարդոց թիւը . իսկ Աւետան մարդոց թիւի աճումը և մարդու առողջութիւնը կը համարէր Ահուրա-Մազդայէն հաճելի գործ : Այդ պատճառով կը պահանջուէր որ մարդիկ շուտ ամուսնանան , շատ զաւակներ ունենան , նոյն իսկ ստոր համար թող կը արուէր բազմակնութիւն և շատ մօտ ազգականներու հետ ամուսնութիւն : Իսկ մարդու առողջութեան նպատակով գիտութիւնը կամ բը-ժըշկութիւնը կը համարուէր Որմզդին հաճելի գիտու-թիւն . այդ պատճառով Իրանի մէջ բժշկութիւնը կանուխ զարգացաւ և չմնաց իբր հասարակ արհեստ մը կամ կա-խարդութեան ձև մը , ինչպէս էր Եգիպտոսի և Ասորես-տանի մէջ :

Այսպէս ուրեմն՝ Զէնտաւետան կը պահանջէր հո-գիի և մարմնի մաքրութիւն . կը պահանջէր մշտապէս կռիւ մղել սուտի , կեղծիքի , զրպարտութեան դէմ . կը հրամայէր աշխատիլ , երկիրը մշակել , ջրանցքներ չինել , ծառեր անել , բոյսեր ցանել , բնտանի կենդանիներ խնա-մել , ախարները պաշտպանել . մէկ խօսքով , կը պահան-ջէր անդու աշխատանք և կը սորվեցնէր բարոյական կեանք վարել : Այդ սկզբունքներն ու հիմքերը Զրա-դաշտի կրօնը կը դարձնէին վսեմ կրօն մը :

Այդ կրօնը չէր բնդուներ ոչ շքեղ տաճարներ , ոչ սեղաններ , ոչ ալ աստուածնե-րու արձաններ : Բարձր և ազատ վայրերու մէջ կը շինէին փոքրիկ և անկարեւոր շէնքեր , որոնց մէջ մոզերը կը պահէին անշէջ կրակը յատուկ կրակատու-ներու մէջ , որ կը կոչուէին *ասրուշան* : Ծէսերը կը բազկա-նային աղօթքներէ և օրհներգութիւններէ : Աստուածնե-րուն զո՞նց կը բերէին ձիեր , եզներ , այծեր և ոչխարներ : Մոզերը իբր նշան անբիծ մաքրութեան , կը հագնէին եր-

Ծէսեր

կար և սպիտակ զգեստներ , իրենց գլուխը կը դնէին թաղիքէ թագ կամ *սխար* , ձեռքերը կ'առնէին եղեգնայ երկար գաւազան , իսկ ոտքերը կ'անցնէին եղեգնայ հողաթափներ կամ կիսակօշիկներ : Մոզերու ստորազա-ները կը հագնէին ծիրանի՝ կրակեզոյն զգեստներ : Ծխա-կատարումէն յետոյ սեղան կը սարքէին . բարակ ցախերու մազմազ կրակին վրայ խորոված զո՞նք կը բաժնէին և կ'ու-տէին աւանց բան մը ձգելու աստուածներուն : Զոհարերու-թեան սեղանի կամ ասրուշանի առջև ծէսեր կատարելու ժամանակ , մոզերն ու սովորական մարդիկ յաճախ պար-տաւոր էին քիթ ու բերանները փաթաթել լաթով մը , որպէս զի շունչով չաղծեն սրբազան կրակը :

Իրանի մոզերը առանձին դասակարգ մը չէին կազ-մեր : Ով որ ուզէր , կրնար մրտ-նել մոզերու դասուն մէջ : Ա-սոր համար պէտք էր լաւ ու-սումնասիրել Զէնտ-Աւետան և վարել մաքուր , սուրբ կեանք : Մոզերը կը համարուէին անհրաժեշտ միջնորդներ աստուածներու և մարդոց միջև : Աւանց անոնց՝ կարելի չէր ոչ որ և է ծէս կատարել , ոչ ալ զո՞նց մատուցանել : Ժողովուրդը համոզուած էր , որ իր մոզերը կրնան գուշակիլ ապագան և յարաբերութեան մտնել աստուածներու հետ : Անոնք անազին ազդեցու-թիւն ունէին թէ ժողովուրդի հասարակ դասակարգերուն վրայ և թէ բարձրներու , ախրոզներու շրջանակներուն մէջ : Իշխաններն ու թագաւորներն աւանց անոնց խոր-հուրդին ոչ մէկ գործի կը ձեռնարկէին : Թէ՛ Մազդէզեան կրօնը և թէ՛ մոզերու դասակարգը ժամանակի ընթացքին կորսնցուցին իրենց սկզբնական մաքրութիւնն ու վեհու-թիւնը : Կրօնը դարձաւ ձեւական բան մը , որու պատ-ուիրանները պահկը ոչ մէկուն համար սրբութիւն չէր :

Մոզեր

Մոզերու դասը անձնատուր եղաւ իր անձնական և դասակարգային շահերուն, մէկդի ձգելով Զրադաշտի բարոյական վարդապետութիւնը :

ՀԻՆ ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Իրանի ժողովուրդներու մասին խօսած ատեն, մենք տեսանք որ Մետացիները (Մաբերը) կը կազմեն այդ երկրին հնագոյն պատմութիւն ունեցող ժողովուրդը : Տեսանք նոյնպէս, որ անոնց անունը Ատորեստանեան արձանագրութիւններու մէջ առաջին անգամ կ'երևուայ Թ. դարուն (Ք. է առաջ) : Երկրին հեռաւորութիւնը, Մարաստանի լեռնային դիրքերը և պատերազմատէր ոգին թող չէին տար Ատորեստանի միապետներուն՝ յաճախ արշաւել ու կործանել անոնց երկիրը : Այդ պատճառով Մետացիները երկար ժամանակ համեմատաբար շատ խաղաղ կ'ապրէին իրենց երկրին մէջ, բաժնուած բազմաթիւ մանր տոհմերու և ցեղերու : Իւրաքանչիւր տոհմ ունէր իր տոհմապետը, իսկ ցեղը՝ իր ցեղապետը : Ք. է եօթը դար առաջ մենք արդէն Մետացիները կը գտնենք միաստորուած, բաւական խոշոր պետութիւն մը կազմած : Թէ ե՛րբ և ի՛նչպէս է կազմակերպուած այդ մարտկան իշխանութիւնը, դրականապէս յայտնի չէ. սեպածեւ արձանագրութիւնները լուս են այդ մասին : Մեր միակ աղբիւրը կը մնայ Հէրոդոտոս յոյն պատմիչը, որ գրած է լսովի, տալով իր պատմութեան յունական աւանդութեան մը ձևեր :

Առ հասարակ ոչ մէկ հնադարեան պետութիւն այնքան չնչին հեռքեր չէ թողած, որքան Մարաստանը :

Մետացիներու հնագոյն պատմութիւնը

Այդ հսկայական պետութիւնէն այսօր մնացած են միայն Յոյներու պատմած առասպելները : Չկայ ոչ մէկ արձանագրութիւն, ոչ ալ աւերակներ : Այսքանը յայտնի է, որ Մետացիներն իրենք զիրենք կը կոչէին « Արիազակետ », որ կը նշանակէր Արիներ կամ արիական ցեղին պատկանողներ :

Հէրոդոտոսի պատմածին համաձայն, Մարաստանի թագաւորութեան հիմնադիրն է

Դէյովկ

Դէյովկ : Մարերը ԺԲ. դարէն մինչև է. դարը մնացել են Ատորեստանի լուծին տակ, իսկ է. դարուն Դէյովկի առաջնորդութեամբ ապստամբած և հիմնած են Մարաց հին պետութիւնը : Աւանդութիւնը կ'ըսէ որ Դէյովկ նախ ընտրուեցաւ ժողովուրդին կողմէ դատաւոր, իսկ յետոյ հռչակուեցաւ թագաւոր, որպէս զի կարգ կանոն մտցնէ երկրին մէջ : Ան հիմնած է Եկրասան (Էկրատանա) քաղաքը այժմեան Համատանի տեղը, Օրօնտա լեռան մօտերը : Այնտեղ շինած է շքեղ պալատ մը, հաստատած է պալատի արարողական կարգերը, կանոնաւորած է պետութիւնը, Մետացիներէն կազմած է միացած և միաձոյ պետութիւն մը : Թագաւորած է 53 տարի (709—656) : Անոր հիմնած քաղաքը չրջապատուած էր 7 պարիսպներով, որոնց ամէն մէկն ունէր սուանձին գոյն : Բոլոր պարիսպներուն վերին մասերը ատամնաձև էին : Եօթերորդ պարսպին մէջ ամփոփուած էին արքայական պալատն ու գանձարանը : Այդ վերջին պարիսպներու ատամները ծածկուած էին ոսկիով : Աւանդութիւնը կ'ըսէ որ Դէյովկն սկիզբները, իբրև դատաւոր, կ'ապրէր ժողովուրդին մէջ, յարաբերութեան մէջ էր անոր հետ. իսկ երբ յաջողեցաւ թագաւոր դառնալ, քաջուեցաւ իր պալատը, կտրեց իր կապը ժողովուրդին հետ, որպէս զի հետուէն երևուայ իբր խորհրդաւոր, բարձր էակ մը :

Դէյովկին յաջորդեց Ֆրասորս կամ Փրաւորսկսը: Դէյովկին իր արդար ու խելացի կառավարութեամբ արդէն բարձրացուցած էր արքայական իշխանութեան նշանակութիւնը, այնպէս որ իր ժառանգը կրնար նուաճումներ կատարել, որովհետեւ երկրին մէջ ապրող ցեղերն ու տոհմերն արդէն ձուլուած, մէկ ազգ էին կազմած, կը խօսէին մէկ լեզուով, ունէին մի և նոյն ազգային ոգին ու աւանդութիւնները, մի և նոյն կրօնը: Մէկ խօսքով այդ ժողովուրդն ինքզինքը կը զգար մէկ միութիւն, տարբեր միւս զրայցիներէն: Փրաւորսէսը նուաճեց Պարսիկները, Բակտրիացիները և Պարթեւները՝ բայց անգամ մըն ալ ընդհարելով Ասորեստանի հետ, սղանուեցաւ ճակատամարտի մէջ:

Ֆրաւորս

Այս երկու առաջին թագաւորներու պատմութիւնը կը կրէ կատարեալ առասպելական բնոյթ. անոնց գոյութիւնն անգամ ապացուցանող գիտական փաստեր չկան: Այդպէս չէ Կիւսիսարի պատմութիւնը: Մարաստանի իսկական հիմնադիրն ան է: Սերած էր Մարաստանի իշխանական տոհմէն: Կարծողներ կան թէ ան Ֆրասորսի ժառանգորդն էր: Առաջին անգամ ան է հիմնած բուն մետական բանակը: Առաջ բոլոր Մետացիները կուռի կ'երթային իբր զինուած ամբոխ մը, խառն ի խուռն: Կիւսիսար առաջին անգամ կազմեց նետաձիգներու, նիզակաւորներու և հեծկազօրքերու յատուկ զօրաբաժիններ և ատով մարական բանակը դարձաւ հզօր ու պատերազմի ընդունակ: Ան կը պատրաստուէր արդէն Նինուէի վրայ արշաւելու, բայց Սկիւթացիները, որ կը թափառէին Վօլկայի և Տօնի ընդարձակ տափարակներուն մէջ իբր խաչնարածներ, Կով-

Կիւսիսար

կասի վրայէն խուժեցին Մարաստան, դբաւեցին այդ և դբացի երկիրները, և 28 տարի իրենց իշխանութեան տակ պահեցին: Աւանդութեան համաձայն, Կիւսիսար երկար կուռներէ ու թափառումներէ յետոյ, խնջոյքի հրաւիրեց բարբարոս Սկիւթացիներու գլխաւորները, զինուկուց զանոնք և կոտորեց. ժողովուրդը, մնալով առանց առաջնորդի, խառն ի խուռն դիմեց փախուստի, յամառ կուռներէ յետոյ անցաւ Կովկասի լեռները և վերադարձաւ իր տափարակները: Կիւսիսարն ազատելով իր երկիրը թշնամիներէն, վերահաստատեց ներքին կարգը, դաշն կապեց Ասորեստանի մէկ նահանգին՝ Բարբելոնի կուսակալ Նարօպալասարի հետ, սրպէս զի յարձակի Նինուէի վրայ:

Սկիւթացիներու 28 տարուան տիրապետութիւնը ծանրապէս մնասած էր Ասորեստանին. անոր ոյժը և ներքին կարգը քայքայուած էին, իսկ Մարաստան, իր լեռնային դիրքին հորհիւ, այնքան չէր տուժած: Մարաստանն աղքատ երկիր էր, յետամնաց ժողովուրդով, իսկ Ասորեստան ճոխ և հարուստ պետութիւն մը. բնական է ուրեմն, որ Սկիւթացիները աւելի պիտի կողոպտէին Ասորեստանը, և պիտի տկարացնէին զայն:

Գրիստոսէ առաջ 608 թուականին՝ դաշնակիցները պաշարեցին Նինուէն: Վերջին թագաւոր Ասուրահիլդին իր ժողովուրդին հրամայեց 100 օր պահք պահել և տաճարներու մէջ զո՞ մատուցանել, ազօթքներ կատարել: Պաշարումը տեւեց երկու տարի. Նինուէցիները կը կրուռէին մեծ քաջութեամբ. բայց 606 թուականին քաղաքն ինկաւ: Ասորեստանի վերջին թագաւորն այրեց իր պալատը և ինքն ալ մէջը փակուեցաւ ու զոհուեցաւ, չուզելով տեսնել իր պետութեան անկումը:

Յազթադները իրենց մէջ բաժնեցին Ասորեստանը.

Նոր-Բարեկրօնեան պետութեան բաժին ինկան Բարեկրօնը, Ասորեստանը, Սուրիան և Միջերկրականի բոլոր ափերը, մինչև Եգիպտոս. Կիւքսարն ստացաւ Հայաստանը և Փոքր-Ասիան, մինչև Ալիս (Գլղը-Բրմաք) գետը և Ատրեստանի հեւսիսը: Կիւքսարն իր դաշնակցի բարեկամութիւնը հաստատ պահելու համար, իր աղջիկը տուաւ անոր դստիկին, Նարուզդոնտարին, որ անոր համար չինց իր հուշակաւոր առկախ պարտէզները:

Կիւքսար ատով չբաւականացաւ. ան ուզեց նուաճել ամբողջ Փոքր-Ասիան, որու մէջ այդ միջոցին ամենազօրեղ պետութիւնն էր Լիւզիան: Երկու հզօր պետութիւնները երկար պատերազմեցան. պատերազմը վերջացաւ հաշտութեամբ և սահմանը դարձաւ Ալիսը:

Կիւքսարին յաջորդեց Աժդահակ (Աստիակ կամ սեպածե արձանազրութիւններով՝ Իշտուվէգու): Ասոր օրով

Աժդահակ

Մարաստանն ինկաւ նախ Ալիւթացիներու իշխանութեան տակ, բայց ոչ երկար ժամանակ: Իսկ երբ Աժդահակ Ալիւթացիները արտաքսեց, իրեն կնութեան առաւ Լիւզիայի թագաւորին աղջիկը. անոր քոյրն ալ արդէն ամուսնացած էր Նարուզդոնտարի հետ, ուրեմն՝ մօտաւոր Ասիոյ երեք հզօր պետութիւնները ինքամի և դաշնակից էին. պատերազմ չէր ծագեր անոնց միջև. խաղաղութիւնը տիրեց անրնդհատ մօտ 35 տարի: Բայց Աժդահակ կը վարէր չարազանց զեղխ և բռնակալ կեանք մը և բոլոր ժողովուրդը դժգոհ էր:

Այդ միջոցին Պարսիկները կը գտնուէին մարահան իշխանութեան տակ, սակայն ունէին իրենց սեփական իշխանները, թէև հարկատու տիրող Մարերուն: Զանոնք նուաճած էր Փրաւորաէսը: Անոնք 7 ցեղ էին, որոնց

մէկուն վրայ Փրաւորաէս նշանակած էր իշխան Աքեմէնէս անունով աղնուական մը: Այդ տեղական իշխաններէն մէկը, որու անունն էր Կիւբոս (Կուրուշ), Աքեմէնեան հին տոհմէն, յաղթեց Աժդահակին, գահնկեց ըրաւզայն, նուաճեց Մարաստանը և հիմնեց պարսկական Աքեմէնեան հզօր կայսրութիւնը, որ շուտով աէր դարձաւ այն չրջանի գրեթէ բոլոր քաղաքակիրթ երկիրներուն — Միջագետքին, Միջերկրականի արեւելեան ափերուն, ամբողջ Փոքր-Ասիային, Հայաստանին, Եգիպտոսին և նոյն խոկ Եւրոպայի մէկ մասին:

Կիւբոս և Աժդահակ

Մարասանի անկումը և Պարսկասանի բարձրացումը այնպիսի խոտը պատմական դէպք մըն էր, որ չէր կրնար չգրաւել ժողովուրդին ուշադրութիւնը, և ժողովուրդն այդ մասին սեղծած է հետեւեալ արանդութիւնը, ինչպէս կը պատմէ Հերոդոտոս: Անգամ մը Աժդահակ սոսկալի երազ մը տեսաւ: Իր միակ աղջկան՝ Մանդանայի բեռէն շուր կը վազէր. շուրը այնքան արագ էր առաս հոսեցաւ, որ շատ չանցած լեցուց ամբողջ մօտաւոր Ասիան: Աժդահակ սարսափահար վեր բռաւ և մոգեր կանչելով պատեց երազը: Մոգերը բացատրեցին թէ իր աղջիկը պիտի ունենայ որդի մը, որ պիտի նուանէ ամբողջ Մարասանն ու ամբողջ Ասիան: Երբ աղջիկը ամուսնացաւ պարսիկ իշխանի մը հետ, Աժդահակ կրկին երազին մէջ տեսաւ թէ իր աղջկան արգանդէն ծլած է որբատուկ մը, որ անելով ու մեծնալով, իր շուրին սակ կ'առնէ ամբողջ Ասիան: Մոգերն այդ երազն ալ բացատրեցին առաջինի մտով: Այն ժամանակ Աժդահակ վախցաւ. իր բով կանչեց հաւատարիմ Հարբակ իշխանը, անոր յանձնեց իր թուրը, որ քանի սպաննէ: Հարբակ, որ բարեսիրտ մարդ էր, չհամարձակեցաւ անաստել իր արեալի հրամանին. առաւ նորածին մանուկը, բայց չկրցաւ սպաննել, այլ յանձնեց բազաւորի նովիւներէն մէկուն—Միհրդատին, որ քանի էր սպաննէ:

Միհրդատ մանուկն առած տուն գնաց, բայց տեսաւ որ կինը աղի արցունք կը քսիէ. իրենց երեխան մեռած էր: Կինը տեսաւ արեալազն նորածինը, իմացաւ թէ ի՛նչ պիտի ընեն զայն և լալով աղեւտեց իր աճուսնին, չսպաննել մանուկը, այլ տալ իրեն պա-

հերու իր զաւկին տեղ, իսկ իշխանին ցուցնել իր մեռած մանկան ոսկորները : Մինդրաս երկար դիմադրեց, բայց վերջապէս համա- կերպեցաւ վեճահար կնոջ քախանմաններուն : Երբ ասն մը ետ Հարբակ հարցուց արեւոյզն նորածնի մասին, հովիւր ցոյց տուաւ իր զաւկին ոսկորները, ըսելով որ նորածինն արդէն սպաննուած է : Հարբակ հաւատաց եւ հաւատացուց նաեւ Ածղանակին : Իսկ մա- նուկը կոչեցին Կիւրոս եւ մեծցուցին իբրեւ հովուի զաւակ :

Երբ Կիւրոս էիջ մը մեծցաւ, իր բոլոր հասակակիցներուն մէջ աչքի կը զարնէր իբրեւ աւելոյժ, խելացի եւ կտրին տղայ . յա- նախ իր խաղակից ընկերները բազաւոր կ'ընտրէին զինքը : Անգամ մըն ալ երբ « քազաւոր » ընտրուած էր, պատճել տուաւ իրեն չնհա- զանդող Մեճացի ազնուականի մը զաւակը : Երեխան զանգատեցաւ հօրը թէ Կիւրոս նպոսով հարուածել տուաւ զինքը. հայրն ալ բողո- քեց Ածղանակին, որ հովիւ Մինդրասի տղան պատճեր է իր զա-ւակը, — ազնուական մը : Ածղանակ կանչեց իր հովուին զաւակը եւ բացատրութիւն պահանջեց :

— Տէր արեւոյ, — պատասխանեց մանուկը վստահօրէն, — զիս ընտրեցին քազաւոր . բոլորն ալ ինձի հնազանդէցան, իսկ այդ տղան — ո՛չ . ես իմ իրաւունքս գործադրեցի : Եթէ արդար չեմ վա-րուած, պատճէ զիս » :

Մինչ երեխան կը խօսէր, Ածղանակ, զարմացած անոր հա- մարձակութենէն, կը դիտէր անոր դէմքը, որ խիստ նման էր իր աղ- ջրկան, իսկ հասակն ալ շատ համապատասխան՝ իր իբրեւ թէ սպաննուած բռուն հասակին : Անմիջապէս իր մօտ կանչեց Մինդրասը եւ մահուան ու սանջաններու սպառնալիքով խոստովանցուց նրօ- մարտութիւնը : Ածղանակ սաստիկ գայրացաւ Հարբակի դէմ . զայն հաշի հրաւիրեց, որպէս զի հրամայեց « հազուադիտ որսի միս մը », եւ հրամայուց անոր սեփական զաւկին միսը... Սոսկաց Հարբակ, բայց նա չուներ վրէժ լուծելու : Տանջուեցաւ ամբողջ հաշի ընթաց- քին, կերտաւ ու գովեց արեւոյնն հաշակը, բայց հետացաւ սոսկալի բոյնը սրտին մէջ : Մոզերն ալ հանգստացուցին Ածղանակը, ըսելով, թէ երազը մէկ անգամ միայն կը կատարուի . թէ լաւ է եղեր որ մա- նուկն արդէն քազաւոր է ընտրուել երեխաներէն, ան ալլ եւս վստա- զաւոր չէ : Այսպէս փրկուեցաւ Կիւրոսի կեանքը : Չայն ուղարկեցին Պարսկաստան, իր հարազատ հօր ու մօր հով :

Անցան տարիներ : Կիւրոս մեծցաւ եւ դարձաւ շատ սիրուած իշ- խան մը : Հարբակն ալ, իր սրտին մէջ կրելով իրաւունք զաւկին

կսկիծը, օրէ օր աւելի եւ աւելի կ'աւտը անգութ Ածղանակը : Վրէժի ծարար դրդեց զինքը յարաբերութեան մտնել Ածղանակի բռնու- քիւններէն դժգոն բոլոր իշխաններու եւ Կիւրոսի հետ : Մարտասանի դժգոն իշխանները քաշեց իր կողմը եւ համոզեց, որ պէտք է գահըն- կեց ընել Ածղանակը եւ անոր տեղ նստեցնել Կիւրոսը : Հարբակ հրաւիրեց Կիւրոսը անցնիլ սպասամբութեան գրուի : Պարսիկներն ալ գոն չէին Ածղանակի լուծէն, որ կը ննչէր զիբեմ :

Կիւրոս պարզեց սպասամբութեան դրօքը : Ածղանակը կաս- ղեցաւ . հաւաքեց իր բանակը եւ հրամանատար նշանակելով Հարբակը, ուղարկեց նզովելու իր բոլոր : Սակայն Հարբակ իր զօրով անցաւ Կիւրոսի կողմը եւ զայն քազաւոր հուշա- կեց : Տեսնելով իր երազն իրականացած, Ածղանակ հրամայեց խաչել երազը մեկնաբանող մոզերը : Հաւաքեց իր զօրին մնա- ցորդն եւ ելաւ իր թեմովներուն դէմ . բայց պատերազմին մէջ չախ- ջախուղեցաւ եւ գեթ ինկաւ Կիւրոսի ձեռքը : Վերջինը չապանեց զայն, այլ պատուով պահեց մինչեւ մահը : Այսպէսով 559 թուակա- նին ինկաւ Մարտասանը եւ բարձրացաւ Պարսկաստանը :

Կիւրոսի մասին աւանդութիւնը շատ բաներ կը պատմէ, սա- կայն Հերոդոտոս կ'ըսէ թէ ինքն ընտրած է ամէնէն հաւանականը : Իսկ հայկական աւանդական պատմութիւնը Կիւրոսը կը դարձնէ դաւ- նակից Տիգրան Ա . հայկազն քազաւորին, եւ Ածղանակը՝ ամուսին Տիգրանունիին՝ քազաւորին կողմ : Ուրիշ կերպ կը պատմէ նաեւ Ածղանակի երազը :

Կիւրոս Երէջ (559-529) Պարսկաստանի տեղական իշխաններէն մէկն էր՝ Ա.քու- մէնեան տունէն : Ան կըրցաւ հարազատեցնել Պարսկաստանի միւս տոհմական իշխանները, ձեռք առնել երկրին ղեկը եւ սպա թօթափել ծանրացող մարտական լուծը : Թէ ան թոռն էր Ածղանակի, թէ Հար- բակն ինչ ըրաւ, — այդ բոլորը լոկ աւանդութիւններ են : Կիւրոս դարձաւ Պարսկաստանի եւ Մարաստանի տէր, բայց ասով զբեթէ ոչ մէկ փոփոխութիւն չմտա- կառավարութեան ձեռքն մէջ : Այդ ետանդուն եւ խելացի

Կիւրոս Երէջ

Թագաւորը երկիրը ազգեց ասիական հզօր պետութիւններուն, որովհետեւ բոլորն ալ տեսան, որ ան պիտի չարունակէ Մարաստանի նուաճողական քաղաքականութիւնը: Երկիրն ասիական միանալ գրայիններուն հետ: Կիրոսի դէմ զաշնակցեցան Լիւդիան, Բաբելոնը ու Եգիպտոսը: Կիրոս ժամանակ չտուաւ անոնց միանալու և ամէնէն առաջ արագ շարժեցաւ Լիւդիայի վրայ:

Լիւդիայի քաղաւորութիւնը սարածուած էր Ալիս գետէն առեւմոտ՝, բռնելով ամբողջ Փոքր Ասիան, արգաւանդ էր անոր հողը, առաս էին ձիերը եւ միւս ընտանի կենդանիները: Զարուս էր հանգեցրով. անոր վահառականութիւնը հռչակուած էր թէ Յոյներու եւ թէ Արեւելի ժողովուրդներու մէջ: Նոյն իսկ կարծիք կայ, որ ոսկեդրամը ամէնէն առաջ կտրուած է Լիւդիայի մէջ: Գոնէ մինչեւ այսօր գտնուած ոսկեդրամներէն ամենամինքը Լիւդիականն է: Հռչակաւոր էր նաեւ Լիւդիական զօրքը — քաջ եւ պատերազմատէ: Անոր հեծելազօրքը կը համարուէր առաջինը բոլոր երկիրներու մէջ: Առաջին անգամ Լիւդիացիներն են հնարած մարմնամարզը: Այդ երկրի մայրաքաղաքն էր նախ Մակնեդիան (այժմ Մանիս), իսկ յետոյ Մանիան: Լիւդիան շատոնց յարաբերութեան մէջ էր Արեւելի պետութիւններուն հետ: Անոր ամէնէն վերջին քաղաւորը, Ալիասը պատերազմ մը կը կրթարի դէմ եւ, ինչպէս գիտենք, այդ պատերազմը վերջացաւ հաւանութեան դաշինքով. սահմանը դարձաւ Ալիսը, Ալիասի աղջիկն ալ կնուրթեան տուեցաւ Կիւստարի որդի Ամոնակին:

Ալիասի որդին եւ Լիւդիայի վերջին քաղաւորն էր Կրեստը, որ կը համարուէր աշխարհի ամենահարուստ քաղաւորը: Անոր Սարգա մայրաքաղաքը կեդրոն մըն էր ուր կը հաւաքուէին շատ յոյն գիտնականներ ու փիլիսոփաներ: Կրեստս ինքզինքը կը համարէր աշխարհի ամենաերջանիկ մարդը եւ չափազանց կը հպարտանար իր հարստութեամբ: Հերոդոտոս կ'ըսէ որ երբ անգամ մը անոր մայրաքաղաքն այցելեց յոյն օրէնագիր եւ իմաստուն Սողոն, Կրեստս հպարտութեամբ զայն պէտքով իր պալատները, ցոյց տուաւ իր զանգեքը եւ հարցուց թէ նահարիս չէ՞ որ ինքն է աշխարհի ամենէն երջանիկ մարդը: Սողոն երբէք չզարմացաւ անոր հարստութիւնները տեսնելով եւ պատասխա-

**Լիւդիայի գրաւումը,
Կրեստս**

նեց թէ մանէն առաջ ոչ մէկ մարդ կարելի է երջանիկ համարել: Կրեստս Սողոնը խենդի տեղ դնելով համբեց:

Երբ Կրեստս լսեց Մարասանի անկումը եւ Կիրոսի նուանդական ձգտումները, դառն կասեց Բաբելոնի եւ Եգիպտոսի հետ: Սակայն վստահ իր սեփական ուժերուն վրայ, ինքը նախ միանալ ուզեց պատերազմի: Մարդ ուղարկեց Յունաստան — Գելլիեան ամառը եւ պատգամ հարցուց, թէ արդեօք պատերազմի՞, կը յարդէ՞ թէ ոչ: Պատգամախօսն ըսաւ թէ մեծ պետութիւն մը կը կործանի, եթէ Կրեստս անցնի Ալիս գետը եւ խառնէ բեւաւրիս երկիրը: Այդ ժամանակներն արդէն Կիրոս սկսած էր ծովապնեայ յոյն գաղթականները գրգռել Կրեստի դէմ, բայց Յոյներն այնքան էին շրջաւրջ Կրեստի հարստութենէն եւ ուժէն, որ երբեք չէին յանդգնէր ապստամբիլ անոր դէմ: Կիրոս յուսախաբ Յոյներէն, սկսաւ պատրաստութիւն տեսնել միանալ արեւելքու, բայց Կրեստս ինքն սկսաւ առաջին հարուածը տալ: Տեղի ունեցաւ հակապատերազմ, բայց յաղթութիւնն անորու մնաց:

Հետեւեալ օրը Կրեստս տեսնելով որ Կիրոսի բանակը առաջ չի շարժիր, յաղթուած համարեց զայն եւ զոն արտով վերադարձաւ Սարգա ու սկսաւ պատրաստութիւններ տեսնել յաջորդ զարնան համար: Կիրոս լաւ գիտէր, որ եթէ սպասէ զարնան, ինք պիտի յաղթուի, որովհետեւ բեւաւրիս շատ զօրեղ է եւ ունի դաշնակիցներ: Ուստի, չնայելով ցուրտ ձմեռին, արագօրէն արեւելք եւ երեւոյց Սարգայի պարիսպներուն տակ, պատերեց քաղաքը: Լիւդիացիները մէկ կողմէ քաջութեամբ կը կռուէին, միւս կողմէ դեպքաններ ուղարկեցին իրենց դաշնակիցներն օգնութեան կանչելու: Բայց քաղաքը երկար չդիմացաւ: Տասնըջորս օրուան պատերազմէ յետոյ, քաղաքն անուրեցաւ եւ կողոպտուի մատուցաւ:

Կրեստը գերի բռնեցին եւ տարին Կիրոսի մօտ. վերջինը հրամայեց խարոյկի վրայ այրել հարուստ արքան: Երբ խարոյկն արդէն կը վառէր, Կրեստս բացականչեց

— «Ո՛հ Սողո՛ն, Սողոն, Սողոն»:


Կիրոս լսեց անոր կոչը, հրամայեց վար բերել եւ հարցնել թէ որու անունն է որ կուտայ: Կրեստս պատեց իր եւ Սողոնի տեսակցութիւնը: Կիրոս շատ ազգուրեցաւ եւ զայն ազատեց մանէն ու իր քով խորհրդական պահեց, ինչպէս կ'ըսէ ասանդոտիւնը:

Լիւզիան գրաւելէ յետոյ, Կիւրոս Կոբւ սկսաւ Փոքր Ասիոյ յունական դաշտաւորներուն դէմ, որոնց մէկ մասը նուաճեց ու հպատակեցուց, մէկ մասին ալ սուսա զանազան արտօնութիւններ և իր կողմը քաջեց, միացուց իր պետութեան հետ: Այնուհետև արչաւեց Բաղարիտ, գրաւեց թէ՛ Բաղարիտ և թէ՛ Իրանի միւս մասերը, որ կը գտնուէին Մարասանէն և Պարսկաստանէն դէպի արեւելք: Այդքան վայրեր նուաճելէ և ամրաշնորհելէ յետոյ միայն, Կիւրոսը համարձակեցաւ արչաւել իր գլխաւոր թշնամիին — Նոր-Բարեկական պետութեան վրայ:

**Պարսկական
պետական առաջակար**

Նոր-Բարեկական պետութեան գորութիւնն երևուած թանկան էր: Անոր սնունը շատ աւելի սոսկալի էր, քան իսկական գորութիւնը: Անվերջ պատերազմներն Սարիստանի դէմ՝ ուժատուաւ էին բրած զայն, սնկման մօտեցնելով: Նարուգոյննասրէն 30 տարի հազիւ սնցած, արդէն կարելի էր պարզ տեսնել, որ կը մնանի հզոր Բարեկոնը: Անոր Նարծնիտ թագաւորը աւելի շատ կը մտածէր չին սաճարներու վերանորոգման և նոր սաճարներ շինելու, քան իր զօրքի ու բերդերու մասին: Միջերկրականի տիրուան իր հպատակներն ապստամբեցան և կ'ապրէին սնկախ կեանքով. Նարծնիտն ամենաւին նկատողութեան շատաւ այդ պարագան: Երբ լսեց Կիւրոսի արչաւանքը, հրամայեց ստրոգջ պետութեան մէջ ամենէն յարգի ստատածները բերել Բարեկոն քաղաքը, զոճեր մատուցանել և աղօթքներ կարդալ, — վտխանակ լրջօրէն կուսի պատրաստուելու: Ժողովուրդը, որ վաղուց կ'ատէր Նարծնիտը, տեսնելով որ իր ստատածները կը խլուէին այդ բանակալին կողմէ, աւելի եւս երես դարձուց:

Կիւրոս պաշարեց Բարեկոնը: Քաղաքը չարագանց ամուր էր, հասարատ և ջրառան. կրնար տարիներով դիմադրել: Սակայն աւանդութիւնը կ'ըսէ որ Կիւրոսի բանակն օգտուեցաւ պաշարուածներու անհոգութիւնէն: Եփրատի այն մասը որ կը մանէր քաղաքին պարիսպներէն ներս, դարձուց ուրիշ հունի մը մէջ և ջուրի ցամքած հունով մտաւ մայրաքաղաքը: Նարծնիտ զանրեկեց եղաւ և շուտով մեռաւ: Ամբողջ մօտաւոր Ասիան միացաւ պարսկական Աքեմենեան տան զայլասնի տակ (539/ն): Կիւրոսի պետութեան արեւելեան սահմանն էր Հնդկաստանը, Պոլսարան, Խիսան, Կոխանը և Աֆղանստանի մէկ մասը. իսկ արեւմուտքէն ծովն ու Եգիպտոսը, հարաւէն կը ախէր բարը երկիրներուն, մինչև



Կիւրոսի գերեզմանը

Պարսից ծոցը, իսկ հիւսիսէն՝ մինչև Կովկաս և Սև-
Ծովը :

Կիւրոս անմիջապէս Հրէաներն ազատեց Բաբելոն-
կան գերութենէն . թող տուաւ որ վերադառնան իրենց
հայրենիքը, վերաշինեն Սողոմոնի աւերակ տաճարը և
բուսադէմի մէջ : Հրամայեց իրենց տեղերն ուղարկել բո-
լոր խլուած և Բաբելոն բերուած աստուածները : Միայն
Լիւդիայի և Բաբելոնի մէջ նշանակեց պարսիկ իշխաններ,
իսկ միւս երկիրները թողուց իրենց սեփական-աւե-
ղական իշխաններուն : Այդ և ուրիշ խելացի կարգա-
դրութիւններ բարձրացուցին Կիւրոսի անունը և հռչակը
իր պետութեան բոլոր ժողովուրդներուն մէջ :

Իր արեւելեան դռացիներուն վրայ կատարած բազ-
մաթիւ արշաւանքներէն մէկուն մէջ սպաննուեցաւ Կիւ-
րոս, որուն մահուան մասին կազմուած են բազմաթիւ
աւանդութիւններ : Դիակը տարին Պատարգազ քաղաքը
և փառաւոր չիրիմ կանգնեցին : Մեծ և փառաւոր էր
այդ դամբարանը . ունէր 36 սոք բարձրութիւն, 7 լայ-
նութիւնը, իսկ 10 1/2 սոք երկայնութիւն : Կրնամանէր փոք-
րիկ անակի մը, շինուած եօթն աստիճաններու վրայ : Երբ
Ալեքսանդր Մակեդոնացին արշաւեց Ասիա, այդ գերեզ-
մանը գեռ կանգուն էր, ծածկուած սակեզօծ կտաւով մը և
վրան գրուած. «Ո՛վ մարդ, ես եմ Կուրուշը, Կաւրիսի
որդին, պարսկական մեծութեան հիմնադիրը եւ Ասիոյ
կառավարիչը» :

Կիւրոսին յաջորդեց իր որդին, Կամբիւսը (Կամ-
բիւզէս կամ Կամբուշիա, (529-
522) : Ան խտասիրտ և դա-
ժան մարդ մըն էր : Պատրաստ
էր ամէն ինչ զոհելու իր կա-
մայականութեանը : Անոր օրով նոյն իսկ իր մտերիմներն

Կամբիւս

ու բարեկամները իրենք զիրենք ապահով չէին
ղգար :

Կամբիւսը շարունակեց իր հօր արշաւանքները : Իր
բանակը կազմուած էր այն բոլոր ցեղերէն, որոնք կը
բնակէին Ինդոսէն մինչև Հէլլասպոնտոս : Նաւատորմը
կազմուած էր փիւնիկեան վաբժ և հմուտ ծովագնացնե-
րէն : Կամբիւս հսկայական բանակով և նաւատորմով ար-
շաւեց Եգիպտոս, որու վերջին փայառմն էր Պսամե-
տիքոս Գ. : Վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ Պեղու-
սիոն քաղաքին մօտ : Չնայելով եգիպտական զօրքի քա-
ջութեանը, յաղթութիւնը տարին Պարսիկները : Փարա-
ւոնի կեանքը նախ խնայեցին, իսկ յետոյ, երբ Կամ-
բիւսի դէմ դաւադրութիւն մը երևւան հանուեցաւ,
զայն սպաննեցին և Կամբիւս հռչակուեցաւ փարաւոն :
Սկիզբները յարգանքով վարուեցաւ տեղական աստուած-
ներուն, անոնց սովորութիւններուն հանդէպ : Ամ-
բողջ Եգիպտոսը գրաւելէ յետոյ՝ Կամբիւս ուղեց ար-
շաւել Կարթեգոնի վրայ, բայց Փիւնիկեցիները մերժեցին
նաւել դէպի իրենց ցեղակիցներուն երկիրը : Կամբիւսը՝
գնաց Լիբիա, Բարկա և Կիւրենաիկ ովստիաները և առանց
զիմադրութեան նուաճեց զանոնք : Զօրք ուղարկեց Ա-
մօնա ովստիսին տիրելու, բայց այդ զօրքն անհետ կո-
րաւ անապատին մէջ : Յետոյ ինքն ահագին զօրքով ար-
շաւեց Նուպիա, բայց վերադարձին իր զօրքը ենթարկ-
ուեցաւ ավրիկեան տաքերուն, անըզի անապատի
սարսափներուն, ոչնչացաւ և միայն իր սղբալի մնա-
ցորդները վերադարձան Եգիպտոս :

Այդ անյաջողութիւնները և իր բնածին դաժանու-
թիւնը, որ երբեմն նոյն իսկ խելագարութեան կը հաս-
նէր, բոլորովին փճացուցին իր հոգին : Կամբիւս հրա-
մայեց սպաննել բազմաթիւ եգիպտացի ազնուականներ,

սկսաւ արճամարնկ անոնց կրօնը, անգամ մը նոյն իսկ սուրով խողխողեց Ապիս կղը: Այդ բոլորը պատճառեղան որ Եգիպտացիները զրգուռին Պարսիկներուն դէմ:

Կամբիւս հրամայած էր սպաննել իր եղբայրը, — Բարդիան, զոր Յոյները կը կոչէին Սմէրտիս կամ Շմէրա: Այդ սպանութիւնը ծածուկ մնացած էր ժողովուրդէն: Բուրբը կը կարծէին, թէ Բարդիան ողջ է: Օգտուելով այդ բանէն և Կամբիւսի երկար բացակայութենէն, Մեկացի մոզներն իրենցմէ մէկուն անունը Բարդիա (Սմէրտիս) դրած և թագաւոր հռչակած էին Պարսկաստանի մէջ: Ամբողջ երկիրը հաւատաց, սրովնեակ այդ մագը, որու անունն էր Հաւամասա, շատ կը նմանէր Բարդիային: Կամբիւս շտապեց Պարսկաստան, որ պատժէ այդ կեղծ-Սմէրտիսը, բայց երբ տեսաւ, որ կուսակիցներ չունի իր իսկ դաժան և արիւնարբու բնթայքին համար, ճամբան անձնատպան եղաւ, կամ թերեւս, կ'ըսեն ուրիշները, ձիւն վար ինկած ատեն՝ սուրը կողը միտուեցաւ և մեռաւ:

Կամբիւս մեռնելէն առաջ յայտարարեց, թէ ինք չատնց սպաննած է իր եղբայրը՝ Բարդիան, բայց ոչ մէկը հաւատաց: Հաւամասան կամ կեղծ Սմէրտիսը կօթն ամիս կառավարեց Պարսկաստանը, սակայն շուտով երևան ելաւ կեղծիքը: Իրեն դէմ կազմուեցաւ մեծ դաւադրութիւն մը, և զինքը գտնուեց լրբին, իսկ անգը թագաւոր հռչակուեցաւ Արէմէնեան ցեղէն իշխան մը, զաւաղիրներուն գլխաւորը, որ կը կոչուէր Դարեհ Վրչատապեան (պարսկերէն Վիշասպ, իսկ եւրոպական լեզուներու մէջ՝ Հիւսասպ), որ Կամբիւսի գլխաւոր թիկնապանն էր և հետը Եգիպտոս գացած էր:

Բարձրանայով պարսկական գահը, Դարեհ ստիպուած էր նախ և առաջ նորէն նուաճել իր հսկայական պետութեան զանազան մասերուն մէջ ծագած ապստամբութիւնները: Բանի մը նահանգներ, սրանց մէջ և Բարեկոնը, օգտուելով Բարդիայի օրերուն ծագած ներքին դժգոհութիւններէն ու կրօնիւններէն, ապստամբած և անկախութիւն հռչակած էին: Դարեհ նուաճեց բոլոր ապստամբները, բայց ամենէն աւելի զըժուարութիւն կրեց Բարեկոնը նուաճելու համար:

Դարեհ Ա.
Վ. Շասապեան



Դարեհ Ա. և իր Շխախուսը (վերեւ՝ Ուրալուր)

Այդ կռիւներէն Դարեհի նման սաղանդաւոր կառավարիչ մը հետեցուց, թէ պէտք է այնպէս մը կազմակերպել պետութիւնը, հաստատել այնպիսի մշտական կարգ ու կանոն, որ ամէն անգամ, երբ թագաւոր մը ինչպէս կամ մեռնի և ուրիշ մը գահ բարձ-

բանայ, չստիպուի նորէն կուռով հնազանդեցնել բոլոր նահանգները :

Կիւրոսի ստեղծած հակայական պետութեան մէջ որոշ պետական կարգ ու կանոն չկար : Կարգ մը նահանգներ կը կառավարուէին մայրաքաղաքէն նշանակուած պարսիկ կուսակալներու կամ Սասրայկերու ձեռքով : Նուաճուած երկիրներէն շատերուն մէջ ալ անխախտ կը ձգուէին ոչ միայն անոնց լեզուն, կրօնն ու սովորութիւնները, այլ և տեղական իշխանները, որոնք կը կառավարէին իրենց երկիրները և սարեկան սրոշ տուրք մը կը վճարէին կեդրոնական իշխանութեան :

Պարսկի պետութեան կազմութիւնը

Այսպէս՝ Փոքր-Ասիոյ բոլոր յոյն գաղութները պահած էին իրենց կառավարութեան բազմասեակ ձևերը . Փիւնիկի մէջ տեղական մանրիկ թագաւորները և կառավարիչները կամ սաֆֆէտները, կը շարունակէին իրենց գոյութիւնը . իսկ Եգիպտոս կը պահէր իր նուիրն ու նուիրախնները : Դարեհ ձեռք չտուաւ այդ տեղական բոլոր կարգերուն ու ազատութիւններուն, բայց անոնց բոլորի գլխուն վրայ դրաւ իր սեփական կառավարիչները : Ամբողջ կայսրութիւնը բաժնեց սասրայութիւններու կամ շրջաններու : Սկիզբները անոնց թիւն էր 23, իսկ Դարեհի թագաւորութեան վերջերը հասաւ 31ի : Հէրոդոտոս յոյն պատմիչը կը հաշուէ 20 սասրայութիւն : Մարասանը, Հայաստանը և այլն կը կազմէին մէյմէկ սասրայութիւն : Կային այնպիսի սասրայութիւններ, որոնց մէջ կը մտնէին քանի մը տեսակ ժողովուրդներ : Ամէն սասրայութեան գլուխ կանգնած էր

սասրայ մը, որ կը վարէր ելեւմտական ու քաղաքային բոլոր գործերը :

Սակայն եթէ սասրայը ըլլար ամբողջ երկրին մէջ թագաւորի ներկայացուցիչը, կրնար զօրանալ և շուտով անկախութիւն ձեռք բերել : Այդ պատճառով Դարեհ սասրայներու կողքին դրած էր նաև երկու ուրիշ պաշտօնեաներ — արխայակաւ ֆարսուդարը և գորֆերու նրախնասարը : Սասրայի գլխաւոր պարտականութիւնն էր հրահել հարկերու, տուրքերու և ուրիշ եկամուտներու կանոնաւոր գանձման, հողերու կանոնաւոր մշակման վրայ որովհետև եկամուտի գլխաւոր աղբիւրները ատենք էին : Արքայական քարտուղարին պարտականութիւնն էր ստանալ կեդրոնէն (կայսրէն) հրամաններ և հաղորդել սասրային, ինչպէս և կեդրոնին տեղեկագիրներ տալ սասրայի ընթացքի և գործերու մասին : Վերջապէս զօրքին հրամանատարը կը վարէր միայն ամբողջ զինուորական գործը . ան իր հրամանները կը ստանար ուղղակի պալատէն :

Դարեհ այդ երեք բարձր պաշտօններուն կը կոչէր ամէն տեսակ մարդիկ, խտրութիւն չընելով ոչ ազգութեան, ոչ ալ հարատուութեան և դասակարգերու մէջ :

Այսպէս, գաւառներու մէջ իշխանութիւնը բաժնուած էր երեք մասի և իւրաքանչիւր մասի վարիչն անկախ էր միւսէն, այնպէս որ անոնց իւրաքանչիւրը տեսակ մը հակիչ ու լրտես էր միւսներուն համար : Սակայն Դարեհ ատով ալ չբաւականացաւ . ան գիտէր, որ այդ երեքը կրնան, օրինակ՝ Եգիպտոսի կամ Լիւդիայի մէջ միանալ և անկախութիւն հռչակել : Այդպիսի անահնկախներու առաջին անելու համար, կը նշանակէր ինքնադատուկ պաշտօնեաներ, որոնք կը կոչուէին Թագաւորի Աշխեր և Թագաւորի Ակաւցներ : Յանկարծ մայրաքաղա-

քէն-Շօշէն կամ Սուգայէն կուգար «Թաղաւորին աչքը» — պաշտօնեայ մը, հետն ալ գունդ մը դօրք: Կը քննէր սատրապին կամ միւս պաշտօնեաներուն բոլոր դօրծերը, կը լսէր, կը տեսնէր ամէն բան, բոլոր ծրագիրները և անյուզարձը: Կրնար անմիջապէս տապալել սատրապը, կրնար նոյն իսկ սատրապի անձնական պահակին հրամայել որ սպաննէր զայն, — ի հարկէ ցոյց տալով արքայական հրամանը: Սատրապներ փոխել, նորեր նշանակել, պատժել և այլն՝ այդ բոլորը կախուած էին «Թաղաւորի աչքերէն ու ականջներէն»: անոնք ալ կամ իրենք անձամբ կը կատարէին, կամ կը զրէին կեդրոն և այնտեղէն կը կարգադրուէր ամէն բան: Այսպիսով, բոլոր բարձր թէ ստորագաս պաշտօնեաներու կեանքը և գոյքը կախուած էին կայսրէն. անոնց բոլորն ալ կը զգային, որ իրենց տէրը Թաղաւորն է: Իշխանութիւնը կեդրոնացած էր Դարեհի պալատին մէջ:

Վարչական, կրօնական և զինուորական այդ ամբողջ կեդրոնացումն իսկապէս գործադրելու համար, մայրաքաղաքէն դէպի բոլոր գաւառները շինուեցան շատ գեղեցիկ ճամբաներ, որոնց վրայ կը վիսային կեդրոնական իշխանութեան սուրճանդակները: Անոնք կը սանէին գրաւոր հրամաններ Շօշէն դէպի սատրապութիւնները, իսկ այնտեղերէն կեդրոն կը բերէին մանրամասն հաղորդագրութիւններ տեղական գործերու ու պաշտօնեաներու մասին: Այդ ճամբաներէն նշանաւոր էր Սուգայէն (Շօշ) մինչև Սարղա գացողը, որու երկայնութիւնն էր 1500 մղոն և զոր հետիոտն ճամբորդը կը կտրէր 90 օրէն. իսկ սուրճանդակը՝ 6 օրէն: Ճամբաներու վրայ շինուած էին 110 կայաններ կամ իջեւաններ, շրջապատուած պարտէզներով, մօտերն աղբիւր կամ ջրհոր. ատոնք օթեւաններ էին ճամբորդներու համար:

Իւրաքանչիւրի մօտ կային յատուկ շէնքեր, արքայական սուրճանդակներու և ձիերու համար: Սահմաններու մօտիկ տեղերը՝ ճամբաներու վրայ շինուած էին բերդեր ու անոնց մէջ զրուած էին ուղարգեղներ, այսինքն յատուկ պաշտօնեաներ, որոնք իրաւունք ունէին կանգնեցնելու իւրաքանչիւր ճամբորդ, քննելու, խմանալու անոր ինքնութիւնը. և եթէ Պրոսես կամ փախստական էր, կրնային ձերբակալել, բանտարկել, պատժել և այլն: Պարսկաստանի մէջ կար արդէն բնակեցնելու կանոնաւոր ստորկանութիւն:

Ամէն գաւառ պարտաւոր էր երկու տեսակ հարկ տալ — ոսկիով և հում նիւթերով: Ոսկին կը հաւաքուէր արքայական գանձարանը: Պարսիկ թաղաւորներու գանձարանին մէջ միշտ կը գտնուէր ահագին հարստութիւն ձող ոսկիով, շորհիւ երկրի հսկայական մեծութեան և հարստութեան: Իսկ բերքերով կամ հում նիւթերով վճարուած տուրքերը կը ծախսուէին կայսերական պալատի և զօրքի պահպանման, սատրապներու ուժկի, անոնց շքեղ պալատներուն համար: Այսպէս՝ Եգիպտոսը կը մատակարարէր պարսկական 120,000 զօրքին հացը, Լիւդիան կուտար ընտիր նծոյգներ, Հնդկաստանը՝ ոսկիի փոշի, Ասորիքն ու Հայաստանը՝ մարուկ և գինի, Արաբիան՝ հոտուէտ նիւթեր, Եթովպիան՝ փղօսկր, սև փայտ ևն. մէկ խօսքով, իւրաքանչիւր երկիր կուտար իր գլխաւոր բերքէն:

(Լիւդիան եւ Մեդիան կուտային 300 տալանդ արծաթ, Փիւնիկէ եւ Կիպրոս 350, Հայերը — 300 տալանդ Եւայլն. գումար 9880 տալանդ արծաթ, որ արդի դրամով կ'ընէ 663 միլի և ժրագէ:

Հարկէ ազատ էր միայն . բուն Պարսկաստանը . անոր բնակիչները կուտային արքայական պալատին կաւաւոր նուերներ և ոչ հարկեր կամ տուրքեր : Այդ սովորութիւնը մնացած էր Կիւրոսի և Կամբիւսի օրերէն . անոր նպատակն էր ճիշտ Պարսիկներէն ստեղծել առանձնահատուկ ժողովուրդ մը , որ միշտ պատրաստ ըլլար կռուելու թագաւորին և պետութեան համար :

Իւրաքանչիւր նահանգ պարտաւոր էր կերակրել և պահել իր սասորապին պալատը , անոր թիկնապահներն և երկրի զօրքը : Բայց դիւրին չէր սատրապ մը պահելու ան նման չէր պատրուան նահանգապետի մը կամ նոյն իսկ փոխարքայի մը . անոր տարեկան ծախքը դեռ այն ժամանակներուն կը հասնէր օրինակ՝ Բարսիւնի մէջ 120,000 ոսկիի՝ մեր դրամով : Ունէր փառաւոր պալատներ — թէ ամբան և թէ ձմրան համար , բաւական մեծ անձնական պահակ և պալատականներու խումբեր : Ան երկրի դատաւորն էր , կառավարիչը , երեւմտաքի կարգադրիչը . իրաւունք ունէր ոսկիէ և արծաթէ դրամ կտրելու , նոյն իսկ մանր պատերազմներ վարելու դրացիներու կամ սեղական անհնազանդ իշխաններու դէմ : (Գանուած է Հայաստանի սատրապ Տէրիւպագի կտրած դրամը) : Եթէ կայսրը գո՞ մնար , կուտար պարգևներ , նոյն իսկ կայսեր հագած զգեստներէն մէկը , իսկ եթէ դժգո՞ էր , կը հրամայէր կտրել քիթը , ախանջը կամ ձեռքը , կը հրամայէր կախել , նոյն իսկ մորթազերծ ընել : Այսպէս , սատրապ մը կաշառակերութեան համար մորթազերծ ըրին և այդ մորթով ծածկեցին անոնց ախոյրը , որու վրայ կը նստէին սատրապները , դատեր վճուելու համար :

Գարեհի օրով Պարսկաստանի մէջ սկսան ոսկիէ և արծաթէ դրամ կտրել , խառնելով զուտ թանկագին մետաղի հետ փոքր մաս մը պղինձ , որպէս զի դրամը կա-

կուղ չըլլար : Այդ ժամանակի դրամները տձեւ էին , անկանոն և հաստ : Մէկ երեսին վրայ կը քանդակուէր թագաւորին պատկերը , ձեռքը՝ նետ , աղեղ կամ սէգ :

Պարսկական զօրք

Կասկած չկայ , որ պետական հասոյթներու մեծագոյն մասը կը ծախսուէր թագաւորին , բարձր պաշտօնեաներուն և , մանաւանդ , զօրքին համար : Թէ Պարսկաստանի և թէ Հին Արեւելքի բոլոր մեծ պետութիւններու գոյութեան գլխաւոր նիւթը զօրքն էր . բուն երկրին և տիրուած բոլոր վայրերուն մէջ չկար որ և է բարոյական , նիւթական կամ քաղաքակրթական կապ : Այսօր անգլիական վիթխարի կայսրութեան հեռաւոր մասերը մայր երկրին հետ կապուած են ընդհանուր լեզուով , առուտուրով , գրականութեամբ . անոնց թէ նիւթական և թէ բարոյական շահերը կը ստիպեն կապուած մնալ մայր երկրին հետ : Այդպէս չէր Հին Արեւելքի մէջ : Իւրաքանչիւր տիրուած երկիր կը խօսէր իր լեզուով , կը պաշտէր իր կրօնը , ունէր իր սովորութիւնները , նոյն իսկ սեղական իշխանները , բայց տիրողները մեծագու՞մար հարկեր կ'առնէին , կը հարստահարէին գանձուք : Ծիշտ է , Գարեհ մեծ յարգանքով կը վարուէր , օրինակ՝ Եգիպտացիներու կրօնին հանդէպ . կը վերանորոգէր անոնց տաճարները , կը յարգէր անոնց աստուածներն ու սրբազան կենդանիները , անոնց քուրմերն ու ազնուականները : Այդ երկրի առեւտուրը զարգացնելու համար Նեղոսը ջրանցքով միացուց Կարմիր ծովուն հետ . բայց այնտեղէն այնպիսի մեծաքանակ հարկեր և տուրքեր կը հաւաքէր որ ժողովուրդը — ազնուական թէ ուսմիկ , — միարեւրան կը տրանջար : Այդպէս էր գրեթէ բոլոր նահանգներուն մէջ : Այդպիսի պարագաներու մէջ , պետութեան ամբողջութեան միակ պահպանողը պիտի

ըլար զօրքը : Եւ զօրքը շատ մեծ հողածութեան առարկայ էր Պարսկաստանի մէջ :

Պարսկական զօրքը կը բաղկանար հետեւակէ, հեծկազօրքէ, և կառքով կուսողներէ : Ժամանակի ընթաց-



Պարսիկ զօր՝ — Աննահներ

քին, կառքով կուսողներ, անհետացան և կառքերը մնացին իրբ արածութիւն թագաւորի և զօրապետներու : Անոնց տեղ մտաւ ուղտերու և փիղերու զօրծա-

ծութիւնը : Թէ հետեւակը և թէ այլուձին բաժնուած էր երկու մասերու — ծանրազէն և թեթեւազէն : 10,000 զինուորը կը կազմէր մէկ զունդ, որ կը բաժնուէր հազարեակներու և հարիւրեակներու, իրենց հազարապետներով և հարիւրապետներով : Թեթեւազէն այլուձին կը կրէր վահան, աղեղ, սուր և թեփածու զրահ, իսկ ծանրազէնը՝ ծածկուած էր հաստ զրահով և ձեռքը բռնած էր երկար նիզակ :

Պարսկական զօրքի լաւագոյն մասն էր արհայախակ ձևեակն զունդը, թագաւորի թիկնապահ փոքրիկ բանակը : Կը բաղկանար 2,000 լաւ հեծկաքներէ, 2,000 հետեւակ նիզակաւորներէ և 10,000 հասարակ հետեւակէ : Ասոնք կը կոչուէին Աննահներ և ամէն տեղ կ'ուղեկցէին թագաւորին : Զօրքի այս մասը մնացուն էր : Ամէն սասարակ կը պահէր իր մատան գունդը, հետեւելով թագաւորի օրինակին : Այլ գունդերն էին որ հնազանդութեան մէջ կը պահէին բոլոր նուաճուած երկիրները : Իւրաքանչիւր պատերազմի ժամանակ, նոյ զօրք կը հաւարէր, բանակ կը կազմուէր : Այդտեղ կը մտնէին ամէն զգևտի, ամէն տեսակ զէնքի և զրահի զօրքեր, սոնք պատերազմի կ'երթային անկարգ, խառն ի խառն խումբերով : Զօրքին հետ կ'երթային բազմաթիւ արհեստաւորներ՝ կարկտիկու, շինելու և նորոգելու զէնքերն ու գանաղան պիտոյքները, ասոնց ալ կը հետեւէին աճազին թուով սոյսակներ ու կիներ :

Որքան ալ պակասաւոր ըլլային Դարեհի ներմուծած կարգերը, դարձեալ բարձր էին այն բոլոր կարգերէն, որոնք գոյութիւն ունէին Արեւելքի մէջ մինչև Դարեհի պետութեան կանոնաւորուիլը : Բաց այդ կարգերը երկար

Գարեհի
արեւմտեակներ

ժամանակ ապահովութիւն չպատճառեցին պարսիկ տիեզերական պետութեան: Իրանի մշտական թշնամիները հին դարերու մէջ կը կազմէին Սկիւթացիները, որոնք կը թափառէին Սեւ և Կասպեան ծովերու հիւսիսային ափերը՝ Դանուբէն (Իստէր) մինչև Ասիոյ խորերը: Դեռ Կիւքսարի օրով, անոնք արշաւեցին Մարաստանի վրայ. իսկ Կիւրուսի և Կամբիւսի օրով երկու անգամ խուժեցին Պարսկաստան: Դարեհի թագաւորութեան սկիզբներն ալ անոնք անդադար կը խառնակէին մեծ կայսրութեան հիւսիսային նահանգները. այդ պատճառով Դարեհ վրձուեց 515ին յարձակիլ անոնց վրայ, արշաւել երկրի խորերը, նուաճել ու պատժել զանոնք, որպէս զի այլևս չյանդգնէին խառնել իր հզօր պետութիւնը:

Դարեհ 700,000 հոգինոց հզօր բանակ մը հաւաքեց, նաւերով շարժական կամուրջ շինեց Վոսիորի նեղուցին միջև և այդ հսկայական բանակն անցուց Թրակիա: Սեւ ծովու ափերէն, ևւրոպական Թուրքիոյ և Պուլկարիոյ հողէն առաջ մղեց իր բանակը, իսկ նաւատորմը անցաւ Սեւ ծովէն և հասաւ Դանուբ: Նորէն կազմուեցաւ նաւակամուրջ և ցամաքային զօրքն անցաւ Դանուբի ձախ ափը, մտաւ Սկիւթացիներու անձայր տափաստանները: Որպէս զի բանակի ևտեւէն ճանապարհը չփակուի, Դարեհ կամուրջին սրաշապանութիւնը յանձնեց Փոքր Ասիոյ Յոյներէն բաղկացած գունդի մը և ինք առաջ անցաւ: Աւանդութիւնը կ'ըսէ, որ այդ Յոյներուն յանձնեց պարան մը, որու վրայ կար 60 հանգուց և հրամայեց օրական մէկ-մէկ հանգուց քակել: Երբ բոլոր հանգուցները քակուէին և ինքը վերադարձած չլլար, անոնք իրաւունք ունէին քանդելու կամուրջը և վերադառնալու իրենց տեղերը, որովհետև այդ կը նշանակէր որ ինք այլևս այդ ճամբով ետ չպիտի դառնայ:

Սկիւթացիներու մասին մենք տեղեկութիւն կը ստանանք երկու ճանապարհով. յոյն պատմագիր Հէրոդոտոս, Դարեհի արշաւանքէն 30-40 տարի յետոյ, այցելած է անոնց երկրերը (Դանուբէն մինչև Դնիպը) և թողած մանրամասն ու հաւանական նկարագրութիւն թէ՛ երկրի և թէ՛ ժողովուրդի մասին: Երկրորդ և իսկապէս զիտական աղբիւրը կը կազմեն պեղումները:

**Սկիւթացիները
և իւրեց երկիրը**

Դեռ Յոյներէն շատ առաջ՝ Փիւնեկեցի վաճառականները հիմնած էին բազմաթիւ գաղութներ՝ Սեւ ծովու բոլոր ափերը: Հիւսիսի և արևելքի այդ երկրները զանոնք կը գրաւէին իրենց առասպելական հարստութիւններով: Աւելի ուշ գաղութներ հիմնեցին Յոյներն ալ: Այդ գաղթականներն այնտեղէն կ'արտահանէին ոսկի, արծաթ, արծիճ, անագ, որ անհրաժեշտ էր պրծնդ պատրաստելու համար, ձկնեղէն և սաթ (Դնիպըրի ափերէն): Հսկայական էին այդ երկիրներու հացի, փայտի և կենդանիներու — մանաւանդ ձիերու հարստութիւնները: Դեռ Ը. դարուն (Ք. ա.) Յոյները գերակշռութիւն ձեռք կը բերեն Արշիպեղագոսի, Մարմարայի և Սեւ ծովու նաւագնացութեան մէջ. այն տեղէն կամաց կամաց կը սկսին վանել Փիւնեկեցիները. արդէն Է. և Զ. դարերուն Պոնտոսի ափերուն վրայ կը տեսնուին բազմաթիւ յոյն գաղութներ, որոնցմէ նշանաւոր էին Սինուպը, Տրապիզոնը, Պանտիկապէան (Կէրչի մօտ), Թէոդասիան, Տաւրիկեան Գէրսոնէսը (Սեւաստօպօլի մօտերը) և Օլլիան (Հարաւային Պուքի ափերուն): Այս վերջինը հացի առևտուրի կեդրոնն էր և Պուքի չորհիւ, մեծ հազորդակցութիւն ունէր հիւսիսի հետ՝ մինչև Պարթիկ ծովը: Իսկ Պանտիկապէան հիմնուած էր 512ին Կիւնեհեան Վոսիոր նեղուցի ափին,

որ Պոնտոսը կը միացնէր Մէօսիդէսի (Աղօլի ծով) հետ .
ան կեղերոն էր բոլոր արեւելեան Սկիւթացիներու հացի և
ձկան առեւտուրին , մայրաքաղաք դարձաւ մեծ պետու-
թեան մը , որ Սքիմի լեռներէն կը տարածուէր մինչև
Տօն ու Վօրիս գետերը և Կովկասեան լեռները : Այդ
պետութիւնը շուտով լնկաւ և Պոնտոսի թագաւոր
Միհրդատ Զ . Եւպատորը զայն դարձուց իրեն հար-
կատու :

Գալով այդ ծովափերը , Յոյները նախ կը հպատա-
կէին և հարկ կուտային տեղացի բարբարոսներուն , իսկ
յետոյ յաճախ կը զօրանային և կը տիրէին իրենց գաղու-
թի շրջականներուն : Անոնք բարբարոսներուն մէջ կը
տարածէին իրենց լեզուն , կրթութիւնը և նոյն իսկ ար-
հեստները :

Սկիւթացիները կը բաժնուէին երկու խոշոր հաւ-
ուածի — եւրոպական և ասիական : Եւրոպական Սկիւ-
թացիներն ալ կրկին կը բաժնուէին երկու մասի — Գա-
նուբէն մինչև Դինիպր թափառական անասնապահներ , իսկ
այնտեղէն մինչև Տանայիս (Տօն) երկրագործներ , հպա-
տակ և հարկատու առաջիններուն : Թէև Էէրօդոտոս
Սկիւթացիները մէկ ժողովուրդ կը կոչէ , բայց
անոնք բաժնուած էին բազմաթիւ ցեղերու , իսկ
ցեղերը՝ տոհմերու : Անոնք զեռ կ'ապրէին գըլ-
խաւորապէս տոհմական կազմով : Յեղերն անվերջ պա-
տերազմներու մէջ էին իրարու դէմ , իսկ երբեմն ալ այդ
ցեղերէն մէկ քանին կը միանային , կը կազմէին ահար-
կու ոյժ մը և կ'արշաւէին դէպի հարաւ կամ դէպի արե-
ւելք՝ դրացիներու վրայ : Միացման դաշն կը կնքէին
անոնց տոհմերու և ցեղերու գլխաւորները հետեւեալ ձե-
ւով :— Կ'առնէին մեծ աման մը գինի , դաշնակցողները

իրենց մարմինը ծակելով կամ կտրելով՝ հոսած արիւնը կը
լեցնէին գաւաթի մը մէջ և կարգով կը խմէին արիւնա-
խառն գինին : Այդ արեան դաշինքն անխախտ էր բար-
բարոսներուն համար : Կար դաշն կուրու ուրիշ ձեւ
մըն ալ : Այսպէս՝ երբ Սկիւթացիները պիտի արշաւէին
Կիմմէրեան Վոսիորի պետութեան (Պանտիկապէայի) Ար-
շակ (Արսակ) թագաւորին վրայ , անոնց գլխաւորներէն
մէկը եղ մը մորթեց , եփեց , կտոր-կտոր ըրաւ և շարեց
եզան մորթին վրայ . ինքն ալ մէջտեղը նստաւ : Միւս
ցեղերու և տոհմերու գլխաւորներէն ո՛վ որ գար կտոր
մը առնէր և ուտէր , կը դառնար անոր դաշնակիցը :

Սկիւթացիները թափառական էին . անոնց գլխաւոր
հարստութիւնը կը կազմէին

Սկիւրացիներու
կենցաղը

 ձիերու ջոկատները և միւս ըն-
տանի կենդանիներու հօտերը ,
զորս իրենց առջեւը ձգած ,
կը թափառէին ջրառատ և խոտաւէտ տափարակներու
մէջ . անոնց հտուէն կ'երթային կիներն ու երեխաները ,
թաղիքով ծածկուած մեծ սայլերու մէջ : Այդ պատճա-
ռով Հիւրօդոտոս կ'ըսէ , որ ինք անոնց երկրին մէջ ոչ
գիւղ տեսաւ , ոչ քաղաք , ոչ ալ տուներ :

Մշտական պատերազմները զանոնք դարձուցած էին
դաժան և արիւնարբու : Այսպէս՝ անոնք կը կտրէին իրենց
թշնամիներուն գլուխները , կամ կը հանէին անոնց մորթը
և իրենց հետ կը տանէին . ո՛վ որ շատ մորթ ունենար ,
ան աւելի յարգանք կը վայելէր՝ իբր քաջ մարդ : Յա-
ճախ սպաննուած նշանաւոր թշնամի մը գլխու մորթը կը
քերթէին , գանկի ոսկորը կը հանէին , կը մաքրէին և եր-
բեմն եզան կաշիով , երբեմն ալ ոսկիով և արծաթով կը
պատէին ու կը գործածէին իբրև գինիի բաժակ :

Անոնք յաճախ իրենց գերիներուն աչքերը կը հանէին, որ չփախչին, և անոնց կը յանձնէին պատրաստել իրենց սիրած կերակուրն ու խմելիքը, — ձիու կաթ կթել: Գերի բռնած թշնամիները կը ծախէին իրրև սորուկներ:

Իրենց կերակուրը սովորաբար միան ու ձիու կաթն էր: Կ'ենթադրուի թէ սկիւթական քանի մը ցեղեր մարդակեր էին: Անոնք չափազանց շատ գինի կը գործածէին, այն ալ առանց ջուր խառնելու, ինչ որ Յոյները կը համարէին բարբարոսութեան նշան:

Սկիւթացիները կը հազնէին լայն շաւարներ և կարճ զգեստներ, որ շատ յաւմար էին ձի նստելու համար: Գլուխները կը դնէին թաղիքէ խիստ լայն գլխարկներ, որոնց եզրերը կ'իջնէին մինչև ուսերը: Կիներու զգեստը կը բաղկանար երկար շապիկէ մը, որ կ'իջնէր մինչև կրունիները և սեղմուած էր մէջքի մասերէն. թեւերը շատ լայն էին, իսկ վրայէն կը հազնէին լայն վերարկու մը, խոխայի ձևով: Վերնազգեստներու վրայ կը կոցնէին տեսակ-տեսակ դարդարանք՝ ոսկիէ, ապակիէ, ուլունքներէ և այլն. վիզերէն, թեւերէն, երբեմն ալ ոտքերէն կը կախէին ապարանջաններ, ուլունքներ և այլն. ականջները կը դարդարէին գինդերով կամ օղերով, ձեռքերը՝ մատանիներով:

Անոնց գէնքերն էին նեւ ու աղեղը, մետաղէ նիզակը, դանակը, սուրը, երկարակոթ և թեթեւ կայինը, վահանը և զրահները: Անոնք կը շինուէին գլխաւորապէս երկաթէ, պրծոցէ և պղինձէ:

Բարբարոս և գոհնիկ էր անոնց կրօնը: Կը պաշտէին բնութեան ոյժերը — արևը, լուսինը, երկինքը և այլն: Ունէին բազմաթիւ աստուածներ, բայց անոնց համար չէին կանգներ ոչ տաճարներ, ոչ ալ կուռքեր: Միայն պատե-

Կրօնը

բազմի աստուածն էր, որ կ'արժանանար իրենց մասնաւոր ուշադրութեանը. — կը հաւաքէին ցախեր, կը կազմէին մեծ թումբ մը, անոր գլխուն կը ցցէին հին ու մեծ թուր մը. այդ էր պատերազմի աստուածին կուռքը. Անոր զո՞հ կը մատուցանէին թէ՛ կենդանիներ և թէ՛ երբեմն ալ մարդիկ. բռնուած գերիներու հարիւրին մէկը պիտի զոհէին այդ աստծուն:

Անոնց մէջ կային բազմաթիւ վճուկներ և գուշակներ, բայց մեծ յարգանք չէին վայելեր. եթէ անոնց գուշակութիւնները կատարուէին, պատիւներ ու նուէրներ կուտային, իսկ եթէ չկատարուէին, սայլը կը բեռցընէին՝ չոր ցախերով, անոր վրայ կը կապէին վճուկը, ցախերուն կրակ կուտային և լծուած եգները կը քչէին դէպի դաշտերը:

Թաղման ծէսերն ալ կը կրէին նոյն բարբարոսական նշանները: Հասարակ մեռելները քառասուն օր կը պտոցնէին հանգուցեալին ճանօթներուն ու բարեկամներուն բնակատեղերը և յետոյ կը թաղէին: Մեռել պտտցնողներուն կուտային գինի, ուտելիք և ուրիշ նուէրներ: Թագաւորներու փոքրաքրը կը հանէին, մարմինը կը զմուտէին և կը պտոցնէին բոլոր հպատակ ցեղերու բնակավայրերը: Հպատակներն իրենց վշտակցութիւնը կը յայտնէին կտրելով իրենց մազերը, երբեմն ալ ականջները. կը կտրէին նաև դէմքերու և վիզերու մորթը և արիւն կը հանէին: Դիակառքը որքան հեռու երթար մահուան տեղէն, այնքան աւելի ժողովուրդ կը հաւաքէր շուրջը: Թափօրն այդպէս կը համներ արքայական դամբարանը. այնտեղ կը փորէին մեծ, քառակուսի փոս մը, անոր քով զանազան խոռոչներ և թագաւորին դագաղը (յաճախ ոսկեպատ) կը դնէին փոսին մէջ, իսկ խոռոչներուն մէջ կը դնէին անոր ամէնէն աւելի սիրած

կինը և ծառաները՝ բոլորն ալ նախապէս խեղդելով : Հանգուցեալին հետ կը դնէին նաև անոր բոլոր զարգարանքներն ու զէնքերը : Յետոյ ներկաները հողով կը ծածկէին գերեզմանը ու անոր վրայ կը բարձրացնէին անագին հողաթումբ մը , մօտ 500 քայլ շրջապատով : Այդ հսկայական գերեզմանները կը կրեն Բուրխան անունը : Մահուան տարելիցի օրը կրկին կը յիշատակէին մեռելը և կը սպաննէին անոր ծառաներէն ամենահաւատարիմներն ու ձիերէն ամենալաւը . սպաննուածները ցիցը կ'անցընէին ձիերու վրայ նստեցուցած և կը շարէին Բուրխանին շուրջը :

Հերոգոսոսի սրատմաններէն արդէն անցած էր մօտ 2000 տարի և անա ժ.թ. գարու առաջին կիսուն , ուստի հնագէտ մը Կերչ քաղաքին մօտերը պեղումներ կատարեց և գտաւ սկիւթական թագաւորներէն մէկուն քուրկանն իր ձիերով ու ծառաներով : Այդ քուրկանէն հանեցին անագին թիւով հնութիւններ , որոնք մեծ լոյս կը սփռէին սկիւթական հին կեանքին վրայ : Այդ հնութիւնները հաւաքած և զետեղած են Պետերբուրգի Էրմիտաժ թանգարանի յասուկ բաժնին մէջ : Ատոնց կարգին խիստ ուշագրաւ է գերեզմանէն հանուած ոսկիէ ամանը : Ուրիշ տեղ մըն ալ գտնուած է արծաթէ աման մը , որուն վրայ կան բազմաթիւ փորուածքներ — թռչուններ , երկթեւեան հրէշի մը գլուխ , առիւծի երկու խոշոր գլուխներ՝ ուռուցիկ ձեւով , իսկ անօթի կանթերուն մօտ , դօտիաձև քանդակով , ձիեր ու մարդիկ , որոնք պարզ կը ներկայացնեն Սկիւթացիներու զգեստները , անոնց ձիերը ու ձիազարդերը , սանձերը , թամբերը և այլն : Այդ երկու քանդակագործ ամաններն ալ յունական նուրբ արհեստի

Պեղումներու արդիւնք

արդիւնք են , բայց պարզ կ'երեւի , որ յոյն վարպետներն ամէն ջանք թափած են իրենց գործը յարմարընելու սկիւթական ճաշակին ու կեանքին :



Սկիւթական անօթ

Բոլոր պեղումները կուգան ապացուցանելու, որ այդ մալորօտական երկրի բոլոր վայրերուն մէջ, Որիմի և հարաւային Ռուսաստանի միւս մասերուն մէջ ապրած է բարբարոս ժողովուրդ մը, որ դեռ չէ հասած քաղաքակրթութեան սկզբնական աստիճանին, չէ հիմնած կանոնաւոր պետութիւն, չէ ունեցած գիր ու դպրութիւն և այլն:

Դարեհ անցաւ Դանուր գետը, ստաւ իր նաւատորմի բերած առատ պաշարները և մտաւ Սկիւթացիներու երկիրը: Ան կը կարծէր, թէ չուսով իրեն դէմ կ'կլլէ կանոնաւոր բանակ մը և ճակատամարտ կը մղէ բաց դաշտին վրայ: Սակայն իր յոյսերն ու հաշիւները չարդարացան. չկար ոչ քաղաք, ոչ գիւղ, ոչ ալ կանոնաւոր բանակ: Խաչնարած ու թափառական ժողովուրդն իր երեխաները, կիներն ու հօտերն ուղարկած էր դէպի հիւսիս, ապահով դաշտավայրեր, իսկ բոլոր զինուած տղամարդիկ կ'այրէին, կրակի կուտային դաշտերու ու արտերու խտերը, պաշարներու մնացորդներն ու փայտեղէնը և միշտ աւելի ու աւելի կը թաղուէին իրենց անհուն դաշտերուն ներսերը: Ուրիկէ որ կ'անցնէր Դարեհի բանակը, կը գտնէր ամէն ինչ աւերուած, ջրհորները լիցուած ու փակուած. իսկ ուր որ պատահարաբար կը հանդիպէր բնակութեան և կեանքի, Դարեհն ինքը կ'օճչայնէր ամէնքը: Սակայն Սկիւթացիները քնացած չէին. անոնք ամէն վայրիկեան յարմար առիթէն կ'օգտուէին և յարձակում կը գործէին Դարեհի բանակին առաջապահ և վերջապահ դուռերէրուն, անոր թեւերուն, պաշարասայրերուն վրայ, և կը կոզոպտէին, կը կոտորէին, կ'այրէին. իսկ երբ պարսիկ բանակը կանգ

Դարեհ Սկիւթացիներու մէջ

առնելով կռուի կը պատրաստուէր, կրկին կ'անհետանային:

Տեսնելով Սկիւթացիներու այս ընթացքը, Դարեհն դեպքան զրկեց անոնց գլխաւոր առաջնորդին և ըսաւ.

— «Ձարմանալի մարդ ես. ինչո՞ւ միշտ կը փախչիս: Եթէ ինձմէ չես վախնար, կանգ առ և ճակատէ. իսկ եթէ կը զգաս որ ես քեզմէ ուժով եմ, հնազանդէ՛, հող ու ջուր ուղարկէ և ճանչցիր զիս իբրև քու տէրը:»

Իդանֆրիս, անոնց գլխաւորը, սաստիկ զայրացաւ և հետեւեալ պատասխանը տուաւ.

— «Պարսիկ, խմայիր, որ այդպէս է իմ սովորութիւնս: Ես դեռ մէկէն չեմ վախցած. դեռ ոչ մէկէն չեմ փախած և այժմ ալ չեմ փախչիր, այլ իմ սովորական ձեւովս կ'ապրիմ, ինչպէս և խաղաղ ժամանակ: Ես ճակատամարտ չեմ մղեր, որովհետեւ Սկիւթացիներս ոչ քաղաք ունինք, ոչ տուն, որ պէտք ըլլար պաշտպանել. մենք ունինք միայն մեր նախնիքներու գերեզմանները. փորձէ անոնց ձեռք զարնել և այն ժամանակ կը տեսնես, թէ Սկիւթացիները կը կռուին թէ ոչ: Իմ տէրս միայն աստուածներն են. իսկ հարկի և հող ու ջուրի տեղ, զոր դուն կը պահանջես, չուսով ինձմէ կը ստանաս ուրիշ նուէրներ:»

Եւ իսկապէս, շատ չանցած՝ Իդանֆրիս Դարեհին զրկեց զարմանալի նուէրներ, — թուչուն մը, մուկ մը, գորտ մը և հինգ նետ: Դարեհ զարմացաւ այդ նուէրներէն, բայց Պարսիկ մը, որ ծանօթ էր Սկիւթացիներու սովորութիւններուն, հետեւեալ ձեւով բացատրեց անոնց միտքը.


«— Պարսիկներ, եթէ դուք չգիտէք թուչունի պէս թուչիլ, մուկի նման ծակերը մտնել, գորտի պէս

ցատկեր ձանձնները , այն ժամանակ դուք բոլորդ կը կոտորուիք մեր նկատերէն :»

Դարեհն չվախցաւ արդ սպառնալիքներէն և առաջ անցնելով , մտաւ անոնց յիրմներու շրջանը : Այն ժամանակ ընդարձակ տափաստաններու բոլոր ծայրերէն խուժեց Սկիւթացիներու այնպիսի անազին բազմութիւն մը , որ Դարեհն չհամարձակեցաւ ձակատ առ անոնց դէմ : Շտապեց թողուլ իր պաշարասայլերու մէկ մասը , իր բանակի հիւանդներն ու վիրաւորները յանձնեց բախտին և ինքն ածապարեց իր բանակով ետ դառնալ : Նահանջի ժամանակ չափազանց մտահոգ էր , որովհետև Սկիւթացիները կրնային քանդել Դանուրի կամուրջը և այն ատեն նահանջի ոչ մէկ միջոց չէր ունենար : Ասիէ դատ , կամուրջը պահպանող փոքր-ասիական Յոյներուն արուած 60 օր ժամանակն արդէն անցած էր և Դարեհն որ և է լուր չէր հասած պահակախումբին : Յոյն իշխաններէն Միլթիատէս կը պնդէր թէ պէտք է քանդել կամուրջը , որպէս զի պարսիկ բոլոր զօրքը ոչնչանայ և Փոքր Ասիոյ յոյն գաղութներն աղատուին պարսիկ լուծէն : սակայն միւս յոյն իշխանը— Հիսգիէն՝ առարկեց թէ պարսիկ թագաւորի գոյութիւնը նպատաւոր է իրենց , որովհետև անոր չնորհիւ է որ իրենք իշխան են Փոքր-Ասիոյ մէջ . եթէ ինչոյ Պարսկաստանը , ինչ զիտենք , որ մեր հայրենակից Յոյները իրենք իսկ առաջինը չպիտի ըլլան մեզ— իշխաններս դուրս քշելու իրենց մէջէն : Մեծամասնութիւնը միացաւ Հիսգիէի կարծիքին և Միլթիատէս ստիպուեցաւ փախչիլ Յունաստան : Շատ չանցած եկաւ Դարեհն , անցաւ կամուրջը և իր բանակն ազատեց անխուսափելի կորուստէն : Լսելով յոյն պահակախումբին մէջ անցած դարձածը կամուրջը քանդելու մասին , մեծ պարզեւններ տուաւ Հիսգիէին :

Դարեհի այդ արշաւանքը տեւեց երկու ամիս : Զօրքը շատ կոտորած չունեցաւ . բայց սրբակական բանակին անյաղթելի ըլլալու համբաւը նսեմացաւ :

Դարեհի այդ արշաւանքին հետեւանքերը



Դարեհի դամբարանը

Իր երկիրը վերագանալով, Դարեհ իր զորավարներէն մէկը խոշոր բանակով մը թողուց Պալքաննան թերակղզին: Այդ բանակը սոսանց մեծ դժուարութեան նուաճեց Թրակիան և Մակեդոնիան, և հարկատու դարձուց պարսկական գահուն:

Այդ նուաճումներէն զատ, Դարեհն յանդուգն արշաւանքը անսպասի սարսափ տարածեց Սկիւթացիներու վրայ, որ անոնք երկար ժամանակ այլևս չհամարձակեցան անհանգստացնել պարսկական պետութիւնը:

Սակայն սկիւթական արշաւանքն ունեցաւ զէջ հետեւանքներ ալ: Փոքր ասիական յոյն զաղութները, որ սաստիկ ճնշուած էին պարսկական ծանր հարկերէն, հեռաւոր արշաւանքներէն և սատրապներու կամայականութիւններէն, համարձակութիւն ստացան, որովհետեւ տեսան Դարեհի անզորութիւնը բարբարոս Սկիւթացիներու դէմ. անոնք իրենց աչքերով տեսան, որ եթէ Դանուբի կամուրջը քանդէին, Դարեհի բոլոր զօրքը պիտի ոչնչանար: Եւ անա նոյն Հիսդիէն, որ ազատեց Դանուբի կամուրջը, զրդեց Փոքր Ասիոյ Յոյները՝ պարզել ապստամբութեան դրօշը:

Ապստամբութեան գլուխ անցան հարուստ և վաճառաշահ Միլէթ քաղաքը և միլէթցի Արիտագորասը: Բայց ապստամբները վատահէին իրենց ոյժին վրայ. անոնք օժանդակութիւն ինդրեցին իրենց և բոսպական ազգակիցներէն: Մինչև որ Յունաստանէն հասաւ անկարելոր օժանդակութիւն մը, Դարեհ եկաւ Փոքր Ասիա, ձգմեց ապստամբներու չնչին ոյժերը, զբաւեց և հիմէն կործանեց Միլէթ քաղաքը: Սակայն ատով չբաւականացաւ. ուղեց նաեւ պատմել Յունաստանի Յոյները, որ օգներ էին իրենց ապստամբ ազգակիցներուն:

Դարեհ անագին պատրաստութիւններ տեսաւ և 493ին արշաւեց Յունաստան. բայց իր անագին նաւատորմը ոչնչացաւ Աթոս (Այնորոզ) հրուանդանի մօտերը պատահած մեծ փոթորիկի մը ատեն: Երկրորդ անգամ մեծ բանակ մը ուղարկեց Յունաստան 490ին, Դատև Փրատսիերնէս զօրավարներու առաջնորդութեամբ, բայց Մարաթոնի դաշտին մէջ մեզ ծանօթ Միլթիատէսը լաջարդ մը տուաւ և փախցուց Պարսիկները: Դարեհ կ'ուզէր երրորդ անգամ արշաւել Յունաստան, բայց իր կրկնակի պարտութիւններն արդէն ուսասպառ էին ըրած բանակը. նոր բանակներ պատրաստելու համար սատրապութիւններու վրայ սաստիկ ծանր հարկեր դրաւ, որոնք զբռնեցին տիրուած երկիրները և ստիպեցին ապստամբել: Այսպէս՝ ապստամբեցաւ Եգիպտոսը, և Դարեհ մինչևե մահ (482) ստիպուեցաւ զսպել իր երկիրներու ապստամբութիւնները: Յոյները 10-12 տարի ազատ շունչ քաշեցին: Դարեհի մահէն յետոյ Գսերքսէս (481) և Արտաքսերքսէս (445) թագաւորները խոշոր արշաւանքն իր գործեցին Յունաստան, բայց և բոսպական Յոյները. Որմիայն կրցան ազատուիլ անոնցմէ, այլև ազատեցին իրենց վարժօրք-ասիական ազգակիցները պարսկական լուծէն:


Պարսիկ թագաւորները կրցան դանել յոյն աշուկաններէն բազմաթիւ դաւաճաններ և կրկին տիրացան ամբողջ Փոքր-Ասիոյ. բայց այդ բոլորը անցան ապարդիւն:

Դարեհ շատ արդարասէր և իմաստուն թագաւոր էր. մեծ համակրանք կը վայելէր ոչ միայն իր ազգին մէջ, այլ և հպատակ ժողովուրդներէն:

Դարեհի
ճակատագիրը

Մինչևե իսկ իր դրացիները յարգանք կը տածէին: Յոյն բանաստեղծ Եսխիլոս, որ մասնակցած էր Մարաթոնի ճակատամարտի, իր «Պարսիկ-

ներ» գրուածքին մէջ գովեստով ու համակրութեամբ կը խօսի այդ վեհապետի մասին: Հրէաներն ալ կը սիրէին զայն, որովհետեւ Դարեհ գահ բարձրանալով, թոյլատրեց կառուցանել Երուսաղէմի երկրորդ տաճարը: Եգիպտացիները զայն կը յարգէին այնքան, որքան իրենց մեծ ու սիրուած փարաւոնները: Նոյն իսկ հեռաւոր Կարքեղոնացիները կ'ընդունէին անոր գերիշխանութիւնը:



Քսերքեսի պարսին սանդուղի հարստանդակը

Դարեհ թագուեցաւ Պերսէպոլի մօտ, իր շինել տուած փառաւոր դամբարանին մէջ:

Դարեհ Բ.ի օրով (424-405) Պարսկական մեծ պետութեան ամէն կողմերը ապստամբութիւններ կը պայթին: Պաղատը, ազնուականութիւնը և արտօնեալ պարսիկ ժողովուրդը կ'էյնան շուայութեան մէջ, հպատակ

ազգերէն կեղեքուած հարստութիւնները կ'այլասերեն բուն պարսիկ ազգաբնակութիւնը:

Արտաշէս Բ. Ուշեղի օրով (405-362) այլասերումը աւելի եւս կը սաստկանայ իրող ցեղին մէջ, որու մեծագոյն մասը դարձած էր զինուոր կամ պաշտօնեայ: Այդ այլասերման քայքայիչ ազդեցութեանը կը միանայ նաև ներքին կամ ազգամիջեան կռիւր: Արտաշէս Բ.ի զէմ կ'եղէ իր եղբայրը — կրտսեր Կիւրուշ, որ սատրապ էր Փոքր-Ասիոյ կողմերը:

Կիւրուս կը վարձէ յոյն զօրավար Քսենոֆոնը իր 10,000 զօրքերով, որոնք քանի մը ճակատամարտերու մասնակցիկ յետոյ, կը կատարեն իրենց հաշակաւոր Անաքսիսը կամ Բիւրի Նահանջը Հայաստանի վրայով:

Քսենոֆոն թողած է իր այդ արշաւանքի և նահանջի մանրամասն պատմութիւնը: Հոն մենք կը գտնանք թանկագին տեղեկութիւններ Հայերու կեանքի ու սովորութիւններու մասին — Ք.է չորս դար առաջ:

Պետութեան այդ քայքայումէն օգտուելով, Փիւնիկէ և Եգիպտոս կ'ապստամբին, բայց Արտաշէս Գ. Ոքստս (362-338) նորէն կը նուաճէ և անգլխօրէն կը վարուի ապստամբներու հետ:

Մակայն Պարսկաստան ալ, չնայելով իր պետական բաւական յաջող կազմակերպութեան, չկրցաւ խուսափիլ Արեւելքի բոլոր պետութիւններու անխուսափելի ճակատագիրէն: Դարեհ Կոտոմանոս թագաւորին օրով, (338-331), Մակեդոնիոյ թագաւոր Ալեքսանդր Մեծը գրաւեց և վերջ գրաւ Աքեմէնեան Պարսկաստանին 331ին (Ք. ա.):

Աղեքսանդրի մահէն յետոյ, Պարսկաստան ինկաւ Սելեւկեան լուծին տակ մինչև 254 թուականը, երբ Կասպից ծովի լեռնոտ ափերուն վրայ ապրող Պարթե-

ւական ցեղերէն մէկուն իշխանը, — արեւակից Ա.քէմէ-
նեաններուն, Չարեհ (Դարեհ) Արշակ Ա. կ'ապտամբի
տկարացած Սելեւկեաններու դէմ, զանոնք դուրս կը մղէ
Իրանէն և կը թագաւորէ իր Թարս մայրաքաղաքին մէջ:

Պարթեւական հարստութիւնը, դուրս մղելով Սե-
լեւկեանները, շուտով կը զարնուի արեւմուտքէն եկած
հզօր ուժի մը — Հռոմէական Կայսրութեան:

Անվերջ պատերազմները և պետական կեանքի կա-
նոնաւոր զարգացման բացակայութիւնը պատճառ կը
դառնան Պարթեւներու անկման: Անոնց հարստութիւնը
կը տեւէ Իրանի մէջ 254է (Ք. ա), մինչև 14 (Ք.
հաք):

Պարթեւներու տեղը կը բռնէ Պահլաւ հարստու-
թիւնը — 14-էն մինչև 226: Ասոր ալ անվերջ պատե-
րազմներէ քայքայուելէն յետոյ, կը բարձրանայ Շիրքի
Փապակ Սասանեանի տունը, Փապակի որդի Արտաշիր
Սասանեանի օրով (211ին):

Պարսկական հին քաղաքակրթութիւնը բարձր չէ.
վար կը մնայ ոչ միայն եգիպ-
տականէն, այլ և ասորո-բա-
բելականէն: Պարսիկներն ամէն
ինչ փոխ առած են իրենց հե-
ռաւոր ու մօտաւոր դրացիներ-
րէն, բայց յարմարցուցած են իրենց ճաշակին ու գործա-
ծութեան:

Պարսկական հին
քաղաքակրթու-
թիւնը

Երբ Պարսիկները երեւացին պատմութեան ասպա-
րէզին վրայ, Մարաստան արդէն բաւական բարձր քա-
ղաքակրթութիւն ունէր: Մոզերը մեծ դեր կը կատա-
րէին Մարբրուն մէջ: Նոյն այդ երեւոյթը կը տեսնենք
Պարսկաստանի մէջ. այնտեղ ալ մոզերը և անոնց ար-
հեստը—մոզութիւնը կամ մակիան (մաժի) մեծ դեր կը

կատարէին թէ ժողովուրդին և թէ պետութեան կեան-
քին մէջ: Մարաստանի գորգերը և քանի մը գոր-
ծուածքները մեծ հռչակ կը վայելէին ամբողջ Ասիոյ մէջ:
Եւ մարսկան այդ քաղաքակրթութիւնը գրեթէ ամբող-
ջապէս անցաւ Պարսիկներուն:

Առաջ Պարսիկները շատ պարզ և անպաճոյճ
կեանք կը վարէին, բայց երբ
տիրեցին նախ Մարաստանին և
յետոյ Ասորեստանին ու Բաբել-
ոնին՝ փոխ առին հպատակնե-
րու փարթաւ կեանքը, անոնց ձոխութիւններն ու շէն-
քեերը, անոնց սեպածեւ տառերը: Պարսկական թագա-
ւորներն սկսան կառուցանել փառաւոր պալատներ, վա-
րել արեւելեան հարուստ վեհապետի կեանք և հագնել
չափազանց չքեղօրէն:


Ճարտարապետու-
թիւնը

Սքէմէնեան թագաւորներուն ծննդավայրը և սկզբ-
նական մայրաքաղաքն էր Պասարգատին, այժմեան Շի-
րազի նահանգին մէջ: Թէ նահանգը և թէ մայրաքաղա-
քը կը կոչուէին Պասարգատի: Այդ քաղաքին մէջ Կիւրոս
չինեց փառայեղ պալատ մը և ատով մեծ զարկ տուաւ
չինեց փառայեղ պալատ և ընդարձակուելուն: Անոր յա-
ջորդ Կամբիսի համար արդէն այդ պալատը շատ նեղ
էր ան իրեն մայրաքաղաք դարձուց Շօշը, ուր այնուհե-
տեւ ամէն նոր թագաւոր կը շինէր իրեն համար նոր
պալատ:

Շօշը դարձաւ գլխաւոր մայրաքաղաքը. բայց
ձմեռները պարսիկ արքունիքն կ'անցնէր Բաբելոնի մէջ,
որովհետեւ այնտեղ աւելի տաք էր, գարունը՝ Շօշի մէջ,
իսկ ամառը զով Նոր-Եկրատանի մէջ (Համատան):

Պասարգատի մէջ կը գտնուէր Կիւրոսի հին պալա-
տը, ուր կը թագաւորէին պարսիկ թագաւորները: Այդ

էր անոնց հանդիսաւոր ընդունելութիւններու, անոնց դատաստանի վայրը: Անոր աւերակները դեռ կը մնան Մուրհապայի մօտերը: Ասոնք են բուն պարսիկ ճարտարապետութեան ամենահին մնացորդները, որ հասած



Դարեհի սկսած պալատը,
որուն շինութիւնը շարունակեց Բաբելոնը


են մեզ: Պարստի մնացորդները շատ չնչին են, բայց անոր շրջակաները կը գտնուի հսկայական դամբարան մը, զոր տեղադրիչները կը կոչեն «Սողոմոնի մօր գերեզման», բայց որ իսկապէս Կիւրոսի շիրմնն է: Այդ շիրմին վրայ պարզ կերեւան երեք օտար ժողովուրդներու ազդեցութիւնը: Ամբողջ շիրմը շինուած է սպիտակ մարմարիոնէ: Ստորին մասը բաղկացած է 7 խաւերէ, որոնք իրարու վրայ են դասաւորուած և կը կազմեն 7 աստիճաններ. աստ-

րարաբերական շէնքերու գլխաւոր գիծն էր այդ: Աստիճաններու վերի մասին մէջ շինուած է փոքրիկ տաճարաձեւ տնակ մը, տանիքը երկու կողմէն դէպի վար ծռած, նման յունական շէնքերուն: Այդ ալ փոքր-ասիական յոյն գաղթականներու ազդեցութիւնն է: Այդ փոքրիկ շէնքին դուռը, մանաւանդ անոր ճակատը պարզ եզրիպտական ոճով է շինուած: Հին պատմագէտի մը համաձայն, այդ շէնքին արդուզարդը խիստ փառաւոր էր. ամբողջ պատերը ծածկուած էին թանկագին գորգերով, որոնք պատերուն կպցուած էին պրծնող թաթերով. անոնց շուրջը տարածուած էին ոսկիէ տերեւներ՝ զանազան քանդակներով: Արեւելեան այդ ճոխութենէն ոչ մէկ հետք մնացած է այսօր: Չքացած է նաև Կիւրոսի դիակն իր ոսկի դագաղով և ոսկի պատգարակով, որու վրայ դրուած էր, ծածկուած թանկագին կտորներով: Բայց մօտակայ պալատի աւերակներուն մէջ դեռ մնացած է Կիւրոսի խորաքանդակ պատկերը. հզօր արքան ներկայացուած է կանգնած, ամբողջ հասակով, երկու գոյգ թևերն ուսերու ետեւէն. մէկ զոյգը դէպի վեր է երկարած, միւսը՝ կախուած: Դէմքը կողմնակի է հանուած: Դիւիսը ծածկուած է սաղաւարտով. կողերէն դուրս են ցցուած երկու եղջիւրներ — նշան զօրութեան, իսկ անոնց մէջտեղը՝ կը գտնուի եզրիպտական թագը: Այդ քանդակին վերեւը, սեպածեւ գրերով փորուած է «Ես Կիւրոսն եմ, Աքեմէնեաններու արքան»:

Նշանաւոր է նաև Դարեհի շիրմը: Անոր վերին մասին մէջ ներկայացուած է թագաւորը, կանգնած քիչ մը բարձր տեղ մը և կրթնած աղեղին: Առջևը կայ աստուշան մը մխացող կրակով, իսկ օղին մէջ կը լողայ արեւը և կը սաւառնի Որմիզըր — մօրուեղ տղամարդ մը, աղեղը ձեռքը, մէջքը մեծ օղակ մը, նշան յաւի-

տնականութեան. օգտի երկու կողմերէն թեւեր, իսկ տակէն թռչունի պոչ. փետուրները շատ պարզ են և որոշ: Ընդհանուր ձևը կը յիշեցնէ եգիպտական թեւաւոր արեւը: Թեւերու տակէն կը կախուին երկու ժապաւեններ: Կրակարանի վերեւը կան քանդակուած եգիպտականներ:

Կիւրոսի յաջորդներուն օրով, պարսկական ճարտարապետութիւնը շարունակեց զարգանալ. սպարցոյց՝ Դարնի սկսած և Գերբսէսի շարունակած հսկայական պալատի մնացորդները, Պասարգատէն հիւսիս-արեւելք, Մէրվի հովտին մէջ: Այդ պալատը տանող մարմարէ սանդուխները եղած են չափազանց ծուռ և մանր-մանր ու չափազանց լայն, այնպէս որ տասը ձիաւոր կողք-կողքի կրնային բարձրանալ: Պալատի նախասեն-



Պարսկական սիւն

եակին մէջ կանգնած էին թեւաւոր եղներ, որոնք շատ նման էին Ասորեստանի պալատներու մուտքին մօտ կանդնած պահապան թեւաւոր եղներուն: Այդ եղներէն առա-

ջին զոյգի գլուխները բնական են, իսկ երկրորդ զոյգինը մարդու գլուխ: Պալատը բազկացած էր բազմաթիւ սե-



Թագաւորը կը սպաննէ Ա.հրիման հրէքը

նեակներէ: Իսկ դանչիճներէն մէկը եղած է չափազանց մեծ, նոյն իսկ հսկայական. այդ սիւնազարդ դանչիճն ունէր 100 սիւն:

Շատ բարդ և գեղեցիկ էին պարսկական սիւները,

որոնց մնացորդները պահպանուած են քանի մը աւել-
րակներու մէջ. գեղեցիկ են մանաւանդ այդ սիւներու
գլուխները: Պերսեպոլիսի աւերակներուն մէջ սիւները
կանգուն են տեղ-տեղ:

Գիտութեան ասպարէզին մէջ Պարսիկները գրեթէ
ոչ մէկ ինքնուրոյն բան են
տուած: Պարսկաստանի մէջ
դէր կը կատարէին յոյն բժիշկ-
ները, յոյն և փիւնիկեցի երկ-
րաչափները, եգիպտացի նկարիչները եւն.:

**ԳԻՏՈՒՄԻՆԸ
ԵՆ ԿՐԹՈՒՄԻՆԸ**

Պարսկական դատարարակութիւնը շատ գեղեցիկ
նպատակներ ունէր. կ'աշխատէին երեսաններուն մէջ զար-
գացնել քաջութիւնը, ամրագնդել պատուի զգացումը,
արդարադատութիւնը և սէր դէպի փառքն ու պատիւը:
Երիտասարդներուն կ'ուսուցանէին ձի հեծնել, նետ ու
աղեղ գործածել: Ուսումը շատ սահմանափակ էր. կը
հաղորդուէին քանի մը տեղեկութիւններ կրօնի մասին
և դոց կը սորվեցնէին մայրենի պատմութեան քանաստեղ-
ծական աւանդութիւնները:

Պարսկաստանի մեծագոյն առաւելութիւնը իր պե-
տական կազմն էր, կարգ ու կանոնը և համեմատաբար
աւելի մարդասէր օրէնսդրութիւնը:

Գ. ՌԻՐԱՐՏՈՒ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հին Հայաստանը միշտ միեւնոյն սահմանները չէ
ունեցած, այլ մերթ ընդարձակ-
ուած, մերթ կրճատուած է:
Բայց անոր կեդրոնական մասը
կազմիր է այն բարձրաւանդա-
կը ուրիշ կը բլխին Կուրը և Երասխը, Եփրատն ու Տիգ-
րիսը, և որ իրաւամբ կը կոչուի Հայկական Բարձրա-
ւանդակ: Կեդրոնական մասերը առհասարակ աւելի
բարձր են, քան ափերը: Բոլոր գետերը կը սկսին կեդ-
րոնէն և կը հոսին սահմաններէն դուրս:

Երկիրը և կլիման

Հայաստան կը գտնուի լայնութեան 37⁰էն մինչև
41⁰ը, և Փարիզի միջօրէակնէն հաշուելով՝ երկայնու-
թեան 35⁰էն մինչև 46⁰ը: Այդ բարձրաւանդակի մի-
ջին բարձրութիւնն է ծովի մակերեսէն 1500 մեղր, իսկ
ամէնէն բարձր գագաթն է Մասիս կամ Արարատ լեռը
(5200 մեղր):

Երկիրը չունի որչ և դժուարանցանելի բնական
սահմաններ, բացի արեւմտա-հիւսիսային մասէն (Խաղ-
տեաց լեռներ). այնպէս որ անոր սահմանները միշտ բաց
են եղած օտար թշնամիներու առջև: Իսկ կեդրոնա-
կան մասերը կտրտուած են բազմաթիւ լեռնաշղթանե-
րով, որոնք սաստիկ կը դժուարացնեն երթևեկը երկրին
ներսերը: Այսպէս՝ թշնամին կարող էր ազատօրէն ներս
մտնել երկրի սահմաններէն, իսկ ժողովուրդը չափազանց
մեծ դժուարութիւններով կրնար համախմբուիլ և միա-
համուռ ուժերով դիմադրել օտարին:

Այս է մէկ գլխաւոր պատճառը, որ Հայաստան չէ

կրցած կազմել կեդրոնացած խոշոր պետութիւն մը . ինչպէս Եգիպտոս , Ասորեստան և ին . :

Երկրի կեդրոնէն կ'անցնի երկայն լեռնաշղթայ մը , որ կը սկսի Մասիսէն և կը հասնի մինչև Կարին : Հայկական լեռնաշղթան է այդ , որու մէջ կան Ջրաբաշխ , Բիւրակնեան , Սուկաւէտ և այլ լեռները : Արեւմտեան կողմէն ներս կը մտնէ Տաւրոս լեռնաշղթան , որ ճիւղաւորուելով , կը հասնի մինչև Հայկական Բարձրաւանդակի միջին մասերը : Վանայ լիճէն արեւմուտք տարածուած է Հայոց Տաւրոսը կամ Սասունը : Իսկ Գեղամայ լիճէն դէպի հիւսիս կ'երկարին Սիւնեաց լեռները կամ Փոփր Կովիսար :

Բացի Մասիսէն , նշանաւոր են Արագած , Նախտ , Սիփան , Գրգուռ , Ընձաքիարս գագաթները , և Վարագայ լեռները՝ Վանայ լիճին մօտ :

Գետերէն , ինչպէս ըսինք , նշանաւոր են Կուրը , Ճորոխը , Երասխը , Եփրատը և Տիգրիսը : Ասոնց ամենուն ալ , բացի Երասխէն , միայն վերին հոսանքը կը պատկանի Հայաստանի : Այդ գետերն ունին բազմաթիւ վտակներ և մանր առուակներ , որոնք առատօրէն կ'ուռգեն Հայաստանը :

Լիճերէն նշանաւոր են Գեղամայ կամ Սեւանայ և Վանայ կամ Բզնունեաց լիճերը . իսկ արևելեան սահմանին վրայ կը գտնուի Ուրմիոյ կամ Կապուտան լիճը :

Այդչափ լեռներն ու գետերը կը կազմեն իրենց միջև և ափերուն վրայ բազմաթիւ դաշտավայրեր և լեռնադաշտեր , որոնցմէ նշանաւորներն են — Արարատեան , Մուշի , Կարնոյ , Բասենի , Խարբերդի , Բաբերդի դաշտերը :

Հայ երկրի կլիման խիստ է — ձմեռները երկար ու ցուրտ , իսկ ամառները կարճ և տեղ-տեղ խիստ տաք :

Դաշտերէն մէկ քանին (Երեւանի , Խարբերդի , Մուշի) այնքան տաք են որ կ'արսաղրեն խաղող , թուզ , դեղձ և ուրիշ պտուղներ , իսկ միւսները այնքան բարձր սցուրտ են (Կարին , Բասեն) որ հաղիւ հացարդսեր կ'աճին :

Գրիստոսէ 6-7 դար առաջ այդ երկիրը դեռ եւս Հայաստան չէր կոչուեր : Ասորեստանեան արձանագրութիւններու մէջ ան կոչուած է նախ Նայիրիի երկիրներ . իսկ Թ . դարէն սկսած — Ուրա-արսու կամ Ուրարսու : Միայն 510 թուականներուն Գարեհ Վշտասպեանի Պէհիսթունեան արձանագրութեան մէջ է որ մենք կը տեսնենք առաջին անգամ Հայաստան (Արմէնիա) , գործածուած այդ երկրին համար :

Հին բնակիչները

Վանի արձանագրութիւններու մէջ այդ երկրի ժողովուրդը ինքզինքը կը կոչէ «ազնիւ Խարիեացիներ» : Պատմական զանազան յիշատակարաններէ կ'երևի որ հոն կը բնակէին Ուրարացիներ , Թորքիներ , Կոնսպիներ , Բեսացիներ , Մոսկիփեաններ և ին . :

Ուրարտացիներուն կամ Խալտեաններուն ցեղակից էին Ս . Գրքի և եգիպտական ու ասորական արձանագրութիւններու մէջ յաճախ յիշուած Բետացիները կամ կամ Հիթիթները (Հատ-Հիթիթ .) որոնց բնակավայրն էր Կապադովկիան : Հոն — Եօգկատի և Պօղազ-Քէօյի քովերը գտնուած են անոնց քաղաքներու ընդարձակ աւերակները : Ասկէ իջան և տիրեցին Կիլիկիոյ , Սուրիոյ և Միջերկրականի ափերուն : Անոնց մէկ մասն ալ Ք . է 18 դար առաջ մտաւ Եգիպտոս և տիրեց անոր Հիւքսոս անունով : Անոնց մայրաքաղաքն էր Կարխէմիշ կամ Կարկէմիշ — Եփրատի ափը , Իսրէլաերունի ծոցի ուղղու-

Թեամբ, իսկ նշանաւոր քաղաքներն էին Խիլիպը (Հալէպ) և Կատէշը կամ Կատէսը :

Ի՞նչ ծագում ունէին այս Քեսապի, Հիթիթ, Խալտի և այլ անուններով կոչուած ցեղերը, — մինչև և այսօր ալ գիտնականները չեն յաջողած ստուգել : Ոմանք կը բնակ թէ անոնք Մոսկոլ ցեղէն են, որովհետև այսօր կրները դուրս ցցուած, գոյները քիչ մը դեղին, քիթի ծակերը լայն են, գանկերը տափակ և այլն : Ուրիշները կը պնդեն որ անոնք սեմական ցեղէն են, որովհետև նմանութիւններ ունին անոնց հետ : Մէկ քանին ալ ուղեցին անոնց մէջ տեսնել արիական ցեղ (այլիսակ այրացեղեր) և անոնց արձանագրութիւնները մեկնաբանել հասերէնով : Վերջապէս ուրիշները նոյն իսկ Հաս, Հիթիթ, Քեսապի, Հիւք (Hyk) անուններէն ծագած համարեցին Հայ, Հայք բառերը : Բայց այդ ենթադրութիւններէն և ոչ մէկը չհաստատուեցաւ մինչև և այսօր :

Հին պատմիչներ Հայաստանի նախաբնիկները կը կոչեն Արարտեաններ : Ոմանք կը կարծեն թէ Ուրարտեաններ անունն է որ աղծատուեր, դասեր է Արարտեաններ : Մինչև և այսօր Վանի և Հայաստանի շատ մը տեղերու մէջ դանուած արձանագրութիւններու լեզուն անկարելի եղած է նմանցնել արիական, սեմական կամ մոսկոլեան ծանօթ լեզուներուն : Ուրեմն՝ այդ ժողովուրդներու ծագումը, անոնց ո՞ր ցեղին պատկանելը՝ մինչև և այսօր դեռ լուսաբանուած չէ :

Հիթիթները և անոնց քոյր Խալտեանները Քրիստոսէ 13-15 դար առաջ հասած էին բաւական բարձր զարգացման : Անոնք շատ հին տեղերէն գիր են ունեցած : Այդ հնագոյն գիրերէն մեր ձեռքը հասած են Կիլիկիոյ, Կապադովկիոյ և արեւմտեան Հայաստանի կողմերը բազ-

**Նախաբնիկներու
բազմապիւրութիւնը**

մաթիւ արձանագրութիւններ՝ միայն Հիթիթներէն և Հատերէն մնացած : Անոնց տառերը կը յիշեցնեն եգիպտական մեհենագիրները, բայց աւելի կոպիտ են ու բազմաձև : Խալտեաններէն մեզի հասած չեն այդ ձեւի գրութիւններ, բայց պահուած են բազմաթիւ քեւեռագիր արձանագրութիւններ, որոնք բոլորովին նման են ասորական բեւեռագիրերուն :

Գժրաղգարար Հատեան արձանագրութիւնները մինչև և այսօր չեն կարդացուած, եթէ ոչ մեծ լոյս կրնային տրուել հայ երկրի հին պատմութեան վրայ : Միայն գրուած են Հատեան երկու թագաւորներու կնիքները, որոնց վրայ գրուած է իրենց անունը, ե՛ւ Հատերէն, ե՛ւ ասորերէն — Թարիւնիսիսու և Ինիշիլիսիսու քաղաւոր : Սակայն այդչափը հերիք չէ անոնց նշանագիրները կարդալու համար :

Իսկ ուրարտական արձանագրութիւնները թիւով բաւական շատ են՝ մանաւանդ Վանայ և Սեւանայ լիճերուն շուրջը : Գտնուած է նոյն իսկ Մուսասիրի կամ



Ուրարտացի կնիք

Մուճաճիրի թագաւոր Ուրարտացի կնիքը, հետեւեալ արձանագրութիւնով. «Կնիք Ուրարտացի, քաղաւորին Մուսասիրի եւ Նուարքի (°) փառաբան, որուն քերակը՝ լեռ-

ներու մեջ, չար օձի մը բերնին պէս բաց եռ: Այդ կնի-
քը կը գտնուի այսօր Լահէյի թանգարանին մէջ:

Գիժաղդարար ուրարտական արձանագրութիւնները
կապակցուած պատմութիւն մը կազմելու չափ նիւթ չեն
մատակարարեր տակաւին:

Թէ Հատեանները և թէ Ուրարտացիները նախա-
պէս եղած են պարզ հովիւ, անամարոյժ և երկրագործ
ժողովուրդ մը: Իբր հովիւ, անոնք եղած են քաջ աղեղ-



Ռուսասի վահանը

նաւորներ և կարիճ մարտիկներ: Անոնց ծանօթ էր մե-
տազագործութիւնը: Գտնուած են այժմ բաւական թի-
ւով պղինձէ, պրծնղէ և ուրիշ մետաղներէ անօթներ,

տաշտեր, զոհաբերութեան ամաններ և նոյն իսկ Ռուսաս
կամ Ռուչաս թագաւորի վահանի կտորը, որ այժմ կը
գտնուի Պերլինի թանգարանին մէջ: Այդ վահանը, իբր
վրայ քանդակուած առիւծներով, արդիւնք է բաւական
զարգացած արհեստի մը:

Նշանաւոր էին անոնց կերպանները և ամէն տեսակ
բուրդէ ու մետաքսէ գործուածքները: Անոնք իրենց
երկրի բերքերը կ'արտահանէին Եփրատ-Տիգրիսի ճամբով
դէպի հարաւ, մինչև Եփրատէ, Բաբելոն և աւելի եւս
դէպի հարաւ: Ճամբորդութեան գլխաւոր միջոցն էր տո-
փը (ֆիլեֆ) կամ լատոր: Իսկ արտահանութեան առարկա-
ները՝ գինի, կերպաս, մետաղէ իրեր և մանաւանդ, ձիեր
և ջորիներ:

Գիտութիւններէն ծանօթ էր աստղաբաշխութիւնը:
Ասորական արձանագրութիւններէն յայտնի է որ անոնք
գուշակած են եղեր 763 Յունիս 14 կատարուած արեւի
մեծ խաւարումը, և յարձակեր են խաւարումէն սարսա-
փահար Ասորեստանցիներուն վրայ:

Սակայն աստղաբաշխութիւնէն աւելի ծաղկած էին
երկրաչափական և ճարտարապետական գիտութիւնները:
Մինչև այսօր մնացած են անոնց փորած ջրանցքներու
և փապուղիներու (քիւնեղ) հետքերը: Լեռներու կողերէն
անցնող, զառիթափներ ձեղքող ուրարտական ջրմուղնե-
րէն շատերը մինչև այսօր կը ծառայեն Վանայ չրջակա-
ներուն: Հին ջրանցքներէն ամենէն նշանաւորն էր Մե-
նուաս թագաւորի փորել տուածը, որ կը մնայ մինչև
այսօր, Վանայ մօտերը:

Անոնց քաղաքները փոքր էին, բայց բնականէն
ամրակուռ զիրքերու վրայ. շատերը չրջապատուած էին
երկու, և նոյն իսկ երեք կարգ բարձր, ատամնաւոր պա-
րիսպներով: Բերդեր և ամրութիւններ կառուցանելու

արհեստը խիստ զարգացած էր: Ասոր համոզիչ վկան է Վանը իր բերդով ու չրջակայ ամրութիւններով: Պատմութեան մէջ ի դուր Եօթնարբուրեան Հռոմը ստացած է Յաւիտենական Բարդաբ տիտղոսը. նոյն իսկ աւանդութեան համաձայն, սն հիմնուած է 750ին, իսկ այդ ատենները Վան արդէն դարերու անցեալ մը ունէր: Յաւիտենական տիտղոսը շատ աւելի Վանայ կը վայելէ, քան Հռոմի:

Արձանագրութիւններէն չերեւիր որ Ուրարտացիները ունեցած են կաւեւրարու բանակներ: Եւ արդէն իրենց երկրին դիրքն ու չափէն աւելի բազմաթիւ մանրիկ պետութիւնները չէին կրնար թոյլատրել այդպիսի բանակի մը գոյութիւնը: Թէ Խալտեանները և թէ Հատերը եղած են կուռող, զինուած ժողովուրդ մը, միշտ պատրաստ յարձակելու, միշտ կատաղօրէն պաշտպանող իրենց երկիրը:

Մնոնց իշխանները ունեցած են ամրակուռ ուղմական կառքեր, անշուշտ Ասորեստանի արքաներու կառքերուն ձեւով: Մնոնց զէնքերը եղած են սուր, նիզակ, աէգ, աղեղ և նետ, զօրքերու զգեստն էր մինչև ծունկներն իջնող շապիկ մը, մէջքը գօտիով մը ամրացած. կը հագնէին նեղ և իրանը ընդգրկող անդրավարտիք մը կամ տափատ մը: Այս ամէնը բոլորովին նման են Հատեաններու կամ Քետացիներու զգեստներուն, բայց գլխարկները և կօշիկները կը տարբերին: Հատեաններէն զգեստներուն մէջ ամէնէն աւելի յատկանշականն էին անոնց սրածայր և կոնաձեւ թաղիքէ գլխարկները և, մանաւանդ սրածայր, քիթը ետ դարձած մուճակները: Մինչ Խալտեան զինուորը կը դնէր մինչև ճակատն իջնող թաղիքէ քաւակ մը և կը հագնէր աւելի կտր ծայրերով կօշիկներ: Զօրավարներու զգեստներն ալ քիչ մը կը յիշեցնեն միջ-



Վանի գիւտարկեր

նադարեան ասպետներու զգեստները: Նշանաւոր էին նաեւ անոնց գործածած ձեւնոցները, որ միայն երկու բաժին ունէին — մէկը բթամատի, միւսը մնացած չորս մատներու համար: Առհասարակ բոլոր զգեստները յարմարցուած էին լեռնոտ երկրի ցուրտ կլիմային:

Ուրարտական երկանիւկառքերը մեծ յարգ կը վայելէին ոչ միայն Միջագետքի մէջ, այլ և Եգիպտոսի փարաւոններէն և ազնուականներէն:

Թէ Խալտեանները և թէ Բետա-ցիները շատ սրնապաշտ էին: Մինչև այսօր գտնուած գրեթէ բոլոր ուրարտական արձանագրութիւնները մեծ մասով կը խօսին իրենց աստուածներու, զոհերու, տաճարներու մասին. միայն Վանայ Մհերի Դրան արձանագրութեան մէջ յիշուած է 46 աստուածի անուն: Հաւանօրէն հայ ժողովուրդի մէջ

Վանից կրօնը

ա
բա

մինչև այսօր խոր արմատ բռնած անապատութիւններէն շատերը ժառանգութիւններ են այդ հին նախաբնիկներէն :

Անոնց կրօնի էական գիծը, ինչպէս բոլոր ազգերու մէջ, եղած է քննադատութիւնը . աստուածացուցած են արեւը, Գաղապնիներու Շառնաշը, լուսինը, կայծակը և այլն : Սակայն անոնց աստուածներու թիւը հազարներու կը հասնի . ամէն մէկ բնական տարր և երեւոյթ ունի իր սեփական աստուածը : Մեղի հասած արձանագրութիւններէն կրեւի որ ամէն գաւառ, ամէն քաղաք ունեցած է իր յատուկ աստուածները : Այսպէս՝ Ուրարտուի մէջ գլխաւոր աստուածն էր Խալտի (Խարտու), Մաննայի մէջ — Բագմաղը կամ Բագմաշտու . Մուսաձիբի մէջ կը պաշտէին երկուքը միասին : Խալտին նման էր Ասորեստանցիներու Բէլին կամ Շամաշին . երկրի ժողովուրդը կը կոչուէր խաշխապաշ, երկիրներու ալ՝ Խաշտու երկիր, իսկ Բիւրայի կամ Տուսպայի մայրաքաղաք Վանը կը կրէր Խաշինա անունը — այսինքն քաղաք Խալտի աստուած :

Մեր ձեռքը հասած չէ ուրարտական Խալտի աստուծու պատկերը, բայց Գօնիայի նահանգին Իվրիս գիւղին մէջ գտնուած է հեթեան Խալտին կամ Խատուն, ժայռի մը վրայ քանդակուած : Երկու անգամ սովորական մարդէ մեծ հսկայ մըն է . քիթը հայկական, միջակ մօրուքով, այտասկրները քիչ մը ցայտուն, գլուխը դրած սաղաւարտաձեւ գլխարկ մը, ձակատի կողմէն երկու եղջիւրներ դուրս ցցուած, իսկ գլխարկը շրջապատուած օձերով . մագերը բաւական երկայն են : Հագած է սովորական կարճ շապիկը կամ բաձկոնը, մէջքը գօտիով պարսիակուած, բազուկներուն ապարանջաններ, սեղմ անդրապարտիք, քիթերը վեր ծռած մուճակներ . մէկ ձեռքով

բռնած է խաղողի խոշոր սղկոյգներ, միւս ձեռքով՝ հասկեր — կը մատուցանէ աշխարհի . կերպով մը կը յիշեցնէ Անանուր անունով յիշուած հին Հայերու աստուածը : Դիմացը կանգնած է քրճում մը թէ իշխան մը, թերեւս հին քրճում-իշխան մը կամ սրահա մը — իր երկար և փառաւոր զգեստներով, իր զարդարուն գլխանոցով, և կ'աղօթէ անոր առջև :



Խալտի աստուածը և անոր առջև աղօթող Հասեան քաղաւորը

Այս ձեւով Խալտի աստուածը լոկ երկրագործութեան աստուած մըն է, մինչ ասորեստանեան արձանագրութիւնները զինքը կը ներկայացնեն աւելի նորը, աւելի գաղափարական գիծերով, քան այս կոպիտ երկրագործը . անոնց նկարագրածը երկնքի և արեգակին

աստուածն է : Թերևս քեռականը աւելի հին է , իսկ ուրարտականը նոյն գաղափարի յետնագոյն — զարգացած ձևեր :

Բայց Խարուէն և Բագմաշաէն , կան նաև օգի , միջնորտի , երկնքի աստուածներ — Արսիկի և Տէիշրաս կամ Տարկու . գտնուած է ամպրոպի աստուծն շատ նմանող աստուածի մը քանդակը — ձեռքը մուրճ մը բռնած , իսկ միւս ձեռքը կայծակնաձև ճառագայթներ (թերևս և մարակ) : Կ'ենթագրուի որ այդ եղած է Տէիշրասը կամ Տէչուար :

Յանք կը կազմեն Խարուերու զլեաւոր աստուածները , անոնց երբբայութիւնը : Ըսինք որ ասոնցմէ զատ կան բազմաթիւ ուրիշ աստուածներ ալ : Միայն մինչև այսօր յայտնի չէ թէ որդեօք Փիւնիկեցիներու պէս ամէն մէկ

աստուած ունեցած է իր աստուածուհին (Բաաղ և Բաաղաթ) , թէ իզական աստուածները վտարուած են ուրարտական մեհեանէն : Մինչև այժմ միայն վանայ մէջ գտնուած է իզական աստուածի մը կիսանդրին , աղանաձև թեւերը պարզած կնոջ գլուխ մը , զոր շտապեցին մկրտել Շաւիրաւ դիցուհի անունով : Թերևս այդ կիսանդրին քաղղէական Անաս կամ Անախիստ աստուածուհին է , հայկական Անանիսը :



Տէչուար աստուած

Հաւանաբար Խարուներու մէջ գտնուած է քրքրմական հօր դաս մը , քրքրմահներով մէկտեղ : Թագաւորն կը համարուէր բոլոր քուրմերու գլուխը , ան զո՛ն կը մատուցանէր աստուածներուն , անոր պատերազմները կ'ըլլային Խարի աստուածի փառքին համար և անոր անունով : Ստացուած աւարներու մէկ խոշոր մասը անոր կը զոհուէր :

Ուրարտական սահարք և փուրմեր



Մուցացիի սահարք

Մեզի հասած են ուրարտական տաճարներու պատկերներ , ոյ անցմէ կարելի է գաղափար կազմել այդ սրբատեղիներու գոնէ արտաքին մասերուն վրայ : Այսպէս , Մուցացիի տաճարը արտաքինով կը նմանի արքայական

պալատներուն, անոր վրայ երեւացող սիւները պարզ են, առանց զարդերու: Դրան մօտ կան մարդերու և կենդանիներու արձաններ, կրակարանի նման անօթներ ևն.: Այդ տաճարին մէջ ամէնէն աւելի ուշադրաւ է ճակատի եռանկիւնաձեւ մասը (փրօնքօլը), զոր չենք տեսներ ոչ ասորեստանեան և բաբելոնեան, ոչ ալ եգիպտական ճարտարապետութեան մէջ: Ճակատի այդ եռանկիւն ձեւը լայնօրէն կը գործածէին Յոյները և անոնցմէ ալ փոխ առնելով՝ Հռոմայեցիները: Ուստի կրնայ ըլլայ որ յունական ճարտարապետութեան մէջ այդ ձեւը մտած ըլլայ հայ երկրէն, Փոքր Ասիոյ յոյն գաղութներու միջոցով:

Ինչպէս կը ցուցնեն մինչև այսօր եղած պեղումներն ու հաւաքուած վախտ նիւթերը, Խալդիններու մեհեանները կառուցուած են ասորեստանեան տաճարներու ձեւով, միայն յարմարցնելով իրենց երկրին և նոր մասեր մտցնելով ընդհանուր շէնքին մէջ: Մէկ բան ստույգ է, — այս փոքր և լեռնական ժողովուրդի մեհեանները այնքան մեծ ու փառաւոր չէին, որքան ասորեստանեան և բաբելոնեան տաճարները:

ԽԱՆՏԻՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ասորեստանեան արձանագրութիւններու մէջ առաջին անգամ Նախի, Նանի կամ Նիտի անունը յիշուած է Սալմանասար Ա. ի օրով — 1330-1310: Ան է որ առաջին անգամ կ'արշաւէ Նախիի հարաւային սահմաններուն վրայ: Իսկ Նախի երկրին ներսերը առաջին անգամ արշաւողը եղած է Ասորեստանի

Հին բաժանումի և սկզբնական պատմութիւնը

ամէնէն նշանաւոր արքաներէն Թուկուզքի-ապալ-ե-Շարու կամ Թիկլատ Պալասար Ա. (1120):

Թ. դարէն սկսած՝ արձանագրութիւններու մէջ յաճախակի կը հանդիպինք Ուրարտական երկիրներուն և անոնց ժողովուրդներուն: Թէ ասորեստանեան և թէ հայ երկրի մէջ զանուած արձանագրութիւնները մինչև այսօր հնարաւոր կը դարձնեն կազմելու նախահայ Հնչյատանի հետեւեալ աշխարհագրութիւնը. —

Երկիրը բաժնուած էր բազմաթիւ մանր իշխանութիւններու, որոնցմէ նշանաւորներն էին. 1) Ուրարտ — կը տարածուէր Վանայ լիճի հիւսիսային կողմերը, Մասիսի շուրջը. 2) Բիայիկու (Բիանա) — Վանայ լիճի արեւելեան կողմը, իր Տուպու (Տոսպ) կամ Վան մայրաքաղաքով. 3) Մանկա կամ Միւնկի — Ուրմիոյ լիճին քովերը, Բիայինայէն դէպի արեւելք. 4) Մուսասիր (Մուշ?) — Վանայ լիճին արեւմտեան կողմը, Արախս քաղաքով (Արճեշ). 5) Միդիս, Ուրարտիէն արեւմուտք (Բարձր Հայք). 6) Մեդիս — Եփրատի վերին հոսանքներու կողմը, աջ ափը (Մարաթիա). 7) Նախի — Վանայ լիճի հարաւային կողմը, Եփրատէ մինչև Ուրմիոյ լիճը: Կը յիշուի նաև Սուիկիս, որ շատ կը նմանի հին Սիւնիփիկ և Ուիդես, որ քիչ մը կը յիշեցնէ Ուտիքը:

Թէև և այս երկիրները արձանագրութեանց մէջ կը կոչուին քաղաւորութիւններ, բայց ինչպէս կ'երեւի, անոնց իւրաքանչիւրը սկիզբները բաժնուած էր աւելի մանր քաղաւորութիւններու: Այսպէս — Թիկլատ Պալասար Ա. կ'ըսէ որ ինքը յաղթեց Նայիրի 23 թագաւորներուն, և ապա իր դէմ ելան նոյն երկրի միւս 60 թագաւորները: Ուրեմն՝ միայն Նայիրի երկիրը ունէր 83 թագաւոր: Պարզ է որ հոս իսկական քաղաւորներու մասին չէ խօսքը, այլ հասարակ տնտեսակներու:

Սկիզբները (ԺԵ-ԺԴ դար Բ. է ա.) իտալիները կ'ազ-
րին եզեր տոհմական կազմով. նոյն իսկ կը կարծուի թէ
անոնց մէջ այդ ասեանները մայրական ընտանիք գոյու-
թիւն ունէր — այսինքն՝ զաւակները կը կոչուէին մօրը
անունով : Երկար ընդհարումներ ունենալով Ասորեստանի
և միւս զրացի ժողովուրդներու հետ, անոնց տոհմական
կազմը լուծուած, իշխանութիւնն աստիճանաբար կեդրո-
նացած է հզօր տոհմերու ձեռք և Ժ-Թ. դարերու մէջ
Բ-է առաջ արդէն անոնք կազմած են վերը յիշուած 7-8
մանր պետութիւններ :

Մինչև Թ. դար արձանագրութիւնները կը կոչեն
այդ երկիրները Նախրի երկիրներ : Հաւանական է որ
անոնց ամէնէն զարգացածը պիտի ըլլար Նախրին, իբր
Ասորեստանի ամէնէն մօտ զրացին և անոր հետ յաճախ
ընդհարող : Եւ ամէնէն առաջ ան պիտի կեդրոնանար,
մէկ ուժեղ պետութիւն մը կազմէր և միւս խարտական
մանրիկ պետութիւնները իրեն զաշնակից պիտի դարձնէր :

Ասորեստանեան արչաւանքները սկիզբները պատ-
ճառ եղան Նախրի զարգացման, կեդրոնացման և հզօ-
րացման : Բայց յետոյ, երբ այդ արչաւանքները սաստ-
կացան, երբ ասորեստանեան բանակները սկսան խուժեղ
երկրին ներսերը և կործանել ամէն ինչ, այն ասեան նոյն
այդ արչաւանքները պատճառ եղան Նախրի անկման :
Սկսաւ բարձրանալ Ուրարտան, իբր երկիր մը որ, թէև
յարաբերութիւն ունէր Ասորեստանի հետ, բայց այնքան
մօտիկ չէր որ դիւրաւ ընկճուէր անոր ահեղ ուժէն :

Ուրարտուն կը զօրանայ, կը տիրէ Վանայ լիճին
չուրջը եղած երկիրներուն և կը դառնայ իտալիներու
զեկավար ուժը, անոնց գերիշխան պետութիւնը : Այնու-
հետեւ ասորեստանեան արձանագրութիւնները այլևս
Նախրի չեն կոչեր իտալիներու երկիրը, այլ Ուրարտու :

Ինչպէս ըսինք, Նախրի վրայ առաջին անգամ
կ'արշաւէ Սալմանասար Ա. (1330—1310) : Իսկ այդ
երկրի գերիշխանութեան շրջանի մասին մանրամասն կը
խօսուի միայն Թիկլատ Պալասար Ա. արձանագրու-
թեան մէջ (ԺԲ. դար.) : Այդ հզօր արքան պարծանքով
կը յիշէ իբր երեք արչաւանքները Նախրի երկրին վրայ .

« Ես՝ Թուկուլթի-ապալ-է-Շարրա — երրորդ անգամ արձաւեցի
Նախրի երկիրներուն վրայ : Անցայ այնպիսի լեռնագագաթներ եւ
խորխորտաններ, որոնցմէ ինձմէ առաջ եւ ոչ մէկ քաղաւոր ան-
ցած եր... Ես անցայ Եփրատը : Նախրի 23 քաղաւորներ ժողովեցին
իրենց բոլոր զօրերն ու ռազմական կառերը եւ ելան իմ դէմ կր-
ուելու : Անոնց միացան միւս 60 քաղաւորներն ալ իրենց զօրերով :
Բայց իմ ֆաշարի զօրիս փոքորկանման գրոնով ես խորհակեցի անոնց
ոյժը.. Անոնց զինուորներու դիակները յարդի պէս փռեցի լեռներու
բարձունքներու վրայ ու ֆաղակներու շուրջը : Ես ռազմապատճիմ
մէջ փռեցի անոնց 120 ռազմականները : Նախրի երկիրներու 60
քաղաւորները եւ անոնց օգնութեան հասնողները փակցուցի մինչեւ
Վերին Ծովը : Ես գրաւեցի անոնց ֆաղակները, կողոպտեցի հարսու-
վելիքն Ծովը : Ես գրաւեցի անոնց ֆաղակները, կողոպտեցի հարսու-
քիւնները : Քարուֆանդ բրի զիւղերը, կրակի հարակ բրի, խորս-
կեցի եւ հողակոյտերու եւ վարելահողերու վերածեցի ավեր : Գերի
առի անոնց 25 ասուածները... Ես ուղ բռնեցի Նախրի երկիրներու
բոլոր քաղաւորները . բայց զբացի անոնց — կապակներէ ազատ
արձակեցի, երդուրեցներով իրենց մեծ ասուածներու անուևով, որ
յաւիտեան ինձի հաւատարիմ հպատակ պիտի մնան : Անոնց արժայա-
կան ժառանգները եւ պատանդ առի իմ եով : Անոնց վրայ հարկ դրի
1200 ձի եւ 2000 եղ, եւ քողուցի որ ետքան իրենց երկիրները : ...

Մանրամասն յիշուած են 16 մեծ լեռներու, 23 թա-
գաւորներու անունները, բայց մինք զանց կ'ընենք :

Ասորեստանի հզօր արքաները այսպիսի մանր ար-
չաւանքներ կը կատարէին իտալիներու վրայ, որովհե-
տեւ անոնք, իբր լեռնական հովիւ ժողովուրդ, անհան-
գիստ և աւազակային բնաւորութիւն ունէին, միշտ կը

խուժէին Ասորեստանի հիւսիսային նահանգներուն վրայ, կը կողոպտէին, կը կոտորէին ու կրկին կ'ապաստանէին իրենց անմատչելի լեռներն ու կիրճերը:

Թիկլատ Պարսարի այդ սոսկալի արչաւանքէն յետոյ, չուրջ երեք դար այլ ևս արձանագրութիւնները կը բռնն Նաիրի և Սալաիններու միւս երկիրներու մասին: Կամ զսպուած են, և կամ, իբր լեռնականներ, շարունակեր են իրենց անկախ կեանքը, աւանց խոշոր ընդհարումներ աւնենալու Ասորեստանի հետ:



Հասեան մեհենագիր

Ինչպէս կ'երեւի, այդ երեք դարերու մէջ Նաիրիի երկիրները բաւական զօրացած են. նոր ուժեր, նոր պետութիւններ են կազմուած Թ. դարու սկիզբները Ասուր-Նասիր-արայ (885-860) չորս անգամ կը քայէ Նաիրիի վրայ. կը քանդէ զիւզերն ու քաղաքները, կը խորտակէ բերդերը, կը կոտորէ և կը գերէ ժողովուրդը . . . :

Ուրարտու ասպարէզ կ'իջնէ:

Այս անգամ Ուրարտուի թագաւորները ասպարէզ կուգան. կը միանան Նաիրիի թագաւորներուն հետ և կ'իյնան ընդհանուր թշնամիին վրայ: Սակայն այդ ատեն կը մեռնի Ասուր-Նասիր-արայ և տեղը կ'անցնի Շուրմանուաչարիտ (Սալմանասար Բ.) (860-824):

Սալմանասար՝ գահ բարձրանալով, իսկոյն կ'արչաւէ

Նաիրիի Կակիա և Ուրարտուի Արամէ թագաւորներու վրայ: Արամէն կ'անցնի դաշնակցութեան գլուխը:

Սալմանասարի առաջին արչաւանքը վերջացաւ անով, որ կործանեց քանի մը քաղաքներ և ևս դարձաւ, որովհետեւ թէ Կակիա և թէ Արամէ կը լիւր լեռները: Երկու տարի ետքը (857) Սալմանասար ձեռնարկեց իր երկրորդ արչաւանքին: Այս անգամ գրաւեց Ուրարտուի մայրաքաղաքը — Արգաշկուն (Արճէշ?), բնակիչները կոտորեց և «անոնց զլուխներէն բուրդեր բարձրացուց քաղաքին մեծ դրան երկու կողմը»: Այսպէս կ'ըսէ ինք իր թողած մէկ արձանագրութեան մէջ: Արամէ կը փախչի լեռները, պարտուած և ջախջախուած: Ուրարտուի մէկ մասը կ'իյնայ Սալմանասարի լուծին տակ:

Սակայն Արամէ չթողուց որ իր երկրին մէկ մասը մնայ Ասորեստանի ձեռքը: Տասներկու տարի ջանքեր թափեց, միացաւ չրջակայ բոլոր մանր արքաներու հետ և 845ին յարձակեցաւ Ասորեստանի վրայ: Սալմանասար յաղթեց ու փշրեց անոր զօրքը, գրաւեց երկրին մէկ մասը և կործանեց բազմաթիւ քաղաքներ:

Որքան ալ Ասորեստանի վեհապետը կը պարծենայ իր յաղթանակներով, սակայն կ'երեւի որ ատոնք եղած չեն արմատական յաղթութիւններ. երկիրը միշտ մնացած է անկախ:

Ուրարտական արջան

Եւ Արամէի մահէն քանի մը տարի վերջ, մենք կը տեսնենք որ Ուրարտական թագաւորութիւնը գրաւած է Բիւայինա երկիրը (Վանի նահանգը) և հոն է հաստատեր իր աթոռը — Տուշպա կամ Տուսպ (Վան) քաղաքի մէջ:

Այդ չրջանի առաջին թագաւորն է Լուսիպրիս (843-835), որ յաջորդած է Արամէի: Ասոր որդին է այդ շրջ-

Նանի նշանաւոր թագաւորներէն մէկը, Սարսուրիս Ա. (835-820) :

Սարսուրիս Ասորեստանէ բերելով հմուտ գրողներ, Վանայ ժայռերուն վրայ արձանագրել կուտայ իր քաջագործութիւնները՝ ասորեստանեան արքաներու մեծխօսիկ և սրուտ սոճովը : Անոր արձանագրութիւնները լատրերէն են : Ուրտերը գեռ բեւեռագիրերը չէին յարմարցուցած իրենց լեզուին :

Սարսուրիս

Այդ արձանագրութիւններուն մէջ Սարսուրիս ինքզինքը կ'անուանէ «Մեծ թագաւոր, հզօր թագաւոր, թագաւոր բազմութեան» : Այս տիտղոսները կը գործածէին Նինուէի վեհապետները : Ատկէ զատ, ինքզինք կը կոչէ «Թագաւորներու թագաւոր», որուն «միւս բոլոր թագաւորները հարկ կը վճարեն» :

Արդեօք Սարսուրիս է հիմնած Վանը, թէ այդ քաղաքը գոյութիւն է ունեցեր է առաջ ալ : չենք գիտեր, միայն ստոյգ է որ այդ թագաւորը իր աթոռը հաստատած է հոն և Ասորեստանցիները երբեք չեն կրցած մտնել Տուսպա : Հայաստանի մէջ գտնուած խալտական արձանագրութիւններու մէջ թագաւորներն իրենք զիրենք կը կոչեն Բիայիւնայի քաղաւոր, իսկ Ասորեստանցիները յամաւորէն կը կոչեն զանոնք Ուրարտուի արքաներ :

Արդէն ծերացած Սարսուրիս մեծ երկիւղով կը դիտէ Սարսուրիսի (Շարսուր) գորութեան աճիլը : Տեսնելով որ Ուրարի թագաւորը իրեն հնազանդեցուցած է շքեղակայ մանր արքաները և օրէ օր կ'ընդարձակէ իր պետութիւնը և նոյն իսկ կը սպառնայ Ասորեստանի հիւսիսային նահանգներուն, անոր դէմ կը զրկէ իր զօրավարը

(սուրսուլի), Դայան-Աշուր (Դախսուր) 833ին : Ասորեստանի բանակները չորս անգամ արշաւեցին Շիսուրի կամ Սարսուրիսի վրայ : չորս անգամուն ալ և ոչ մէկ արմատական յաջողութիւն զտան : Ընդհակառակը, Սարսուրիս նոյն իսկ իրենց անոնց հնազանդող քանի մը զաւառներ և պատերազմներէն կ'առ աւելի հզօրացած :

Սարսուրիսի տեղ զահ կ'եղին որդին— Իշպուլինի 828ին : Ան կ'օգտուի Սարմանասարի ծեր և յաջորդներուն թող վիճակէն, կ'ընդարձակէ իր եր-

Իշպուլինի և Մեհուա



Թէլիօբի կորովը (գտնուած Մեծ Զուգ գետին եզերք, Մուսուլէն դէպի հիւսիս արեւելք, Ռէվէնսուզի մօտ) :

կիրները : Իսկ երբ Ասորեստան զօրք կը զրկէ իր վրայ, իրեն զահակից կ'ընէ իր որդին— Մեհուա (Մեհուաշ) :

Այս թագաւորին կը պատկանի Բէլլէինի կոթողը, որու մէկ երեսը ասորերէն արձանագրութիւն ունի և միւս երեսը՝ խալտերէն : Ասորական բեւեռագիրերը քիչ մը փոփոխուած և յարմարցուած են Ուրարտու լեզուին : Այնուհետեւ ասորերէնն ինկած է և արձանագրութիւնները սկսած են գրել տեղական լեզուով :

Երբ Իշպուլինի մեռաւ և Մեհուա մինակը գահակալեց (մինչև 784) սկսաւ ընդարձակել իր երկիրը : Դէ-

պի արեւմուտք արշաւելով, գրաւեց մինչև Մելիտա (Մալաթիա) եղած երկիրները և այն տեղէն վտարեց Ասորեստանցիները և Քետացիները: Հոն կոթող մը շինել տուաւ, իր մեծագործութիւնները արձանագրելով: Հիւսիսէն իր սահմանները տարաւ մինչև Կովկասեան լեռները: Արեւելքէն՝ մինչև Ուրմիոյ լիճը: Այդ ընդարձակ երկրին մէջ ծաղկեցուց քաղաքները, շինել տուաւ պալատներ, տաճարներ, բերդեր, տնկել տուաւ այգեստաններ (օրինակ՝ Վանայ մէջ) և զանոնք ջրելու համար ջրանցքներ (Շամիրամայ առու, Արամէտի, Բերկրիի ջրանցքները) և յն. : Վանայ արձանագրութիւններու մեծ մասը կը պատկանին Մենուասի:

Մենուասի յաջորդեց կրտսեր որդին, Արգիսիս Ա. (Արգիշտիշ Ա.) (784-760): Արգիստիս ունեցած է 14 արշաւանք իր թշնամիներու դէմ: Անոր արշաւանքներու մեծ մասը եղած է Ասորեստանցիներու և Քետացիներու վրայ: Շատ ընդարձակած է իր պետութիւնը, այսինքն՝ Բիւայիւնան: Ասորեստանի իրարու յաջորդող երեք թագաւորները քանի մը անգամ ջարդ կերան Արգիստիսէ և հալածուեցան մինչև Եփեսոս: Քանի մը տարի Ասորեստանը հարկ կը վճարէր հզօր Խալտային:

Արգիստիս Քետացիներուն յաղթելով, հարկատու դարձուց իրեն: Անկէ մնացած են քանի մը արձանագրութիւններ, որոնցմէ մէկը շատ մեծ է և կը պարունակէ 400 տող:

Երբ Սարտուրիս Բ. յաջորդեց իր հօրը, Քետացիները մերժեցին տալ խոստացուած հարկը: Սարտուրիս քաղեց անոնց վրայ, գրաւեց անոնց երկիրը և իր պետութեան միացուց ամբողջ Սուրիան: Սարտուրիս ան-

Արգիսիս Ա.

գամ մըն ալ արշաւեց Բաբելոնի երկիրը: Այդ արշաւանքի մասին այսպէս կը խօսի ինքը, իր թողած մէկ արձանագրութեան մէջ. «Բաբելոնի երկրին մէջ գրաւեցի երեք պղատ, 23 քաղաք և 60 գիւղ: Պալատները քանդեցի, իսկ քաղաքները կրակի տուի... Հետո տարի 8,135 տղայ, 25,000 կին, 6,000 գերի, 2,500 ձի, 12,000 եզ, 32,000 ոչխար»:

Այդ ատեն Ասորեստանի գահը կը բարձրանայ Թիկրատ Պալասար Գ. (745-727) որ հզօր բանակով մը արշաւեց Սուրիա, խլեց այդ նահանգը Սարտուրիսի ձեռքէն, և մասնեց զայն փախուստի: Թիկրատ Պալասար չառունակեց իր արշաւանքները. տիրեց Նաիրին մեծ մասին և ամբողջ Մաննայի. ազատ մնաց միայն Ուրարտուն (Բիւայինա):

Այնուհետև 15 տարիի չափ Խալտներու և Ասորեստանցիներու մէջ ալիւս ընդհարումներ չեղան: Միայն Սարտուրիս Բ. ի յաջորդ Ռուսաս Ա. (Ռուսաշ կամ Ուրասա— 730-714) նուաճելով իր երկրէն հիւսիս գտնուող «23 թագաւորներու» երկիրները, Ասորեստանի դէմ կազմակերպեց ընդարձակ դաշնակցութիւն մը, որու մէջ մտան Նաիրիի, Մաննայի, Մուցայրի թագաւորները և ուրիշները, որոնք ամէնքն ալ զգուած էին ասորեստանեան ծանր լուծէն:

Ռուսաս Ա. և Արգիսիս Բ.

Այդ ատեն Ասորեստանի գահը նստաւ Շարուկինա կամ Շարրու-ուկին-(Սարկին, 722-705): Այս հզօր և տաղանդաւոր արքան իր բանակները ուղղեց նախ Քետացիներու, յետոյ Հայաստանի վրայ: Առաւ Կարքէմիշը և կործանեց (717): Նոյն միջոցին արդէն Խալտներու երկիրն էին արշաւած արիական ցեղեր — Կիմմէրներ՝

Կովկասեան լեռներէն : Ռուսաս իր դաշնակիցներով միասին երկա՛ր ատեն դիմադրեց Սարկոնի բանակներուն , բայց վերջապէս պարտուեցաւ : Ռուսաս փախաւ Մուցացիի Ուրդանա թագաւորին քով (որու կնիքը գրտնուած է 714 ին) : Երբ Սարկոն եկաւ և Մուցացիին ալ քար ու քանդ բրաւ , Ռուսաս յուսահատութենէն անձնասպան եղաւ (714 ին) : Անոր յաջորդեց Արգիստիս Բ. : Սար Դի ալ յաջորդած էր Ս Դ-ախի-էրբա (Սինեքերիմ) : Նաիրի , Մաննա , Մուցացի , Հափերու երկիրը և նոյն իսկ Կուստուլի միացած էին Ստորեստանի . Ուրարտուի թագաւորը մինակ էր մնացած : Ստորեստան ճանչցած էր Ուրարտուի անկախութիւնը : Թէ Արգիստիս Բ. և թէ Ռուսաս Բ. խաղաղ դրացի մնացին , բայց միանգամայն անկախ , այնպէս որ՝ երբ Սինեքերիմ ազօթած պահուն ըստմանուեցաւ Աղբամեկիք և Սարասար սրղիներէն , մարդասպանները փախան և ազատ ապաստան գտան « յերկիրն Արարատայ » , ինչպէս ըսուած է Ատուածաշունչի մէջ :

Բացի այն որ Ուրարտան անկախ կը մնայ այդ շրջանին մէջ , տեղի կ'ունենայ նա և նոր փոփոխութիւն մը : Հիւսիսէն Հայկական Բարձրաւանդակը խուժած էին արդէն Կիմմէրները . Ռուսաս Բ. ի յաջորդ էրիմէնասի և անոր զաւակ Ռուսաս Գ. ի օրով : Սկիւթացիներն ալ լեցուեցան մօտաւոր Ասիա , Մարաստան , Ուրարտու և նոյն իսկ Ստորեստան : Արիական այս բարբարոս ցեղերու գրոհին դէմ Ուրարտուի յիշուած թագաւորները և Ռուսաս Գ. ի որդին Սարատուրիս Գ. , Խալաթներու վերջին թագաւորը , դաշնակից և զինակից եղան իրենց զարաւոր թըշնամի Ստորեստանի (մինչև 644) :


Սակայն Ստորեստանը և Խալաթական պետութիւնները արդէն ուժատուր , քայքայման դուռն էին

հասած : Կիմմէրներու և Սկիւթացիներու արշաւանքները վերջնական հարուածը հասցուցին անոնց : Շուտով արեւելքէն մարական նոր ու հզօր պետութիւնը Կիւքասի օրով եկաւ տիրեց թէ՛ Ստորեստանի և թէ՛ Ուրարտուի : Այնուհետև պատմութեան մէջ աղիւս երբեք չեն երեւնար Խալաթները , ոչ ալ Ուրարտու , Նայիրի և այլ անունները : Ինչպէս Ստորեստան կործանեցաւ անգամ մըն ալ չվերականգնելու պայմանով , այնպէս ալ կործանեցան Հայաստանի խալաթական իշխանութիւնները , այլևս պատմութեան ասպարէզէն քանալու համար : Այնուհետև կը բռնն վանեան և ասորեստանեան արձանագրութիւնները : Արքեմէնեան Պարսիկներու թողած բեւեռագիր արձանագրութիւններու մէջ ալ չեն յիշուիր Խալաթները , այլ ասպարէզ կուգայ նոր , արիական բարբարոս ցեղ մը — Արմէնները կամ Հայերը : Ուրարտական կամ ասորեստանեան արձանագրութիւնները ամենեւին չեն յիշեր Հայ և Հայաստան , Արմէն կամ Արմէնիա անունները : Առաջին անգամ Մենուասի Մարտիոց քովերը թողած արձանագրութեան մէջ (Ը. դարու սկիզբը Գ. ա.) յիշուած է Ուրմէնի անունը , զոր քանի մը գիտնականներ (Պէլք , Լէհման և այլն) կ'ընդունին իբր Արմէնիա անունին մէկ ձևը : Սակայն ասոր դէմ կ'եղեն ուրիշներ , ըսելով թէ նի մասնիկը սեռական հոլովի նշան է ուրարտական լեզուի մէջ , ուրեմն՝ այդ անունին ուղղական հոլովն է Ուրմե , որ իբր թէ Ուրիացիներու աշխարհի անունն է , կամ այն կողմերը տեղի մը անուն է :

Հայեր կամ Արմէններ

Ասովիճակիօրէն Արմէն և Արմէնիա կամ Արմէնի անունները յիշատակուած են Գարեհ Վշտասպեանի (521-523) Պեհլու թուանեան արձանագրութեան մէջ (𐎱 𐎺 𐎠 𐎲 𐎺 𐎠)

Արմինա-Հայաստան : Այսուհետև Հայաստան միշտ կոչու-
ուած է օտարներէն Արմէնիա , իսկ ազգը՝ — Արմէն :



Շամիրամ ?

Արդեօք Արմինա անունը առաջ է եկած Աբարատ և Միննի կամ Ուրարտու և Մաննա անուններու ձուլումէն , թէ եկուոր արմէն արիական ցեղի անունէն , — Այս խնդիրը կը մնայ անյոյժ :

Անվիճելի է ուրեմն՝ որ է . դարէն մինչև Ե . դա-
րու սկիզբը (Ք . ա .) ուրարտական ցեղը սկսած է չքա-
նալ , իջնալ և անոր տեղը եկած բռնած է նոր ժողովուրդ
մը — արիական ծագումէ , որ մասամբ կոտորած ու տի-
րած է Պալաուներուն , մասամբ իր մէջ ձուլած , մասամբ
ալ քշած դէպի հիւսիս , լեռնային մասերը , Պաղտեաց
լեռները , գուցէ և Վրաստան , Աղուանից աշխարհ , թե-
րևս նաև Ուսիք :

Նորագոյն հետազօտութիւնները կը ցուցնեն որ՝
Կիմմէրները Թ . դարու մէջ (Ք . ա .) , նեղուելով Սկիւ-
թացիներէն (Սակ կամ Շակ) , Վօլկայի ափերէն կէս մը
փախան Տաւրիկեան , կէս մըն ալ Պալքանեան թերակղզի-

ները , Պալքանեան թերակղզին եկողները Վոսփորէն (թե-
րևս նաև Տարտանէլէն) անցնելով , Փոքր-Ասիա : Այդ
ատենները — կամ Կիմմէրներու հետ միասին , կամ ա-
նոնց առջեւէն փախուտ տալով , Փոքր-Ասիա եկան
Փոլեզացիները , որ հիմնեցին Փոլեզիա կոչուած երբեմն
հզօր պետութիւնը : Փոլեզացիներու հետ միաժամանակ՝
եկաւ նաև Արմէն անունով ցեղ մը , որ կը խօսէր , ինչ-
պէս կը վրացիս յոյն պատմիչները , փոլեզերէնի նման
լեզու մը և կը հազնէր անոնց զգեստներուն նման
զգեստներ :

Այս արիական ցեղն է որ նախ կը բնակի Կապա-
դովկիոյ արեւելեան սահմաններուն մօտիկ երկիրներու —
Փոքր-Հայքի մէջ , կը հիմնէ հոն իր առաջին տիրապե-
տութիւնը Տաւրոսի բարձունքներու և լեռներու վրայ .
կ'ընդհարուի Քեսացիներու կամ Հիթիթներու հետ , ան-
շուշտ իր մէջ կը ձուլէ անոնց մէկ մասը . թերևս մէկ
մասն ալ կ'իջնէ Կիլիկիա : Երբ Կիմմէրներու և Սկիւթացիներ-
ու նոր ալիքներ կուգան կը լեցուին Փոքր-Ասիա , Ար-
մէնները ատորձանաբար առաջ կ'երթան Տաւրոսի վրայէն ,
մերթ դէնքով , մերթ խաղաղ միջոցներով կը գրաւեն
Նայիրիի , Մաննայի , Բիաջնայի և միւս մանրիկ թագա-
ւորներու երկիրները : Յետոյ անկէ կը շարունա-
կեն իրենց տիրապետութիւնը դէպի Սեւանայ ծովը ,
դէպի Սիւնիք և դէպի Կուր և Երասխ գետերու հո-
վիտները :

Ուրարտական պետութիւնները , որ արդէն ուժա-
պառ էին եղած Կիմմէրներու և Սկիւթացիներու հար-
ուածներէն , դիւրութեամբ կը հնազանդին և կը ձու-
ուին նորեկ տիրապետողներու հետ : Այդ խառնուրդէն
կը կազմուի Հայ Ազգը :



Հին հայկական կուռքեր եւ ֆուրմեր

Այս նորակազմ ցեղի բոլոր երկիրները շուտով կ'իյնան Կիւրոսի իշխանութեան տակ, սակայն ոչ առանց դիմադրութեան: Երբ Կիւրոս կը ստապրէ մարական լուծը և կը ստեղծէ պարսկական անեղ պետութիւնը, Հայաստան կ'իջնայ անոր ձեռքը, բայց թէ մեր աւանդական պատմութիւնը և թէ Բանեոֆոնի գրութիւնները («Սրատք Կիւրոսի»), մեզի թող կուտան կարծելու թէ հայ ռազմատէր ցեղը բաւական ազդու և ներգործական դեր մը կատարած է պարսկական լայնածաւալ կայսրութեան մէջ: Արդէն Կիւրոսի յաջորդներու — մանաւանդ Դարեհ Վշառապիանի օրով Հայերու փորձած բազմաթիւ յանդուգն ապստամբութիւնները անեղ արքային դէմ՝ կը ցուցնեն թէ հայ ցեղն այդ շրջանին մէջ որքան ռազմատէր և կարիճ սգի մը ունէր:

Արէմնեանները կը կառավարեն Հայաստանը Սատրապներով. կասկածէ դուրս է որ սատրապներու հետ միաժամանակ հայ ժողովուրդը կը կառավարուէր իր սեփական իշխաններով, իսկ սատրապները աեսակ մը փոխնորդներ էին վեհապետէն:

Երբ Աղեքսանդր Մակեդոնացին տիրեց պարսկական ընդարձակ երկիրներուն (331 ին), Հայաստան ալ անցաւ նախ անոր և վերջէն Սելեւկեաններու ձեռքը: Բայց անանց օրով ալ Հայերը կը կառավարուէին իրենց տոնմական իշխաններով, թէև հարկատու էին Սելեւկեաններու: Անոնցմէ միանգամայն անկախ մնացին Իւստրային լեռնական մասերու հայ իշխանները: Բ. դարու սկիզբները (190-159) Մեծ Հայաստանի կողմը հայ իշխաններէն Արտաշէս կը յաջողի թօթափել սելեւկեան լուծը և հիմ դնել Հայերու Արտաշեսեան Հարսուրթեան: Անոր մայրաքաղաքը կ'ըլլայ Արտաշատը: Իսկ Մոսիաց աշխարհին մէջ (Չոֆէն) կ'իշխէր Զարիաղբէս (Զարեհ), որ նոյնպէս կը թօթափէ սելեւկեան լուծը: Այդ երկու իշխանները միաբանելով, անկախութիւն ձեռք կը բերեն, իսկ յետոյ կը սկսին իրարու դէմ մարտնչել: Այդ կռիւններէն յաղթող ելաւ Արտաշէսեան Տունը:

Արտաշէսին կը յաջորդէ Արտաւազդ (159-149), իսկ անոր յաջորդներու մասին մեր ձեռքը և ոչ մէկ անդեկութիւն հասած է մինչև 95 թուականը Բ. է առաջ. երբ Մեծ Հայքի դահուն վրայ կը նստի Տրդրան Մեծը, Հռոմի ահարկու թշնամին, որու պատմութիւնը պիտի սորվինք Հռոմի և Յունաստանի պատմութեան հետ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

- 1.— Նախապատմական մարդուն կենցաղը
- 2.— Սկզբնական հասարակույթներ

52

11

32

ՀԻՆ ԱՐԵՒԵԼԲԸ

Ա. ԵԳԻՊՏՈՍ

- Հանրային եւ պետական կազմը
- Հանդերձեայ կեանք
- Եգիպտական գիրը եւ գիտություններ
- Քաղաքական պատմություններ

43

48

88

99

105

Բ. ՄԻՋԱԳՅՏՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

- 1.— Բաբելոն
- 2.— Ասորեստան
- 3.— Նոր Բաբելոնական պետություններ
- 4.— Փիւնիկի
- 5.— Հրեաստան

112

144

156

175

194

Գ. ԱՐԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

- 1.— Հնդկաստան
- 2.— Պարսկաստան-Մարաստան,
Սկիւթիա

215

253

Դ. ՈՒՐԱՐՏՈՒ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հրեաստան

10



« Ազգային գրադարան



NL0409547

Handwritten signature or initials

1116

ԳԻՆ 10 ՂՐՇ.

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅԵՐԷՆ ԼՆՋՈՒ

- | | |
|--|-------|
| | ՂրՇ. |
| 1. ԼՈՒՍԱՔԵՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ, (Հեղինակներ՝ Ս. Լիսիցեան, Յովի. Թումանեան և Լևոն Շանթ), 64 էրես, 80 պատկեր և քաղմաթիւ ձեռագրեր | 2,50 |
| 2. ԼՈՒՍԱՔԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Ա. ՏԱՐԻ, 80 էրես պատկերազարդ Գ. տպ. | 4 |
| 3. ԼՈՒՍԱՔԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Բ. ՏԱՐԻ, 112 էրես պատկերազարդ | 5 |
| 4. ԼՈՒՍԱՔԵՐ, ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Գ. ՏԱՐԻ, 144 էրես | 6 |
| 5. ԼՈՒՍԱՔԵՐ, ԳՐԱԽՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ 1. ՏԱՐԻ, 48 էրես, չարագրական պատկերներով | 2 |
| 6. ԼՈՒՍԱՔԵՐ, ԳՐ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ, Բ ՏԱՐԻ, 48 էրես չարագրական պատկերներով | 2 |
| 7. ԼՈՒՍԱՔԵՐԻ ՈՒՂԵՅՈՅՅԸ, գրել-կարգալ սորվեցնելու եղանակը | 10 |
| 8. ՄԵՂՐԱԳԵՏ, Ժողովածու սրղի հայ եւ օսար գրականութեան. բարձրագոյն կարգերու աւար: Ռուբեն Զարգարեանի, քաղմաթիւ պատկերներով. 502 էրես. | 12,50 |
| 9. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (Տէրեայիներ մանուկներու համար). Մարգարեան. պատկերազարդեց՝ Տ. Նուպեան. | 3,50 |
| 10. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, Վրբանէս Փափագեանի | |

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

- | | |
|--|----|
| 11. ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, Ա. ՏԱՐԻ, Գ. Խաժակի. | 5 |
| 12. ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՀԻՆ ԱՐԵՒԵԼԻ, Գ. Խաժակի. | 10 |

Կ'ախաբողներուն կը դրկու՝ մեր գրացանկը